

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ  
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,  
ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ (ԵՐՐՈՐԴ)  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈԶԱԿՄԱՆ  
30-ԱՄՅԱԿ

Միջազգային գիտաժողովի նյութեր  
(Ստեփանակերտ-Երևան, 19-23 սեպտեմբեր, 2021)

Երևան  
2022

NATIONAL ASSEMBLY OF ARTSAKH REPUBLIC  
MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND  
SPORTS OF THE REPUBLIC ARTSAKH

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA  
INSTITUTE OF HISTORY

**30<sup>TH</sup> ANNIVERSARY OF THE DECLARATION OF  
THE REPUBLIC OF ARTSAKH AND THE  
(THIRD) REPUBLIC OF ARMENIA**

**International conference materials  
(Stepanakert-Yerevan, 19-23 September, 2021)**

\*\*\*

НАЦИОНАЛЬНОЕ СОБРАНИЕ РЕСПУБЛИКИ АРЦАХ  
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И  
СПОРТА РЕСПУБЛИКИ АРЦАХ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА  
ИНСТИТУТ ИСТОРИИ

**30-ЛЕТИЕ ПРОВОЗГЛАШЕНИЯ РЕСПУБЛИКИ  
АРЦАХ И РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ (ТРЕТЬЕЙ)**

**Материалы международной конференции  
(Степанакерт-Ереван, 19-23 сентября, 2021)**

Yerevan, Ереван  
2022

ՀՏՏ 94(479.25)(082)

ԳՄԴ 63.3(5Հ)գ43

Ա 948

Սույն ժողովածուն հրատարակության են երաշխավորել ՀՀ ԳԱԱ  
պատմության ինստիտուտի և Արցախի պետական համալսարանի  
գիտական խորհուրդները:

*Խմբագիրներ՝*

Պ. գ. թ., դոցենտ Մելանյա Բալայան

Պ. գ. թ., դոցենտ Լիլիթ Հովհաննիսյան

Արցախի Հանրապետության և Հայաստանի (Երրորդ)  
Ա 948 Հանրապետության հոչակման 30-ամյակ: Միջազգային  
գիտաժողովի նյութեր (Ստեփանակերտ-Երևան, 19-23  
սեպտեմբեր, 2021). - Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստի-  
տուտ, 2022.- 391 էջ:

Ժողովածուն ներառում է Արցախի Հանրապետության և Հայաս-  
տանի (Երրորդ) Հանրապետության հոչակման 30-ամյակին նվիր-  
ված, 2021 թվականի սեպտեմբերին Ստեփանակերտում ու Երևա-  
նում կայացած միջազգային գիտաժողովի գեկուցումները և  
հաղորդումները:

ՀՏՏ 94(479.25)(082)

ԳՄԴ 63.3(5Հ)գ43

ISBN 978-9939-892-20-7

© ՀՀԳԱԱ պատմության ինստիտուտ, 2022

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**  
**CONTENTS**  
**СОДЕРЖАНИЕ**

Խմբագիրների կողմից.....	7
Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանի բացման խոսքը.....	10
Արցախի Հանրապետության Նախագահ Արայիկ Հարությունյանի ուղերձը.....	12
Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանի ողջույնի ելույթը.....	14
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի ողջույնի խոսքը	
ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆԻԹՅԱՆ ԱՐՅԱԽՅԱՆ ՇՊՁԱՆ.....	22
Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանի օրինանքը և ողջույնի խոսքը.....	34

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՃԱԿՈՒՅԹ**

**ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ**

Արցախի Հանրապետություն (1991-2021 թթ.). ձեռքբերումներ, կորուստներ.....	39
---	----

**ОТТО ЛУХТЕРХАНДТ**

Некоторые приоритетные стратегические задачи по обеспечению статуса Республики Арцах / Нагорного Карабаха.....	62
---	----

**ՄԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Արցախի Հանրապետության պաշտպանական-անվտանգային հիմնախնդիրների մասին.....	80
--	----

**ՆՈՒՆԵ ՍԱՐՈՒՄՅԱՆ**

Արցախի Հանրապետության վարչաքաղաքական դրությունը 1991-2021 թթ. ....	101
---	-----

**ԳԱՅԱՆԵ ՄԱԽՄՈՒՐՅԱՆ**

1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հոչակման ներքին և արտաքին քաղաքական նախադրյաները.....	121
--	-----

## **ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Արցախի պետականության պատմության լուսաբանումը  
հայաստանյան պատմագիտության մեջ (1991-2021 թթ.).....154

## **ՀԱՍՏԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ**

Հայ Եկեղեցու Ղարաբաղի թեմի կրթական կյանքի արտացոլումն «Արարատ» ամսագրում (1905-1917 թթ.).....175

## **ՍԼԱՎԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

Դրվագներ Շուշիի պատմության.....188

## **ԻՍԿՈՒՇԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ**

Ինքնապաշտպանական ուժերի ձևավորումը և կանանց կամավորագրումը ջոկատներին 1988-1991 թթ. ....208

## **ՆԱՐԻՆԵ ՄՈՎՍԵՍՅԱՆ**

Լեռնային Ղարաբաղում (Արցախում) 1920 թ. փետրվար-մայիսի ռազմական գործողությունները հայ պատմագիտության մեջ.....225

## **ՎԱՐԴԳԵՍ ՍԱՖԱՐՅԱՆ**

Սոս գյուղի վաղ քրիստոնեական համալիրի պեղումները.....248

## **ՄԵԼԱՆՅԱ ԲԱԼԱՅԱՆ**

Աղվանից Եկեղեցու էթնիկ պատկանելության հիմնահարցը և արդի քաղաքական շահարկումները.....264

## **ԿԱՐԵՆ ԽԱՆՅԱՆ**

Արցախի գեղարվեստական պատկերը Միլվա Կապուտիկյանի պոեզիայում.....277

## **ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

## **ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումն Իրանի արտաքին քաղաքականության համատեքստում.....286

## **TALINE TER MINASSIAN**

«République d'Arménie» (Mémoires du révolutionnaire Arménien, vol. 7) de Ruben Ter Minassian dans le contexte de la guerre de 2020.....302

## **ՀՐԱՅՐ ՓԱՇԱՅԱՆ**

Ղարաբաղյան հակամարտություն. Պրահյան գործընթացի մեկնարկը և հիմնական շեշտադրումներն ըստ 2004 թ. ԵԱՀԿ ՄԽ գեկույցի.....312

## **ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ**

### **ԺԻՐԱՅՐ ՔՈԶԱՐԵԱՆ**

Արցախի Հանրապետութիւնը 30 տարեկան Է'. հաշուեկշիռ.....332

### **ՕԼԵԳ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

Армения и Арцах: перспективы новой стратегии (взгляд из  
российской диаспоры).....340

### **ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ**

Գրական կյանքն Արցախում 1991-2021 թթ. .....355

### **ՆԱԻՐԻ ՀՈԽԻԿՅԱՆ**

Պետականության պահպանման մարտահրավերներն Արցախում.  
ապագայի տեսլական.....376

## **Խմբագիրների կողմից**

Իր բազմադարյա պատմության ընթացքում հայ ժողովուրդը հանգամանքների բերումով հարկադրված է եղել աննահանջ պայքար մղել ազգային պետականության և՝ պահպանման, և՝ վերականգնման համար: Այս իմաստով բացառություն չէր XX դարը, բայց այն նաև եղավ բացահիկ: Հայոց Մեծ Եղեռնից ընդամենը երեք տարի անց՝ 1918 թվականի մայիսին, Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաբիլիսայի հերոսական մարտերի շնորհիվ հայ ժողովուրդը կարողացավ կասեցնել հայերին վերջնականապես բնաջնջելու թուրքական ծրագիրը: Այդ պայքարի բովում մեր հայրենիքի հյուսիս-արևելյան հատվածում նաև վերականգնվեց դարեր առաջ կորսված հայկական պետականությունը: 1918-1920 թթ. Հայաստանի առաջին Հանրապետության հիմքի վրա 1920 թ. դեկտեմբերին ստեղծվեց Հայաստանի խորհրդային Հանրապետությունը, իսկ 1991 թ. սեպտեմբերի 23-ին անկախ հոչակված Հայաստանի երրորդ Հանրապետությունը դարձավ Առաջին և երկրորդ Հանրապետությունների թե՛ ձեռքբերումների և թե՛ չլուծված խնդիրների ժառանգորդը:

Հայաստանի Հանրապետության անկախության վերականգնման գործնթացի ազդակներից էր 1988 թ. փետրվարին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում սկսված ազտագրական պայքարն ընդդեմ Աղրբեջանի հակահայկական քաղաքականության, որի հիմքը ՈԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի պլենումի 1921 թ. հովհանի 5-ի հակաօրինական որոշմամբ հայկական այդ երկրամասը խորհրդային Աղրբեջանին բռնակցելու իրողությունն էր: 1991 թ. գարնան և ամռան ամիսներին մարզում հայ-աղրբեջանական ազգամիջյան պատերազմ սկսվեց, որը շարունակաբար ծավալվեց ու խորացավ: Այդ կոհիվներից 1991 թ. սեպտեմբերի 2-ին ծնվեց

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ)՝ կազմելով նորագույն ժամանակաշրջանում հայոց անկախ պետականության պատմության թերևս ամենակարևոր հաղթանակը:

1994 թ. մայիսի 12-ին Բիշքեքում Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ կնքվեց գինադադարի պայմանագիր, որը պարտադրել էր հայկական գինուժը Երկար, համառ և մեծ զոհաբերությունների գնով: Պատերազմում ձեռք բերված հաղթանակը հայ ժողովրդի կենսունակության վկայությունն էր, ազգային պատմության նախընթաց փուլերում կուտակած փորձի ու երազանքների իրականացման բարձրակետը: Այդ հաղթանակը նաև հայկական Երկու պետականությունների զարգացման միասնական ճանապարհի սկիզբը դարձավ: ԼՂՀ (2017 թվականից՝ նաև Արցախի Հանրապետություն (ԱՀ)) և ՀՀ անկախության հոչակումից երեսուն տարի անց ժամանակն է ամփոփելու անցած ուղու ձեռքբերումները, կորուստները, բացթողումները և հետագա անելիքները, մանավանդ, որ 2020 թ. ԱՀ դեմ սանձազերծված ադրբեջանա-թուրք-ահաբեկչական 44-օրյա պատերազմը հայկական Երկու պետականությունները կանգնեցրել է նոր ու վտանգավոր մարտահրավերների առջև:

Սույն ժողովածուում ամփոփված են 2021 թ. սեպտեմբերի 19-21-ը ԱՀ մայրաքաղաք Ստեփանակերտում և սեպտեմբերի 23-ին Երևանում տեղի ունեցած Արցախի Հանրապետության և Հայաստանի (Երրորդ) Հանրապետության հոչակման 30-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի գեկուցողների կողմից հրատարակության ներկայացված այն գեկուցումներն ու հաղորդումները, որոնք նախկինում տպագրված չեն եղել: Գիտաժողովին մասնակցած հայ և այլազգի շուրջ չորս տասնյակ գիտնականները Հայաստանի Հանրապետությունից, Արցախից, Ռուսաստանի Դաշնությունից (ՌԴ), Մեծ Բրիտանիայից, Գերմանիայից

և Ֆրանսիայից գլխավորապես բարձրացրել են Արցախի պետականության պատմության, ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում ՀՀ խնդրի համապարփակ կարգավորման, Արցախի իրավական կարգավիճակի վերջնական որոշման՝ հայ բնակչության ինքնորոշման իրավունքի իրացման և ՀՀ անկախության ճանաչման հարցերը, որոնք ունեն գիտագործնական կարևորություն:

**Արցախի Հանրապետության կրթության, գիտության,  
մշակույթի և սպորտի նախարար  
Լուսինե Ղարախանյանի  
բացման խոսքը**

Հիրավի, այսօր խիստ անսովոր պայմաններում ենք ապրում Հայաստանի երրորդ Հանրապետության անկախության հոչակման 30-րդ տարին. բզկտված, կորստի տառապանքից բորբոքուն, ցասումի ու վրեժի ծարավով լեցուն, ծանրացած խոհերով ու հոգեցունց:

Այսուհենդերձ, անկախությունը եղել է և է բացատրագիր ու պատգամ առ այն, որ մեր լինելիությունը, արարչաստեղծ տեսակն ու ինքնությունն ուրոյն և անխոցելի է անկախության բարձրագույն արժեքի շնորհիվ:

Անկախությունը մեր հոգևոր ու գաղափարական ինքնակազմակերպվածությունն է, դրա բարձրագույն դրսնորումը:

Չէի ցանկանա անդրադառնալ կամ վերիիշել մեր պետականության կորստի երկար ու ծիգ տարիները: Ինչո՞ւ, որովհետև պետության և անկախության կորստից են ածանցվել մեր ազգի դիմադրողականությունը թուլացնող բազում բացասական որակներ՝ երկրորդական ու կախյալ լինելուց մինչև թերարժեքության ու գոհի զգացողություն:

Պատմաժամանակագրական տարբեր փուլերում մեր պետականությունն անցել է տարբեր փորձություններ՝ Տիգրան Մեծից մինչև Արշակունիներ, սոցիալիստական-կոմունիստական հանրապետությունից մինչև երկու հայկական պետություններ: << անկախությունը հոչակվեց ոչ միայն սոցիալ-տեսական, այլև Արցախյան պատերազմի ծանր պայմաններում, երբ մեր հայրենիքի սահմաններն արյունով էին գծվում:

Այսօր էլ մենք շարունակում ենք ապրել մեր պետականության համար բախտորոշ օրեր. ի մի ենք հավաքում մեր

կոտրված իրականության բեկորները, փորձում վերականգնել մեր կորուսյալ, բայց անօտարելի հայրենիքը:

Անկախությունը չի կարող ինքնանպատակ լինել: Այն նախևառաջ մեր սխալները շտկելն ու մեր պարտությանը տեր կանգնելն է, մեր մտածողությունն ու ինքնակազմակերպվածությունը, մեր բարոյական ու մտավոր ներուժի կենտրոնացումը, հոգատար վերաբերմունքը պետական ունեցվածքի նկատմամբ, մեր ազգային իդեալին հասնելու անանձնական երջանկությունը:

Ես չեմ ուզում, որ մեր պետական անկախությունը և պետության կառուցումը խարսխվեն Գուրգեն Մահարու «Այրվող այգեստաններ»-ի, Վարդգես Պետրոսյանի «Կրակն շապիկ»-ի, Խաչիկ Դաշտենցի «Ռանչպարների կանչ»-ի, Հովհաննես Շիրազի «Հայոց դանթեական»-ի պահանջատիրության վրա:

Նիկոլ Աղբայյանը Հովհաննես Թումանյանին գրած նամակներից մեկում «Հավատո հանգանակ» էր որոնում: Մենք այլսս համոզված ենք, որ դա մեր հոգևոր, մտավոր, բարոյական, գաղափարական, ռազմական ներուժի մեկտեղումն է, դրա կենտրոնացումը ազգային-պետական կենսական խնդիրների լուծման ուղղությամբ:

Նահատակները գծել են մեր պարտականությունների բոլոր սահմանները, և նրանց հետ մեր ժամադրությունն արդեն առօրյա է:

Մեկ րոպե լրությամբ հարգենք մեր նահատակների լուսե հիշատակը...

**Արցախի Հանրապետության Նախագահ  
Արայիկ Հարությունյանի**

**ՈՒ Ղ Ե Ր Ձ Ը**

**Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հոչակման 30-ամյակին նվիրված միջազգային  
գիտաժողովի մասնակիցներին**

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ, տիկնայք և պարոնայք, նախ ուզում եմ ողջունել բոլորիդ և իմ գոհունակությունը հայտնել Արցախում նման կարևոր միջոցառման անցկացման կապակցությամբ: Կարևոր, որովհետև գիտաժողովը նվիրված է հայ ժողովրդի պատմության երկու վճռորոշ ու շրջադարձային իրադարձությունների, որոնք արմատապես փոխեցին մեր հետագա ընթացքը: Եվ դրանք ուսումնասիրելու, վերլուծելու, քննարկելու, դասեր քաղելու համար լավ հնարավորություն են ընձեռում նաև նման հարթակները:

30 տարի առաջ Հայաստանն ու Արցախը կատարեցին պատմական ընտրություն՝ հօգուտ ազատ, անկախ ու ինքնիշխան պետության, հօգուտ մեր պապերի հողում խաղաղ ու հանգիստ ապրելու և արարելու, սեփական ճակատագիրն ինքնուրույն տնօրինելու մեր իրավունքի պաշտպանության: Մենք գնացինք մեր դարավոր երազանքի իրականացման, ազգային արժեքների պահպանման և ժողովրդավարական պետության կառուցման ճանապարհով՝ խսորեն հետևելով միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների տարին ու ոգուն: Դա օրինական և ճիշտ ընտրություն էր, որն արտահայտում էր մեր ժողովրդի նկրտումներն ու հոգերը, և որը կայացավ երկարամյա պայքարի արդյունքում:

Պետականաշխնության ճանապարհին Հայաստանն ու Արցախը ստիպված են դիմակայել բազում մարտահրավերների, հաղթահարել անասելի փորձություններ ու դժվարութ-

յուններ, անցնել հակառակորդի կողմից պարտադրված պատերազմների միջով։ Մենք ունեք հայթանակներ ու ձեռքբերումներ, հանուն որոնց իրենց կյանքն են զոհաբերել մեր ժողովրդի լավագույն զավակները։ Խոնարհվում եմ նրանց սխրանքի և հիշատակի առջև, հարազատների տոկունության առջև։

2020 թվականի պատերազմը մեզ նոր ու ծանր իրողությունների և մարտահրավերների առջև կանգնեցրեց։ Գիտաժողովի ծրագրում ընդգրկված թեմաների բազմակողմանի արծարծումը, հիւսուվ եմ, այս բարդ ռազմաքաղաքական պայմաններում օգնելու է մեզ իրավիճակը խորությամբ հասկանալու և արդյունավետ որոշումներ կայացնելու հարցում։

Հարգելի՝ բարեկամներ, մաղթում եմ բոլորիդ արդյունավետ աշխատանք և ամենայն բարիք։

## **Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասյանի ողջույնի ելույթը**

Արցախի Հանրապետության նախագահ՝ մեծարգո պարունակած Արայիկ Հարությունյան, Հայ առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ տեր Վրթանես Եպիսկոպոս Արքահամյան, գիտաժողովի կազմկոմիտեի հարգելի համանախագահներ, անդամներ, մասնակիցներ, ներկաներ, ողջունում եմ բոլորիդ ԱՀ ԱԺ հյուրընկալ հարկի ներքո ու կարևորում Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության հոչակման 30-րդ տարեդարձին նվիրված միջազգային գիտաժողովի նախաձեռնումն ու կազմակերպումը:

ԱՀ հոչակման 30-րդ տարեդարձին նվիրված բազմաթիվ միջոցառումները մեկնարկել են 2021 թ. օգոստոսի 30-ին և կավարտվեն սեպտեմբերի 27-ին՝ հոգեհանգստի կարգ անցկացնելով Արցախի թեմի Եկեղեցիներում:

Հաշվի առնելով մեր հայրենակիցների և քաղաքական ուժերի խորհուրդները, 2021 թ. սեպտեմբերի 1-ին այս դահլիճում անցկացրել ենք Արցախի Հանրապետության 30-ամյակին նվիրված հատուկ նիստ՝ հիմքում ունենալով արցախյան 3 պատերազմների նահատակների պատվիրանները: Հույսով ու հավատով լեցուն՝ բոլորս պետք է համոզված լինենք, որ անկախության հոչակման հետագա հորեյանները մենք և մեր սերունդները կտոնենք արժանապատիվ կերպով ու խաղաղված հոգով:

Արցախահայության՝ դարերի խորքից եկած ազգային-ազատագրական պայքարի ու մաքառումների հանգրվանը 1988 թ. նոր թափ ստացած արցախյան շարժումն էր և հետագայում՝ ուղիղ 30 տարի առաջ, Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության անկախ պետականության հոչակումը:

Մեր ժողովրդի պատմության շրջադարձային այդ օրը հավաստիացում էր և՝ խորհրդային իշխանություններին, և՝ համայն քաղաքակիրթ աշխարհին, որ արցախցու՝ իր հայրենիքում ապրելու, հարատևելու կամքն անբեկանելի է, լուսավոր ապագայի կերտումը՝ անկասելի:

Արցախյան վերջին՝ 44-օրյա պատերազմը իր ծանր հետևանքներով լրջագույն մարտահրավեր հանդիսացավ մեր ինքնության ու լինելիության, պետականակերտման շարունակականության գործում: Թշնամին չկարողացավ հասնել իր դիվային վերջնական նպատակին՝ ամբողջ Արցախի հայրավիմանը, մեր հինավորց պապենական օրբանի բռնազավթմանը:

Մեր հազարավոր քաջարի գինվորների կյանքի գնով դիմակայվեց և փրկվեց պատմական հայրենիքի 1/4 հատվածը:

Հատկանշական ենք համարում ընդգծել, որ Արցախի Հանրապետության անկախությունը հոչակվել է միջազգային իրավունքի հիմնարար նորմերին ու սկզբունքներին համապատասխան, այսինքն՝ այն բանից հետո, երբ Ադրբեջանը հայտարարեց իր անկախության մասին: ԼՂՀ ստեղծումը չի հակասել Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին հոչակագրին, քանզի այն վերականգնվել է 1918-1920 թվականների Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանների շրջանակներում, երբ Լեռնային Ղարաբաղը չէր մտնում Ադրբեջանի կազմի մեջ:

Անկախ պետականության հոչակագրի ընդունումն այնուհետև ամրագրվեց 1991 թ. դեկտեմբերի 10-ի համաժողովրդական հանրաքվեի արդյունքներով, ըստ որոնց բնակչության ճնշող մեծամասնությունն արտահայտվեց Ադրբեջանից անկախանալու օգտին, մի հանրապետության, որի իշխա-

նությունները հոչակել էին վերջինիս անկախությունը ԽՍՀՄ-ից:

Լեռնային Ղարաբաղում հանրաքվեն անցել է նախկին ԽՍՀՄ-ի այն ժամանակ գործող օրենսդրության շրջանակ-ներում և մասնավորապես, «ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ 1990 թ. ապրիլի 3-ի օրենքին համապատասխան, որի 3-րդ հոդվածով ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում նախատեսված էր ինքնավար կազմավորումների ու հավաքական բնակվող ազգային փոքրամասնությունների՝ հանրաքվեի միջոցով իրենց պետական-իրավական կարգավիճակը որոշելու իրավունքը: Եվ ինչպես հայտնի է, դեկտեմբերի 28-ին կայացած ընտրությունների արդյունքում կազմավորվեց նորաստեղծ հանրապետության օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհրդը, որը 1992 թվականի հունվարի 6-ի իր անդրանիկ նիստում հոչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախությունը: Կարևոր է ընդգծել, որ ի տարբերություն Լեռնային Ղարաբաղի, Ադրբեյջանը անտեսել է սեփական ժողովրդի կարծիքը և չի կազմակերպել հանրաքվե, ու նրա անկախությունը խարսխված է միայն ներկայացուցչական մարմինների որոշումների վրա:

Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, որպես միջազգային վեճ, առաջին անգամ ծագել է 1918 թվականին ռուսական կայսրության փլուզումից հետո՝ անկախ դարձած Հայաստանի ու Ադրբեյջանի միջև տարածքային սահմանագուտան անհրաժեշտության կապակցությամբ: Նույնիսկ Ազգերի լիգան ընդունեց Լեռնային Ղարաբաղի վիճելի կարգավիճակը: Իսկ Կարմիր բանակի կողմից բնիկ հայկական երկրամասի բռնազավթումից հետո Ղարաբաղը մասնաւուց ու հանձնվեց Ադրբեյջանին: Դրանով իսկ Ղարաբաղյան հիմնախնդիրը հանվեց Փարիզի խաղաղ խորհրդաժողովի

օրակարգից, որտեղ նախատեսված էր Լեռնային Ղարաբա-  
ղի քաղաքական կարգավիճակի վերջնական հանգուցալու-  
ծումը:

Փաստորեն, Լեռնային Ղարաբաղը՝ պատմականորեն  
հայկական Արցախը, որն արդեն ճանաչված ու հիշակված  
էր որպես Խորհրդային Հայաստանի անքակտելի մաս,  
Խորհրդային Ադրբեջանին բռնակցվել է Ռուսաստանի կո-  
մունիստական (բոլշևիկյան) կուսակցության Կովկասյան  
բյուրոյի 1921 թվականի հովիսի 5-ի որոշմամբ: Իրականում  
այդ որոշումը իրավական տեսակետից հիմնազուրկ էր,  
քանզի այն անգամ չի քննարկվել ու քվեարկության չի դրվել  
երրորդ երկրի նշված կուսակցական մարմնում, որն ամե-  
նակին էլ օժտված չէր տարածքային հարցեր որոշելու իրա-  
վունքով: Լեռնային Ղարաբաղի բռնազավթումը (աներ-  
սիան) անմիջականորեն իրականացվեց դեպի մահմեդա-  
կան Արևելք «կարմիր հեղափոխության» միջանցիկ տար-  
հանման բոլշևիկյան ծրագրի շրջանակներում: Կովբյուրոյի  
որոշումը դարձյալ ձևականորեն հավասարեցվել է բազմա-  
կողմանի միջազգային պայմանագրի, համաձայն որի Լեռ-  
նային Ղարաբաղին պետք է տրամադրվեր լայն ինքնավա-  
րություն: Սակայն, խախտելով Կովբյուրոյի՝ առանց այն էլ  
իրավական ուժ չունեցող որոշումը, Բաքուն 1923 թվականի  
հովիսի 23-ին իր ընդունած դեկրետով մարզը կազմավորել է  
Լեռնային Ղարաբաղի մեկ հատվածի սահմաններում՝ երկ-  
րամասի բավականին մեծ շրջաններ՝ Քարվաճառը, Քաշա-  
թաղը, Կովսականը, Շահումյանը և այլն, թողնելով նրա  
սահմաններից դուրս:

Խորհրդային Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբա-  
ղի գտնվելու ողջ ժամանակաշրջացքում Բաքվի պաշտոնա-  
կան իշխանությունները հետևողականորեն խախտել են ղա-  
րաբաղցի հայերի տարրական իրավունքները: Տեղ էին գտել  
ազգային շարժառիթներով սպանությունների, անհետա-

ցումների և խոշտանգումների, բռնադատումների, այլախոհության ճնշումների, տասնյակ բնակավայրերի հայաթափման դեպքեր, ինչպես նաև հոգևոր ու պատմամշակութային օջախների օտարացման փորձեր: Սակայն մարզի բնակչությունը միշտ էլ դիմակայել է և իր էթնիկ ինքնատիպությունը պահպանելու վճռականությամբ ու Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հայության ճակատագրից խուսափելու նկատառումներով Ղարաբաղյան իհմնախնդիրը քանիցս բարձրացրել ԽՍՀՄ կենտրոնական մարմինների առջև:

Անշուշտ, արցախահայությունը միակամ էր, որ իր ազգային նկարագիրը պահպանելու և հետագա էթնիկ ուժացումից խուսափելու միակ ելքն ու երաշխիքը մայր Հայրենիքին վերամիավորվելն էր:

Արցախահայության խաղաղ հանրահավաքները, ցույցերն ու երթերը, փաստորեն, Խորհրդային Միության ի լուր աշխարհի հայտարարած ժողովրդավարության և հրապարակայնության առաջին ծիծեռնակներից էին, այդ գաղափարախոսության փորձաքարը: Ժողովրդավարության նորմերի ճշմարիտ արտահայտություն էր ԼՂԻՄ 20-րդ գումարման մարզային խորհրդի 1988 թվականի փետրվարի 20-ի արտահերթ նստաշրջանը, որն ընդունեց պատմական շրջադարձային որոշում Լեռնային Ղարաբաղի ինքնավար Մարզն Աղրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու համար Աղրբեջանական ԽՍՀ Գերագոյն խորհրդի առջև միջնորդելու մասին: ԼՂԻՄ մարզային խորհրդը համարժեք որոշումներ ընդունեց նաև 1988 թվականի հունիսի 21-ի և հուլիսի 12-ի նստաշրջաններում: Սակայն, մերժելով ԼՂԻՄ մարզխորհրդի միջնորդագիրը, ԽՍՀՄ իշխանությունների թողարկությամբ, առավել դիպուկ արտահայտած՝ հանցավոր անգործության ու անփութության պայմաններում Աղրբեջանը իրագործեց Սումգայիթի ջարդը,

որին հետևեցին Կիրովաբադի, Շամխորի, Շամախու, Բաքվի, Աղրբեջանի մյուս բնակավայրերի ու տարածաշրջանի հայ բնակչության կոտորածները, ավարտին հասցվեց շուրջ կես միլիոն հայ ազգաբնակչության բռնի տեղահանումը: Հետևապես կարող ենք հայտարարել՝ 1988-1990 թվականների ընթացքում Աղրբեջանում իրագործվել է պետականակիր ազգի՝ հայ ժողովրդի ցեղասպանություն: Մեր ժողովրդի ինքնորոշման սահմանադրական իրավունքի խաղաղ իրացմանը հակառակ՝ Աղրբեջանը որդեգրեց հիմնախնդիրը ուժի կիրառմամբ հանգուցալութելու քաղաքականություն: Հայ ժողովրդին պարտադրվեց լայնածավալ պատերազմ՝ հազարվոր անմեղ զոհերով ու տասնյակ հազարավոր փախստականներով հանդերձ:

1992-1994 թթ. աղրբեջանա-հարաբայյան առաջին պատերազմն ավարտվեց մեր նորանկախ պետությունը շրջափակած աղրբեջանական ռազմական հենակետերի ոչչացմամբ ու տարածքների ազատագրմամբ, որով, փաստորեն շեշտակի նվազեցին մեր բնակավայրերի վրա հակառակորդի կողմից թիրախավորման և խոցելիության ռազմատեխնիկական հնարավորությունները, ապահովվեց անվտանգության գոտի:

1994 թ. մայիսի 12-ի Բիշքեքյան խաղաղության եռակողմ համաձայնագրի ստորագրումից հետո Աղրբեջանը, տարիներ շարունակ սպառագինվելով, նախապատրաստվում էր Ղարաբայյան հիմնախնդրի ուժային կարգավորմանը՝ իր հանրության շրջանում կիրառելով ատելության և հայատյացության քարոզչամեքենան: Աղրբեջանի իշխանությունների սանձազերծած 2016 թվականի ապրիլյան և Շուրջիայի ու միջազգային ահաբեկչական ուժերի ներգրավմամբ 2020 թվականի 44-օրյա պատերազմները վերահաստատեցին Արցախը հայաթափելու նրանց անթաքույց, հեռագնա նենգ մտադրությունները: Այս պայմաններում բանակցային գործ-

ընթացում ներառել Աղբբեջանի կազմում Արցախին ինչ-որ կարգավիճակ տրամադրելու խնդրահարույց հարց, չի տեղափոխում ոչ մի առողջ բանականության մեջ: Չնայած հակամարտող կողմերի միջև Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ տրամագծորեն հակառակ դիրքորոշումներին՝ մենք միանշանակ հակված ենք բանակացային գործընթացը բացառապես ԵԱՀԿ Մինսկի խմբի հովանու ներքո շարունակելուն միտված պատշաճ միջավայրի հաստատմանը: Մեր այս պաշտոնական դիրքորոշումը պետք է ընկալելի լինի նաև Հարավային Կովկասում իրենց տարածաշրջանային շահերը հետապնդող Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի և այլ երկրների համար:

1992 թ. հունվարի 6-ին ՀՀՀ Գերագույն խորհուրդն ընդունել է անկախության մասին հոչակագիրը, որը սակայն, ռազմաքաղաքական առումով թերի է, որովհետև Աղբբեջանը այդ հոչակագրին պատասխանել է 3 պատերազմով:

Մեր կյանքով ու կենսակերպով պետք է ամրագրենք ու սրբագրենք անկախության հոչակագիրը և հրաժարվենք այն ավարտված համարելու մոլորությունից: Արցախի Հանրապետությունը, նրա ժողովուրդն ու համայն հայությունն ամեն օր պետք է բացեն անկախության հոչակագրի կենսահաստատման նոր էջ: 30-ամյա անկախ պետականության դասերի եզրահանգումը մեկն է՝ նոր իրողությունների պրիզմայի տակ Արցախ-Հայաստան-Սփյուռք միասնականության, ունեցած մարդկային ու նյութական ռեսուրսների մեկտեղում: Այսօր դիմելով համայն հայությանը՝ կոչ ենք անում չհուսալըվել, զինվել համբերությամբ: Մենք պարտադրված ենք տեր կանգնել Աստծո կամոք ու ճակատագրով մեզ բաժին հասած հայրենիքին, բուժել վերքերն ու առաջ գնալ, քանզի սերունդների առջև պատասխանատու ենք, պատասխանատու ենք հանուն հայրենիքի կյանքը զոհած մեր հագրավոր զավակների առջև:

Աստված օրինի մեր հերոսների արյամբ ազատագրված  
Արցախը:

Աստված օրինի համայն հայության երազանքների  
Հայաստանը:

Կրկին ռդունելով գիտաժողովի մասնակիցներին՝  
մաղթում եմ արդյունավետ ու բեղուն աշխատանք:

**ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն,  
ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի  
ողջույնի խոսքը**

**ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԽՅԱՆ ՇՂԹԱՆ\***

Հայկական լեռնաշխարհում համահայկական պետականության բացակայությունը դեռ չի նշանակել առհասարակ պետականության վերացում: Գոյություն ունենալով պատմական Հայաստանի մի հատվածում, որպես կանոն՝ պատմաշխարհագրական նպաստավոր պայմաններ ունեցող տարածաշրջաններում այն ունեցել է պետականության տարբեր դրսևորումներ (իշխանապետություն, կիսանկախ համայնք և այլն) և ժամանակի ընթացքում վերածվել համահայկական պետության, որն էլ ուսումնասիրողներին հիմք է տվել այդուհետ այն համարել լիարժեք պետականություն: Հատկանշական է, որ տեղայնական նշանակության շատ պետական կազմավորումներ հաճախ հիմք են հանդիսացել համահայկական պետականությունների ձևավորման համար:

428 թ. Արշակունիների անկումով միայն վերանում է թագավորությունը, իսկ պետականությունը ձեռք է բերում նոր դրսևորումներ՝ Արևելյան Հայաստանում՝ մարզպանության, իսկ Արևմտյան Հայաստանում՝ սատրապությունների տեսքով, որոնց հիմքում ընկած էր նախարարական համակարգը: Այդ խնդրի խորագիտակ Նիկողայոս Աղոնցն ընդգծում էր, որ «նախարարական վարչակարգը իր կայունությամբ այնպիսի տիպական ու ուշագրավ երևույթ է, որ առանց դրա

---

\* Հոդվածի ընդարձակ տարբերակը տե՛ս Արցախը Հայոց պետականության պատմության հոլովույթում, «Արցախը Հայոց պետականության համար պայքարի քառորդիներում», միջազգային գիտաժողով, 23 փետրվարի 2018, գեկուցումների ժողովածու, Եր., 2018, էջ 44-79:

անհնարին է հայոց իին կյանքի և պատմության գիտական ըմբռնումն ու ճիշտ լուսաբանումը: ... Այդ երկարատև ժամանակաշրջանում նախարարությունը հանդիսացավ քաղաքական կարևոր գործոն և, կարելի է ասել, հայոց պատմության լճակը. նախարարությունները ամբողջ երկրով ցրված քաղաքական ազատության օջախներ էին ..., նրա ժամանակ երկրի արտաքին կախվածությունը համատեղված էր ներքին ինքնուրույնուրթյան հետ, և այդ ճանապարհով պահովվում էր երկրի ինքնատիպությունը» [Ադոնց Նիկողայոս, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Եր., 1987, էջ 241]:

Արևելյան Հայաստանում Արշակունիներից հետո իշխանությունը թագավորից անցնում է նախարարական դասին. Երկիրը դառնում է հարկատու Սասանյաններին, սակայն զինական ուժը մնում է նախարարների իրավասության ներքո: Այդ մասին պատմիչ Եղիշեն գրում է, որ երբ պարսից արքունիքը «...իբրև զնա (Արտաշես արքային - Ա.Մ.) ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր թագաւորութիւնն. զի թէպէտ և գանձն յարքունիս Պարսկաց երթայր, սակայն այրուծին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի» [Եղիշէի վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Եր., 1957, էջ 6]:

Այսպես՝ թագավորին փոխարինած մարզպանը ստանձնում է նրա մի շարք գործառույթներ, պահպանվում են Արշակունիների օրոք առկա գրեթե բոլոր գործակալությունները՝ հազարապետությունը, սպարապետությունը, մեծ դատավորությունը և այլն: Հատկապես ուշագրավ է մաղխազության գործակալության, այն է՝ թագավորի թիկնազորի պետի պաշտոնի պահպանումը, այն դեպքում, երբ թագավոր այլևս չկար: Ի դեպ, ոչ միայն պաշտոններն էին պահ-

պանվել, այլև շատ դեպքերում՝ նաև դրանք իրենց նախկին տերերին՝ նախարարական հայտնի տներին՝ Մամիկոնյան-ներին, Ամատոնիներին, Խորխոռոնիներին հանձնելու ավանդույթը:

Վահանանց պատերազմից հետո Արևելյան Հայաստանում Պարսկաստանը ճանաչեց հայերի ինքնավար ապրելու իրավունքը և առժամանակ դադարեցրեց կրոնական հայածանքները։ Վարդանանց ու Վահանանց պատերազմների ընթացքում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի շնորհիվ և Նվարսակի հաշտության կնքումով 480-ական թվականների կեսերից Հայոց պետականությունն ինքնավար տարբերակով վերականգնվեց ինչպես Արևելյան Հայաստանի կենտրոնական հատվածում՝ Արարատյան երկրում, այնպես էլ Հայոց Արևելից կողմերում Արցախում Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ։

Հետագա դարերում Արցախում պետականության պահպանման Առանշահիկների ավանդույթները շարունակեցին Հասան-Զալայանները և տոհմիկ ազնվականական այլ տներ։ Այսպիսով, V դարի վերջից Արցախը դարձավ տեղայնական մակարդակով հայոց պետականության պահպանման կենտրոններից մեկը։ Լեռներով մյուս նահանգներից կտրվածությունը հնարավորություն տվեց Արցախին դարեր շարունակ մնալ հայոց պետականության կրողներից մեկը։ Արցախի տեղն ու դերը հայոց պետականության համակարգում ավելի ընդգծվեց ուշ միջնադարում։

«Ուշ-միջնադարյան Հայաստանում,- գրում է Բ. Ովուբարյանը,- թաթար-մոնղոլական զավթիչների, ապա նրանց հետքերով եկած ակ-կոյունլու և կարա-կոյունլու թուրքերի կործանարար հարվածների տակ, ոչնչացել էին հայկական իշխանությունները, և խաչենը համարյա միակ վայրն էր, ուր պահպանվում էին հայ պետականության բեկորները, և ուր դեռևս բորբոք էին մնում հայոց քաղաքական ազատութ-

յան կայծերը...» [Ովուբարյան Բ. Ա., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Եր., 1975, էջ 6]: Արցախում, հարակից գավառներում և Հյուսիսարևելյան Հայաստանի այլ շրջաններում պահպանված իշխանական տների (Հասան-Զալայյաներ, Դոփյաններ, Օքելյաններ, Մելիք-Շահնազարյաններ և այլք) շառավիղները, ըստ մեծանուն վիպասան Րաֆֆու, երբեք չկորցրին «իրենց ինքնավարության իրավունքները» և ձևավորեցին հայ մելիքական դասը:

Նոր ժամանակներում (XVII դարի կես – 1918 թ.) հայոց պետականության պատմությունն ունի իր առանձնահատկությունները: Առաջին շրջափուլում (XVII դարի կես – XVIII դարի սկիզբ), որը կարելի է անվանել պետականության տեղական (տեղայնական) շառավիղների ժամանակաշրջան, բացակայում է համահայկական պետականությունը, բայց այն առկայօնումներով ու զանազան դրսևներով՝ ինքնիշխան կազմավորումների (սղնախներ՝ պաշտպանական ամրոցներ, մելիքություններ, իշխանապետություններ, ինքնավար համայնքներ) տեսքով երևան է գալիս Հայաստանի առանձին շրջաններում՝ Արցախում, Սյունիքում, Գեղարքունիքում, Մոկսում, Շատախում, Սասունում, Կիլիկիայի լեռնային հատվածներում:

Այդուհետ շարունակվում են ազգային-ազատագրական պայքարի ընդհանուր շղթայում պետականության վերականգնման համար գործնական քայլերը Սյունիքում և Արցախում: Դրանով սկսվում է **պետականության վերականգնման գործնական քայլերի փուլը** (1722-1747 թթ.): Սյունիքում Դավիթ բեկի գլխավորած ազատագրական պայքարը պսակվում է հաջողությամբ. 1724 թ. հրանի Թահմասապ II շահը ճանաչում է Սյունիքի հայկական իշխանությունը՝ հաշվի նստելով հայերի ազատագրական ծգոտուաների հետ և նպատակ ունենալով Դավիթ բեկի իշխանապետությունը պահպանում է իշխանության վերականգնումը:

յունն օգտագործել ընդհանուր թշնամու՝ Օսմանյան կայսրության դեմ:

Հայ-իրանական համագործակցության արդյունքում 1730-ական թվականներին Նադիր խանի (շահ) ջանքերով ամրապնդվում են հայկական մելիքությունները ոչ միայն Արևելյան Հայաստանի լեռնային շրջաններում (Սյունիք, Արցախ, Գեղարքունիք), այլ նաև հարթավայրերում: Նրա արդեն 1734 թ. իրովարտակով Արցախի Դովշանլու գյուղի ավագերեց Դավիթը հաստատվում է ինչպես այդ, այնպես էլ Խաչենի մի քանի այլ գյուղերի ավագի ու մելիքի պաշտոնում: «Կարգադրությանը չպետք է հակառակվեն,- իրահանգվում էր փաստաթղթում,- և այն ընդունելով որպես խիստ կարգադրություն՝ ջանք չխնայեն նրա կատարման հարցում: Թող այն իրենց պարտականությունը համարեն» [Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2 բ, վավերագիր 182, բնագիր և Ք. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն իրովարտակներ, պրակ I, Եր., 2005, վավ. 2]:

Մեկ այլ իրովարտակով Նադիրը Գեղարքունիքի մելիք Մելիքջան Մելիք-Շահնազարյանի որդուն՝ Մանուչարին, «Ետ նմա իշխանութիւն, ունել ընդ ինքեան զդահիճ...., և անուանեաց զնա միրիմիրան կամ պէյէրապէյի ի վերայ Արարատեան երկրի և մասին ինչ Սինեաց» [Մելիք-Սիլիմեանց Հ. Զմիւռնիացի, Համառոտութիւն պատմութեան Հայկագեանց, Մատենադարան, ձեռագիր 2888, էջ 341ա, հմմտ.] Հայոց պատմություն, <<ԳԱԱ հրատ., հ. 3, գիրք առաջին, Եր., 2010, էջ 55]: 1738 թ. շահական հատուկ հրամանագրով մուսֆության իրավունքներ շնորհվեցին Երևանի մելիքներ Հակոբանին ու Մկրտումին՝ «նմանների մեջ լավագույն խնդրակուների բարի ծառայության համար այնպես, ինչպես նախկինում արքայական հրամանագրով հաստատվել էր նրանց մելիքության մուսֆությունն ու մյուս իրավունքնե-

ող], ըստ կարգի...» [Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1q, վավ. 1032]:

Բազմաթիվ հայ մելիքներ պարսիկների հետ դաշնակցած պայքարում են ընդհանուր թշնամու՝ օսմանցիների դեմ: Այդ պայքարում փաստական ինքնավարություն են ձեռք բերում հատկապես Արցախի մելիքները, Դիզակի մելիք Եգանի գլխավորությամբ, որոնց գինական ուժերի հետ Նադիրի գործակցությունը բարձրանում է նոր աստիճանի: Արցախում՝ Գանձակի նախկին բեկլարբեկությանը ենթակա Վարանդայի, Դիզակի, Ջրաբերդի, Խաչենի և Գյովհստանի գավառներում 1736 թ. ծնունդ է առնում հայկական նոր ինքնավարություն՝ Խամսայի (արաբերեն խամսա՝ հինգ) մելիքությունները: Նադիրը, խիստ կարևորելով հայության դերը հակաթութքական պայքարում, չի հապաղում ճանաչել Արցախյան այս յուրահատուկ պետականությունը: Նա, փաստորեն, վավերացնում է հայերի շուրջ 15-ամյա հերոսական պայքարի արդյունքում ստեղծված իրողությունը:

Այսպիսով, Արցախում պետականության յուրօրինակ դրսևորումներ եղան հայկական սղնախներն ու մելիքությունները: Պատահական չեն, որ Արցախի դերը խիստ կարևորվեց XVIII դ. Երկրորդ կեսին առաջ քաշված ազատագրական ծրագրերում:

XVIII դ. Երկրորդ կեսը և XIX դ. առաջին կեսը Հայաստանի ազատագրության նոր ծրագրերի մշակման և մասնակի գործադրման փուլն էր: Այն սկսվում է հնդկահայ նշանավոր գործիչ Հովսեփ Էմինի բուռն գործունեությամբ: 1768-1774 թթ. ոռու-թուրքական պատերազմը և 1783 թ. Գեղրգիևսկի ոռու-վրացական դաշնագրով Վրաստանի ոռուական հովանավորության ընդունումը նոր խթան հանդիսացան ավելի բովանդակալից ազատագրական ծրագրերի մշակման համար: 1769 թ. աստրախանաբնակ հայ գործիչ Մովսես Սարաֆյանի կազմած ծրագրում նախատեսվում էր հայոց թա-

գավորության վերականգնում Ռուսաստանի օժանդակությամբ: Պետականության վերակերտման գործում կարևորություն էր տրվում Հայաստանի այն շրջանների փորձին, որոնք ժամանակ առ ժամանակ եղել էին ինքնավար կազմավորումներ և հայ ժողովրդի կողմից ընկալվել որպես ընդորինակության արժանի ու թագավորության վերականգնման առավել հնարավոր տարածաշրջաններ: Մասնավորապես, մատնանշվում էին Արցախն ու Սյունիքը: Պատահական չէ, որ ապագա Հայոց թագավորների թեկնածուների շարքում Մ. Սարաֆյանը տեսնում էր Արցախի մելիքներից մեկին: Ակնհայտ է, որ 1722-1747 թթ. Արցախում պետականության վերականգնման իրողությունը և մելիքությունների շառավիղները հստակ կնիք էին դրել ազատագրական պայքարի դեկապարների նմանատիպ մտածողության վրա:

Ուշագրավ է, որ այդ ժամանակ մելիքները ևս զիտակցում էին թագավորության վերականգնման գործում իրենց առաքելությունը, չէին մոռանում իրենց հայոց արքայական ծագումն ու առիթ առ առիթ այդ մասին հիշատակում էին պաշտոնական գրագրություններում։ Այսպես. 1781 թ. սեպտեմբերի 2-ին ոռու մեծ զորավար Ավեքսանդր Սովորովին և Եկատերինա II կայսրուհուն հասցեագրած հերթական նամակներում, որտեղ խնդրում էին զինական օգնություն մահմեդականների դեմ անհավասար պայքարում, Արցախի մելիքները (Աղամ, Բեգլար, Խորայել) իրենց մասին գրում էին. «Մեք ներքոյ անվանեալք Ղարաբաղու հայոց թագաւորաց ազնիւ զինվորած(g) մնացեալ ժառանգք մելիքները», «Մեք ի ազգաց հայոց ի տանիցն Արշակունեաց և Ալշանից ի արքունական գահոյից, մնացեալ ազնիւ զինաւորացէն ժառանգ մելիքներս և մեք բոլոր երկիրս իշխանովք հանդերձ...» [Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800 гг.), сборник документов, т. IV. Ер., 1990, с. 181]:

Հայոց պետականաշինության գաղափարական տեսլականը նոր բարձրության են հասցնում հնդկահայ նշանավոր գործիչներ Շահամիր Շահամիրյանը և Մովսես Բաղրամյանը: Մադրասում 1771 թ. նրանց հիմնադրած տպարանում շուտով լույս են տեսնում Մ. Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ» և Շ. Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատությունները, որոնցում անդրադարձ էր կատարվում հայ ժողովրդի ծանր վիճակին և միապետության փոխարեն, առաջարկվում էր ստեղծել ժողովրդավար պետություն, որն ըստ հեղինակների՝ հայոց պետականության կործանման գլխավոր պատճառներից է եղել: Ի տարբերություն նախորդ բոլոր ծրագրերի Շ. Շահամիրյանի նախագիծը, որը հայտնի է «Հարավային ծրագիր» անունով, առաջ էր քաշում տվյալ ժամանակաշրջանի համար արտառոց՝ ընդիհանուր ընտրական իրավունքի հիման վրա ձևավորված հանրապետական Հայաստան ստեղծելու գաղափարը: Ապագա Հայաստանում ամեն ինչից վեր լինելու էր ոչ թե միապետի կամքը, այլ օրենքը: Ըստ «Որոգայթ փառացի»՝ անհրաժեշտ է «կալ և մնալ ձեզ կախեալ ըստ օրինաց ձերոց զի ո՞չ ոք իցէ՛ որ իշխնեցէ ի վերայ ձեր բայց օրինս ձեր» [Գիրք անուանեալ Որոգայթ փառաց, Մադրաս, 1773, էջ 15-16]:

Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը, անդրադառնալով XVIII դարի երկրորդ կեսի ազատագրական ծրագրերին, ընդգծում է, որ առավել էականն ու հատկանշականն այն է, որ ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանի և Հնդկաստանի գաղութեներում երկիրն ազատագրելու հետ մեկտեղ միահամուռ ու աներեր ինդիր էր դրվում վերականգնելու հայկական անկախ պետականությունը:

XIX դ. առաջին երեսնամյակին գրավելով Արևելյան Հայաստանը՝ ռուսական արքունիքը փորձեց Անդրկովկասում մտցնել կայսերական վարչակարգեր: Ուստիև առժամանակ պահպանվեցին տեղական ինքնակառավարման առանձին

տարրեր, որոնք կային պարսկական ազդեցության շրջանում: Միևնույն ժամանակ վերացվեցին ներքին ինքնավարության դրսերությունները հանդիսացող մելիքությունները, որոնց թվում և Արցախի մելիքությունների շառավիղները:

XIX դ. երկրորդ կեսից սկսվում է մի ժամանակաշրջան, երբ Արևելյան Հայաստանում ռուսական վարչակարգերի վերջնական հաստատումից հետո, ինքնիշխանության գրեթե բոլոր սաղմերը վերանում են, իսկ Արևմտյան Հայաստանում, բացառությամբ Սասունի, Կիլիկիայում՝ Զեյթունի, պայմանավորված հայ ժողովրդի համար ստեղծված քաղաքական ծանրագոյն պայմաններով, պետականության վերականգնման համար պայքարը փոխարինվում է Օսմանյան կայսրության կազմում ընդամենը հայկական ինքնավարության համանելու տեսլականով:

1918 թ. մայիսի 28-ով սկսվող **Հայաստանի Հանրապետության (1918-1920) պատմության փուլը** նշանավորվում է ոչ միայն անկախության վերականգնումով, այլ նաև իր վարչական կառուցվածքով ժողովրդավարական՝ խորհրդարանական հանրապետության ստեղծումով: Ընդամենը երկուսում են տարիների ընթացքում Առաջին հանրապետությունը ձեռք է բերում անկախ պետականությանը բնորոշ բոլոր հատկանիշները՝ տարածք, իշխանության մարմիններ, բանակ, միջազգային ճանաչում և այլն:

Նորագոյն ժամանակաշրջանում Արցախը և ապա նաև Սյունիքը, արտաքին գործոնների պատճառով հնարավորություն չունենալով միանալ Հայաստանի Հանրապետությանը, ստեղծեցին սեփական պետական կազմավորումները և պայքար ծավալեցին Մայր հայունիքին միանալու համար: 1918 թ. հունիսի 22-ին Շուշիում հրավիրվում է Արցախսահայության առաջին համագումարը, որը կազմում է Ղարաբաղի ժողովրդական կառավարություն և երկրամասը հոչակում անկախ վարչատարածքային միավոր: Հետագա համագու-

մարներում Արցախի հայությունն իր որոշամներով կրկնում է Հայաստանի Հանրապետությանը միանալու իր վճռականությունը: Աղբբեջանի ոտնձգությունների դեմ մղած համար ու արյունալի պայքարից հետո Արցախահայության 9-րդ համագումարը 1920 թ. ապրիլի 25-ին երկրամասը հոչակում է ՀՀ մաս: Այդ երկու տարիների ընթացքում Արցախը դառնում է հայոց նորագույն պետականության կերտման գլխավոր կենտրոններից մեկը:

Քեմալաբոլչիկյան գործակցության արդյունքում 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության անկումից հետո անկախության դրոշը շարունակում է ծածանել նոյն ամսի 25-ին Գարեգին Նժդեհի ղեկավարությամբ Տաթևի համազանգեգուրյան առաջին համագումարում հոչակված Ինքնավար Սյունիքը, որը 1921 թ. ապրիլի 27-ին վերանվանվում է Լեռնահայաստան, իսկ հունիսի 1-ին՝ Հայաստանի Հանրապետություն: Սյունիքը դառնում է ամբողջ անդրկովկայայան տարածաշրջանում վերջին անկախ պետական կազմավորումը:

Խորհրդային Հայաստանը (մինչև 1936 թ. Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն՝ ՀՍԽՀ) քանի որ ուներ պետությանը բնորոշ հատկանիշների մեծ մասը, անշուշտ նոյնպես պետականություն էր, առավել ևս, որ իր գոյության առաջին տարիներին ուներ հարաբերական անկախ կարգավիճակ:

Միաժամանակ չի կարելի մոռանալ, որ նոյն՝ հարաբարական անկախության ենթակիովում, օգտվելով Հայաստանի համար ստեղծված արտաքին ու ներքին անբարենպաստ պայմաններից, հայկական մի շարք տարածքներ (Նախիջևան, Լեռնային Ղարաբաղ, Ուտիք, Կարսի մարզ, Սուլմալուի գավառ և այլն) դուրս մնացին ՀՍԽՀ սահմաններից: Դրանցից գոնե Լեռնային Ղարաբաղին Աղբբեջանի կազմում տրվեց ինքնավար մարզային կարգավիճակ 1923 թ.

հովիսի 7-ին, երբ կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը (ԼՂԻՄ): Վերջինս թեև գրկված էր ինքնավարության շատ տարրերից, այնուամենայնիվ իր սահմանափակ ինքնավարության շնորհիվ կարողացավ դիմակայել Աղրբեցանի ազգայնամոլ քաղաքականությանը և մինչև 1988 թ. Արցախյան շարժումը պահպանել երկրամասի ընդհանուր հայկական դիմագիծը:

Նորագոյն ժամանակաշրջանում Հայոց պետականության երրորդ՝ անկախության փուլը սկսվում է 1991 թ. սեպտեմբերից, երբ ամսի 2-ին կյանքի է կոչվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (Արցախի Հանրապետություն), իսկ 21-ին անցկացված համաժողովրդական հանրաքվեից հետո՝ Հայաստանի Հանրապետությունը: Այս գործընթացի հիմքերը փաստորեն որվեցին Արցախյան ազատագրական հումկու շարժումով, 1990 թ. մայիսին կայացած բազմակուսակցական, ժողովրդավարական ընտրություններով և նորընտիր Գերագոյն խորհրդի (հետագայում՝ Ազգային ժողով) կողմից օգոստոսի 23-ին ընդունած «Անկախության հոչակագրով»:

Ներկայումս հայկական երկու պետությունները՝ ՀՀ-ն և ԱՀ-ն, բոլորելով իրենց վերանկախացման երեսնամյակը, աշխարհաքաղաքական ծանրագույն պայմաններում իսկ, շարունակում են հայոց հինգիազարամյա պետականության երթը:

Այսպիսով՝ հայոց պետականության ուրվագծային պատմության վերոհիշյալ շարադրանքը հուշում է, որ անհրաժեշտ է վերանայել հայ պատմագրության մեջ գոյություն ունեցած այն թյուր տեսակետը, որ դարեր շարունակ հայ ժողովուրդը եղել է պետականազուրկ: Անտարակույս, ժամանակ առ ժամանակ կործանվել է միայն միասնական թագավորությունը, իսկ պետական ինքնատիպ դրսնորումները՝ տեղական թագավորությունները, իշխանապետությունները,

մելիքությունները և այլ կազմավորումները գրեթե բոլոր պատմափուլերում եղել են և դրանով իսկ պահպանել հայկական պետականության ընդհանուր շղթան: Այդ շղթայում, ինչպես Երևաց, Արցախը մշտապես ունեցել է իր ծանրակշիռ տեղն ու դերը:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ մաղթում եմ արդյունավետ աշխատանք:

**Հայ առաքելական եկեղեցու Արքախի թեմի առաջնորդ  
Վրթանես Եպիսկոպոս Աբրահամյանի  
օրինանքը և ողջույնի խոսքը**

**«Հայրենիք սպեղծելը հերոսություն է,  
Հայրենիք շենացնելը՝ առաքինություն»:**

Վազգեն Ա  
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Արքախի Հանրապետության մեծարգոն նախագահ տիար Արայիկ Հարությունյան, ԱՀ ազգային ժողովի մեծարգոն նախագահ տիար Արթուր Թովմասյան, ԱՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի մեծագնիվ նախարար տիկին Լուսինե Ղարիբանյան, գիտաժողովի պատվարժան մասնակիցներ՝ սիրելի քույրեր և եղբայրներ, Մայր Հայաստանի և Արքախի Հանրապետության անկախության վերականգնումը հայ ժողովրդի դարավոր իղձերի իրականացումն էր և նրա ազատ ապրելու բնական ու Աստվածապարգև իրավունքի իրացումը:

Մեր ազգը, որպես Հայկի սերունդ և քրիստոնեական արժեհամակարգի կրող, մշտապես պայքարի մեջ է եղել չարի դեմ: Հազարամյակներ շարունակ փորձել են ու էլի փորձում են ջնջել Հային ու Հայկականը, բայց չեն հաջողի, որովհետև մեր ժողովրդի կյանքը բացի նյութական իրողություն լինելուց, նաև հոգևոր իրողություն է: Երբ Հայկն ըմբուստացավ Բելի դեմ և վերադարձավ մեկ Աստծո պաշտամունք ունեցող իր հայրերի երկիրը, երբ մոտ 2000 տարի առաջ մեր ազգը վերադառնալով իր արմատներին՝ ընտրեց դեպի Աստված գնալու Քրիստոսի նախանշած ճանապարհը, մեկընդմիշտ ամրագրեց, որ դեպի հավիտենություն քայլող ազգ է:

Գաղտնիք չէ, որ հայ ազգը շատ երկար տարիներ լինե-

լով այլ ժողովուրդների լծի ու իշխանության տակ՝ չի կարողացել կերտել իր պետականությունը: Այս է այն գլխավոր ազդակը, որ զգաստացնում է ամեն հայի միտք՝ հասկանալու, թե որքան է պետականություն ունենալու գինը: Երբ Հայոց ազգը պետականություն չուներ, Մայր Եկեղեցին էր կրում ժողովրդին առաջնորդելու ծանր լուծը: Միշտ հալածանքի ժամին Եկեղեցին դիմել է այլ պետությունների, որ պեսզի կեղեքվածին ու որբացածին ողորմություն անեն, սակայն, ավաղ, աշխարհը ինչպես միշտ իր հոգսերով էր և բնավ մեզ լսելու անգամ ժամանակ չուներ:

Թե ինչպիսի նշանակություն ունի ինքնիշխան և ուժեղ պետություն ունենալը, կարծում ենք լավագույնս բնութագրել է Հայոց Հայրապետ, ազգային ազատագրական պայքարի առաջամարտիկներից Խորիմյան Հայրիկը. «Երբ գնացի Բեղյինի կոնգրես մեր ժողովրդի իրավունքները բարձրածայնելու համայն աշխարհով, միայն այդժամ հասկացա, որ նախ և առաջ պետք է ունենալ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆԱԼՈՒ իրավունք: Այդ իրավունքը նվաճում են զենքով: Երևի լսել եք երկաթե շերեփի մասին: Եվրոպական քաղաքակիրթ ազգերը, որոնք մեզ թվում էին օրինապաշտ և արդար, խղճահարությունից բացի ոչինչ մեզ չպետքին: Ուսասպանը, որ թվում էր մեր ժողովրդի մեծ բարեկամն է, իր շահերից բացի ոչինչ չէր դեսնում և չէր լսում: Հայ ժողովուրդը կարծես ծմուան սառնամանիքին դրսում հայդնված անոթի երեխա լիներ, որի առջև բոլորը փակեցին իրենց դաները: Հայ ժողովուրդը անդեր էր: Բայց ամենից կարևորը, որ ես հասկացա՛ այն էր, որ մենք դերեր չպետք է փնտրենք դրսում...»:

Այսօր՝ ուղիղ 30 տարի հետո, բոլորիս միավորել է հիշողությունն ու վերարժնորումը այն օրվա, երբ տասնամյակների ծանր շղթաները կոտրվեցին, երբ հայի հոգու մեջ դարերով անթեղված, ճնշված ու խտացված ուժի վերածված ա-

զատության աստվածաստեղծ ծգողոմը ժայթքեց և ստացավ իր արժանի բանաձևումը՝ Արցախն ու Մայր Հայրենին այլս անկախ են: 30 տարի առաջ հայը ի լուր աշխարհի արձանագրեց, որ ունի իր դարավոր հայրենի հողում ազատ ապրելու իրավունք: Մեր ժողովուրդը ընտրեց արժանապատիվ ապրելու ուղին՝ գիտակցելով թե ինչ թանկ գին պետք է վճարի այդ ընտրության համար. բազում փորձություններ հաղթահարելով՝ ազատագրեց Արցախը, որպեսզի այնտեղ կարողանա իրականություն դարձնել իր ազատ ապրելու իրավունքը:

Արցախի անկախության վերջին ծանր փորձության թողած վերքերը դեռ չեն սպիացել, մեր շուրջը դեռևս մութ ամպեր կան, Արցախի հարցը դեռ ամբողջովին լուծված չէ, մեր տնտեսական, ստեղծագործական, արոյունաբերական զորությունը նորից տկարացել է, և ոչինչ այնպես չէ, ինչպես որ մենք կուզեինք: Բայց մենք է, որ ամեն բան պետք է անենք վիճակը փոխելու համար: Աստված Երկնքից հրեշտակներ չի ուղարկելու մեր կյանքը բարելավելու համար: Մենք ենք Աստծո գործակիցները այս հողի վրա՝ մեր աշխատանքով ու մեր ջանքերով, չինի թե մեր զավակները մի օր ասեն. «մեր հայրերը և մայրերը այնպիսի ճողիմ հարցերով ու ներքին պայքարով իրար դեմ ելան, որ մթագնեցին մեր ազատությունն ու անկախությունը»:

Հիմա, երբ այստեղ համախմբվել ենք մեր կարևոր ձեռքբերումներից մեկի՝ անկախությանը նվիրված այս գիտաժողովի շրջանակներում, լավագույն առիթն ունենք մտորելու, դասեր քաղելու, մեր բացթողումները վեր հանելու և առաջ շարժվելու՝ կամքը ավելի հզորացնելու համար: Այսօր մենք պետք է մեր անձը մոռանանք, միանանք հոգևոր հաղորդությամբ և մեր աղոթքներն ու ջանքերն ուղղենք մեր հայրենիքի հզորացմանը, որովհետև ամեն ինչ անհետ կորած չէ: Աստված թողել է այս մնացորդացը, որի վրա պետք է

ամուր կանգնենք ու առաջ շարժվենք:

**«Նահարակների արյունը գծում է մեր կյանքի և մեր պարտականության ճանապարհը»:** Մեր նվիրյալ նահատակների պատգամն է, որ կարողանանք մեր կյանքը՝ ի հարգել այն, ինչը որ նրանք մահով և արյունով հարգեցին: Պետք է հասկանանք, որ մեզնից վեր է մեր հողը, մեր հայրենիքը, մեր Եկեղեցին, և այդ գիտակցությունն է միայն, որ պետք է փրկի Արցախը:

Մենք՝ քրիստոնյաներս, ունենք դեպի մի ուրիշ աշխարհ ձգտելու իդեալը, Ավետարանական խոսքով Աստծո թագավորության աշխարհը, որը հենց Սիրո աշխարհն է: Այս կապակցությամբ Քրիստոս ասաց, թե Ես այս աշխարհից չեմ, այլ մի ուրիշ աշխարհից, Գերագույն Սիրո աշխարհից և բոլորդ հրավիրված եք այդ աշխարհ:

Եթե մենք որպես ազգ, որպես գիտակից քրիստոնյա ժողովուրդ չենք ձգտում մեկ մեկու սիրել Աստվածային պատվիրանով, ապա մեր ազգի նկատմամբ աշխարհի անտարբեր վերաբերմունքը կարող ենք արդարացված համարել: Սակայն, եթե մենք հանձն ենք առնում մերձավորին սիրելու պատվիրանը, հենց այդ սերն էլ դառնում է թե՛ անձնային, թե՛ համազգային գերագույն պատվանդանն ու ամրոցը:

Աստված մարդուն ստեղծել է իր պատկերով և նմանությամբ, և այն արտահայտվում է մարդու ազատ կամքով ու ինքնիշխան բնությամբ: Մարդը իմացական արարած է՝ օժտված ազատությամբ և իր արարքների տերը լինելու կարողությամբ: Հետևաբար՝ կամքը մերն է, և ընտրությունը՝ ևս:

Այս մտածումներով մեր օրինությունն ենք բերում գիտաժողովի նախաձեռնողներին և բոլոր մասնակիցներին՝ մաղթելով բարի և արդյունաբեր ընթացք այս կարևոր գիտական աշխատանքին:

**Աստծո օրինությունը և խաղաղությունը ամենքիս:**

## **ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**

## ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԱՆ

ԱՀ ԱԺ արտաքին հարաբերությունների  
մշտական հանձնաժողովի նախագահ,  
պ. գ. դ., պրոֆեսոր  
vahrambalayan@mail.ru

### ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (1991-2021 թթ.). ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ, ԿՈՐՈՒՍՆԵՐ

**Հիմնաբառեր՝** Հայաստան, Արցախ, հանրապետություն, Ադրբեյչան, քաղաքական, տնտեսական, ազգային, անկախություն, պետականություն, միջազգային, իրավական:

Արցախի Հանրապետությունն իր կազմավորումից ի վեր անցել է բարդ ու դժվարին ճանապարհ՝ ունենալով ինչպես ձեռքբերումներ, այնպես էլ կորուստներ, որոնց քննությունը թույլ կտա հնարավորինս անցնցում դիմակայել ապագա մարտահրավերներին:

1980-ական թվականների կեսերին սկիզբ առած Արցախյան ազատագրական շարժումն ուներ մեկ նպատակ՝ վերականգնել պատմական արդարությունը և Մեծ Հայքի 10-րդ նահանգի մի մասը, որը ԽՍՀՄ վարչաքաղաքական համակարգում ուներ ինքնավար մարզի կարգավիճակ, վերամիավորել Մայր Հայաստանին: Դա կարող էր հնարավոր դառնալ խորհրդային ծավալապաշտ կայսրության՝ ԽՍՀՄ փլուզումից հետո միայն, քանի որ խորհրդային պատմակուլում Լեռնային Ղարաբաղը խորհրդային Ադրբեյչանի կազմ մտցնելը ծառայել էր խորհրդա-թուրքական «բարեկամության» խորապատկերի վրա նոր ձևավորվող կայսրության շահերի սպասարկմանը: Պատահական չէ, որ ԽՍՀՄ կազմաքանդման վերջին շրջանում՝ 1988-1991 թվականներին, խորհրդային դեկավարությունը տնտեսական, քարոյահոգեբանական, քաղաքական, ռազմական ճնշումների էր են-

թարկում արցախահայությանը: Նպատակը մեկն էր՝ փորձել ապրել նախորդ 70 տարիների տրամաբանությամբ: Բայց հանրային կյանքը կարգավորող օրինաչափությունները, որոնց մի մասն առ այսօր ուսումնասիրված չեն, գործում էին լիովին հակառակ տրամաբանության տիրություն: Երկրի կառավարման վարչականացված, բյուրոկրատական համակարգի գոյությունը, պլանային տնտեսության կուակցականացված, գաղափարականացված վիճակը, սոցիալ-տնտեսական կյանքի վատթար կացությունը, արդարության սկզբունքի մասին աղճատված պատկերացումները, սպառազինության մրցավաքը, սոցիալիստական և կապիտալիստական երկրների անհարկի դիմակայությունը անխուսափելի դարձրին ԽՍՀՄ կործանումը:

Խորհրդային 70 տարիների ընթացքում արցախահայությունը, ՀԽՍՀ-ից կտրված, ԽՍՀՄ կազմում ապրեց ներքին ինքնավար կյանքով՝ խոր հավատով, որ պայքարի արդյունքում կվերականգնվի պատմական արդարությունը:

Արցախյան շարժման առաջին իսկ օրերից ԽՍՀՄ բարձրագույն քաղաքական ղեկավարության որոշ շրջանակներում իշխող էր այն մոտեցումը, որ խորհրդային երկրի իրավահաջորդ Ռուսաստանը երկրագնդի տարբեր տարածաշրջաններում իր տնտեսական և ռազմաքաղաքական ազդեցությունը պահպանելու համար նախկին կայսրության որոշ հատվածներում անկախ վարչական միավորների կարգավիճակով պետք է ունենա հուալի դաշնակիցներ: Այդ նոր վարչաքաղաքական միավորների ձևավորման գործընթացը պետք է համապատասխաներ ԽՍՀՄ գործող օրենսդրությանը, իսկ դրանցում ապրող և մեծամասնություն կազմող ժողովուրդն էլ ունենար պատմականորեն ամրագրված իրավունքներ:

Մեկ դիտարկում ևս. Խորհրդային ղեկավարության այն մասը, որը շարունակում էր կառչած մնալ ԽՍՀՄ-ը բարեփո-

խումների միջոցով պահպանելու գաղափարին, ազատագրական պայքարի սկզբնափուլում դրականորեն կամ համենայնդեպս թշնամաբար չէր տրամադրված Արցախյան շարժման նկատմամբ: ԽՍՀՄ պետական անվտանգության մարմինները, ինչպես ՀԽՍՀ-ում, այնպես էլ ԼՂԻՄ-ում կոշտ չվերաբերվեցին գործընթացի և շարժման ակտիվիստների նկատմամբ: Ավելին, ՀԽՍՀ պետական անվտանգության կոմիտեի նախագահ Մարիոս Յուզբաշյանը բարյացակամ վերաբերմունք ուներ շարժման նկատմամբ: Ինչպես ՀԽՍՀ-ում, այնպես էլ ԼՂԻՄ-ում անվտանգության մարմինների նման դիրքորոշումը հիմնականում պայմանավորված էր շարժման ոչ հակախորհրդային բնույթով: Դրանով կարելի էր բացատրել նաև 1987 թ. վերջերին և 1988 թ. սկզբներին ԼՂԻՄ-ից Մոսկվա մեկնած պատվիրակությունների նկատմամբ մեղմ վերաբերմունքը: Սակայն 1988 թ. փետրվարի 20-ից մինչև 1991թ. սեպտեմբերի 2-ը ՀԽՍՀ և ԼՂԻՄ իրավասու մարմինների որոշումները ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու վերաբերյալ ԽՍՀՄ ղեկավարության կողմից կոշտ և մերժողական արձագանքի արժանացան: Դրան հակառակ, 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հոչակումը լուր համաձայնությամբ ընդունվեց Մոսկվայի կողմից: ՀԽՍՀ-ի հետ ԼՂԻՄ-ի վերամիավորումը անհնարին համարող ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները յուրաքանչյուր առիթով ակնարկում էին մարզը կենտրոնական իշխանությունների ենթակայության տակ դնելու նպատակահարմարության մասին: 1988 թ. մարտի 25-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Անդրեյ Գրոմիկոն այդ հարցի շուրջ առանձնազրույց ունեցավ ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար Հենրիկ Պողոսյանի և մարզկոմի բյուրոյի անդամ Ռազմիկ Բալայանի հետ: Նա անհնարին համարեց ԼՂԻՄ-ի վերամիավորումը ՀԽՍՀ-ին՝ ակնարկելով ԼՂԻՄ-ի

азербайджанские вооруженные силы покинули территорию Нагорного Карабаха в границах зоны НКАО, а миротворческие силы России взяли под контроль и эту часть Арцаха.

Армения и Арцах должны приложить все усилия, чтобы убедить сопредседателей "Минской группы" в том, что восстановление целостности и функционирования администрации и инфраструктуры **всего** Нагорного Карабаха станет решающим условием справедливого урегулирования Карабахского конфликта после войны Азербайджана против Арцаха, которая противоречила международному праву.

## OTTO LUCHTERHANDT

Doktor, Professor der Juristischen Fakultät,  
Universität Hamburg, Deutschland  
ottolucht@arcor.de

### EINIGE VORRANGIGE STRATEGISCHE ZIELE ZUR SICHERUNG DES STATUS DER REPUBLIK ARTSACH / NAGORNO-KARABACH

#### ZUSAMMENFASSUNG

**Schlüsselwörter:** 2020 Aserbaidschanischer Krieg gegen Arzach, Waffenstillstandsabkommen 9.11.2020, prioritäten und probleme seiner umsetzung.

Der Artikel diskutiert die Lage, in der sich Berg-Karabach nach dem verlorenen Krieg vom Herbst 2020 befindet. Im Zentrum steht die Analyse des von Russlands Präsident Vladimir Putin vermittelten Waffenstillstandsabkommens zwischen Armenien und Aserbaidschan vom 9.11. 2020. Seine neun Artikel regeln vier thematische Blöcke: 1. Die Modalitäten des Waffenstillstands und die Garantie seiner Einhaltung durch eine russische Peacekeeping-Truppe, die in Berg-Karabach stationiert ist; 2. Die Rückgabe der beiden letzten noch von den armenischen Streitkräften kontrollierten aserbaidschanischen Rayone Kelbadschar und Agdam an Aserbaidschan. 3. Die Rückkehr der wegen des Krieges aus Berg-Karabach geflohenen Menschen unter der Aufsicht des UNHCR in ihre Wohnorte. 4. Die Deblockierung der Verkehrsverbindungen in der armenischen und aserbaidschanischen Region. Das Waffenstillstandsabkommen hat eine große Lücke: es schweigt über den rechtlichen Status von Berg-Karabach, also der Republik Arzach. Es besteht aber kein Zweifel, dass sich die Regelungen des Waffenstillstandsabkommens auf das Territorium des 1923/1924 geschaffenen autonomen Gebiets NKAO beziehen. Ferner ist festzustellen, dass das Waffenstillstandsabkommen die Stellung der “Minsk-Gruppe” der OSZE und das Mandat ihrer drei Ko-Vorsitzenden Russland, USA und Frankreich nicht verändert hat. Armenien und Arzach stehen vor der

großen politischen Aufgabe, mit Hilfe Russlands und der “Minsk-Gruppe” sowie dem UNHCR die Regelungen des Waffenstillstandsabkommens und insbesondere die Rückkehr der Flüchtlinge nach Hadrut und Shushi zu realisieren.

## OSSՈ ԼՈՒԽԹԵՐՀԱՆԴՏ

Իրավագիտության ֆակուլտետի դոկտոր, պրոֆեսոր,  
Համբուղքի համալսարան, Գերմանիա  
ottolucht@arcor.de

### ՈՐՈՇԱԿԻ ԱՌԱՋՆԱՀԵՐՁ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ / ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ

#### ԱՄՓՈՓՈՒՄ

**Հիմնաբառեր՝** 2020 թ. ադրբեջանական պատերազմ ընդդեմ Արցախի, իրադադարի համաձայնագիր 9.11.2020, դրա կանխման առաջնահերթությունները ու խնդիրները:

Հոդվածում քննարկվում է այն իրավիճակը, որում գտնվում է Լեռնային Ղարաբաղը 2020 թ. աշնանը տեղի ունեցած պատերազմում կրած պարտությունից հետո: Ոչադրության կենտրոնում է 2020 թ. նոյեմբերի 9-ին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի միջնորդությամբ Հայաստանի և Ադրբեջանի միջև ստորագրված իրադադարի համաձայնագրի վերլուծությունը: Նրա ինը հոդվածները կարգավորում են չորս թեմատիկ բլոկներ. 1. իրադադարի ռեժիմը և Լեռնային Ղարաբաղում տեղակայված ռուսական խաղաղապահ ուժերի կողմից դրա պահպանման երաշխիքը, 2. հայկական զինուժի կողմից դեռևս վերահսկվող վերջին երկու ադրբեջանական շրջանների՝ Քելբաջարի և Աղդամի վերադարձը Ադրբեջանին, 3. պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղից փախած մարդկանց վերադարձը իրենց բնակության վայրերը ՄԱԿ ՓԳՀ-ի հսկողության ներքը, 4. կապի ապաշրջափակումը հայկական և ադրբեջանական շրջաններում: Հրադադարի պայմանագիրը մեծ ստղանցք ունի՝ լրում է Լեռնային Ղարաբաղի, այսինքն՝ Արցախի Հանրապետության իրավական կարգավիճակի մասին: Այդուհանդեռ, կասկած չկա, որ զինադադարի պայմանագրի դրույթները վերաբերում են 1923-1924 թթ. ստեղծ-

Ված ԼՂ ինքնավար մարզի տարածքին: Նշենք նաև, որ հրադադարի համաձայնագիրը չի փոխել ԵԱՀԿ «Մինսկի խմբի» դիրքորոշումը և նրա երեք համանախագահների՝ Ռուսաստանի, ԱՄՆ-ի ու Ֆրանսիայի մանդատը: Հայաստանը և Արցախը կանգնած են հրադադարի համաձայնագրի դրույթները կյանքի կոչելու, մասնավորապես, Ռուսաստանի, «Մինսկի խմբի», ինչպես նաև ՄԱԿ ՓԳՀ-ի օգնությամբ փախստականներին Հաղորդված և Շուշի վերադարձնելու առջև:

## ՄՀԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Կաճառ» գիտական կենտրոնի ղեկավար

պ.գ.թ., դոցենտ

(ԱՀ)

hamher@yandex.ru, kachar.gk.shushi@mail.ru

### ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ\*

**Հիմնաբառեր՝** Արցախի Հանրապետություն, պաշտպանունակություն, անվտանգություն, միջազգային ահարեւիչներ, ագրեսիա, ռազմական հանցագործություններ, պարենային անվտանգություն, Պաշտպանության բանակ, միլիտարիստական Աղբբեջան, օկոպացված տարածքներ:

Արցախի Հանրապետության անվտանգային-պաշտպանական միջավայրն Աղբբեջանի, Թուրքիայի ու միջազգային ահարեւիչների համատեղ ագրեսիայի, ռազմական հանցագործությունների, այդ թվում՝ հայ ազգաբնակչության ցեղասպանության և այլ միջոցներով վարած նվաճողական պատերազմի, հայկական ինքնիշխան տարածքների բռնագավթման հետևանքով լրջորեն վտանգվել է: ԱՀ պաշտպանունակության և անվտանգության մակարդակի պատեհաժամորեն բարձրացման, այդ կարևոր ոլորտներում ծառացած հիմնախնդիրների ու մարտահրավերների գնահատ-

---

\*Արցախի գինված ուժերին, մասնավորապես՝ պաշտպանական անվտանգային հիմնահարցերին հեղինակի անդրադարձը տես՝ նաև Արցախի Հանրապետության դեմ աղբբեջանա-թուրքական ագրեսիայի հետևանքները վերացնելու մի քանի ուղիների մասին, «Կովկասյան տարածաշրջանի արդի հիմնախնդիրները՝ հնարավորություններ և մարտահրավերներ». միջազգային գիտաժողովի (12 մարտի 2022 թ., Ստեփանակերտ, նյութերի ժողովածու, «Մեսրոպ Մաշտոց» համալսարան, Ստեփանակերտ, 2022, էջ 42-45:

ման և լուծման ուղիների ուրվանշումը կարող է նպաստել նշված ուղղություններում պատասխանառու գերատեսչությունների, մասնագիտացված հիմնարկների և աշխատանքային խմբերի ծավալած համապատասխան գործունեության բարելավմանը:

Սույն աշխատանքի նպատակն է՝ գնահատել թշնամու ազրեսիայի և զավթողական պատերազմի հետևանքով ստեղծված պաշտպանական-անվտանգային միջավայրը, դրան նետված մարտահրավերներն ու սպառնալիքները և ըստ այդմ՝ առաջարկել ոլորտի առջև ծառացած հիմնախնդիրները լուծելու ուղիներ: Առաջադրված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է քննարկել ինչպես բուն պատերազմի, այնպես էլ դրա հետևանքների հետ առնչվող համալիր հիմնահարցեր:

Հայ պատմագիտությունը դեռ նոր-նոր է թեման ներառում իր ուսումնասիրության ոլորտը<sup>1</sup>: Վերջին մեկ տարում եղել են բազմաթիվ հրապարակումներ, ելույթներ, հայտարարություններ, պարզաբանումներ, որոնք հաճախ կրել են քաղաքական բնույթ, երկուստեք իրար մեղադրելու ենթատեքստ: Հրապարակի վրա առկա նյութը հնարավորություն

<sup>1</sup>Թեման, ըստ Էության, դեռ ուսումնասիրված չէ: Դրա օբյեկտիվ պատճառներից են՝ ոլորտի հետ կապված բազմաթիվ հարցերի հանրայնացման աննպատակահարմարությունը, տեղեկույթի պակասը կամ անհրաժեշտ տեղեկատվության մատչելիության սահմանափակումները և այլն, իսկ սուբյեկտիվ պատճառներից կարելի է նշել գործող իշխանությունների հակազդեցությունը օբյեկտիվ գնահատականներին ու բացահայտումներին, լրագրողական հետաքննություններին, հանրությանը հուզող հարցերին պատասխաններ գտնելու առանձին անհատների նախաճեռություններին ակնհայտ խոշընդոտելը, փաստերն ու իրականությունը թաքցնելու անմիջական մեղավորների կամ պատասխանատունների ջանադիր փորձերը և այլն:

չի տալիս ամբողջական պատկերացում կազմել 2020 թ. աշնանը մեզ պատուհասած աղետի իրական պատճառների, սխալների ու թերությունների մասին: Մինչդեռ հենց դրանք վեր հանելու հունով պետք է ընթանան ուսումնասիրությունները և վերլուծությունները, այլ ոչ թե միմյանց մեղադրելու անհեռանկար ճանապարհով:

2020 թ. աղբբեջանա-թուրքական ազրեսիային դիմագրավելու հանգամանքների վերաբերյալ իրապարակված օրագրային<sup>2</sup>, իրապարակախոսական, վերլուծական<sup>3</sup>, գիտական<sup>4</sup> և այլ բնույթի<sup>5</sup> գրականության էջերում կարելի է հանդիպել առանձին հարցերի արձարծումների, բայց ամբողջական, ընդհանրացված գիտական ուսումնասիրությ-

<sup>2</sup>Հակոբյան Ռ., Մահվան հովիտ: 44-օրյա աղետ. 27 սեպտեմբեր - 10 նոյեմբեր, 2020: Լրագրողի օրագրից, Եր., 2021, նույնի՝ Կանաչ ու սև: Արցախյան օրագիր: 2020-ի հայկական աղետը, Եր., 2021:

<sup>3</sup>Պետրոսյան Մ., Պատերազմի սերունդներ. պատերազմի զարգացումը արդի փուլում, «Հայկական քանակ», << ՊՆ ՊԱՀՀ ռազմագիտական հանդես, 2021, № 1, էջ 16, Վանյան Դ., Վերլուծություն (Արցախյան երկրորդ պատերազմ), 1-ին մաս, [https://david-vanyan.livejournal.com/482112.html?utm\\_source=3userpost](https://david-vanyan.livejournal.com/482112.html?utm_source=3userpost) (ներբեռնումը՝ 18.09.2021 թ.), Analysis of the Second Artsakh War and its Repercussions: Minas Kojayan's interview with Hagop Nazarian., Keghart, February 1, 2021 <https://ke-ghart.org/kojayan-nazarian-artsakh-war-ii/> (ներբեռնումը՝ 11.09.2021 թ.):

<sup>4</sup>Հարությունյան Մ., Արցախում ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները, Շուշի-Երևան: «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2021, էջ 33, 64-65, 87, 144, 149, 168, 246-247, նույնի՝ Նոր սերնդի պատերազմների վարման մի քանի առանձնա-հասկությունների մասին (2020 թ. աշնանային պատերազմի լոյսի ներք), Արցախի պետական համալսարանի «Գիտական տեղեկագիր», Պրակ 2. հասարակական գիտություններ, Ստեփանակերտ, 2021, էջ 213-224:

<sup>5</sup>Буря на Кавказе. Под ред. Р. Н. Пухова. М.: Центр анализа стратегий и технологий, 2021; Война 2020 года в Нагорном Карабахе: региональное измерение, «Пути к миру и безопасности», НИИМЭМО РАН, 2020, № 2 (59), с. 181-191.

յուններ, ըստ էության, դեռևս չկան:

Հայրենական և արտասահմանյան լրատվամիջոցների հաղորդագրությունների ամփոփմամբ պատերազմի վերաբերյալ ծավալուն հոդված է հրապարակել համացանցային «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարանը<sup>6</sup>:

2020 թ. ագրեսիայի ընթացքում և զինադադարի մասին եռակողմ հայտարարությունից հետո ադրբեջանա-թուրքական զավթիչների ռազմական հանցագործությունների, հայ պատմամշակութային օջախների թիրախավորման ու ոչնչացման բազմաթիվ փաստեր ներկայացված են ինչպես <<և ԱՀ մարդու իրավունքների պաշտպանների համապատասխան գեկուցներում, այնպես էլ այդ թեմայով մի շարք ուսումնասիրողների հրապարակումներում<sup>7</sup>:

Ադրբեջանա-թուրքական ագրեսիայի ռազմաքաղաքական ու այլ տեսանկյուններին անդրադարձել են նաև այլ հեղինակներ<sup>8</sup>:

Պատերազմի մասին ամենատարբեր հրապարակումներից կարելի է պատկերացում կազմել մեր անհաջողություն-

---

<sup>6</sup><https://hy.wikipedia.org/wiki/> 44-օրյա պատերազմ (Ներբեռնումը՝ 18.09.2021)

<sup>7</sup>Давидян Я. Аванесов О., Бабаханян В. Целенаправленное уничтожение армянского культурного наследия в ходе третьей азербайджано-арцахской войны как военное преступление. Международная научная конференция. Новообразованые (непризнанные) государства после войны: задачи и пути их решений. Степанакерт, 2021, с. 24-31.

<sup>8</sup>Թերոսյան S., 2020 թ. պատերազմ. Նախադրյալները, հետևանքները և աղետի հայթահարման հնարավորությունները, <https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=217> (Ներբեռնումը՝ 19.09.2021 թ.), Մարդու իրավունքների խախտումներն Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում: Փաստահակաք գեկուցի սեղմագիր, <https://www.osf.am/wp-content/uploads/2021/12.pdf> (Ներբեռնումը՝ 21.12.2021 թ.):

ների, սխալների ու հանցավոր անգործության պատճառների մասին, որոնք գործնական նշանակություն ունեն հետագայում և ո՞չ մի պարագայում դրանց կրկնությունից զերծ մնալու իմաստով:

ԱՀ պաշտպանական-անվտանգային ներկա իրավիճակը համակողմանի գնահատելու, դրանից բխող հիմնախնդիրները վեր հանելու և լուծումներ առաջադրելու նպատակով անհրաժեշտ է քննարկել պատերազմական լայնածավալ ու ակտիվ փուլից հետո մեր հանրապետությանը նետված մարտահրավերները՝ դրանք համադրելով պետական, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային և այլ ոլորտների ընթացիկ դրության հետ:

Հատկանշելի է, որ զինադադարի մասին եռակողմ հայտարարությունից հետո ԱՀ-ում ստեղծված իրավիճակի, հանրապետության կյանքի առանձին ոլորտների և հիմնախնդիրների վերաբերյալ զեկուցումներ են կարդացվել 2021 թ. հունիսի 12-ին Ստեփանակերտի «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի կազմակերպած միջազգային գիտաժողովում, որի՝ առանձին ժողովածուում լույս տեսած նյութերում մի շարք հրապարակումներ առնչվում են խնդրո առարկա թեմային<sup>9</sup>:

---

<sup>9</sup> Аванесов О. Развитие и острые проблемы, возникшие в регионе в послевоенный период, «Միջազգային գիտաժողով. Նորակազմ (չճանաչված) պետությունները պատերազմից հետո. Խնդիրներն ու դրանց լուծման ուղիները», «Մեսրոպ Մաշտոց» համալսարան, Ստեփանակերտ, 2021, էջ 14-18, Հարությունյան Լ., Հարությունյան Ք., Համբարձումյան Ք., ԱՀ պարենային անվտանգության հիմնախնդիրները, նոյն տեղում, էջ 32-39, Փաշայան Հ., Ղարաբաղյան հակամարտություն. անվտանգության, տարածքների և կարգավիճակի խնդիրները հետպատերազմական շրջանում, նոյն տեղում, էջ 105-110,

Սույն աշխատանքի աղբյուրագիտական հիմքը կազմում են՝ պաշտոնատար անձանց, ռազմական բարձրաստիճան գործիչների, պատերազմի մասնակիցների և հայ ու արտասահմանյան հեղինակների վկայությունները<sup>10</sup>:

2020 թ. հուլիսին՝ աղբյուրագիտական ագրեսիայի նախօրեին, ընդունված և հրապարակված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն. դիմակայուն Հայաստան փոփոխվող աշխարհում» վերնագրով պաշտոնական փաստաթղթում Արցախի վերաբերյալ ծևակերպումները, ինչպես ցոյց տվեց 2020 թ. պատերազմը, անիրատեսական էին: Փաստաթղթի սկզբում

---

Մանգասարյան Ռ., Բեգլարյան Լ., Ներկա տնտեսական պարագուսը, որպես պատերազմի հետևանք, նոյն տեղում, էջ 117-125, Հայրիյան Եվ., Արանեսյան Ա., Գնաճային դրսուրումները մինչպատերազմյան և հետպատերազմյան Արցախում, նոյն տեղում, էջ 126-130, Շամիսալովա Է., Ավանեսյան Մ., ԱՀ բանկային համակարգի վերլուծությունը և հետպատերազմյան ճգնաժամի հաղթահարման հնարավոր ուղիները, նոյն տեղում, էջ 139-143, Սարգսյան Գ., Ավագյան Լ., ԱՀ Էներգետիկ համակարգի անվտանգության հնարավոր ուղիների զարգացումը, նոյն տեղում, էջ 144-147, Ավշարյան Ս., Նախադպրոցական տարիքի երեխաների պատերազմական և հետպատերազմյան հոգեվիճակը, նոյն տեղում, էջ 148-152, Gevorgyan G. The figurative language means in the articles of the British and American mass media on the Nagorno-Karabakh war of 2020, նոյն տեղում, էջ 157-160, Իշխանյան Գ., Մարեսի Ենթարկվածության մակարդակը տեղահանված և չտեղահանված անձանց մոտ, նոյն տեղում, էջ 164-168:

<sup>10</sup> Dixon R. Azerbaijan's drones owned the battlefield in Nagorno-Karabakh and showed future of warfare. «Washington Post», November 11, 2020, [https://www.washingtonpost.com/world/europe/nagorno-karabakh-drones-azerbaijan-aremenia/2020/11/11/441bcbd2-193d-11eb-8bda-814ca56e138b\\_story.html](https://www.washingtonpost.com/world/europe/nagorno-karabakh-drones-azerbaijan-aremenia/2020/11/11/441bcbd2-193d-11eb-8bda-814ca56e138b_story.html) (ներբեռնում՝ 19.09.2021 թ.); Gressel G. Military lessons from Nagorno-Karabakh: Reason for Europe to worry, ECFR, November 24, 2020, <https://ecfr.eu/article/military-lessons-from-nagorno-karabakh-reason-for-europe-to-worry> (ներբեռնում՝ 10.09.2021 թ.):

«Հայաստանի Հանրապետությունը Արցախի հայության անվտանգության և ազատության երաշխավորն է»<sup>11</sup>: Այնուհետև, հայ ժողովրդի ազգային նպատակների թվում նշված է «Արցախի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչումը՝ առանց որևէ սահմանափակման»<sup>12</sup>, որը ենթադրել է տալիս, թե այդ ակտը դիտվում է որպես Արցախի ժողովրդի անվտանգության երաշխիք: Նոյն փաստաթղթում նաև շեշտված է, որ «Հայաստանի և Արցախի, հայ ժողովրդի ինքնիշխանությունը բարձրագույն արժեք է»<sup>13</sup>: Սակայն այսօր մենք ականատես ենք օրիասական մի իրականության, որտեղ գրեթե ամեն օր ուժահարվում է երկու հայկական պետությունների ինքնիշխանությունը, իսկ հայրենի կառավարությունները մատնված են անգործության՝ հակազդելու կամ թեկուզ քաղաքական ու իրավական գնահատական տալու փոխարեն: Մինչդեռ նշված ուղերձում հայտարարվում է. «Օսար ուժերին ներհայկական, ներհայաստանյան հարցերի լուծմանը ներգրավելու, մեր երկրում որպես օտարերկրյա շահերի ներկայացուցիչ հանդես գալու պատրաստակամություն ունեցող ուժերը պիտի արժանանան հայ ժողովրդի և նրա լեգիտիմ ներկայացուցիչ Հայաստանի կառավարության կողտ հակազդեցությանը»<sup>14</sup>:

«Հայաստանի Հանրապետության ավելի քան եռամյա քաղաքականության կործանարար հետևանքները, որոնց ազ-

<sup>11</sup>[https://www.primeminister.am/u\\_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf](https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf), էջ IV (ներբեռնումը՝ 19.09.2021 թ.):

<sup>12</sup> Նոյն տեղում, էջ V:

<sup>13</sup> Նոյն տեղում:

<sup>14</sup> Նոյն տեղում:

դեցությանը Ենթարկվում են հայկական պետականությունը և մեր ժողովորդը, բազմաթիվ վերլուծաբանների հիմք են տալիս մեղադրելու << կառավարությանը կոլաբորացիոնիզմի մեջ<sup>15</sup>:

Վերոնշյալ փաստաթյում որպես համակեցության համահայկական կանոնների 4-րդ կետ հայտարարվում է. «Հայաստանը և Արցախը պետք է զերծ լինեն կոռուպցիայից. կոռուպցիայի բոլոր դրսնորումները, այդ թվում՝ հովանավորչությունը, արհեստական մենաշնորհները, մրցակիցների նկատմամբ արհեստական խոչընդուներ հարուցելը պետք է արմատախիլ արվեն, կոռուպցիոն գործունեության արդյունքում պետությանը և ժողովրդին հասցված նյութական վնասները պետք է վերականգնվեն»<sup>16</sup>:

---

<sup>15</sup> Կոլաբորացիոնիզմ կամ համագործակցություն (ֆրանս.՝ collaboration), պատերազմի ընթացքում տվյալ երկրի քաղաքացիություն ունեցող անձի համագործակցություն թշնամու հետ ընդդեմ իր երկրի (տե՛ս «The American Heritage Dictionary of the English Language», Fourth Edition), <https://hy.-wikipedia.org/wiki/> (Ներբեռնումը՝ 19.09.2021 թ.): Արմեն Այվազյան, Փաշինյանի գլխավորած կոլաբորացիոնիստական խունտան բացեիրաց ողջունում է հայունի հողի հանձնումը, 17.02.2021, «Կայճ» լրատվական [https://m.facebook.com/permalink.php?id=11192375734-0803&story\\_fbid=204744818058696](https://m.facebook.com/permalink.php?id=11192375734-0803&story_fbid=204744818058696) (Ներբեռնումը՝ 19.09.2021): Սա ներկա կոլաբորացիոնիստական վարչակարգի հնարած կեղծ պարագիզմն է. Էղքար Էլրակյանը՝ սահմանազատման մասին, 06.05.2021. <https://livenews.am/press-/2021/106736/06/20/49/>(Ներբեռնումը՝ 19.09.2021 թ.), Աղբործանցի պատգամավորը պաշտպանում է << դե-ֆակտո դեկավարին. Էղքար Էլրակյան, 13/07/2021 (<https://hraparak.am/post-6463abc317d530a0d6646-ee5b90-a2-41> (Ներբեռնումը՝ 19.09.2021 թ.)): Անդրիաս Ղուկասյան, Հայաստանում հաջորդ իշխանափոխությունը լինելու է Ֆրանսիայի օժանդակությամբ, 18.09.2021. <https://www.Iragir.am/2021/09/18/669157/> (Ներբեռնումը՝ 19.09. թ.):

<sup>16</sup>[https://www.primeminister.am/u\\_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf](https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf), էջ V (Ներբեռնումը՝ 19.09.2021 թ.):

Պետությունը կործանման վիհի եզրին հասցրած կառավարության անդամներին ու կառավարության արկածախնդրություններին կողմ քվեարկող ԱԺ մեծամասնությանը, ինչպես նաև գործադիր ու օրենսդիր մարմինների հակապետական գործունեությունից դժգոհ, դրա դեմ պայքարող, «իշխանության աղբյուր» ժողովրդից ժամիշխաններին պաշտպանող իրավապահ մարմինների աշխատողներին չիմնավորված պարգևավճարներ և հավելավճարներ բաժանելու արատավոր պրակտիկան բավական է արձանագրելու պետական բյուջեն փոշիացնելու, փողով նշյալ պաշտոնատար անձանց կույր հավատարմությունը գնելու, այսինքն՝ կոռուպցիայի անսքող դրսնորուանների փաստերը:

2020-2021 թթ. ողբերգական իրադարձությունների ֆոնին ընդգծվում է համակեցության համահայկական կանոնների 6-րդ կետի և դառը իրականության անհամապատասխանությունը. «Արցախի հարցի կարգավորման բանակցային գործընթացի նպատակը պետք է լինի Արցախի ժողովրդի ինքնորոշման և անվտանգության համար մղված Արցախյան ազատամարտի արդյունքների պաշտպանությունը: Բանակցությունների արդյունքում Հայաստանի և Արցախի կառավարությունների համար ընդունելի համարված որևէ լուծում կարող է ընդունելի դիտվել միայն Հայաստանում և Արցախում ժողովրդական հավանության դեպքում»<sup>17</sup> (ընդգծումը մերն է -Մ. Հ.): 2020 թ. սեպտեմբերի 27-ի ադրբեջանա-թուրքական ագրեսիայից ԱՀ տիտղոսակիր ազգին՝ հայ անդրենածին

---

<sup>17</sup> Նոյն տեղում, Էջ VI:

բնակչությանը կամ ազգա(հայրենա)կիցներին, պաշտպանելու անկարողությունը, նոյեմբերի 9-ի խայտառակ հայտարարության տակ ստորագրելը՝ ի հեճուկս հայ ժողովողի մեծամասնության կամքը հաշվի առնելու, մնալու են «Հանգործության մատնված կառավարության ճակատին դաշված հավիտենական խարանը և ամոթը»:

«Հայաստանի անվտանգության դոկտրինի 2-րդ՝ «Հայաստանի անվտանգային միջավայրը», բաժնի 2.7 կետում արձանագրված է. «ԶԼՈՒՎԱԾ հակամարտությունները շարունակում են սպառնալ տարածաշրջանային երկրների կայուն զարգացմանը: Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը պարբերաբար խոչընդոտվում և վտանգվում է Ադրբեյջանի ապակառուցողական դիրքորոշման պատճառով, որն արտահայտվում է հակամարտությունն ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառմամբ լուծելու ծգտումներով, առավելապաշտական և անզիջում կեցվածքով, «Հարածքի հանդեպ անթաքրոյց հավակնությամբ, հայատյաց քաղաքականությամբ և պատմության խեղաթյուրմամբ: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու հակառակորդի նկրտումները, որոնց դրսևորումն էին 2016 թ. ապրիլին Արցախի դեմ սանձազերծված ռազմական գործողությունները, ինչպես նաև հրադադարի շարունակական խախտումները, դիվերսիոն գործողությունները, զորքերի կուտակումը և տեղաշարժը, զորավարժությունները արցախա-ադրբեյջանական շիման գծում և հայ-ադրբեյջանական միջաետական սահմանին, ուղիղ սպառնալիք են Հայաստանի համար: Հայաստանի հանդեպ

թշնամական քաղաքականություն վարող պետության շարունակական սպառազինումը վտանգում է տարածաշրջանային խաղաղությունը և կայունությունը»<sup>18</sup>:

Փաստորեն, վերոնշյալ վտանգների կանխարգելման ուղղությամբ << կառավարության ձեռնարկած քայլերն անբավարար էին:

Նույն բաժնի 2.10 կետում հստակ ծևակերպված է Թուրքիայից եկող սպառնալիքը նաև Արցախի համար. «Միաժամանակ, Թուրքիայի ռազմաքաղաքական աջակցությունն Ադրբեյչանին ավելի է ուժեղացնում Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու Ադրբեյչանի հավակնությունները: Հատկապես խնդրահարուց է Ադրբեյչանի կողմից ռազմական գործողությունների նախաձեռնման դեպքում Թուրքիայի քողարկված կամ բացահայտ միջամտության պատրաստակամությունը»<sup>19</sup>: Մեջբերված հատվածներն այդպես էլ մնացին թղթի վրա, որովհետև ակնհայտ սպառնալիքներն ու մարտահրավերները չեզոքացնելու նպատակով համարժեք միջոցներ ձեռնարկելու խթան չհանդիսացան և, ըստ Էռլյան, չդրսնորվեցին 2020 թ. սեպտեմբերի 27-ի ադրբեյչանա-թուրքական ագրեսիան դիմագրավելու ընթացքում:ԱՀ անվտանգության համար լուրջ սպառնալիք է սահմանագծան գործընթացը, որն, առանց վերջինիս կարգավիճակի լուծման, առաջ են քաշում Ադրբեյչանը, Թուրքիան և Ռուսաստանի Դաշնությունը: Սահմանագծման համար իհմք են ընդունվում ԽՍՀՄ

---

<sup>18</sup>[https://www.primeminister.am/u\\_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf](https://www.primeminister.am/u_files/file/Different/AA-Razmavarutyun-Final.pdf) (Ադրբեյչանում՝ 19.09.2021 թ.):

<sup>19</sup> Նոյն տեղում, էջ 6:

քարտեզները և վարչատարածքային բաժանումների մասին օրենքները: Ըստ միջազգային իրավունքի մի շարք մասնագետների՝ նման մոտեցումը հակաիրավական ու հակաօրինական է, քանի որ ԽՍՀՄ 1991 թ. դեկտեմբերից այլս գոյություն չունի, իսկ դրա կազմի մեջ մտնող միութենական հանրապետությունները միջազգային իրավունքի սուբյեկտ չեն համարվում: Ավելին՝ Խորհրդային Ադրբեյջանը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կարգավիճակի և հայ ազգաբնակչության ինքնորոշման իրավունքի իրացման ժամանակամիջոցում ոչ միայն չի եղել ինքնիշխան պետական կազմավորում, այլև գտնվել է Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության կազմում (13.12.1922 թ. - 5.12.1936 թ.): Մյուս կողմից, Ադրբեյջանի գինված ուժերը ներխուժել են << ինքնիշխան տարածք, զավթել գերիշխող բարձունքներ և փորձում են ճնշում գործադրել ու պայմաններ թելադրել << կապիտույանտական կառավարությանը: Այս կապակցությամբ ուշագրավ է << ԱԳՆ մամուլի նախկին խոսնակ Աննա Նադյայանի հետևյալ հայտարարությունը, որի կարևորությունը հաշվի առնելով, մեջբերում ենք ամբողջական հատվածներ. «Ուժի կիրառմամբ կամ դրա սպառնալիքի օգտագործմամբ պայմանների առաջադրումը միջազգային իրավունքի կողմանույն խախտում է: Հայաստանը չի տրվելու նմանօրինակ ճնշումներին: Հայաստանը մերժում է նաև այսպես կոչված «վիճելի տարածքներ» կեղծ օրակարգի ներմուծումը, ինչը վտանգավոր նախադեպ կարող է հանդիսանալ ուժի կիրառման արդարացման համար նաև այլ տարածաշրջաններում: Զկատարելով

նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ստանձնած իր պարտավորությունները, մասնավորապես՝ հայ ռազմագերիների և պատանդի կարգավիճակում գտնվող քաղաքացիական անձանց հայրենադարձման և այլ հումանիտար հարցերի առնչությամբ՝ Ադրբեյջանը կրկին ի ցոյց է դրել միջազգային հանձնառությունների միտումնավոր դրժման իր վարքագիծը»<sup>20</sup>: Հայտարարության մեջ շեշտված է, որ Հայստանի Հանրապետության և Ադրբեյջանի Հանրապետության միջև սահմանների սահմանագծման և հետագայում սահմանագատման ուղղությամբ աշխատանքը պետք է մաս կազմի հակամարտության համապարփակ խաղաղ կարգավորման գործընթացի, որի շրջանակներում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության հովանու ներքո առաջնային կերպով պետք է լուծվեն ԱՀ տարածքների դեօկուպացիայի և Արցախի վերջնական իրավական կարգավիճակի հարցերը: Այս իրավիճակում << ինքնիշխան տարածքից ադրբեյջանական գինված ուժերի անհապաղ և անվերապահ դուրսբերումը մայիսի 11-ի դրությամբ ելման դիրքեր կարող է անհրաժեշտ պայմաններ ստեղծել ի հայտ եկող հարցերը քաղաքական-դիվանագիտական գործիքակազմի շրջանակներում դիտարկելու համար<sup>21</sup>: Գնահատելով միջազգային արձագանքը իրավիճակին՝ նախկին խոսնակը նշում է. «Միջազգային իրավունքի դիրքերից հանդես եկող և Հարավային Կովկասում կայունությամբ ու անվտանգությամբ անկեղծորեն շահագրգուված միջազգային մեր

<sup>20</sup> Սահմանագծում ու սահմանագատումը պետք է մաս կազմեն համապարփակ խաղաղ կարգավորման. ԱԳՆ. 21.05.2021, <https://www.civilnet.am/news/> (ներբեռնումը՝ 19.09.2021):

<sup>21</sup> Տե՛ս նույն տեղում:

գործընկերներն արտահայտել են իրենց աներկբա դիրքորոշումն առ այն, որ Աղրբեջանն անհապաղ և անվերապահ պետք է ետ քաշի իր զորքերը Հայաստանի ինքնիշխան տարածքից»<sup>22</sup>:

2020 թ. աղրբեջանա-թուրքական ագրեսիայի և ԱՀ ինքնիշխան տարածքների օկուպացիայի հետևանքով ստեղծված չափազանց անարդարացի ու պայթյունավտանգ իրավիճակում, որի անընդունելի լինելու մասին հայտարարել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող առնվազն երկու երկրների բարձրաստիճան ներկայացուցիչները, սահմանագատման ու սահմանագծման գործընթացները մահացու վտանգ են ներկայացնում ԱՀ տարածքային ամբողջականության վերականգնման համար և նպաստում են Աղրբեջանի՝ որպես տարածաշրջանի խաղաղությանն ու անվտանգությանը սպառնացող միլիտարիստական կազմավորման ագրեսիվ նկրտումների դրսևորմանը:

Կենսական նշանակություն ունի նաև պարենային անվտանգության հիմնահարցի լուծումը: Արցախի Հանրապետության ազգային ժողովի 7-րդ գումարման 1-ին նստաշրջանի 2020 թ. դեկտեմբերի 30-ի հերթական նիստում «Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների բանավոր հարցեր՝ Հանրապետության նախագահին և Կառավարության անդամներին» օրակարգային հարցի քննարկման ժամանակ գյուղատնտեսության նախարար Աշոտ Բախչիյանը հետևյալ կերպ է բնութագրել պատերազմի հետևանքով իր գլխավորած ոլորտի վիճակը և ստեղծված իրավիճակից դրւու գալու եղանակները.

---

<sup>22</sup> Նոյն տեղում:

«Յավոք սրտի, ... մենք պատերազմի արդյունքում (պետք է լիներ հետևանքով կամ պատճառով - Մ. Հ.) կորցրել ենք վարելահողերի մոտ 75 տոկոսը, արոտների՝ 85 տոկոսը: Մեծ կորուստներ ենք ունեցել նաև անասնապահության ոլորտում, նաև՝ ոռոգովի տարածքներ, 7500 (երևի՝ հա) ոռոգովի տարածքից մնացել է դեռ այս պահին 800-ը: Նախատեսվում է մինչ պատերազմը նախաձեռնել աջակցության ծրագրեր, [որոնք] այժմ գտնվում է [են] մշակման փուլում: Պետք է վերածնակերպենք մեր պատկերացումները գյուղատնտեսության մասին և բարձրարժեք կուլտուրաների աճեցմամբ զբաղվենք, բուսաբուծության ոլորտում ... ջերմոցների, ինտենսիվ այգիների, անասնապահության ոլորտում մսուրային ... անասնապահության զարգացում և այլն: Մի խոսքով, պետք է զբաղվենք բարձրարժեք կուլտուրաների մշակությամբ»<sup>23</sup>: Մեր հանրապետության ջրային ռեսուրսների մեծ մասի թշնամու վերահսկողության տակ հայտնվելու ազդեցությունը գյուղատնտեսության վրա [մեղմելը] ոլորտի պատասխանատուն տեսնում է մի շարք ծրագրերի գործարկման մեջ. «Այժմ քննարկման և մշակման փուլում կա մի ծրագիր. արտեղյան-ների գործարկումը և ինքնահոս որոշ քանակությամբ ջրի տեղափոխումը և [ինդամասերը] ոռոգովի դարձնելը»<sup>24</sup>:

Իշխանությունների անգործության ու ամենաթողության պայմաններում Քաշաթաղի և Շահումյանի շրջաններում եղել են պետական գույքի հակիշտակման դեպքեր: Հակառակ համայնքների տարահանման պլանների՝ պաշտոն-

<sup>23</sup> <http://www.nankr.am/hy/3975> (ներբեռնումը՝ 19.09.2021թ.):

<sup>24</sup> Նոյն տեղում:

յաները համատարած անպատճանատվություն ու անտարբերություն են ցուցաբերել, ինչի մասին ԱԺ նիստում հայտարարել է ԱՀ տարածքային կառավարման ու ենթակառուցվածքների նախարար Հայկ Խանումյանը<sup>25</sup>:

2020 թ. դեկտեմբերի 24-ին թշնամին թիրախավորել է Կարմիր գյուղի բնակչութիւն Սվետլանա Խաչատրյանին, իսկ դեկտեմբերի 30-ին Նոր Շեն և Հացի գյուղերի հատվածում՝ Ալմաստ Եսայանին: Ընդհանրապես թշնամին ահաբեկում է խաղաղ բնակչությանն անասնագողությամբ ու խաղաղ բնակիչների առևանգմամբ: Բացի այդ, նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո Ստեփանակերտ-Շոշ հատվածում թշնամին բավականաչափ առաջ է տվել դիրքերը: Մասնավորապես՝ 2020 թ. դեկտեմբերի 13-ին ադրբեյջանցի ազրեսորները զավթել են Հադրութի շրջանի Խծաբերդ բնակավայրի և ռազմավարական նշանակության Դիզափայտ լեռան բնագծերը, այնուհետև անարգել առաջացել Շուշիի շրջանի Բերդածորի ենթաշրջանի գյուղերի ուղղությամբ: Անորոշ ապագան, բնակչության ֆիզիկական խարիսված անվտանգությունը, Արցախի առկախված կարգավիճակը, սոցիալական ճգնաժամը, անհայտ կորածների ու գերիների, վիրավորների, տարահանվածների և այլ սոցիալական խմբերի լուծման կարոտ խնդիրները ևս առնչվում են ԱՀ պաշտպանունակությանը և անվտանգությանը: Ինչ վերաբերում է արտաքին քաղաքական հիմնահարցերին, ապա դրանց մասին կարելի է պատկերացում կազմել ԱՀ նախկին արտգործնախարար Մասիս Մայիսյանի հետևյալ խոսքերից. «Այո, եղել է պատերազմ,

---

<sup>25</sup> Նոյն տեղում:

ունեցել ենք ծանր կորուստներ թե՛ մարդկային, թե՛ տարածքային, բայց ոչ մի բան մեր տեսակետներում, մեր տեսլականում չի փոխվել: ԱՀ-Ն՝ ի դեմս ԱԳՆ-Ի ... շարունակում է իր աշխատանքները արտաքին քաղաքական առաջնահերթություններով: Այդ առաջնահերթությունները նշված են Հանրապետության նախագահի վերջին ուղերձում և շատ կարևորում ենք Արցախի միջազգային ճանաչումը, տարածքային ամբողջականության վերականգնումը և բոլոր հիմնահարցերը լուծելու ենք: Տարբեր նպատակներով սուբյեկտիվ գնահատականներ են տրվում Արցախի կարգավիճակին, սակայն դրանք մեզ չեն շեղում մեր ճանապարհից, մենք հասնելու ենք մեր նպատակներին, ձգտելու ենք անկախությանը և գիտեք, որ այս պատերազմական շրջանում շատ ակտիվ աշխատանք է կատարվել մորթիլիզացնելու մեր բոլոր ռեսուրսները, ինարավորությունները արտերկրում և տասնյակ բանաձևեր են ընդունվել՝ նշելով, որ Արցախը անկախ պետություն է»: Արտգործնախարարը կարևորել է հատկապես Ֆրանսիայի սենատի և Ազգային ժողովի որոշումները, բանաձևերը: Ինչ վերաբերում է Մինսկի խմբին, այդ առնչությամբ արտաքին գերատեսչության ղեկավարը համոզված էր, որ «Մինսկի խումբը մնում է որպես միակ միջազգայնորեն ճանաչված ծևաչափ, որտեղ պետք է քննարկվեն Արցախի [հակամարտության] կարգավորմանը վերաբերող խնդիրները և այդ [Մինսկի խմբի եռանախագահության] ծևաչափը պետք է շարունակի իր աշխատանքները: Հասկանում ենք, որ Ադրբեջանը պատրաստ չէ հիմա քննարկելու կարգավիճակի հետ կապված հարցերը, ինչը լրացուցիչ հնարավորություն է տալիս պետություններին

միակողմանի որոշումներ կայացնել Արցախի անկախության ճանաչման վերաբերյալ»<sup>26</sup>: Ի հավելումն նշենք, որ «Արցախի ժողովրդավարական կուսակցություն» խմբակցության կողմից խորհրդարան ներկայացված Աժ հայտարարության նախագծում շեշտված է, որ «1) 2020 թ. Սեպտեմբերի 27-ից մինչ օրս Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնված ԱՀ տարածքները համարվում են օկուպացված Ադրբեջանի հանրապետության կողմից: 2) ԱՀ նկատմամբ Ադրբեջանի իրականացրած ազրեսիան և նշված տարածքների բռնազավթումը որևէ իրավական ազդեցություն չեն կարող ունենալ ապագա բանակցությունների ընթացքում ԱՀ կարգավիճակի ու սահմանների որոշման գործընթացում»<sup>27</sup>:

Ընդհանրացնելով՝ կարելի է փաստել, որ շարունակվում է Արցախի Հանրապետության՝ ժողովրդավարական պետության և նրա բազմաչարչար ժողովողի դեմ ադրբեջանա-թուրքական ազրեսիան, որն ուղեկցվում է հայկական տարածքների բռնազավթմամբ, հայ ազգաբնակչության ցեղասպանությամբ, պատմական հայրենիքում հայկական հոգևոր-մշակութային բազմադարյան ժառանգության ոչնչացմամբ: Մարդու հիմնարար ազատությունների ու տարրական իրավունքների, ժողովուրդների ինքնորոշման, ուժի կիրառման կամ դրա սպառնալիքի անթույլատրելիության հիմնարար սկզբունքների ուժնահարումները 2020 թ. սեպտեմբերի 27-ի ազրեսիայից առ այսօր Ադրբեջանը չի դադարեցնում՝ խորամանկորեն մանհպուացնելով տարածաշրջանում առևտրատնտեսական ու ռազմաքաղաքական

<sup>26</sup> Նոյն տեղում:

<sup>27</sup> Նոյն տեղում:

Օշահեր ունեցող երկրների համագործակցության ձգտում-ները: Անհավատալի է, որ XXI դարում անպատճ կերպով շարունակվում են Թուրքիայի ու Ադրբեյջանի ցեղասպանական քաղաքականությունն ու ռասիզմը Արցախի Հանրապետության հայ բնակչությանը սպանելու, տեղահանելու, առևանգելու, խոշտանգումներով ու հետապնդումներով ահարեկելու նպատակներով: Այդ նպատակների իրագործումն ավարտին հասցնելու և իր զավթողական քաղաքականությունն արդարացնելու համար Ադրբեյջանը շարունակում է նենգափոխել հակամարտության իրական կերպարը և միջազգային իրավունքը փորձում է մեկնաբանել իր շահերին հարմարեցնելու եղանակով: Մինչդեռ անառարկելի է այն փաստը, որ Արցախի Հանրապետությունը երբևէ չի եղել ու չի լինելու անկախ Ադրբեյջանի կազմում:

Քաղաքական փաստարկներում և բանակցային գործընթացում Արցախի Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնման պահանջը պետք է լինի մեր ռազմաքաղաքական ղեկավարության ու հասարակության առաջնահերթությունը: Դա կնշանակի, որ մենք ազգովի չենք իրաժարվել Արցախում անկախ պետականություն կերտելու մեր երեսունամյա ուղուց և լի ենք կողրածը վերականգնելու վճռականությամբ:

## **MHER HARUTYUNYAN**

Head of the Scientific Center «Kachar»,  
Candidate of Historical Sciences, Associate Professor  
hamher@yandex.ru, kachar.gk.shushi@mail.ru  
(Republic of Artsakh)

### **DEFENSE SECURITY ISSUES OF THE REPUBLIC OF ARTSAKH**

#### **Summary**

**Keywords:** Republic of Artsakh, defense capability, security, international terrorists, aggression, war crimes, food security, Defense Army, militaristic Azerbaijan, occupied territories.

The purpose of this work is to assess the defense and security situation created by the enemy's aggression, the war of conquest, the subsequent challenges and threats, and to propose ways to solve the problems facing the mentioned industry. To achieve this goal, complex issues related to both the war itself and its consequences are discussed. It is noted that the Azerbaijani-Turkish aggression against the democratic state - the Republic of Artsakh and its long-suffering people is actually continuing, which is accompanied by the occupation of Armenian territories, the genocide of the Armenian population, the destruction of the ancient Armenian spiritual and cultural heritage in their historical homeland.

From the beginning of the aggression on September 27, 2020, to this day, Azerbaijan has not stopped violating the fundamental principles of fundamental human rights and freedoms, the self-determination of peoples, and the inadmissibility of the use or threat of force. It also insidiously manipulates the aspirations for cooperation of countries with trade, economic and military-political interests in the region.

## **МГЕР АРУТЮНЯН**

Руководитель научного центра «Качар»,  
к.и.н., доцент  
[hamher@yandex.ru](mailto:hamher@yandex.ru), [kachar.gk.shushi@mail.ru](mailto:kachar.gk.shushi@mail.ru)  
(Республика Арцах)

# **ОБОРОННО-БЕЗОПАСНОСТНЫЕ ВОПРОСЫ РЕСПУБЛИКИ АРЦАХ**

## **Резюме**

**Ключевые слова:** Республика Арцах, обороноспособность, безопасность, международные террористы, агрессия, военные преступления, продовольственная безопасность, Армия обороны, милитаристский Азербайджан, оккупированные территории.

Целью данной работы является оценка оборонно-безопасностной обстановки, созданной агрессией противника, захватнической войной, последующими вызовами и угрозами, предложение путей решения проблем, стоящих перед упомянутой отраслью. Для достижения этой цели обсуждаются комплексные вопросы, связанные как с самой войной, так и с ее последствиями. Отмечается, что азербайджано-турецкая агрессия против демократического государства - Республики Арцах и его многострадального народа фактически продолжается, что сопровождается оккупацией армянских территорий, геноцидом армянского населения, уничтожением древнеармянского духовного и культурного наследия на своей исторической родине.

С начала агрессии 27 сентября 2020 года и по сей день Азербайджан не прекращает нарушать основополагающие принципы основных прав и свобод человека, самоопределения народов, недопустимости применения или угрозы силы. Она также коварно манипулирует стремлениями к сотрудничеству стран, имеющих торгово-экономические и военно-политические интересы в регионе.

## ՆՈՒՆԵ ՍԱՐՈՒՄՅԱՆ

Արդէ պատմության և քաղաքագիտության  
ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դրցնան  
n.sarumyan@mail.ru

### ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1991-2021 թթ.

**Հիմնարարեր՝** վարչաքաղաքական բաժանում, շրջան, համայնք, աշխարհաքաղական իրավիճակ, Արցախ, բռնազավթում, տարածքային կորուստ, հրետակոծում, ոմբակոծում, սահմանների ճշգրտում:

Արցախը, դարեր ի վեր լինելով Հայաստանի պատմական աշխարհներից մեկը, ամբողջ պատմության ընթացքում պաշտպանել է գոյության և ինքնատիպության իր իրավունքը: 20-րդ դարի երկրորդ տասնամյակում աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխությունները, 1918 թվականին Այսրկովկասում երեք անկախ վարչաքաղաքական միավորների՝ Վրաստանի Հանրապետության, Արևելակովկասյան Մուսովմանական Հանրապետության (առաջին անգամ կոչվեց՝ Ադրբեյջան) և Հայաստանի Հանրապետության ձևավորումը շրջադարձային նշանակություն ունեցան ողջ հայության համար: Նորահաստատ պետական միավորների անկախությունը երկար չգոյատևեց: Խորհրդային կարգերի հաստատումը նոր քաղաքական իրավիճակ ստեղծեց: Աշխարհաքաղաքական քարտեզի վրա հանդես եկան վիճակարույց տարածքներ, որոնց թվում էր Արցախ-Ղարաբաղը:

ԽՍՀՄ փլուզման գործընթացում, ԽՍՀՄ պետական կառույցում ներառնված ազգային-պետական կազմավորման՝ Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզի (ԼՂԻՄ) և հայրենակ Շահումյանի շրջանի հիմքի վրա 1991 թ. սեպտեմբերի 2-ին ձևավորվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ): Միջազգային իրավունքի հիմնարար նորմերին

համապատասխան նորաստեղծ անկախ հանրապետության մայրաքաղաք հոչակվեց Ստեփանակերտը: Այդ պահից ի վեր հանրապետության իշխանությունները հետևողականորեն վարում էին Հարավային Կովկասում խաղաղության և կայունության պահպանմանն ուղղված քաղաքականություն:

Ինչպես հայտնի է, Հարավային Կովկասը աշխարհի ստրատեգիական տարածաշրջաններից է: Այստեղ բախվում են աշխարհի ազդեցիկ պետությունների և՝ աշխարհաքաղաքական, և՝ տարածաշրջանային հետաքրքրություններն ու շահերը: Բացի այդ, այստեղով անցնում են հիմնական առևտրական, տրանսպորտային, մշակութային ուղիները<sup>1</sup>:

ԼՂՀ-ն՝ Արցախի Հանրապետությունը, հոչակվել է ԼՂԻՄ-ի՝ 6 շրջանի (Ստեփանակերտի հետ), 4 քաղաքի և 4 քաղաքատիպ ավանի ու Շահումյանի շրջանի տարածքում, որոնց 1991 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեից հետո միացել է նաև Գետաշենի ենթաշրջանը:

Դեռևս 1928 թ. ԽՍՀՄ ՌԿ(բ)Կ հրատարակությամբ Ուժին ներքին գործերի ժողկոմատի քարտեզագրման հրատարակության կողմից լույս ընծայված «ԽՍՀՄ Ատլաս»-ում Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կազմավորման, վարչատնտեսական իրավիճակի մասին նշում էր՝ «Автономная Область Нагорного Карабаха, входящая в состав ССР Азербайджана, образована постановлением АзЦИК 7/VII 1923 г. из частей бывш. Джеванширского, Шушинского, Карягинского и Кубатлинского уездов, населенных преимущественно армянами»<sup>2</sup>:

ԼՂԻՄ-ի վարչական միավորներն էին՝ Դիզակի (Ներառել է Հաղորդի, Տողի, Առաքյալ, Ուխտաձորի ու Խողարուտի

<sup>1</sup> 30-летие конфликта в Нагорном Карабахе: сборник научных статей. Под ред. К. П. Курьлева. М., 2019, с. 105.

<sup>2</sup> Атлас Союза Советских Социалистических Республик. Изд. ЦИК СССР, 1928. Составлен и награвирован в картоиздательстве НКВД РСФСР, авт. предисл. А. Енукидзе. М., 1928.

գավառակները և 48 գյուղ, 1939-ից՝ Հադրութի շրջան), Վարանդայի (Թաղավարդի, Սոսի, Ճարտարի, Նորաշենի գավառակները և 46 գյուղ, 1930-ից՝ Մարտունի շրջանը), Խաչենի (Դաշբուլաղի, Ասկերանի, Կարմիր գյուղի, Գալաձորի գավառակները և 53 գյուղ, 1939-ից՝ Ստեփանակերտի, 1978 թվականից՝ Ասկերանի շրջան և Ստեփանակերտի քաղաք-շրջան), Ջրաբերդի (Մարգուշավանի, Հոռաթաղի, Դոկշանլուի, Հաթերքի գավառակները և 53 գյուղ, 1939-ից՝ Մարտակերտի շրջան) և Շուշիի (Շուշի քաղաքը, Մալիբեկլուի գավառակը և 12 գյուղ): Շրջանները բաժանված էին 19 գավառակների: Ինքնավար մարզն ուներ 2 քաղաք՝ Ստեփանակերտ ու Շուշի, և 222 գյուղ<sup>3</sup>:

1991 թ. ԼՂՀ հոչակումով իրացվեց այն ժամանակ գործող օրենսդրությամբ, մասնավորապես՝ «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգի մասին» ԽՍՀՄ 1990 թ. ապրիլի 3-ի օրենքով նախատեսված, ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում նրա կազմում ընդգրկված ազգային ինքնավարություններին սեփական պետականական կարգավիճակն ինքնուրույն կերպով որոշելու իրավունքը:

1991 թ. դեկտեմբեր 10-ին՝ Խորհրդային Միության գոյության պաշտոնական դադարեցումից ընդամենը մի քանի օր առաջ, Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցավ հանրաբեկ, որի արդյունքում ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը՝ 99,89 %-ն, արտահայտվեց Ադրբեյչանից լրիվ անկախանալու օգտին: Դրան հետևած խորհրդարանական ընտրություններում ընտրվեց ԼՂՀ խորհրդարան, որն էլ կազմեց առաջին կառավարությունը: Անկախ ԼՂՀ կառավարությունն իր պարտականությունների կատարմանն ան-

---

<sup>3</sup> Նոյն տեղում:

ցավ բացարձակ շրջափակման և նրան հետևած Աղրբեջանի ռազմական ազրեսիայի պայմաններում:

Օգտագործելով ԽՍՀՄ զինված ուժերի 4-րդ բանակի զենքն ու զինամթերքը՝ 1991 թ. աշնան Աղրբեջանը լայնածավալ պատերազմական գործողություններ սկսեց Լեռնային Ղարաբաղի դեմ, որոնք փոփոխակի հաջողություններով շարունակվեցին մինչև 1994 թ. մայիս: Այդ ընթացքում, երբ մայրաքաղաք Ստեփանակերտն ու մյուս բնակավայրերը գրեթե անդադար հրետակոծումների և ոմբակոծումների էին ենթարկվում, եղան պահեր, երբ ԼՂ տարածքի գրեթե 60 %-ը գրավված էր:

1992 թ. մայիսին ԼՂ ինքնապաշտպանության ուժերը կարողացան ազատագրել Շուշի քաղաքը, «միջանցք» բացել Լաշին քաղաքի շրջանում՝ հնարավորություն ստեղծելով ԼՂ և Հայաստանի տարածքները վերամիավորելու համար: Դրանով իսկ նաև մասնակիորեն վերացվեց ԼՂ երկարամյա շրջափակումը:

1992 թ. հունիս-հուլիս ամիսներին աղրբեջանական բանակին հաջողվեց գրավել ԼՂ ամբողջ Շահումյանի շրջանը, Մարտակերտի շրջանի մեծ մասը, Մարտոնու, Ասկերանի և Հադրութի շրջանների մի մասը:

1992 թ. օգոստոսի 14-ին ԼՂ Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումից հետո ինքնապաշտպանության անջատ ջոկատները վերածենավորվեցին և ամուր կարգապահության իման վրա ու միասնական հրամանատարության ներքո կազմեցին Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակը: Վերջինիս հաջողվեց ոչ միայն ազատագրել Աղրբեջանի զավթած տարածքները, այլև գրավել հանրապետությանը սահմանամերձ, կրակակետերի վերածված մի շարք շրջաններ:

1991-1994 թթ. պատերազմի արդյունքում ազատագրված բոլոր տարածքներն ընդգրկվեցին երկրի վարչատարածքա-

յին կառուցվածքի մեջ: 1994 թ. ՀՂՀ-ի կազմում կազմավորվեց Քաշաթաղի շրջանը, որի տարածքը 1 835 կմ<sup>2</sup> էր: 1997 թ. հունվարի 1-ի դրույթամբ այս շրջանում բնակեցված էր 33 գյուղ՝ ավելի քան 4,3 հազար բնակիչներով, որոնք բոլորը հայեր էին<sup>4</sup>:

1998 թ. հունիսի 16-ին ՀՂՀ Ազգային ժողովի ընդունած «ՀՂՀ վարչատարածքային բաժանման մասին» օրենքով սահմանվեց հանրապետության նոր վարչատարածքային կառուցվածքը: Ըստ դրա՝ հանրապետությունը բաժանված է ութ շրջանների<sup>5</sup>: Դրանք են՝ Ասկերանի (կենտրոնը՝ Ասկերան), Հաղորդականի (կենտրոնը՝ Հաղորդական), Մարտակերտի (կենտրոնը՝ Մարտակերտ), Մարտունու (կենտրոնը՝ Մարտունի), Շահումյանի (կենտրոնը՝ Քարվաճառ), Շուշիի (կենտրոնը՝ Շուշի), Ստեփանակերտի (քաղաք-շրջան) և Քաշաթաղի (կենտրոնը՝ Բերձոր) շրջանները՝ 10 քաղաքով և 322 գյուղով (264 համայնք)<sup>6</sup>: Նորաստեղծ Քաշաթաղի շրջանն ընդգրկում է Բերձորի, Քաշունիքի և Կովսականի (Նախին Լաշինի, Կուբաթլուի և Զանգելանի շրջաններ) տարածքները (տե՛ս քարտեզ 1)<sup>7</sup>: Արցախի Հանրապետության ընդհանուր տարածքը կազմում է 11.458 կմ<sup>2</sup>: Շրջանները բաժանված են համայնքների: Իր այդ սահմաններում ԱՀ-ն գրաղեցնում է պատմական Մեծ Հայքի Արցախ նահանգի

<sup>4</sup> Մելքոնյան Ս., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Եր., 1997, էջ 55:

<sup>5</sup> ՀՂՀ վիճակագրական տարեգիրը 1995-1999 թթ., Ստեփանակերտ, էջ 3: Տե՛ս նաև ԱՀ Վիճակագրության Ազգային Ծառայություն, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային բաժանումը ըստ շրջանների», տարեգիրը 2000-2006, Ստեփանակերտ, էջ 5:

<sup>6</sup> 26 հունիսի 1998 թ., թ. Ստեփանակերտ <0-15, Հավելված թիվ 2 «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը:

<sup>7</sup> Վիճակագրության ազգային ծառայություն, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային բաժանումը ըստ շրջանների», [http://www.stat-nkr.am/2000\\_2006/02.pdf](http://www.stat-nkr.am/2000_2006/02.pdf). Տե՛ս նաև ԱՀ վիճակագրական տարեգիրը, 2020, Ստեփանակերտ, էջ 27:

գրեթե ամբողջ տարածքը, ինչպես նաև Սյունիք և Ոտիք նահանգների փոքր մասը<sup>8</sup>: Հանրապետության վերահսկողության տակ են նախկին Խորհրդային Միության կազմում եղած Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը, Շահումյանի շրջանի մի մասը և հարակից տարածքները: Արցախը Բերձորի մարդասիրական միջանցքով սահմանակցում է Հայաստանին, իսկ ամբողջությամբ շրջապատված է Աղբեջանով: Արցախի աշխարհագրական դիրքը լեռնային է: Ամենաբարձր կետը Մոավի լեռնաշղթայում գտնվող Գոմշասարն է՝ 3724 մ. բարձրությամբ:

2017 թ. ընդունված Արցախի Սահմանադրության 175-րդ հոդվածով սահմանված է. «Մինչև Արցախի Հանրապետության պետական տարածքի ամբողջականության վերականգնումը և սահմանների ճշգրտումը հանրային իշխանությունը իրականացվում է այն տարածքում, որը փաստացի գտնվում է Արցախի Հանրապետության իրավագործության ներքո»<sup>9</sup>:

ԱՀ-ն ճանաչված է միայն մասամբ ճանաչված Արխագիայի, Հարավային Օսիայի, Մերձնեստրյան Հանրապետության կողմից: Իսկ ռազմաքաղաքական և տնտեսական առումով այն գործնականում միացված է Հայաստանին:

Ըստ Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության շրջանակներում ստորագրված << ռազմական դոկտրինի նախագծի՝ «... Հայաստանի զինված ուժերը, մնալով իրենց հիմնական երկու առաքելության մեջ՝ սահմանների պաշտպանություն և զապող առաքելություն, անկախ իրենց տեղակայման վայրից շարունակելու են լինել ԼՂ անվտանգության երաշխավորը ...»<sup>10</sup>: Փաստորեն, <<-ն կոչված էր ապահովելու Արցախի և նրա հայ ժողովորդի անվտանգությունը, որպես ԱՀ անվտան-

<sup>8</sup> Մելքոնյան Ս., նշվ. աշխ., էջ 10:

<sup>9</sup> ԱՀ Սահմանադրություն, Ստեփանակերտ, 2006, գլուխ 12, էջ 52:

<sup>10</sup>Հայաստանը ԼՂՀ ժողովորդի անվտանգության երաշխավորն է, 14 դեկտեմբերի, 2007, << ՊԲ:

գության երաշխավոր: Այդպես էր մինչև 2020 թ. սեպտեմբերի 27-ը...

ԱՀ-ն արևմուտքում սահմանակցում է Հայաստանին, հարավում՝ Իրանի Իսլամական Հանրապետությանը, արևելքում՝ Աղրբեջանական Հանրապետությանը:

Ըստ ԱՀ «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի՝ հանրապետության ութ շրջաններում իրականացվում էր պետական կառավարում, համայնքներում՝ տեղական ինքնակառավարում: Տեղական ինքնակառավարում է իրականացվում Ստեփանակերտ քաղաքում ևս՝ այն համատեղելով պետական կառավարման հետ: Համայնքը կարող է ընդգրկել մեկ կամ ավելի թվով բնակավայրեր<sup>11</sup>:

Արցախյան առաջին պատերազմից հետո նկատելի էր Արցախի տարածքների սահմանային և վարչական միավորների բնակչության թվի փոփոխությունը: Այսպես, 2005 թ. մարդահամարի տվյալների արդյունքում գրանցվեց բնական աճ (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

## ԼՂՀ վարչական շրջանների բնակչությունը, համայնքները և բնակավայրերը<sup>12</sup>

Վարչական շրջան	Բնակչություն (1996) (հզ.)	Բնակչություն (2000) (հզ.)	Բնակչություն (2005) (հզ.)	Համայնք	Բնակավայր
Ստեփանակերտ	54.8	49.5	50.0	1	1
Ասկերան	15.5	16.0	17.0	42	48
Հաղորդ	11.0	11.4	12.0	29	46

<sup>11</sup> ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին «Արցախի Հանրապետություն, Կառավարության առդնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե»: *nkrcadastre.am* (հայերեն): Վերցված է 2017-12-21:

<sup>12</sup> ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 2000-2006, էջ 14:

Մարտակերտ	17.6	18.9	18.9	42	64
Մարտունի	22.8	22.8	23.2	36	40
Շահումյան	0.8	2.0	2.5	52	62
Շուշի	4.9	4.0	4.4	7	11
Քաշաթաղ	4.0	9.8	9.7	53	112
Ընդամենը	131.4	134.4	137.7	262	384

Այդ թվում բնական աճ է գրանցվել շրջկենտրոններում (տե՛ս աղյուսակ 2) և շրջաններում (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 2

### Արցախի վարչական շրջանների շրջկենտրոնների բնակչությունը 2006 թ. տարեվերջի դրությամբ<sup>13</sup>

Շրջան	Բնակչություն (հզ. մարդ)
Ստեփանակերտ	50.4
Ասկերան	2.1
Հաղործառ	3.0
Մարտակերտ	3.8
Մարտունի	4.9
Քարվաճառ	0.5
Շուշի	3.3
Բերձոր	2.0
Ընդամենը	70.0

<sup>13</sup> Նոյն տեղում:

Աղյուսակ 3

**ԼՂՀ վարչական շրջանների բնակչությունը և տարածքը  
2006 թ. տարեվերջի դրությամբ<sup>14</sup>**

Շրջան	Բնակչություն (հզ. մարդ)	Տարածք (կմ <sup>2</sup> )
Ստեփանակերտ	50.4	25.66
Ասկերան	17.0	1221.92
Հաղողութ	12.4	1876.80
Մարտակերտ	18.9	1795.10
Մարտունի	23.1	951.20
Շահումյան	2.8	1829.80
Շուշի	4.5	381.30
Քաշարաղ	8.6	3376.60
Ընդամենը	137.7	11458.38

ԼՂՀ մշտական բնակիչների ընդհանուր քանակը 2010 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 141.400 մարդ, որոնց մեծ մասը հայեր էին: Կային նաև ռուսներ, ուկրաինացիներ, վրացիներ և հույներ: Քաղաքաբնակների թիվը՝ 74.183 էր կամ 52.5 %-ը, գյուղական բնակչությունը՝ 67.217 կամ 47.5 %: Արցախում տղամարդկանց թիվը կազմել է 68.048 մարդ կամ 48.1 %, կանանց՝ 73.352 կամ 51.9 %: Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի (պատմ. անվանումը՝ Վարարակն) բնակչությունը կազմում էր 52.310 մարդ<sup>15</sup>:

Ասկերանի շրջանը գտնվում է ԱՀ արևելյան մասում, տարածքը առ 01.07.2016 թ. կազմում էր 1196.3 կմ<sup>2</sup> (2006թ.՝ 1221.9 կմ<sup>2</sup>), համայնքների թիվը՝ 42, բնակեցված բնակավայրերի թիվը՝ 45: Բնակչության թիվն առ 01.07.2016 թ. կազմում էր 18.3 հզ. մարդ<sup>16</sup>: Հաղողութի շրջանը գտնվում է ԱՀ հարավ-արևելյան մասում, տարածքը

<sup>14</sup> Նոյն տեղում, էջ 15:

<sup>15</sup> <http://www.president.nkr.am/am/nkr/statePower/>

<sup>16</sup> ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 2009-2015, էջ 24:

կազմում է 1 876.8 կմ<sup>2</sup>, համայնքների թիվը՝ 30, բնակեցված բնակավայրերի թիվը՝ 43, իսկ բնակչության թիվն առ 01.07.2016 թ.<sup>17</sup> (01.01.2016թ.<sup>18</sup> 13.6) հզ. մարդ: Մարտակերտի շրջանը գտնվում է ԱՀ հյուսիս-արևելյան մասում, տարածքը՝ 1795.07 կմ<sup>2</sup>, համայնքների թիվը՝ 43, բնակեցված բնակավայրերի թիվը՝ 46 (որոնցից 13-ը ներկայումս հակառակորդի վերահսկողության տակ է), բնակչության թիվն առ 01.07.2016 թ.<sup>19</sup> 20.3 հզ. մարդ: Մարտունու շրջանը գտնվում է ԱՀ արևելյան մասում, տարածքը՝ 951.1 կմ<sup>2</sup>, համայնքների թիվը՝ 35, բնակեցված բնակավայրերի թիվը՝ 39, բնակչության թիվն առ 01.07.2016 թ.<sup>20</sup> 24.3 հզ. մարդ: Շահումյանի շրջանը գտնվում է ԱՀ հյուսիսային մասում, տարածքը՝ 1 829,89 կմ<sup>2</sup>, համայնքների թիվը՝ 16, բնակեցված բնակավայրերի թիվը՝ 17, բնակչության թիվն առ 01.07.2016 թ.<sup>21</sup> 3.7 հզ. մարդ: Շուշիի շրջանը գտնվում է ԱՀ արևմտյան մասում, տարածքը՝ 382.73 կմ<sup>2</sup>, համայնքների թիվը՝ 7, բնակեցված բնակավայրերի թիվը՝ 11, բնակչության թիվն առ 01.07.2016 թ.<sup>22</sup> 5.5 հզ. մարդ: Քաշաթաղի շրջանը գտնվում է ԱՀ արևմտյան մասում, տարածքը՝ 3 376.57 կմ<sup>2</sup>, համայնքների թիվը՝ 54, բնակեցված բնակավայրերի թիվը՝ 108, բնակչության թիվն առ 01.07.2016 թ.<sup>23</sup> 10.6 հզ. մարդ<sup>17</sup>:

Պատմական Շահումյանի շրջանը 1991 թ.-ից գտնվում էր Աղբեջանի Հանրապետության վերահսկողության տակ, իսկ տեղի հայ բնակչությունը դուրս էր մղված: Ազատագրումից հետո նա հնարավորություն ստացավ վերադառնալու հայրենի Վայկովիքի գավառ: Այս ուժը շրջանների մեջ են մտնում նաև ազատագրված յոթը հայկական պատմական գավառները՝ Ճրաքն, Կովսական, Քաշունիք (Աղավնո գետի հովիտ, Քաշաթաղի շրջան), Վայկովիք (Շարիթառ գետի վերին հովիտ), Ակն

<sup>17</sup> Նոյն տեղում:

(Տիգրանակերտի դաշտակ, նախկին Աղդամի շրջան) և Մուխանք (Արցախի դաշտավայր):

2019 թ. վերջին ԱՀ բնակչությունը կազմում էր 148.8 հզ. մարդ, տարածքը՝ 11.80 հզ. կմ<sup>2</sup>, բաժանված 8 շրջանների (ներառյալ՝ շրջանի կարգավիճակ ունեցող Ստեփանակերտ քաղաքը)<sup>18</sup>: 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ ԱՀ տարածքը կազմում էր արդեն 11 803.16 կմ<sup>2</sup>, իսկ բնակչությունը՝ 148,8 հզ. մարդ: Բնակչության խտությունը 1 կմ<sup>2</sup>-ու վրա կազմում էր 12,6 մարդ (տե՛ս աղյուսակ 4): Քաղաքային բնակչությունը կազմում էր 84,8 հզ. մարդ, իսկ գյուղականը՝ 64 հզ. մարդ (տե՛ս աղյուսակ 5):

Եթե 2016 թ. դրությամբ ԱՀ քաղաքային համայնքների բնակչության թիվը կազմում էր 55,4 հզ., ապա 2020 թ. դրությամբ այն հասավ 58,3 հզ.: Նոյն հարաբերությամբ՝ Շուշիի համայնքի բնակչության թիվը 2016 թ. կազմում էր 4,1 հզ., 2020 թ.՝ 4,2 հզ., Հաղորդի համայնքինը՝ 3,1 հզ. և այլն (տե՛ս աղյուսակ 6):

#### Աղյուսակ 4 ԱՀ տարածքը և բնակչությունն, ըստ վարչատարածքային բաժանման (2020 թ. հունվարի 1-ի դրությամբ)<sup>19</sup>

Շրջանը	Տարածքը, կմ <sup>2</sup>	Բնակչությունը, 1000 մարդ	Բնակչության խտությունը 1 կմ <sup>2</sup> վրա
Ստեփանակերտ	29.12	58.3	2 002.8
Ասկերան	1 165.75	17.0	14.6
Հաղորդթ	1 876.76	12.0	6.4
Մարտակերտ	2 045.10	19.8	10.5

<sup>18</sup> ԱՀ վիճակագրական տարեգիրք, 2020, էջ 27:

<sup>19</sup> Նոյն տեղը, էջ 28:

Մարտունի	1 098.33	21.3	22.4
Շահումյան	1 829.89	3.3	1.8
Շուշի	381.64	5.4	14.1
Քաշաթաղ	3 376.57	11.7	3.4
Ընդամենը	11803.16	148.8	12.6

\*) Ներառված չեն հակառակորդի վերահսկողության տակ գտնվող տարածքները:

Աղյուսակ 5

**ԱՀ բնակչության թվաքանակն ըստ շրջանների,  
2020 թ. հունվարի 1-ի դրությամբ<sup>20</sup>**

Շրջան	Բնակչությունը 1000 մարդ	Այդ թվում քաղաքային՝ գյուղական՝	
Ընդամենը	148.8	84.8	64.0
Ստեփանակերտ	58.3	58.3	-
Ասկերան	17.0	1.8	15.2
Հաղորդական	12.0	3.0	9.0
Մարտակերտ	19.8	4.5	15.3
Մարտունի	21.3	8.7	12.6
Շահումյան	3.3	0.7	2.6
Շուշի	5.4	4.2	1.2
Քաշաթաղ	11.7	3.6	8.1

<sup>20</sup> Նոյն տեղում, էջ 28-29:

**ԱՀ քաղաքային համայնքների բնակչությունը  
տարեսկզբին (1000 մարդ) <sup>21</sup>**

	<b>2016</b>	<b>2017</b>	<b>2018</b>	<b>2019</b>	<b>2020</b>
Ստեփանակերտ	55.4	55.8	56.6	57.5	58.3
Ասկերան	2.0	2.0	1.9	1.8	1.8
Հաղորդթ	3.1	3.1	3.0	3.0	3.0
Մարտակերտ	4.5	4.5	4.5	4.5	4.5
Մարտունի	4.8	4.8	4.7	4.6	4.6
Ճարտար	4.0	4.0	4.1	4.0	4.1
Քարվաճառ	0.7	0.7	0.7	0.7	0.7
Շուշի	4.1	4.1	4.2	4.2	4.2
Բերձոր	2.1	2.0	2.0	2.0	1.9
Կովսական	0.6	0.7	0.7	0.6	0.7
Միջնավան	0.4	0.4	0.4	0.4	0.4
Որոտան	0.5	0.6	0.5	0.6	0.6

2016 թ. ապրիլի 1-ին ադրբեջանական ուժերը, Խախտելով Սոչիում կնքված համաձայնությունը, լայնամասշտաբ հարձակում են գործում արցախա-ադրբեջանական շիման գծի ողջ երկայնքով։ Քառորյա պատերազմի ժամանակ երկու կողմերն էլ ունենում են մարդկային և նյութական կորուստներ։ Կարճատև պատերազմի ընթացքում Արցախը կորցնում է 8 կմ<sup>2</sup> տարածք, սակայն, այնուամենայնիվ, ստատուս քվին տարածաշրջանում պահպանվում էր։

Ադրբեջանի Հանրապետությունը, Խախտելով ԵԱՀԿ Մինսկի խմբի և համանախագահ պետությունների առջև ստանձնած ուժի և ուժի սպառնալիքի կիրառումից հրաժարվելու պարտավորությունները, 2020 թ. սեպտեմբերի 27-ի՝

<sup>21</sup> Նոյն տեղում, էջ 29։

առավոտյան ժամը 07:10-ին, Թուրքիայի աջակցությամբ սանձազերծեց լայնածավալ պատերազմ Արցախի Հանրապետության դեմ: Պատերազմը տևեց 44 օր և իր տեսակով Արցախյան ազատամարտից ի վեր ամենաարյունալի ու դաժան պատերազմն էր<sup>22</sup>:

Պատերազմին զոհ են գնացել հազարավոր մեր հայրենակիցներ՝ ինչպես խաղաղ բնակչության շրջանում, այնպես էլ՝ Պաշտպանության բանակի շարքերից: Հակառակորդի կողմից միտումնավոր ոչնչացվել են ԱՀ քաղաքացիական ենթակառուցվածքներն ու մշակութային ժառանգությունը:

2020 թ. նոյեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանի, Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևի և Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի կողմից ստորագրվեց համաձայնագիր՝ հրադադարի և ռազմական գործողությունների դադարեցման մասին<sup>23</sup>:

Ի՞նչ մնաց Արցախի Հանրապետությունից և ինչպիսի՝ տեսք ունի ներկայում ԼՂ-ի (Արցախի) վարչատարածքային քարտեզը ռազմական գործողությունների և 2020 թ. նոյեմբերի 9-ին ստորագրված եռակողմ հայտարարությունից հետո: Ըստ նախնական ոչ պաշտոնական փորձագիտական հաշվարկների (առայժմ պաշտոնական հայտարարություն չկա)<sup>24</sup> Լեռնային Ղարաբաղի տարածքների հանձնումից հետո 2020 թ. սեպտեմբերի 26-ի դրությամբ եղած 11 458 կմ<sup>2</sup>-ից մնացել է 3 170-ը<sup>24</sup>: Այդ տարածքի մեջ մտնում են՝ Մարտակերտի շրջանի մեծ մասը (1400 կմ<sup>2</sup>), Ասկերանի շրջանի մեծ մասը (850 կմ<sup>2</sup>), Շուշիի շրջանի 40%-ը (120 կմ<sup>2</sup>), Ստեփանակերտը (26 կմ<sup>2</sup>), Մարտունու շրջանի մի մասը (400 կմ<sup>2</sup>): Ամբողջությամբ կորսվել է Հադրութի շրջանը (679

<sup>22</sup> [https://hy.wikipedia.org/wiki/#Cite\\_note\\_hraparak](https://hy.wikipedia.org/wiki/#Cite_note_hraparak)

<sup>23</sup> <https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/>

<sup>24</sup> [armeniasputnik.am](http://armeniasputnik.am), Sputnik / Shushanik Sargsyan

կմ<sup>2</sup>): Աղրբեջանի վերահսկողության տակ է անցել 4564 կմ<sup>2</sup> Քելբաշարի շրջանը (1935 կմ<sup>2</sup>), Աղդամի շրջանը (725 կմ<sup>2</sup>), Լաշինի շրջանը (մոտ 1900 կմ<sup>2</sup>): Մարտերի ընթացքում Աղրբեջանին հաջողվել է վերահսկողության տակ վերցնել 3716 կմ<sup>2</sup>: Հյուսիսում՝ 131 կմ<sup>2</sup>, ինչպես նաև Թալիշ, Մատահիս գյուղերը՝ 118 կմ<sup>2</sup>, ևս մեկ բարձունք էլ հյուսիսում՝ 13 կմ<sup>2</sup><sup>25</sup>: Աղրբեջանը 3 585 կմ<sup>2</sup> էլ իր վերահսկողության տակ է վերցրել հարավից (Հադրութ, Ֆիզովի, Զաբրայի, Զանգելան, Կուբաթլի): Իսկ ահա 610 կմ<sup>2</sup>-ի վերաբերյալ տվյալները չեն հստակեցվել (տե՛ս քարտեզ 3):

Հիշեցնենք՝ նոյեմբերի 9-ի համատեղ հայտարարությունը վերաբերում է ռազմական գործողությունների դադարեցմանը: Ըստ փաստաթղթի՝ ԼՂ շիման գծի և Լաշինի միջանցքի երկայնքով տեղակայվում է ՈԴ խաղաղապահ զորակազմ՝ 1960 զինծառայողներով, հրաձգային գենքով, 90 զրահամերենաներով, 380 միավոր ավտոմոբիլային և հատուկ տեխնիկայով: Զորակազմի տեղակայմանը զուգահեռ դուրս են բերվում հայկական զինված ուժերը: ՈԴ խաղաղապահ զորակազմը տեղակայվում է 5 տարի ժամկետով՝ նոյնքան ժամանակահատվածով ավտոմատ երկարաձգմամբ, եթե կողմերից որևէ մեկը ժամկետի ավարտից 6 ամիս առաջ չհայտարարի այդ դրույթի կիրառումը դադարեցնելու մտադրության մասին<sup>26</sup>:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը նշված իրողությունները՝ մինչ այս պահը Աղրբեջանի վերահսկողության տակ հայտնված ԱՀ տարածքները պետք է համարել բռնազավթված, օկուպացված՝ Աղրբեջանի կողմից:

<sup>25</sup><https://www.instagram.com/parstodayarmenian/>, [https://twitter.com/radio\\_armenian](https://twitter.com/radio_armenian), <https://www.reddit.com/user/armradio/>,  
<https://urmedium.com/c/armenianradio>

<sup>26</sup> Sputnik / Shushanik Sargsyan, Read more: <https://armeniasputnik.am-infograph>



## Քարտեզ 2



## Քարտեզ 3

### ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԶԱՐՏԵԶ՝ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ

Ինչպես տարածքային բաժանման, այնպես էլ բներով արտահայտված տվյալները նախնական են և ոչ պաշտոնական

ՀԱՅԱԿԱՆԱՆ ԿՈՂՄԻՆ ԵՆ  
ԱՆՑՈՒՄՈՒՄ



- 📍 Մարտակերտի շրջան  
**1400 կմ<sup>2</sup>** (մեծ մասը)
- 📍 Ասկերանի շրջան  
**850 կմ<sup>2</sup>** (մեծ մասը)
- 📍 Շուշիի շրջան  
**120 կմ<sup>2</sup>** (40%)
- 📍 Ստեփանակերտ  
**26 կմ<sup>2</sup>**
- 📍 Մարտոնի շրջան  
(մի մասը) **400 կմ<sup>2</sup>**

Հաղորդական ամբողջությամբ  
անցել է Աղորեցակին  
**679 կմ<sup>2</sup>**

ԱԴՐԵԶԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԻՆ ԵՆ ԱՆՑՈՒՄՈՒՄ



- 📍 Բարձրանալի (Բեյքաշար) շրջան  
**1935 կմ<sup>2</sup>**
- 📍 Ակնայի (Աղդաս) շրջան  
**725 կմ<sup>2</sup>**
- 📍 Բերդորի շրջան (Լաշին)  
մոտ **1900 կմ<sup>2</sup>**



- 📍 Հյուսիսիմ  
**131 կմ<sup>2</sup>**
- 📍 Թալիշ, Մատաղիս գյուղերը  
**118 կմ<sup>2</sup>**
- 📍 Շուշի քաղաքի  
**5,5 կմ<sup>2</sup>**
- 📍 Բարձունք հյուսիսում  
**13 կմ<sup>2</sup>**
- 📍 Հարուվում (Հայրուռ, Կարանյա  
(Ֆիրու), Ջական (Զաբրայի),  
Լոկական (Զագգյան),  
Օսնասար (Կուբաթլու))  
**3585 կմ<sup>2</sup>**

**610 կմ<sup>2</sup> տարածքի վերաբերյալ տվյալները հստակեցված չեն**



Ժայացած, ստեղծած Հայության վեհական համայնք

**NUNE SARUMYAN**

Head of the Department of History and Political Science ARSU,  
Candidate of Historical Sciences,  
Associate Professor  
[n.sarumyan@mail.ru](mailto:n.sarumyan@mail.ru)

## **ADMINISTRATIVE STATUS OF THE ARTSAKH REPUBLIC IN 1991-2021**

### **SUMMARY**

**Keywords:** administrative-political division, region, community, geopolitical situation, Artsakh, occupation, territorial losses, shelling, bombing, border adjustment.

The article shows that Artsakh, which for centuries was one of the historical worlds of Armenia, throughout history defending its right to existence and originality, managed to proclaim independence, form the appropriate authorities, pursue a policy of peace and stability in the South Caucasus. This region is one of the strategic regions of the world, where geopolitical and regional interests of the states collide.

The geographical position, administrative division of the Republic of Artsakh from the declaration of independence in 1991 to 2021 are presented. On the basis of factual and statistical data, the administrative changes of Artsakh, the unification of the liberated territories, and the regulation of the boundaries of state administrative units are shown. Yearly data are provided on the area of administrative districts, settlements, population movements, and density (corresponding tables and maps are attached). The administrative-territorial losses of the Republic of Artsakh as a result of the 44-day war in 2020 are also mentioned.

**НУНЭ САРУМЯН**

Завкафедрой истории и политологии АрГУ,

к.и.н., доцент

n.sarumyan@mail.ru

## **АДМИНИСТРАТИВНОЕ ПОЛОЖЕНИЕ АРЦАХСКОЙ РЕСПУБЛИКИ В 1991-2021 гг.**

### **РЕЗЮМЕ**

**Ключевые слова:** административно-политическое деление, регион, община, геополитическая ситуация, Арцах, оккупация, территориальные потери, артобстрелы, бомбардировки, корректировка границы.

В статье показано, что Арцах, веками являвшийся одним из исторических миров Армении, на протяжении всей истории отстаивающий свое право на существование и самобытность, сумел провозгласить независимость, сформировать соответствующие органы власти, проводить политику мира и стабильности на Южном Кавказе. Этот регион является одним из стратегических регионов мира, где сталкиваются геополитические и региональные интересы государств.

Представлены географическое положение, административное деление Республики Арцах от провозглашения независимости в 1991 г. до 2021 г. На основе фактологически-статистических данных показаны административные изменения Арцаха, объединение освобожденных территорий, регулирование границ государственных административных единиц. По годам приводятся данные о площади административных районов, населенных пунктов, перемещении населения, плотности (прилагаются соответствующие таблицы и карты). Упоминаются также административно-территориальные потери Республики Арцах в результате 44-дневной войны 2020 года.

**ԳԱՅԱՆԵ ՄԱԽՄՈՒՐՅԱՆ**  
ՀՀ ԳԱԱ Պի առաջատար գիտաշխատող,  
պ.գ.դ.  
[ggmakhm@hotmail.com](mailto:ggmakhm@hotmail.com)

**1991 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԼԵՇԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՋԱԿՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ  
ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ**

**Հիմնաբառեր՝** Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Արցախ, միացում, անկախություն, հիշակագիր, հանրաքվե, ջարդ, «Օղակ» գործողություն:

Մեր քաղաքականության տեսության և մարտավարության ոլորտում կա երեք հիմնահարց: Առաջին. ինքնորոշումը հաճախ հակադրվում է տարածքային ամբողջականության դրույթին, բայց որևէ առումով չի զիջում դրան: Հետևաբար, մեր քանակցային կողմը, պաշտպանելով իր կյանքը, ունեցվածքը, ազգային պատկանելությունն ու Հայրենիքում ապրելու հնարավորությունը, պետք է արտաքին աշխարհով մեկ տարածի ջարդերի, ազգային գտումների, շրջափակման, Ադրբեյջանի երկարաժամկետ ցեղասպան քաղաքականության մասին ճշմարտությունը<sup>1</sup>: Ակնհայտ է, որ ժողովուրդն իշխանության անտրոտունչ ու իրավագործկ կցորդը չէ, որի հանդեպ կարելի է կիրառել ցանկացած բռնություն: Այդ պարզ ճշմարտությունը անհրաժեշտ է հետևողականորեն քարոզել և ապացուցել մեր քաղաքականությամբ<sup>2</sup>: Կա-

<sup>1</sup> Բայական Վ. Ռ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը: Եր., 2002, էջ 356-357, Առաջաման Ա., Արցախի հայության պայքարը ԼՂԻՄ-ը Ադրբեյջանի կազմից հանելու համար (1988-1991 թթ.): Արխիվային նյութերի ժողովածու, Ստեփանակերտ, 2018, էջ 58, 60-62:

<sup>2</sup> Այդ առումով օգտակար են ՀՀՍՀ Գերագույն խորհրդի 17.09.1989 թ. և 13.02.1990 թ. որոշումները «ՌԿՊ(թ) կենտրոնի կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որոշումը անօրինական ճանաչելու մասին», շատ խոցելի և ԶԼՄ-

նոնավոր և անվրեա քարոզությունը նույնչափ կարևոր է հաջողության հասնելու համար, որքան պաշտպանուակությունը:

Երկրորդ. ինքնորոշման երկու հիմնական ձևերն են՝ անկախությունն ու միացումը: Մեկուսացված ժողովուրդները ստեղծում են իրենց պետությունները, իսկ մասնատված ազգերը միանում են, հատկապես երբ առանձին վերցրած նրանք կենսունակ չեն: Միացման դրույթը մեր շարժման հիմքն է և, թերևս, ավելին: Ինչպես անցյալում, այնպես էլ այսօր Արցախն ի վիճակի չէ միայնակ պաշտպանվելու: Փոքր տարածքի, արտաքին ճանապարհների բացակայության, թշնամական միջավայրի հետևանքով հանրապետությունն ապրում է սաստկացող արտաքին ճնշման, նաև նոր հարձակման վտանգի պայմաններում: Սակայն մնացած Հայաստանն էլ ի զորու չէ ապահովելու իր անվտանգությունն առանց արտաքին պաշտպանության: Թեև Հայաստանի Հանրապետության դրույթունը համեմատաբար ավելի բարվոք է սոցիալ-տնտեսական ասպարեզում, բայց ուազմական առուանով նրա գործերը ավելի լավ չեն: Միասնաբար մեր կենաց ու հաջողությունների հավանականությունը (իսկ այսօր հարցն այդպես է դրված) էապես աճում է:

Տողերիս հեղինակը պնդում է, որ միասնությունը ճիշտ, գուցե մեզ համար միակ ընդունելի ուղին է, որով ընթանալու

---

Ներում թիշ լուսաբանված՝ 18.10.1991 թ. «Ալրբեջանի հանրապետության պետական անկախության մասին» սահմանադրական ակտը: Դրանք տես Հայորեն Կարաբախ և մеждународном праве и мировой политике. Документы и комментарий, сост. Ю. Г. Барсегов, т. I. M., 2008, с. 680-681, 705-707; т. II. M., 2009, с. 247-248; Բայան Վ. Ռ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, էջ 307, նույնի՝ Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007 թթ.), Ստեփանակերտ, 2012, էջ 167-168; Ուղուարքան Բ. Ա., Արցախյան գոյապայքար, Եր., 1994, էջ 150, նույնի՝ Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Եր., 1994, էջ 243-244, Ավագան Շ. Հայորեն Կարաբախ. Правовые аспекты, 2-е изд. Ер., 2014, с. 18-19, 39.

դեպքում հայկական պետականությունը ոչ միայն կկարողանա գոյատևել, այլև կյանքի կոչել քաղաքական և քարոզական առումով օգտակար երկու հայկական հանրապետությունների միացման գործընթացը՝ հրաժարվելով անջատողականության գործելակերպից: Հարցն այն է, որ այդ սկզբունքները նշանակում են տարբեր գաղափարախոսություն ու մարտավարություն, միջազգային հարաբերությունների տարբեր խաղակիցների ընտրություն: Առաջին հերթին մեզ հարկավոր է հոգ տանել ազգային կյանքի հիմքերի, այն է՝ բնակչության և տարածքի անվտանգության, արդյունավետ կառավարման, օգտագործման և այդ նպատակով անհրաժեշտ գիտարտադրական ու հասարակական համակարգերի զարգացման մասին: Նմանօրինակ երկրի արտաքին հաջողությունները նրա ներքին նվաճումների ածանցյալն են:

Իսկ մեր հակառակորդները, այդ թվում՝ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները, 1988 թ. փետրվարի 20-ից սկսած՝ փորձում էին ձևախեղել Արցախյան շարժման Էռլիքուն՝ անխուսափելի դարձնելով դրա վերածումը խոշոր ռազմական բախման<sup>3</sup>, որպեսզի անհնար լիներ կարգավորել խնդիրն անմիջական կողմերի ընդգրկմամբ: Մուկվայում կիրառում էին հայերին անարգող «հավասարեցում», երբ ԼՂԻՄ մարզխորհրդի և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանները հավասարեցնում էին հայերի ջարդեր, բռնազաղթ իրագործող, Հայաստանը լիակատար շրջափակման ենթարկող Ադրբեջանի քաղաքականությանը, 1989 թ. դեկտեմբերի 31-ից 1990 թ. հունվարի 2-ին Նա-

<sup>3</sup> Մարզային խորհրդի նիստերի արձանագրությունները տե՛ս Պատմական նստաշրջան: ԼՂԻՄ ժողովդական պատգամավորների 20-րդ գումարման մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի 1988 թ. փետրվարի 20-ի նիստի արձանագրությունը, փաստաթյալների և նյութերի ժողովածու: Կազմ. Վ. Ռ. Բալյան, Տ. Վ. Հակոբյան, Ստեփանակերտ, 2008, էջ 12, 31-32, Ուլուքարյան Բ. Ա., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 278-279:

Խիջևանի ԻՆՍՀ-ում 800 կմ արտաքին սահմանի վերացմանն ու հունվարի 20-ին այդ ինքնավարության՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին հայտարարությանը: Կենտրոնից էին «փաթաթում» մեզ ոչ պիտանի, բայց ծանր գաղափարախոսական մեղադրանքներով հիդ անջատումը: Այն էլ այնպիսի պայմաններում, երբ Խորհրդային Հայաստանի տնտեսական Ենթակառուցվածքի 40 %-ը քանդել էր 1988 թ. դեկտեմբերյան երկրաշրջը: Հենց վերոնշյալ հեռանկարով միութենական Կենտրոնն Արցախյան հիմնախնդրի փաթեթային համալիր լուծումը փոխարինեց փուլային մոտեցմամբ: Եվ անգամ այդ տարբերակը, որի դրսևորումն էր 1989 թ. հունվարի 12-ից նոյեմբերի 28-ը գործած ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեն, իրականացնում էին միակողմանի, ծայրահեռ կանխակալությամբ և որպես ժամանակավոր միջոց:

Արվեց ամեն ինչ՝ սահմանադրական ու բացարձակ օրինական լուծումը նողեկալի, շարունակ տարածվող ջարդերով, շրջափակմամբ, բռնագաղթով ու մարտերով փոխարինելու համար: Դրանց ավելացան կամայական ձերբակալություններն ու կտտանքները Շուշիի և Աղրբեջանի բանտերում, որտեղ տիրում էր իսկական «զուրում»: Հակահայկական իշխանությունները գազանային, նվաստացուցիչ բռնություններով հետամուտ էին, որ Արցախի հայերը հրաժարվեին իրենց ազգությունից ու Հայրենիքից, ազգային արժեքներից ու մարդկային արժանապատվությունից: Պետությունն, անտեսելով ԽՍՀՄ գործող Սահմանադրության 11-րդ հոդվածը, մերժում էր բարձրագույն ինքնիշխանության իրավասությունը ԽՍՀՄ ողջ տարածքի նկատմամբ՝ սեփականության իր իրավունքը փոխանցելով հանրապետություններին: Մյուս կողմից, նա ԼՂԻՄ-ում օրենքից դուրս էր մղել հայերին: Այդպիսով, պետությունը բոյկոտել էր իր պարտականությունը՝ քաղաքացիների կյանքն ու սեփականությունը

պաշտպանելու առումով: Համընդիանուր զինապարտության պայմաններում իշխանությունը չէր զինել բնակիչներին, որոնց ղեկավարումը հարկավոր էր հանձնարարել ՆԳՆ հրահանգիչներին, ովքեր պետք է վերահսկեին ու կազմակերպեին զորահավաքն ու զորավարժությունները: Չէ՞ որ պարտականությունների ճանաչումն ու կատարումը իրավական համակարգի հատկանիշ են: Մարդու ազատության երաշխիքներն են նրա իրավունքների գործադրումն ու պետության պարտականությունների կատարումը անհատի նկատմամբ: Մնացած բոլոր եղանակները բոնակալություն են (կուսակցական-ոստիկանական, ռազմական, պաշտոնական վերնախավային) տարբեր դիմակներով: Մինչդեռ 1988-1991 թթ. խորհրդային պետությունն անպատճելիության մթնոլորտում խրախուսում էր ջարդարարներին, զրպարտում և առանց աչքը թարթելու ստում մեր հասարակության մասին զանգվածային լրատվության միջոցներով: Նման միջոցներով կարգավորման իրավական գործելակերպը մտցնում էին փակուղի՝ բախումը փոխադրելով քենական, իսկ հետո՝ ռազմական ասպարեզ:

ԽՍՀՄ ղեկավարության ու նրա Գերագույն խորհրդի ակնհայտ անքաղաքակիրթ պահվածքը դրդեց << և մարզային պատգամավորներին 1989 թ. հոկտեմբերի 10-ին ու դեկտեմբերի 13-ին, 1990 թ. դեկտեմբերի 2-ին բոյկոտել Գև Նստաշրջաններն ու IV համագումարի քննարկումները, 1990 թ. փետրվարի 19-ի արտահերթ նիստում սուր բանավեճի բռնվելու հակահայկական դիրքորոշում ունեցող պատգամավորների հետ, սեպտեմբերի 9-29-ը նստել հացադույիներին զորքերի բռնակալությունը վերացնելու, հայերի բռնագաղթը կանխելու ու կանխարգելելու և Արցախում սահմանադրական իշխանությունները վերականգնելու պահանջներով: Իսկ ավելի ուշ՝ 1991 թ. օգոստոսի 27-ին, Հենրիկ Իգիթյանը միութենական պատգամավորների առջև

հանդես եկավ ամփոփիչ ճառով<sup>4</sup>: 1990 թ. սեպտեմբերի 27-ին ԼՂԻՄ-ի բոլոր մակարդակների պատգամավորների կողմից ԽՍՀՄ նախագահին, միութենական ատյաններին ու Հայաստանի Հանրապետության Գև-ին հղած դիմումի տեքստում տեղյակ էր պահպում ներքին գորքերի և Աղբբեցանի կազմկոմիտեի սանձազերծած պետական ահաբեկչության մասին, որը, փաստորեն, ուղղված էր ոչնչացված ինքնավարության բնակչության ազգային պատկանելության դեմ: Կենտրոնից խրախուսվող Բաքվի իշխանությունները բացեիրաց իրականացնում էին հայերի դեմ ուղղված պետական ցեղասպանություն: Նոյն օրը՝ սեպտեմբերի 27-ին, Մոսկվայում իրավիրված ինքնավար կազմավորումների համագումարն ապարտեիդ՝ ռասայական խտրականություն, անվանեց միութենական քաղաքականությունը՝ պահանջելով դադարեցնել ինքնավարությունների ոչնչացումը և 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշման հիման վրա վերականգնել ԼՂԻՄ-ի իշխանության սահմանադրական մարմինները: Սակայն այդ օրինական պահանջն անտեսվում էր ընդհուպ 1991 թ. ամառը: Այդ առումով անօգուտ էին արցախցիների հավաքական գրավոր դիմումն ու նրանց՝ 1991 թ. հունիսի 29-ի հանդիպումը Միության ղեկավարության հետ, հովհանք 3-ի գրույցը ԽՍՀՄ նախագահի հետ, ինչպես նաև հովհանք 9-ին Հայաստանի Գերագույն խորհրդի ներկայացրած մե-

<sup>4</sup> Հացադրություն սկսեց պատգամավոր Զորի Բալայանը, սեպտեմբերի 12-ին նրան միացավ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը, 13-ին՝ դերասան Սոս Սարգսյանը, ԼՂԻՄ Ազգային խորհրդի նախագահ Վաչագան Գրիգորյանը, մարզպային գործկոմի նախագահ Սեմյոն Բաբայանը, մի շարք արցախցիներ, տաջիկ և ուզբեկ գիտնականներ Ռ. Շուկուրովն ու Ս. Շարաֆուստինովը: Հիմնական պահանջներն էին՝ վերջ տալ կամայականություններին մարզում և լուծել երկրամասի խնդիրը: Գործողությունը դադարեցվեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի խնդրանքով: Պատգամավորների դիմումը տես՝ «Սովետական Դարաբարդ», Ստեփանակերտ, 27.09.1990, 3.10.1990, Արքահամյան Հ., Մարտնչող Արցախը (1917-2000), գիրք 4 (1985-2000), Ստեփանակերտ, 2007, էջ 238-239, 243:

ղաղրանքը, որով դատապարտվում էին Կենտրոնի հրամանով տանկերի, կործանիչ ՄԻԳ-23-ի և ծանր հրետանու գործադրումն ու Շահումյանի շրջանի խսպառ ամայացած 20 բնակավայրերից 5 հազար բնակիչների վտարումը:

Հիշեցնենք՝ 1990 թվականը մեզ համար սկսվեց հունվարի 11-20-ին Բաքվում իրականացված, խայտառակ չափերի հասած, ընդգծված դաժանությամբ իրազործված ջարդով, սակայն կենտրոնական իշխանությունը ամսին 15-ին և 16-ին արտակարգ դրություն մտցրեց Արցախում և Գորիսում, որտեղ վիճակը հանդարտ էր, իսկ ՆԳՍ գործերը արդեն բազմիցս կրակ էին բացել (1989 թ. հոկտեմբերի 10-ին, նոյեմբերի 2-ին, 1990 թ. հունվարի 2-ին, 5-ին և 9-ին, հետո ապրիլի 26-ին, մայիսի 24-ին, 1991 թ. հոկտեմբերի 28-ին՝ ՕՄՕՆ-ի կրակը դպրոցում) Ստեփանակերտի բնակիչների վրա<sup>5</sup>: Ի պատասխան ցեղասպանության ողբերգական սաստկացման (այդպես են որակել 1990 թ. հունվարի 15-ին Երևանում Նախարարների խորհուրդն ու ՀԿԿ կենտրոնը)<sup>6</sup> նույն ամսի 23-ին մեր հանրապետության Գիտությունների ակադեմիան դիմեց աշխարհի բոլոր գիտնականներին՝ տեղեկացնելով ԱրդիւսՀՀ-ում հայ ժողովորի բարբարոսական բնաջնջման մասին: Հունվարի 25-ին և 26-ին Մարզխորհը՝ դի պատգամավորներն էլ դիմեցին բոլոր միջազգային կազմակերպություններին, այնուհետև՝ ԱՄՆ, Անգլիայի, Ֆրանսիայի և Չինաստանի դեսպանատներին<sup>6</sup>: Իսկ կենտրոնա-

<sup>5</sup> Տե՛ս Հայութի Կարախ մատուցությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 305, Կրивովուսկով Վ. Բ. Մայելի Կարախ. Ին դեռևս օֆիցեր ՄВԴ ՀՀ, 2-րդ համար, 2007, էջ 124-125; Տօմասյան Ա. Խրոնիկա լիխութեա (1988-1998). Եր., 2017, էջ 124, 140-141, 169, 177, 261. 1990 թ. մայիսի 27-ին նրանց գումարքում են երեսանուու ներքին գործերի հետ բախման հետևանքով 26 սպանվածները և շուրջ 60 վիրավորները: Այդ մասին տե՛ս Արքահամայնք, Մարտնչող Սովորություն (1917-2000), էջ 218-219:

<sup>6</sup> Ողումայրան Բ. Ա., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 307, Տօմասայն Ա. սկզ., սոչ., ս. 145–146, 149, 113, 117.

կան իշխանությունները ցավակցություն էին հայտնում բանակի գործողությունների զոհերին, և Բարվում արտակարգ դրություն մտցվեց հունվարի 20-ին միայն: Բոլոր պահանջները՝ ժամանած ստորաբաժանումները տեղակայել պաշտպանվող վայրի սահմաններում և նրանց չներքաշել ներքին կյանք, ապարդյուն էին: Դրա փոխարեն ունեինք 91 սպանված, 60 պատանդ<sup>7</sup>, խոշտանգված, կողոպտված բազմաթիվ հայրենակիցներ: Նաև փաստ էին Խորհրդային բանակի ուղիղ մասնակցությունը 1991 թ. ապրիլի 30-ից մայիսի 16-ը տեղի ունեցած «Օղակ» գործողությանը, գնդացիրների, ուղղաթիռների, հրետանու կիրառումը ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի 26 գոտերի ավերման ժամանակ: ԽՍՀՄ ՆԳՆ-ը ապրիլ - մայիսին, մինչև օգոստոս իրականացված էթնիկ գոտումների անմիջական մեղսակից էր<sup>8</sup>:

<sup>7</sup> «Правда», М., 26.06.1991.

<sup>8</sup> «Հի 1991 թ. 07, 12, 25.04 և 02.05-ի դիմումներից հետո՝ ն. թ. 02.05-ին, նրա նախագահը խորհրդային իշխանություններին մերադրեց այդ ցեղասպան գործողության համար: 03.05-ին՝ ԽՍՀՄ նախագահի հետ Կրեմլում հանդիպման ժամանակ նա պետական ահարեւկչություն անվանեց այդ գործողությունը, իսկ 10.05-ին այդ հանցագործությունը դատապարտեց «Հի նախագահությունը: 18.05-ին ողջ խորհրդը մատնանշեց մեր ժողովորի դեմ իրականացված հարձակման ու պետական ահարեւկչության փաստը: 10.07-ին նույն մարմինը պահանջեց միութենական իշխանություններից վերջ տալ ահարեւկչության ու հայ բնակչության վտարմանը: 04.08-ին ՈՒԽՖՍՀ պատգամավորական հանձնաժողովը գրանցեց Շահումյանի շրջանում կազմակերպված աքսորն ու թալանը՝ որպես բանակի անջնջելի խայտառակություն: Եվ սա այն դեպքում, երբ ԽՍՀՄ ՆԳՆ ՆԶ-ի հրամանատար գեներալ գնդապետ Յու. Շատախինը դեռ մայիսի 2-ին սպանացել էր, թե ինքն է հակոս Մեծամորի ատոմային էլեկտրակայանն ու խոստացել հողին հավասարեցնել Հայաստանը:Տե՛ս Заключение Комитета ВС РСФСР по правам человека за октябрь 1991 г. По итогам слушаний, посвященных нарушению прав человека в районе вооруженного конфликта в ряде районов Азербайджанской Республики и Республики Армения (конец апреля – май 1991 г.). М., 1991, с. 58-60 [http://karabakh.records.info/documentsOfficials\\_zakluchenie-komiteta-po-pravam-cheloveka-rsfsr.html](http://karabakh.records.info/documentsOfficials_zakluchenie-komiteta-po-pravam-cheloveka-rsfsr.html) բեռնվել է 15.09.2021 թ.: Ուղարքայն Բ. Ա., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 317-320, Տօմասյան Ա. սույ. ս. 228-234, 243, 246.

Այսպես, 1991 թ. հուլիսի 13-21-ին ներքին գործերի պարետատունը պահանջեց Մանաշիդի, Էրբեջի և Բուզլովսի գյուղացիներից երեք օրում տեղափոխվել ՀՀ: Այնուհետև նրա գործերը ներխուժեցին գուղեր՝ տեղի հայերին հանձնելով Բարձի օմօնական հրոսակներին՝ թալանելու գոհերին մինչև վերջին ծեղը: «Անձնագրային տվյալների ստուգման» արդյունքում սպանվեցին 41, վիրավորվեցին 70, պատանդառվեցին 335 տեղաբնակներ, նրանցից երեք հոգու տանջամահ արեցին բանտերում, իսկ երեք գյուղերն իսկովն բնակեցվեցին աղբբեջանցիներով: Նշված գործողությունները ստիպեցին հայերին նախաձեռնել ինքնապաշտպանության միջոցառումներ: Միևնույն ժամանակ, 1990 թ. հունվարի 13-ին՝ հավաքի ընթացքում, Բարձի խաժամութը պատերազմ հայտարարեց Հայաստանին՝ պատերազմին մասնակցելու կոչ անելով բոլոր բնակիչներին: Նույն այդ օրը Համահայկական միացյալ ճակատը հայտարարեց կամավորների հավաքագրման և նրանց շրջանային խմբերին ռազմական պատրաստության բերելու մասին: Հունվարի 14-ին ստեղծվեց միասնական ռազմական շտաբը, ու մենք գործ ունեինք ոչ միայն Բարձում շարունակ աճող վայրագությունների հետ, այլև մեր մայրաքաղաքից ոչ հեռո՛ Նախիջևանում ընթացող մարտերի հետ<sup>9</sup>: Արդյո՞ք հնարավոր էր կանխել Բարձի սարսափները: Իհարկե: Դեռ 1989 թ. սեպտեմբերի 12-ին ՀԽՍՀ դատախազության կոլեգիան դիմեց ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա. Սոլիսիսին՝ պահանջելով անհապաղ պաշտպանել բարձեցիների կյանքը, սեպտեմբերի 13-ին մեր Գերագույն խորհրդի Նախագահությունը համանման ուղերձ հղեց Մոսկվայի իր գործընկերներին և հարևաններին, իսկ ամսի 23-ին Գերագույն խորհրդողը միաձայն կայացրեց համապատասխան որոշում: Սակայն տղամարդկանց գինում կամ քաղաքացիների և նրանց գույ-

<sup>9</sup> Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը (1917-2000), էջ 207-208:

քի կազմակերպված դուրսբերում տեղի չունեցավ: Դրա փոխարեն՝ 1990 թ. հունվարի 21-ին Շուշիում շրջկոմի 1-ին քարտուղար Վ. Զաֆարովի՝ զանգվածային հավաքում բղավելուց հետո, ամբոխը երդվում էր դուրս քշել բոլոր հայերին մարզից: Խորացող ապօրինությունն ու կուակցության ատյաններից խրախուսվող ռատիկանական բռնակալության սանձարձակությունը, Բաքվի ջարդերի վերաճումը 1991 թ. «Օղակ» գործողության, ինչպես նաև ՆԳՆ զորքերի ակտիվ, նախաձեռնողական մասնակցությունը Շահումյանի շրջանի զուտ հայկական, բազմադարյա գյուղերի հայաթափմանը, ստիհացին <<օրենսդիրներին 1991 թ. հովհի 15-ին կիսել ինքնավարության լիազոր ներկայացուցիչների գնահատականն ու ճանաչել նրանց պայքարը որպես ինքնապաշտպանություն: Դա Ենթադրում էր իշխանության օրինական մարմինների վերականգնում և ուղիղ բանակցություններ հակառակորդի հետ:

Նշենք, որ մեր ժողովրդի ինքնության և կենսական շահերի դեմ վարվող խառնածին (հիբրիդային) պատերազմը հայերին մղեց համադրման (ինտեգրացիոն) քաղաքականություն վարել: <<Գերագույն խորհուրդն ու Հայոց համագոգային շարժումը սատարեցին քաղաքական միասնությունը ԼՂԻՄ-ի հետ՝ վերցնելով օգտավետ տարրերը բոլոր առկա լուծումներից: 1991 թ. ամռան ողբերգական ու ծայրաստիճան վտանգավոր դրությունը պատասխանն էր այն հարցի, թե ինչու ենք միացման գաղափարից ու դրա քարոզից անցում կատարել անկախության գաղափարի կենսագործմանը. 1) առաջին ուղին արգելեց կենտրոնական իշխանությունը՝ ճնշելով տեղական նախաձեռնությունը հիմնախնդրի կարգավորման փոխարեն: 1990 թ. սեպտեմբերից մինչև 1991 թ. փետրվար՝ արյունալի հունվարով հանդերձ, սանձարձակ ահարեւէզությանը դեմ հանդիման, խաղաղ սահմանադրական քաղաքականությունն անհնարին էր:

Կենտրոնը ոչնչացնում էր ու խոշտանգում ինքնավարության հայերին՝ իրենց ազգային ու մշակութային ինքնության, ապրելակերպի համար. 2) համընդհանուր դարձած վտանգը պահանջում էր ինքնապաշտպանություն և ավելի մեծ ազատություն տեղերում՝ նաև ողջ աշխարհին դիմելու համար: Նման միջոցառումներից էին՝ Արցախի համագումարի 1989 թ. օգոստոսի 23-ի Հոչակագիրը՝ ՄԱԿ-ին հասցեագրած հեռագրով, հետո 1989 թ. սեպտեմբերի 5-ի Ազգային խորհրդի և 1991 թ. մայիսի 15-ի Մարզգործկոմի հեռագիր-դիմումները նույն ատյանին, ինչպես նաև ուղերձները տարբեր երկրներին. 3) ԽՍՀՄ-ի սաստկացող տարրալուծումը պահանջում էր նույն բնույթի և ուժգնության քայլեր<sup>10</sup>, 4) մենք ծգտում էինք տեղայնացնել վտանգն ու նրանից զերծ պահել մեր Հայրենիքի հիմնական մասը: Բայց արտաքին աշխարհը հասկանում էր, որ խոսքը մեկ Հայաստանի մասին է, և 2008 թ. նոյեմբերի 2-ի Մոսկվյան հոչակագրից ի վեր բանակցում էր միայն Երևանի հետ:

1991-1994 թվականներից ցայսօր կորուստների մեր բաժինը միասին ենք կրում: Արդյոք հարկավո՞ր էր շարունակել միացումի քարոզչությունը մեր հասարակության ներսում և հասարակական դիվանագիտության մեջ: Ամենայն հավանականությամբ, այս: Թե՛ 2020 թ. պատերազմը և թե՛ Արցախը ոչնչացնելուն միտված քաղաքականությունն անկախ էին և են մեր պահվածքից, թեև միացումը ենթադրում է հասարակության նախաձեռնությունը և ինքնուրույնությունը՝ իր իսկ խնդիրը կարգավորելու գործընթացում: Խնդիրը բացելուց բացի, անմիջապես առաջ էինք քաշում նրա լուծումը, իսկ ժողովուրդը՝ որպես իրավատեր, եռանդով իրականացնում էր աշխատանքի իր բա-

<sup>10</sup> Ղույան Ա., ԼՂՀ հոչակումն ու արտաքին կապերի հնատիտուցիոնալացումը: «Արցախի Պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Հասարակական գիտություններ», Ստեփանակերտ, 2018, № 1, էջ 160:

Ժինը: Միացումը հեռանկարային էր: Այն այդպիսին է նաև այսօր: Ելնելով այդ երկու հատկություններից՝ Միացումը առողջացնում էր հասարակական մթնոլորտը և ուժեղացնում հայրենասիրությունը: Ուստի, եթե քաղաքական առումով նա փակուղում էր հայտնվել, ապա քարոզությունը և ժողովրդական դիվանագիտությունը կարող էին և կարող են նպաստել հիմնախնդրի լուծմանը:

Արդյո՞ք հաջողվել է պահպանել վերոնշյալ մոտեցումները: Գուցեն՝ ոչ: Կրավորականությունը, ՄԱԿ-ում, այլ միջազգային կազմակերպություններում և խոշոր տերությունների հարաբերություններում նախաձեռնությունների բացակայությունը, Աղրբեջանի ներխուժումը և այնտեղ քարոզվող նացիզմը, նրա եղեռնագործ և գաղութային քաղաքականությունը, գաղթականների խնդիրներն ու գերիններին ծաղրելը, սովորական գենքերի տեսակների և դրանց քանակի միջազգայնորեն ընդունված չափերի խախտումը, պատմության՝ քաղաքական միտումով և անսահման կեղծիքը, Արցախի և նրա ազատագրված շրջանների նկատմամբ սուտ ու անհիմն իրավունքների պնդումները մեր կողմից լրության մատնելը, 12 տարվա ուսւթուրքական մերձեցման ու Թուրքիայի, որպես Աղրբեջանի զինակից, կարգավորման գործընթացում ներգրավվելու նկատմամբ մեր քամահրանքը լրտք բացթղումներ էին<sup>11</sup>: Արդյո՞ք հարկավոր է վերադառնալ միացման: Այս: Տողերիս հեղինակը չի կարողանում այլ օգտակար հեռանկար նշել: Չէ՞ որ այսօր անկախության դրույթն այն նույն փակուղում է, որում գտնվել է միացումը 1991-1994 թթ.:

Ամփոփելով նշենք՝ ժողովորի «ազատության, անկախության, իրավահակասարության և բարիդրացիության

<sup>11</sup>Համանման գնահատականներ տե՛ս Հայոց Կարաբախ և մеждународном праве, т. II, с. 362-365.

ծգտումը»<sup>12</sup> կրող նոր պետության ծևավորման նախադրյալներն են եղել. 1) բնակչության ժողովրդագրական վիճակի երկարատև վատթարացումը, 2) ազգային կեղերման քաղաքականությունը ՀՀՄ-ում, 3) գույքի պահպանության և անվտանգության բացակայությունը, 4) իրավական նախադրյալները, 5) ԽՍՀՄ կազմալուծման գործընթացը: Ներքին պայմանների կողքին ինչպիսի՞ն էին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հոչակման արտաքին նախադրյաները: Ահա դրանք. 1) ԽՍՀՄ ղեկավարության՝ Արևմուտքի հետ համագործակցելու ծգտումը, 2) արևմտյան տերությունների առաջնորդների և ԶԼՄ-ների կողմից հայկական դիրքորոշման խրախուսումը, 3) բնակչության լայն զանգվածների համակրանքը և աջակցությունը, ինչի դրսուրումը ողջ աշխարհի հզոր և մեզ համար կենսական նշանակություն ունեցող օժանդակությունն էր: Մասնավորապես, 3-1) նյութատեխնիկական և մարդկային օգնությունը Հայաստանին 1988 թ. դեկտեմբերի 7-ի Երկրաշարժից հետո<sup>13</sup>, առանց այդ գործոնի անհնարին էր շարունակել Հայոց համազգային շարժումն ու Արցախին սատարելը, ինչպես և 3-2) քաղաքական գործունեությունը, այդ թվում՝ «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին կալանքից ազատելու համար շարժումը: 4) Մեզ էապես հզորացրեց նաև սփյուռքի համերաշխությունը, որը բոլոր եղանակներով օժանդակում էր հայրենիքին արտրեկրում և ԽՍՀՄ-ում: Այդ ամենի կողքին առկա էին ծայրաստիճան վտանգավոր, դեռևս ծպտյալ, բայց հընթացս ավելի գործուն դարձող թուրք-խորհրդային հարաբերությունները:

1988-1991 թթ. աշխարհը մեծ համակրանք էր տածում

<sup>12</sup> <http://president.nkr.am/am/nkr/nkr1> թեռնվել է 15. 09. 2021 թ., Կազանջյան Բ. Կ предыстории самоопределения Нагорного Карабаха, с приложением новых документов. М., 1997, с. 46.

<sup>13</sup> Երկրաշարժն ավերեց հանրապետության տարածքի 1/3-ը, ավելի քան 300.000 մարդ անսուն դարձավ ՀԽՍՀ-ում:

մեր ժողովրդի և նրա արդիական, բոլորին հասկանալի ժողովրդավարական շարժման նկատմամբ: 1988 թ. Երկրաշարժն առաջացրեց օգնության ալիք, քանի որ Հայաստանը, նրա մրցունակ կրթություն ստացած, իրենց հասարակությանը հավատարիմ և այլ Երկրների միջին խավի հետ հարաբերվելու հմտություններ ունեցող ներկայացուցիչները հաջողությամբ շահում էին հասարակական կարծիքն արտերկրում: Միևնույն ժամանակ, խորհրդային մեծ տերության՝ նոր գործելակերպ որդեգրելու վերաբերյալ աշխարհով մեկ հնչեցված հավաստիացումներն առաջ մղեցին ժողովրդական դիվանագիտության արդյունավետ ինստիտուտը: Այս, 1989-ի նոյեմբերի 19-ին և 1991 թ. մայիսի 17-ին ԱՄՆ-ի Շերակույտը Ղարաբաղի առնչությամբ երկու բանաձև ընդունեց՝ առաջ բերելով ԽՍՀՄ ԱԳՆ-ի բողոքը, իսկ 1990 թ. հունվարի 18-ին հինգ սենատորներ նամակ հղեցին Գերազույն Խորհրդի ղեկավարին՝ պաշտպանելով ՀՀ ինքնավարությանը՝ մնացած Հայրենիքին միանալու նրա իրավունքը<sup>14</sup>: 1988 թ.

<sup>14</sup> 1989 թ. խորք ինքնորոշման ու ՀԿԿ-ի հայերի դեմ կազմակերպված բռնությունների հետևանքով հեղինակագրություն և ապարդյուն մի մարմնի վերածման, Սոմբայիթի եղեռնագրծողության, Եռամսյա շրջափակման հետևանքով Երկրաշարժի գոտում աշխատանքների կասեցման, ԱՄՆ-ի «Լեռնային Ղարաբաղի մարդկանց հիմնարար իրավունքներն ու վեճի խաղաղ և արդար կարգավորման ծգոտումները» պաշտպանելու մասին էր: Շերակույտն ու Ներկայացուցիչների պալատը որոշեցին շարունակել իրենց աջակցությունը Հայաստանին, հարկադրել ԽՍՀՄ ԳԽ նախագահին վերացնել շրջափակումն ու պատժել սաստկացող բռնությունների պատասխանատուններին: Տե՛ս Senate Joint Resolution 178, 11.19.1989, Congressional Record, Senate, 1989, pt. 21, p. 30143-30144: 17.05.1991 թ. բանաձևում նշվեց ԽՍՀՄ-ի և Ադրբեյչանի կառավարությունների նախաձեռնած հարձակումների աղաղակող աճի մասին: Նրանց գործերը գյուղեր էին քանդում և արմատախիլ անում խաղաղ բնակչությանը: Շերակույտը դատապարտեց նրանց կործանիչ գործողություններն ու շրջափակումը՝ վճռաբար սատարելով ԽՍՀՄ-ում ժողովրդավարության և ինքրոջմանը: Senate Resolution 128, 05.17.1991: 8.01.1990 թ. նամակը՝ [http://karabakhrecords.info/english\\_document\\_letter\\_gorbachev](http://karabakhrecords.info/english_document_letter_gorbachev) բեռնվել է 17. 09.

հուլիսի 7-ին, 1990 թ. հունվարի 18-ին, մարտի 14-ին և 1991 թ. մայիսի 16-ին Եվրախորհրդարանն ընդունեց Հայաստանին վերաբերող չորս քանաձն՝ հարցի առանցք դիտելով Վ. Լենինի պարտադրած Անդրկովկասի բաժանումն ու մարզի բռնի ներառումը Ադրբեջանի կազմում 1923 թ.: ԽՍՀՄ ԳԽ նախագահության 1989 թ. նոյեմբերի 28-ի որոշումը որակվեց պայթոնավտանգ և բնակչության իղձերը ոտնահարող<sup>15</sup>: Եթե առաջին քանաձնը հստակ աջակցում էր մեր միացմանը և խորհրդային իշխանություններին հրավիրում ուսումնասիրելու հայերի փոխգիշումային առաջարկությունները Մոսկվայի ուղիղ կառավարման մասին, ապա երկրորդը, որն ընդունվեց Բաքվի սարսափելի ջարդի օրերին, նկարագրում էր 1990 թ. տիրող փաստացի պատերազմի վիճակը, որի հետևանքով տապալվում էր ցանկացած քաղաքական, խաղաղ լուծում: Եվրախորհրդարանը պահանջում էր շտապ վերացնել շրջափակումը, զորքեր ուղարկել հայերի կյանքի և ունեցվածքի իրական պաշտպանության համար, լայնորեն լուսաբանել ջարդերին վերաբերող տվյալները ՀՀՄ-ներում: Փաստթույթը կոչով դիմեց Իրանին ու Թուրքիային՝ զերծ մնալ բախմանը միջամտելուց, իսկ սեփական հանձնաժողովի հաշվետվությունը կազմել և հղել շահագրգիռ կողմերին, ներառյալ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին: 1990 թ. հունվարի 31-ին Արցախի եպիսկոպոս Պարգև Մարտիրոսյանն էլ հեռագիր ուղարկեց ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը: Ի դեպ, նշալ տարիներին դեռևս նկատելի չէր Ադրբեջանի դիվանագիտական դիմակայությունը:

Եվրախորհրդարանի 1991 թ. մարտի 14-ի բանաձնը

---

2021 թ.: Տե՛ս նաև Avakian Sh. Nagorno-Karabagh. Legal Aspects, 5<sup>th</sup> ed. Moscow, 2015, p. 18-19.

<sup>15</sup> Official Journal of the European Communities, Doc. C 235, 12.09.1988, p. 106; Doc. C 38, 19.02.1990, p. 81-82.

գրանցեց վարչական օրինական մարմինների ոչնչացումը մարզում, դաժան բռնակալությունը, ապօրինի ձերբակալությունները և վտարումները: Փաստաթղթում ընդգծվում էր ԼՂԻՄ-ի հայերի ինքնորոշվելու իրավունքը, իրնթացս ուժգնացող էներգետիկ և փոխադրումների շրջափակման ծանրությունը. Ադրբեջանից գաղթած մեր 300 հազ. Հայրենակիցների ու Երկրաշարժի գոտու 500 հազ. բնակիչների աղետալի վիճակը: Երրորդ բանաձևը Մոսկվային կոչ էր անում արագորեն վերջ տալ շրջափակմանն ու մարդկանց կանխամտածված վտարմանն Արցախից ու սահմանամերձ գոտուց: Մայիսի 16-ի բանաձը նաև պահանջում էր վերջ տալ շարունակ սաստկացող բռնությանը, քանի որ հենց խորհրդային բանակն է, որ դաշնակցելով Բաքվի հետ, իրականացնում էր բռնագաղթն ու միևնույն ժամանակ բարձրացնում մեծ պետության ապագայի մասին հարցը: Փաստաթուղթը նորից պահանջեց պաշտպանել կյանքը, վերացնել շրջափակումը, վերականգնել օրինական իշխանությունը տարածաշրջանում, տուն դարձնել գաղթականներին ու գրանցեց «մարդու իրավունքների կրպիտունահարումը ԽՍՀՄ մի մասում»: Եվրախորհրդարանը պարտավորեցնում էր Մոսկվային վերջ տալ բնակչության ահարեկմանը՝ Հայաստանում նախատեսված հանրաքվեի առթիվ<sup>16</sup>:

Արտաքին աշխարհը եռանդով պաշտպանում էր միացումը և, կարծես, ողջունում 1991 թ. նոր պետությունների ձևավորումը, որոնցից՝ ըստ 1933 թ. Մոնտեվիդեոյի կոնվենցիայի, պահանջվում է ոչ թե միջազգային ճանաչում, այլ հստակ, մշտապես բնակեցված տարածքի, միասնական քաղաքական վարչության և դատարանի առկայություն, նաև Երկխոսություն արտաքին աշխարհի

<sup>16</sup> Doc. B3-047391 - Official Journal of the European Communities, Doc. C 106, 22.04.1991, p. 121; Doc. C 158, 17.06.1991, p. 243-244.

Երկրների հետ<sup>17</sup>: Այո, մինչ 1996 թ. դեկտեմբերն Արցախը մասնակցում էր միջազգային բանակցություններին: Այնուամենայնիվ, թվարկված արտաքին հաջողությունները մեր աշխատանքի արգասիքը չեն եղել: Յուրաքանչյուր տերություն, նաև ԽՍՀՄ-ը, դեկապարվում էր իր նկատառումներով<sup>18</sup>: Թուրքիան դեռ միայն պետք է դառնար Մոսկվայի և Բաքվի խաղակիցը<sup>19</sup>: Այդ առումով հարկավոր է նկատի ունենալ, որ Մոսկվայի հետ Անկարայի մերձեցումը Թուրքիայի համար բացում էր Բաքվի դռները, բայց չէր դյուրացնում Վերջինիս վերադարձն այնտեղ: Թեև չի բացառվում, որ 1988 թ. կետրոնական իշխանությունը արդեն խորհում էր ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի դեմ ուղղված խորհրդաթուրքական դաշինք կազմելու մասին: Ինչչիցեւ, հատկապես ներքին իրավիճակը, հասունացող պատերազմով հանդերձ,

<sup>17</sup> Ավագյան Ռ. սկզբ. սու., ս. 33.

<sup>18</sup> Բալայան Վ. Ռ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007 թթ.), էջ 281:

<sup>19</sup> Բաքվում հարձակումների շեմին՝ 09.01.1990-ին, վարչապետ Ա. Մութափրովը մեկնեց Թուրքիա՝ նախագահ Թ. Օզային հանդիպելու: Ի պատաժան՝ ն. թ. 24.01-ին Աղրբեջան ժամանեց առաջին ռազմական օգնությունը՝ «զորք գայլերի» ուղեկցությամբ: Դրանով իսկ հարցականի տակ որպես համամիութենական ինքնիշխանությունը: 1991 թ. առաջին կեսին թուրքական «Միլիլիեր» թերթն առաջարկեց իր կառավարությանը միջամտել հակամարտությանը հայերի լայնածավալ առաջխաղացման դեպքում: Անկարան պաշտոնապետ տեղյակ պահեց այս մասին Մոսկվային: 11.10. 1991-ին Բաքու ժամանեց Թուրքիայի գլխավոր շտաբի պետ Դ. Դյուրեշը, իսկ 04.11-ին կողմերն ավարտեցին Թուրքիայից Նախիջևան տանող կամրջի կառուցումը: 1992 թ. դեկտեմբերին Թուրքիայում սկսվեց աղրբեջանական բանակի համար սպաների հավաքագրում՝ ամսական 7.500 \$ ռոճիկով: Բալյան Գ. Հայորնակ Կարաբախ, Рабочий документ, представленный 10.01.1994 в Комиссию по правам человека Экономического и социального совета ООН. Сессия 50, вып. 12: Вопрос о нарушениях прав человека и основных свобод во всех частях Земного шара. Ер., 1994, с. 21; Демоян Г. Турция и карабахский конфликт в конце 20 – начале 21 веков. Ер., 2006, с. 108; Մելքոնյան Ս., Էթնիկ զտման քաղաքականությունը խորհրդային Ադրբեջանում հայերի նկատմամբ (1988-1991 թթ.): «Պատմություն և մշակույթ», հայագիտական հանդես, Եր., 2017, էջ 240:

հայերին ստիպեց 1991 թ. օգոստոսի 15-ին կազմել մարզային պաշտպանության Պետկոմիտե, իսկ ավելի ուշ՝ հոչակել ԼՂՀ-ն:

Ի՞նչը հանգեցրեց Պետկոմիտեի ստեղծմանը: «Աղբբեջանի դեկավարության կողմից հայերի դեմ իրականացվող եղեռնագործ քաղաքականության բացարձակ անպատճելիությունը և նրա խրախուսումը նախկին ԽՍՀՄ-ի դեկավարության լրու համաձայնությամբ, ... գործնականում անելանելի վիճակը ստիպեցին հայ բնակչությանը տեղերում կազմել երկրապահ և ինքնապաշտպանության ջոկատներ՝ իրենց կյանքը և ունեցվածքն ապահովելու համար»: Միայն այդ՝ որսորդական հրացաններով զինված փոքրաթիվ ջոկատները խափանեցին բոլոր հայերին վտարելու ծրագիրը<sup>20</sup>: Ընդ որում, 1991 թ. ապրիլի 21-ից սկսած և մայիսի ընթացքում, հյուսիսային Արցախի բնակավայրեր Գետաշենն ու Մարտունաշենը կարողացան ամայացնել ու թալանել «միմիայն ԽՍՀՄ ՆԳՆ Ներքին գործերի և Խորհրդային բանակի աջակցությամբ, որոնք Աղբբեջանի ՆԳՆ գործերի հետ միասին իրականացրին Մոսկվայում հաստատված «Օղակ» գործողությունը»: Նշված ուժերը բնակավայրերը ոմբակոծում էին տանկերից, ԲՏՌ զրահափոխադրիչներից, ԲՄՊ հետևակի մարտական մեքենաներից, ուղղաթիռներից, ծանր հրետանուց, խոշոր տրամաչափի գնդացիրներից և նոնականետներից, շրջափակում էին դրանք, իսկ հետո խորհրդային ուժերի պաշտպանությամբ, այնտեղ մտնում էին աղբբեջանական զրոքերը: «Վտարումն ուղեկցվում էր սպանություններով, բռնություններով, ձերբակալություններով, ջարդերով, թալանով,

<sup>20</sup> Աղբեյսչի՝ ԼՂԻՄ-ում հանրապետական կազմկոմիտեի 18.07.1990-ին Ստեփանակերտում կազմակերպված խորհրդակցական նիստում Աղբբեջանի կոմկուսի կենտկոմի 2-րդ քարտուղարն առաջարկեց վլարել հայերին երկրամասից: Պաշտոնյան նշեց, թե այդ ծրագիրը քննարկելու են Բարվում կոմկուսի կենտկոմի նիստում: Տե՛ս Հայոց Կարաբախ, աշուն - աշուն 1990. Դокументы и материалы. Ер., 1990, с. 54.

տների հրկիզմամբ: Հրեշավոր խրախճանքն ավարտելուց հետո և որպես «հայրական հոգատարության» դրսնորում, միտրութեական զորքերը կազմակերպում էին» բնակչության «դուրսբերում», որն այդ պահին ընդգրկել էր ԼՂԻՄ-ի ևս 24 բնակավայր<sup>21</sup>: 1991 թ. օգոստոսյան խռովության տապալումը միայն հանգեցրեց պաշտպանության նախարար Ե. Շապոշնիկովի հրամանին՝ մարտերը դադարեցնելու և բանակն իր մշտական տեղակայման վայրերը վերադարձնելու մասին: Զավթված և թալանված գյուղերում մնաց միայն ադրբեջանական ՕՄՕՆ-ը, որը սեպտեմբերին ինքնապաշտպանության ուժերի ջանքերով դուրս շպրտվեց բնակավայրերի մեջ մասից:

Այսպիսի հանգամանքներում 1991 թ. սեպտեմբերի 2-ին ընդունվեց գուսակ, բայց հատակ ձևակերպված Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հոչակման մասին<sup>22</sup>: Նրանում դիպուկ հիշատակվեց անկախությունը՝ հիմք ունենալով այդ պահին առկա ԽՍՀՄ օրենսդրությունը և շեշտադրելով Բաքվից անջատվելու փաստը<sup>23</sup>:

<sup>21</sup>Нагорно-Карабахская Республика: история и современность. Ред. В. Атаджанян. Степанакерт, 1998, с. 19-20; Арешев А. Г. Нагорный Карабах в региональной и мировой политике. Сборник статей. М., 2006, с. 13-14; Нагорный Карабах в международном праве, т. II, с. 247, 249-253; Սուսամյան Ա., նշվ. աշխ., էջ 63, 65, 70-71, 75, Արզական պատմությունը՝ հայության մասին: Հայության անկախությունը՝ հիմք ունենալով այդ պահին առկա ԽՍՀՄ օրենսդրությունը և շեշտադրելով Բաքվից անջատվելու փաստը<sup>23</sup>:

<sup>22</sup>Статус Нагорного Карабаха в политико-правовых документах. Ер., 1995, с. 69-70.

<sup>23</sup> Бальян Г. указ. соч., с. 14; Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Պետականության կայացումը դարերի սահմանագծում, Եր., 2009, էջ 14, Republic of Nagorno Karabakh, Process of State Building at the Crossroad of Centuries. Yerevan, 2009, p. 15.

Դատապարտելով այնտեղ իրականացվող ապարտեհիդի քաղաքականությունը, «հայ ժողովրդի վերամիավորման ձգտումը համարելով բնականոն ու օրինական, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան», գնահատելով իրադրության հակասությունները և ապագա միության անորոշ ճակատագիրը՝ ԼՂԻՄ-ի մարզային խորհուրդն ու Շահումյանի շրջանային խորհուրդն իրենց սահմաններում հոչակեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որն իրեն իրավունք է վերապահում «ինքնուրույն որոշելու իր պետական-իրավական կարգավիճակը՝ երկրի և հանրապետությունների ղեկավարության հետ քաղաքական խորհրդատվությունների և բանակցությունների հիման վրա»<sup>24</sup>:

Այսպես Ստեփիանակերտն իրեն զատեց Բաքվի անջատողականներից, իսկ սեպտեմբերի 2-ի Հռչակագիրը տրամաբանորեն վկայակոչում էր ԽՍՀՄ-ի 1990 թ. ապրիլի 3-ի օրենքը, որում ճևակերպված էր ինքնավարությունների իրավունքը՝ միութենական հանրապետության ընդհանուր պետութունից դուրս գալու դեպքում: Այսպիսով, բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը խելամտորեն հետևում էր, այլ ոչ թե առաջ անցնում զարգացումների տրամաբանությունից: Մանավանդ իմանալով, որ դրանից երեք օր առաջ Ադրբեյջանի Գերագույն խորհուրդը հոչակեց սեփիական անկախությունը՝ ավելի ուշ լրացնելով իր նախաձեռնությունը Սահմանադրական ակտով: Նրա որոշումները կայացվում էին առանց հանրաքվեի՝ անտեսելով ինքնավարության և նրա բնակչության կարծիքը, իսկ նոյեմբերին անտեղ որոշել էին վերացնել ԼՂԻՄ-ը: Ընդ

<sup>24</sup> Կազանդյան Բ. յուզ. սոչ., ս. 46-47.

որում, ժխտելով խորհրդային ժառանգությունը՝ Բաքուն բնավ չէր հրաժարվում ինքնավարություններից և խորհրդային ժամանակներում ստացած սահմաններից<sup>25</sup>:

Հայերի դրսնորած զայվածությունը նպաստեց Ռուսաստանի ու Ղազախստանի նախագահներ Բ. Ելցինի և Ն. Նազարբաևի 1991 թ. սեպտեմբերի 21-ի այցելությանը Բաքու և Գյանջա, սեպտեմբերի 22-ին՝ Ստեփանակերտ ու Երևան, իսկ 23-ին Ժելեզնովիդսկում Աղրբեջանի, Հայաստանի նախագահների և ԼՂՀ ղեկավարության միջև առաջին բանակցությունների անցկացմանը: Երկու նախագահների համատեղ հաղորդագրությունում շեշտված էր դիմակայությունը միջնորդական կարգավորման ենթարկելու համաձայնության մասին, բայց այն չնպաստեց կրակի դադարեցմանը, և արդեն 1991 թ. սեպտեմբերի 25-ին Շուշիից հրթիռներով էին ռմբակոծում ԼՂԻՄ-ի կենտրոնը: Եվ այդպես, ավելի քան 120 օր շարունակ, օրը 300 արկից ոչ պակաս<sup>26</sup>: 26 ԲՏՌ-ներով և 18 տանկերով զինված 10-հազարանոց ադրբեջանական բանակի ռազմական գործողություններն ընդգրկել էին ամբողջ Արցախը: Եթե նախկինում երկրամասի հայությունը «կարող էր որևէ պատրանք ունենալ Մոսկվայի դիրքորոշման կամ Բաքվի հետ փոխգիշման հասնելու առումով, ապա այժմ [նա] վերջնականապես գիտակցեց, որ միայն սեփական պաշտպանությունը կարող է ժողովրդին փրկել բնաջնջումից կամ բռնագաղթից»<sup>27</sup>: Իրողությունը սա փաստեց, երբ հոկտեմբերի 18-ին Բաքուն ընդունեց շատ խոցելի

<sup>25</sup> Арешиев А. Г. указ. соч., с. 10; Нагорный Карабах в международном праве, т. II, с. 266; Ղույան Ա., նշվ. աշխ., էջ 158-159; Арцах: долгий путь к свободе, с. 240.

<sup>26</sup> Нагорно-Карабахская Республика, с. 21.

<sup>27</sup> Սույն տեղում, էջ 22: Տե՛ս նաև Տօմասին Ա. սկզբ. սեպտեմբերի 1987-1991 թթ. հակահայկական քաղաքականության ահաբեկչական բնույթի մասին, էջ 399:

«Սահմանադրական ակտը՝ Աղբեջանական Հանրապետության պետական անկախության մասին», իսկ 1991 թ. նոյեմբերի 4-ին փակեց Սարատով-Երևան գազամուղը՝ կասեցնելով էլեկտրականության մատակարարությունը (ԼՂԻՄ-ն ու ՀԽՍՀ-ն լիակատար շրջափակման մեջ էին 1989 թ. հուլիսի 27-ից, ինչը կրճատեց ապրանքափոխանակության 85 %-ը)<sup>28</sup>: «Ետո՞ 1991 թ. նոյեմբերի 26-ին, Բաքուն հրապարակեց «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի վերացման մասին» որոշումը և սկսեց հետևողականորեն գրավել խորհրդային բանակի ռազմավարական գինարանները: Քանի որ Վերջինս չէր ոհմադրում, «գործընթացը ոչ թե գրավման, այլ ավելի շուտ դավադրության՝ Աղբեջանին փաստորեն ամբողջ ռազմական տեխնիկայի փոխանցման տեսք ուներ»<sup>29</sup>: Աղբեջանը Հայաստանից 2,5 անգամ ավելի ծանր սպառազինություն ուներ և 20 անգամ ավելի ռազմամթերք, ուստի հատկապես Բաքուն էր ամեն անգամ սաստկացնում մարտերը՝ կիրառելով զենքի ավելի հզոր տեսակներ և վարձկաններ: Նկատի ունենալով ուժերի հարաբերակցությունը՝ մեր ինքնապաշտպանությունը հենվում էր կամավոր ջոկատների և նրանց գործադրած պարտիզանական կովի դասական մարտավարության վրա:

Ի պատասխան մյուս կողմի սահմանադրական քայլերի՝ Բաքվի՝ ինքնապարության և անցանկալի ազգությամբ քաղաքացիների դեմ բանեցրած ապօրինությունն ու բռնությունը քաջալերում էր կենտրոնական իշխանության հանցավոր անգործությունը և կանխակալությունը, որը արձագանքում էր ըստ «չափից քիչ և չափից ուշ» սկզբունքի: Կենտրոնն աշխուժանում էր միայն այն դեպքում, երբ նրա դատողությամբ վնաս էր հասցվում իր իսկ սեփական շահերին: ԽՍՀՄ-ի փլուզման առաջին տագնապալի նշաններն ի

<sup>28</sup> Балаян Г. указ. соч., с. 84.

<sup>29</sup> Нагорно-Карабахская Республика, с. 22.

հայտ Եկան 1988 թ. փետրվարի 27-29-ին՝ Սումգայիթի շարդի ժամանակ, որն ուղղված էր Նրա 18 հազ. բնակչությանը դեմ և ցուցադրեց իշխանության կենտրոնական մարմինների թողտվությունը։ Այդ պահին Կենտրոնը չկիրառեց նրա լիազորությունների գերակայությունը և մարզը չձևափոխեց դաշնային վարչական միավորի։ Դրա փոխարեն, 1989 թ. հունվարի 12-ից նոյեմբերի 28-ն այնտեղ գործադրվեց միակողմանի և իր բովանդակությամբ պատժիչ՝ ՀՀԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեն, որն իշխանությունը կրկին հանձնեց Ադրբեջանի կազմկոմիտեին։ Վերջինիս պարտադրել էին, բայց այդպես էլ չտեսան մարզային Խորհրդի և գործկոմի վերականգնում։ Այն, որ Մոսկվան չէր հետևում իր հրամանների կատարմանն, իսկ օրինապահ մարմինները չէին ապահովում կես միլիոն հայերի անվտանգությունն իրենց պատասխանատվության ներքո գտնվող մի ամբողջ միութենական հանրապետության տարածքում, արտահայտում էր կենտրոնական իշխանության՝ իր գլխավոր պարտականությունները կատարելու անընդունակությունը կամ մեղսակցությունը<sup>30</sup>։ Ուժային մարմինների ակնհայտ կանխակալության և անգործության պայմաններում Ադրբեջանում թափ առան անսանձ ելուզակությունը, ազգային գտումներն, ավերիչ թալանը, գաղթականների վտարումն ինքնավար Լեռնային Ղարաբաղի և Խորհրդային Հայաստանի, որպես մեկ

<sup>30</sup>Ուղիղ միութենական կառավարումը 1988 թ. մարտին առաջարկեց ակադեմիկոս Ա. Դ. Սախարովը, այնուհետև 18.07.1988-ին նոյն միտքը հնչեց ԽՍՀՄ ԳՆ նախագահության նիստում:Տե՛ս, օրինակ՝ Ամբարցумյան Ը. Ա. Տրի գործ ի պահ լիօնի և մարտի, 3-րդ համար, Եր., 2005, ս. 43-44; Ուղիղ միութենական պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 285-291, 295, 298, 303; Բալյան Վ. Ռ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, էջ 361-362, նոյնիշ՝ Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության (1813-2007 թթ.), էջ 293, Արցախ: Դոլգու պուտ կ սահման, ս. 34-35, 37.

միավորի, լիակատար շրջափակման պայմաններում: Նշված հանցագործությունների անպատճելիությունն օրենքի առաջ, ինչպես նաև կուսակցական կշտամբանքի բացակայությունն, ի վերջո 1990 թ. հունվարին հանգեցրին Բաքվի զարդարելի ու երկարատև չարդին: Վերջինս ոչ թե սուկ համամիութենական ինքնիշխանության ստվերային փոխանցում էր կոնկրետ միութենական հանրապետության, այլ պետական հեղաշրջման և ԽՍՀՄ-ից նրա դուրս գալու փորձ, որը կատարվում էր հայերի զանգվածային ցեղասպանության քողի ներքո: Միայն այն պահից, երբ այդ իրողությունն ակնհայտ դարձավ, Բաքու գործուղվեցին բանակի ուժեր, որոնք ճնշեցին հեղաշրջումը՝ դա հիմնավորելով քաղաքում ապրող 250 հազ. հայերի փրկության անհրաժեշտությամբ: Իսկ մենք՝ որպես իշխանական Կենտրոնի օգնությունը հայցած դիմակայության կողմ, ամենսկին չենք դարձել կարգավորման իրական նպատակ, այլ վերածվեցինք նրա դժգոհության թիրախի: 1990 թ. հունվարի 20-ին Բաքվում վայրագություններ կատարող ազգայնականներին հասցրած ռազմական հարվածը՝ առանձին վերցրած և առանց խնդրի քաղաքական-իրավական կարգավորման, չեր կարող և չի կանգնեցրել Կենտրոնի նահանջն Արդբեջանի ինքնավարության նկատմամբ անսահման քմահաճության առջև: Որպես փաստ, հերքվում էր ԼՂԻՄ-ի ամենատարրական իրավունքը և նրա հնարավորությունը հարգանք պահանջել երկրի պաշտոնական գաղափարախոսության նկատմամբ: Իրական քաղաքականության ոլորտում ինքնավարության պետական կարգավիճակը հասցվել էր իրավագործկ գաղութի կարգավիճակի<sup>31</sup>: Հետևաբար, ԽՍՀՄ-ի հետագա կազմա-

<sup>31</sup>ԼՂԻՄ տարածքում ԽՍՀՄ ՆԳՆ ներքին գործերի պատժից գործողությունների, զինագրավունների, դրանց նկատմամբ կենտրոնական իշխանությունների թողտվության և հովանավորչության քաղաքականության

քանդումն ընդունում էր Կենտրոնի տրամաբանական լուծման տեսք պետության՝ աշխատավորների նկատմամբ նրա բոլոր ծառայողական պարտականություններից ու գաղափարախոսությունից հրաժարվելու համար: Ավելի հեշտ էր հրաժարվել կանոններից, քան թե կատարել դրանք:

Ի պատասխան իր հրավունքների ուժնահարման՝ Ստեփանակերտը վճռեց 1991 թ. դեկտեմբերի 10-ին հանրաքե անցկացնել, հետո 1992 թ. հունվարի 6-ին ընդունեց Հռչակագիր՝ լիակատար անկախության մասին: Ընտրելու իրավունք ունեցող 132.328 իրավասու քաղաքացիներից «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության մասին» հանրաքվեին մասնակցեց 108.736 քաղաքացի (գրանցվածների 82,8 %-ը). 108.615 քաղաքացի կամ քվեարկության մասնակիցների 99,89 %-ը սատարեց քաղաքական նոր կարգավիճակը: Ըստ օրենքի՝ մասնակիցների կեսին հավասար քվորումի փոխարեն, որոնցից կողմ պետք է քվեարկի երկու երրորդը (փաստորեն՝ բնակչության 33 %-ը), մարտնչող երկրամասի քաղաքացիների 82,7 %-ը սատարեց նրա լիիրավ անկախությանը<sup>32</sup>: Հսկայական երկրի բոլոր նախկին ինքնավարություններից Արցախը միակն է, որ անկախության անցման գործընթացում կիրառեց ներքին օրենսդրությունը:

1991 թ. դեկտեմբերի 10-ին այստեղ գնդակոծումներից սպանվեց 10 հոգի և վիրավորվեց 11-ը: Ստեփանակերտի

---

մասին տե՛ս ՀԽՍՀ Գերագույն խորհրդի 03.05.1990 թ. որոշումը, նաև Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Նախագահությունում 30.08.1989 թ. գումարված գիտնականների և ստեղծագործական միությունների ներկայացուցիչների ընդհանուր ժողովի որոշումը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում ստեղծված վիճակի և այն կարգավորելու խնդիրների մասին: Հայոց կառավարություն, 1990, ս. 13-15; Տօմասյան Ա. սկզբ. սույն տեսանկարը պահպանվել է Հայաստանի Հանրապետության պատմական թանգարանում:

<sup>32</sup> Հայոց կառավարություն, 1990, ս. 13-15; Տօմասյան Ա. սկզբ. սույն տեսանկարը պահպանվել է Հայաստանի Հանրապետության պատմական թանգարանում:

կանայք ու երեխաները գիշերում էին նկուղներում: Չին գործում դպրոցներն ու մանկապարտեզները: Ամսի 11-ի լուս 12-ի գիշերը քաղաքի դպրոցը խոցեց հրանոթային արկը: Պայթեցված էր ու չէր գործում քաղաքի ջրմուղը: Չկար հաց և դեղորայք<sup>33</sup>: Այդ ծանրագույն պայմաններում արցախահայությունն անվերապահ ստանձնում էր հարազատ երկրամասի ապագայի պատասխանատվությունը: ԼՂՀ-ի աղբբեջանական համայնքը կարող էր անկաշկանդ մասնակցել հարցմանը, սակայն նրա բոյկոտը պարզ արտահայտում էր իր բացասական վերաբերմունքը, որն ի վիճակի չէր փոխել կամարտահայտության ընդհանուր պատկերը: ԼՂՀ-ի անկախության նկատմամբ պաշտոնական Բաքվի բացասական վերաբերմունքն է՝ լ ավելի էր խորացնում քաղաքական-իրավական իրադարձությունների վերածումը ռազմականի:

Համոզիչ հանրաքեցից հետո ԼՂՀ ժողովրդական պատգամավորների խորհրդի գործկոմը դեկտեմբերի 12-ին դիմեց Բելառուսի, Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի դեկավարությանը՝ ԱՊՀ-ին անդամակցելու խնդրանքով: Այնուհետև՝ 1992 թ. հունվարի 6-ին Ստեփանակերտում հրապարակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական անկախության մասին հոչակագիրը, որում անմիջապես հայտարարվում էր ժողովրդի ինքնորոշման անկապտելի իրավունքը, նշվում անկախ պետության՝ արտաքին հարձակումներից և ֆիզիկական ոչնչացման վտանգից պաշտպանվելու անհրաժեշտության մասին: Քաղաքացիների իրավունքները և ազատությունները երաշխավորելու համար նոր պետությունը ստեղծում էր գինվածութեր, իսկ «հողը, ընդերքը, ջրային և օդային տարածությունները բնական, նյութական և հոգևոր հարստությունները հանդիսանում են Լեռնային Ղարաբաղի Հանրա-

<sup>33</sup> Կազանդյան Բ. սկզբ. սոչ., ս. 48.

պետության ժողովրդի սեփականությունը»<sup>34</sup>: Հանրապետությունում հաստատվեց սեփականության բոլոր ձևերի իրավահավասարություն, հայերենը ստացավ պետական կարգավիճակ, իսկ ազգային փոքրամասնությանը երաշխավորվում էր մայրենի լեզուն առանց որևէ սահմանափակման տնտեսական, մշակութային և կրթական ոլորտներում օգտագործելու իրավունք<sup>35</sup>: Այսպես հիմք դրվեց անկախությանը, թեև անկախության հետ միասին գալիս էր երկար, ծանր պատերազմը, որը հայերի անձնազոհությամբ պետք է ապահովեր երկար սպասված հաղթանակը:

Մարտական պայմաններում քաղաքական նոր կարգավիճակը նպաստում էր Արցախի ինքնուրույնությանը, բայց այն չէր կարող մոլորեցնել հակառակորդին ու, միևնույն է, չէր ազատում Հայաստանը ուազման ժամանակի բոլոր լարվածություններից: Ակնհայտ է, որ խաղաղությունը, անկախությունը և ԼՂՀ-ի ֆիզիկական գոյությունն անգամ անհասանելի են Աղրբեջանի հարևանությամբ՝ առանց ամբողջ Հայաստանի ներուժն ունենալու: Սակայն խաղաղությունը, անկախությունը և ՀՀ-ի գոյությունը թուրքիայի հարևանությամբ նույնպես խնդրահարուց են առանց արտաքին աջակցության: Մեր թշնամին մեզ նույն կերպ է վերաբերվում, իսկ Մինսկի խումբը, հարգելով մեր ինքնորշման իրավունքն ու մեր ինքնապաշտպանության համատեղ ունակությունը<sup>36</sup>, միևնույն է, բանակցում էր պաշտո-

<sup>34</sup> Նոյն տեղում, 52:

<sup>35</sup> Нагорно-Карабахская Республика: путь к вершинам. Ред. Н. Р. Мелкумян. Степанакерт, 2001, с. 91-92; Нагорный Карабах в международном праве, т. I, с. 714-717; Хачатрян А. Г., Алексанян Г. А. К 30-летию Нагорно-карабахского конфликта: ключевые события до и после распада СССР. «Постсоветские исследования». М., 2018, т. 1, № 2, с. 159-160, [www.postussr.org](http://www.postussr.org) թեսնվել է 18.09.2021թ.:

<sup>36</sup>Այդ առողմով նշենք միայն լ'Աքվիլյայում (Իտալիա, 10.07.2009), Մուսկոկայում (Կանադա, 26.06.2010), Դուվիլում (Ֆրանսիա, 26.05.2011), Լու Կարոսում (Մեքսիկա, 18.06.2012), Էնիսկիլենում (Միացյալ Թագավորություն, 2013) և այլն:

նական Երևանի հետ: Հետևաբար կրկնենք, որ ինքնորոշման իրավունքը ենթադրում է ոչ միայն անջատում և անկախություն, այլև նոյն ժողովրդի երկու հատվածների միացում, որ Արցախի և ՀՀ-ի միավորումը մեր այդ իրավունքի գիշավոր խնդիրն է, որ ինքնորոշումն ու ազգային համախմբումը չեն կարող հակադրվել իրար, իսկ լիակատար միասնությունն ամրապնդում է մեր համագգային կենսունակությունը: Ուստի, ինչպիսին էլ լինի մեր ապագա ուղին, այն պետք է լինի ընդհանուր:

Ամփոփենք. այսօրվա խնդիրների լուծումը թելադրում է Արցախի և Հայաստանի միավորման առավելագույն ամբողջականացում՝ նրանց լիակատար միացումի տեսքով: Նախկինում մեր խուսանավումները չէին մոլորեցնում ո՞չ մեր բարեկամներին, ո՞չ թշնամիներին: 2020 թ. պատերազմի ծայրաստիճան անհաջող ընթացքը, հայկական կողմի մեծ կորուստներն ու խաղաղապահ ուժերի տեղակայումը արդիականացնում են լրացուցիչ, բայց երբեք առանձին, այլ ԱՀ և ՀՀ ընդհանուր, միատեսակ ու ավելի սերտ փոխգործողությունը Ռուսաստանի Դաշնության հետ: ԴԴ և ՀՀ միջև նոր համաձայնագիր կամ միութենական պայմանագիր ստորագրելու պարագայում ԱՀ-ն պետք է դրանից օգտվի լիովին: Ինչպիսին էլ լինի դեպքերի հետագա ընթացքը, Արցախը չի կարելի մենակ թողնել: Հատկապես այսօրվա ուսւ-թուրքական մեծածավալ շահերի համատեքստում,

---

Վերություն, 18.06.2013) նախագահներ Դ. Մեդվեդիկ, Բ. Օբամայի և Ն. Սարկոզիի համատեղ հայտարարությունները, նախագահ Դ. Մեդվեդիկ, վարչապետ Ֆ. Ֆիյոնի, պետքարտուղար Հ. Քինթրոնի հայտարարությունն Աստանայում (Ղազախստան, 01.12.2010) հրավիրված գագաթնաժողովում, նաև Աթենքում ԵԱՀԿ երկու արտգործնախարարների խորհրդում 01.12.2009-ին ԱԳՆ երկու դեկավարների և պետքարտուղարի տեղակայի հնէցք հայտարարությունը: Նշենք, որ նոյն տարիներին ԵԱՀԿ համապատասխան խորհրդների կողմից խնդրի վերաբերյալ արվել են այլ հայտարարություններ ևս:

որոնք էապես նվազեցնում են մեր նշանակությունը պաշտոնական Մոսկվայի աչքին, չմոռանալով նաև նախկինում նրա վերաբերմունքն արցախցիների խնդիրների և Ադրբեջանում բնակվող հայազգի քաղաքացիների նկատմամբ: Այդ երկու հանգամանքներն արդարացիորեն առաջացնում են ոչ քիչ մտավախություններ: Հասկանալի է, որ առանց ողջ Հայաստանի գործունեության խաղաղապահ ուժերը չեն կարողանա դիմակայել այդքան փոքր ու մեկուսացված Արցախում: Նրանց այժմյան տեղերում մնալու հեռանկարը որևէ երաշխիք չունի, և երբ հարց բարձրացվի նրանց առաքելության ժամկետը երկարաձգելու մասին, Ադրբեջանը դրանում շահագրգոված չի լինելու, իսկ թուրքական բանակի համակազմը, ամենայն հավանականությամբ, աճելու է: Էլ չասենք այն գնի մասին, որը կպահանջի Ադրբեջանն իր համաձայնության դիմաց: Դեռ 1989 թ. հուլիսի 26-ին այնտեղ չեին թաքցնում իրենց տրամադրվածությունն ու նպատակը. «Ով չի ուզում այստեղ ապերել՝ կարող է ուղղը քաշե՛լ»<sup>37</sup>: Գլխավորը. միացումը մեզ կդարձնի ավելի խոշոր ու պաշտպանված միավոր, իսկ վարժ գինապարտ բնակչության առկայությունը կարող է նվազեցնել արտաքին հարձակումների վտանգը և ուժեղացնել ժամանած խաղաղապահ համակազմի մարտական հնարավորությունները:

<sup>37</sup> Ադրբեջանի ԿԿ կենտկոմի 2-րդ քարտուղար Վ. Պոյանիչկոյի բղավոցները Շահումյանի շրջանի շրջնորդում՝ Տօմասան Ա. յուզ. սու., ս. 106: 15.09.1989 թ. Բարձում տեղի ունեցած Գերագույն խորհրդի նիստի որոշմամբ կոչ արվեց լուծարել ԼՂԻՄ-ն այդ շրջանի հետ միասին և վտարել նրանց բնակչներին: Հիշատակենք նաև վերջնագրի բովանդակությամբ թուցիկները՝ մարզն անմիջապես թողնելու պահանջներով, երբ 02.01.1991 թ. Ա. Մովսավիրովը հայտարարեց ԼՂԻՄ-ում նախագահական կառավարում մտցնելու մասին՝ Հայորդ-Կարաբահսկա Հանրապետություն, ս. 84.

## **GAYANE MAKHMOURIAN**

Leading researcher at the

IH, NAS RA,

Doctor of History

ggmakhm@hotmail.com

### **INTERNAL AND FOREIGN POLICY PRECONDITIONS FOR THE DECLARATION OF THE REPUBLIC OF MOUNTAINOUS KARABAKH ON SEPTEMBER 2, 1991**

#### **SUMMARY**

**Keywords:** Republic of Mountainous Karabakh, Artsakh, unification, independence, Declaration, referendum, pogrom, operation “Ring.”

The universally recognized right of nations for self-determination is equipollent to the thesis of the territorial integrity and has two main shapes. They are the unification of the two parts of the same nation and separation of the compact ethnic groups and their foundation of the independent States. The epoch-making decision of the Council at the Mountainous Karabakh Autonomous Region, dated February 20, 1988, on the unification with the Armenian SSR, had arisen essentially new, nationwide movement, which confirmed its activity by the collaboration with the legislative authorities. The legal, constitutional struggle for the reintegration brought about astonishment, widespread sympathy and active support of the whole world. In 1988-1991 the European parliament had adopted 4, and the US Congress – 2 resolutions of solidarity.

The executives of the Azerbaijan SSR had applied pogroms, attacks, ethnic purges, blockade and wiping villages out; as far as they availed themselves of the indulgence, and then of the immediate co-operation with the all-Union authorities. The latter one had relinquished its sovereign rights and obligations in regard to the Armenian dwellers of Azerbaijan; and thus it blocked peaceful, political settlement of the issue. Following escalation of violence, to begin with the pogrom in Baku on January 13-20, 1990, and the “Ring” military operation, waged against 26 villages of Artsakh and

Shahumian district on April 30 – May 16, 1991, created a menace of the large-scale war and demanded the greater freedom for Artsakh. Therefore, the Declaration of proclamation of the Republic of Mountainous Karabakh had been adopted in Stepanakert on September 2, 1991; 82,8 per cent of its adult population came for the referendum and 99,89 per cent of them had supported independence on December 10. Afterwards, the Declaration of the State independence of the RMK had been adopted on January 6, 1992.

**ГАЯНЭ МАХМУРЯН**

Ведущий научный сотрудник

ИИ НАН РА, д.и.н.

ggmakhm@hotmail.com

**ВНУТРЕННИЕ И ВНЕШНЕПОЛИТИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ  
ПРОВОЗГЛАШЕНИЯ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ  
2 СЕНТЯБРЯ 1991 Г.**

**РЕЗЮМЕ**

**Ключевые слова:** Нагорно-Карабахская Республика, Арцах, объединение, независимость, декларация, референдум, погром, операция “Кольцо”.

Общепризнанное право народов на самоопределение равнозначно тезису о территориальной целостности и имеет две основные формы: объединение двух частей одного народа или отделение компактно расположенных народов и создание ими независимых государств. Историческое решение областного Совета Нагорно-Карабахской автономной области от 20 февраля 1988 г. о воссоединении с Армянской ССР вызвало к жизни качественно новое, общенациональное движение, закрепившее свою деятельность работой государственных органов. Правовая, конституционная борьба за воссоединение вызвала изумление, широкое сочувствие и активную поддержку во всем мире. В 1988–1991 гг. Европарламент принял 4, а Сенат США 2 резолюции солидарности.

Применение руководством Азербайджанской ССР погромов, нападений, этнических чисток, блокады и уничтожения сел, чему потворствовала, а затем и прямо участвовала общесоюзная власть, отказавшаяся от своих суверенных прав и обязанностей в отношении проживавших в Азербайджане граждан армянской национальности, заблокировали мирное, политическое урегулирование вопроса. Дальнейшая эскалация насилия, особенно погром 13-20 января 1990 г. в Баку и операция “Кольцо” против 26 сел Арцаха и Шаумянского района 30 апреля

– 16 мая 1991 г. привели к угрозе масштабной войны и потребовали большей самостоятельности Арцаха. 2 сентября 1991 г. в Степанакерте была принята Декларация о провозглашении Нагорно-Карабахской Республики, 10 декабря 82,8 % ее взрослого населения пришли на референдум и 99,89 % всех участников поддержали независимость. 6 января 1992 г. была принята Декларация о государственной независимости НКР.

**ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**  
ՀՀ ԳԱԱ ՊԻ ավագ գիտաշխատող,  
պ.գ.թ., դրցնուն  
lilithovannisan@yahoo.com; lilit.hovhannisyan@isec.am

**ԱՐՁԱԿԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՇՈՒԹՅԱՆ  
ՄԵԶ 1991-2021 ԹՁ.**

**Հիմնաբառեր՝** Արցախ, Շուշի, Հայկական լեռնաշխարհ, Արցախի մելիքություններ, Նախիջևան, Ջանգեզուր, Աղբեզջան, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ (ԼՂԻՄ), Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (ԼՂՀ), Առաջահիմներ, պետականություն, անկախություն, ինքնորոշման իրավունք, Բիշքեքի արձանագրություն:

«... Թեպետ մենք փոքր ածու ենք և թվով շատ սահմանափակ ու զորությամբ թույլ և շատ անգամ օտար քագավորությունների կողմից նվաճված, բայց և այնպես մեր երկրուն էլ գրելու և հիշատակելու արժանի շատ սիրագործություններ են կատարվել...»:  
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

Վերջին երեսուն տարիներին հայ ժողովուրդը, Հայաստանի և Արցախի անկախ պետություններն ու ընդհանրապես, հայկական ինքնությունը և պետականությունն իրենց բոլոր բաղադրիչներով՝ տնտեսություն, պետական կառավարման համակարգ, համազգային կառույցներ, բանակ, մշակույթ, ազգային-պետական գաղափարախոսություն, անցնում են ծանր փորձության միջով, որի առանցքը համազգային պայքարն է 1991 թ. վերականգնված հայկական անկախ պետականության և ազգային ինքնության պահպանման ու ամրապնդման համար: Այդ փորձության վերջին

---

Խորենացի Մովսես, Պատմություն Հայոց: Թարգմանությունը, Ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Եր., 1968, էջ 70:

և կործանարար դրսնորումը 2020 թ. սեպտեմբեր-նոյեմբերին Արցախի Հանրապետության (ԱՀ) դեմ տեղի ունեցած ադրբեջանա-թուրքական ազրեսիան է, որի արդյունքում ԱՀ տարածքի 75 %-ը բռնազավթված է Ադրբեջանի կողմից, վտանգված է ողջ Հայաստանի ու հայ ժողովրդի գոյությունը:

Պատերազմի շարունակման վտանգի պայմաններում արդեն տեղի ունեցածի հետևանքով հայկական կողմից պարտության պատճառների ու հանգամանքների հետ կապված բազմաթիվ անպատասխան հարցերին, հայ զինվորների անօրինակ սիրանքներից բխող ազգային հայարտությանը, միևնույն ժամանակ նրանց անդառնալի կորստի չսպահող վերքին, հայկական երկու պետությունների կրած ռազմական, նյութական, ֆինանսական, մշակութային ահոելի վնասների կործանարար հետևանքներին գումարվել են գաղափարաբարձական անորոշությունը, հայկական պետությունների արտաքին քաղաքական կողմնորոշման վերանայման հարցում առկա օրյեկտիվ և սուբյեկտիվ դժվարությունները: Այս իրողությունները նոր ու ծանր խնդիրների լուծման առջև են կանգնեցրել հայ համազգային-պետական կյանքի բոլոր ոլորտները, այդ թվում՝ գիտությունը և մասնավորապես՝ պատմագիտությունը: Վերջինս, իր բնույթով լինելով քաղաքական, օրյեկտիվորեն զգայուն է ինչպես ռազմաբարձական իրադրության փոփոխությունների, այնպես էլ ազգային-պետական անվտանգությանն առնչվող խնդիրների նկատմամբ, որոնք հայ իրականության մեջ սրվել են վերջին մեկ տարվա ընթացքում: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ պատմաբան Աշոտ Մելքոնյանը շեշտում է, որ հայագիտական «բազմաթիվ իհմնահարցեր դեռ լրջ հետազոտության, ինչպես նաև վերանայման կարիք ունեն, առավել ևս, որ դրանց մի մասը հայոց պատմության թուրքադրբեջանական աննախադեպ խեղաթյուրումների պայ-

մաններում ունեն գիտաքաղաքական մեծ նշանակություն և շոշափում են ազգային անվտանգության խնդիրներ»<sup>2</sup>: Եվ սա այն դեպքում, երբ պատմաբանի գնահատմամբ, հայոց պատմության ու հայ մշակույթի ուսումնասիրության բնագավառում վիթխարի են ինչպես դասական հայագիտության, այնպես էլ խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանների հայագիտության հաջողությունները<sup>3</sup>:

Արդի հայ պատմագիտության հանգուցային հարցերի ձևակերպման վրա էական է եղել 1988 թ. սկիզբ առաջ Արցախյան ազգային-ազատագրական շարժման, 1991-1994 թթ. Արցախյան հաղթական գոյամարտի, 1991 թ. Հայաստանում և Արցախում ազգային անկախության հոչակման ազդեցությունը: Պատահական չէ, որ այդ հարցերի թվում է հայոց պետականության պատմության բազմաշերտ հիմնահարցն իր ենթահարցերով՝ Հայկական լեռնաշխարհում պետականության սկզբնավորման ժամանակաշրջանի, դրա բնակչության, Ուրարտու անունով հայտնի թագավորության, արքայատոհմերի էթնիկ պատկանելության, միջնադարի ընթացքում պետականության տարբեր դրսևնորումների, պետականության վերականգնման համար ծավալված ազատագրական պայքարի, նորագույն ժամանակներում Հայաստանի երեք հանրապետությունների փոխառնչության և իրավահաջորդության վերաբերյալ, որոնց հոլովույթում էլ դիտարկվում է Արցախի պետականության, այն վերականգնելու և պահպանելու համար հայերի մղած ազատագրական պայքարի պատմությունը:

Նախ նշենք, որ հայ պատմագիտության մեջ տեղի է ունենում հայոց պետականության էության և բովանդակության

<sup>2</sup> Մելքոնյան Ա. Ա., Հայ պատմագիտության իրատապ խնդիրները Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրության բնագավառում:Տե՛ս «Պատմագիտական հետազոտություններ», Եր., 2021, էջ 5:

<sup>3</sup> Նույն տեղում:

հայեցակարգի աստիճանական փոփոխություն: Նախկինում գերակշռում էր տեսակետ, ըստ որի՝ ինչպես վաղ և ուշ միջնադարում, այնպես էլ նոր ժամանակներում, գտնվելով զանազան տերությունների տիրապետության տակ, հայ ժողովուրդը չի ունեցել պետականություն: Ներկայումս դրան փոխարինելու է գալիս այն համարձակ և ճկուն մոտեցումը, որ նույնիսկ համահայկական անկախ պետականության անկման և օտարի տիրապետության պայմաններում հայոց պետականության շղթան գրեթե երբեք չի ընդհատվել շնորհիվ հայ Էթնոսի պատմական արեալի առանձին մասերում պահպանված անկախ կամ կիսանկախ պետական կազմավորումների: Ընդ որում, պետականության առկայության փաստագրման համար նշանակություն չունեն ոչ վերջիններիս միջազգայնորեն ճանաչված լինելը և ոչ էլ նրանց կառավարման ձևը: Ուշագրավ է, որ տեղական նշանակության շատ պետական կազմավորումներ հաճախ հիմք են հանդիսացել համահայկական պետականությունների ձևավորման համար: Ասվածը հիմնավորենք Արցախի պատմությունից վերցված օրինակներով: Այսպես, հայոց հին պետականության դարաշրջանում (վաղնջական ժամանակներից մինչև IV դարի վերջ՝<sup>4</sup> Ք. ա. IX դարում Հայկական լեռնաշխարհում կազմավորված Վանի (Բիայնիի, Ուրարտու, Արարատի) թագավորությունը, որի ծաղկման շրջանից սկսած, Արցախի ճակատագիրը սերտորեն կապված է Եղել լեռնաշխարհում ընթացող Էթնիկ տեղաշարժերի, տնտեսական և հասարակական գործընթացների հետ: Այդ կապն, իր հերթին, արդյունք է Եղել հնդեվրոպացիների նախահայրենիքի՝ Հայկական լեռնաշխարհի տարածքում ապրած ցեղերի լեզվական, կրոնական-սովորութային ընդհանրությունների, որոնց արմատներն, ըստ գիտական ուսումնասիրությունների, հասնում են մինչև բրոնզեդարյան ժամանակաշրջան<sup>4</sup>: Հայտնի

<sup>4</sup> Տե՛ս Բալայան Վ. Ռ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը,

է, որ Վանի թագավորներ Մենուան և Արգիշտի Ա-ն արշավել են Արաքսի հովիտ: Նրանցից առաջինը հասել է մինչև Սյունիք, իսկ Երկրորդը՝ Զերմաջուր (Խստիսու): Պատմական փաստերը վկայում են, որ արդեն Արգիշտի Ա-ի օրոք Արցախը ներառված է Եղել հայկական պետության կազմում: Երկրամասն ունեցել է 12 գավառ՝ Մյուս Հաբանդ (Սիսական-ի-Կոտակ), Վայկոնիք կամ Ծար, Բերդաձոր (Բերձոր), Մեծ Առանք (Մեծիրանք), Մեծ Կվենք (Մեծ Կողմանք), Հարճլանք, Մուխանք, Պրանք, Պարզվանք (Պարսավանք), Քուստի Փառնես (Փառիսոս) և Կողթ<sup>5</sup>:

Արցախի նախարարական տունն, ըստ ավանդության, սերված էր Հայկ նահապետի ժառանգ Սիսակից: Նախարարական այս տան նախահայրն էր Առանք, որի անունից էլ՝ հարստության «Առանշահիկ» անունը: Նահանգի իշխանանիստն ի սկզբանե Ծավդը (Ջոդ) ավանն էր, որի անունով նախարարությունը նաև կոչվել է Ծավիեացվոց կամ Ծավդեց իշխանություն: Հայոց իին պետականության դարաշրջանում, որն ընդգրկում է Վաղնջական ժամանակներից մինչև IV դարի վերջը, միասնական, այսինքն՝ կենտրոնացված պետության՝ Վանի, ապա Երվանդական, այնուհետև Արտաշեսյան ու Արշակունյաց թագավորությունների կազմում Արցախն աչքի էր ընկնում աշխարհագրական նպաստավոր պայմաններով: IV դարի սկզբին Արցախը հիմնականում հենակետ էր Հյուսիս-արևելյան Հայաստանում և հարևան բուն Աղվանքում քրիստոնեություն տարածելու համար: Արցախի առաջին եպիսկոպոս Գրիգորիսը խոշոր դեր է խաղացել Արցախի և Ուտիքի, ինչպես նաև Աղվանքի մի շարք գավառների բնակչության քրիստոնեացման գործում: Նա բուն Աղվանքում քրիստոնեություն քարոզելու ժամանակ

---

Եր., 2002, էջ 27-28:

<sup>5</sup>Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2 (Արգիշտի-Գեղերվան), Եր., 1976, էջ 150:

Էլ նահատակվել է Մազքթաց (Աղվանական) թագավոր Սանեսանի կարգադրությամբ: Արցախն Արևելյան Հայաստանի Արշակունյաց թագավորության կազմում էր մինչև վերջինիս վերացումը<sup>6</sup>:

Վաղմիջնադարյան հայկական պետականության փուլում՝ Վ դարի երկրորդ կեսին, որպես Աղվանից մարզպաններ, վարչաքաղաքական ինքնուրույնություն են ձեռք բերում Առանշահիկները<sup>7</sup>: Վարդանանց և Վահանանց ազատագրական պայքարի արդյունքում՝ Վ դարի 80-ական թթ. Վաչե Առանշահիկին հաջողվում է պարսիկներից մաքրել Արցախն ու Ուտիքը և հոչակվել Աղվանքի թագավոր: Նորա եղբորորդու՝ Վաչագան թագավորի օրոք՝ 485–510 թթ., Արցախի հայկական թագավորության սահմանները հասնում են մինչև Կուր գետի ծախսափնյա Կամբեճան գավառը: Բուն

<sup>6</sup> Տե՛ս Ուզուբարյան Բ. Ա., Արցախի պատմությունը սկզբից մինչեւ մեր օրերը, Եր., 1994, էջ 23–27, Բայալյան Վ. Ռ., նշվ. աշխ., էջ 63–80:

<sup>7</sup>Պատմաբան Հենրիկ Սվագյանի հիմնավորմամբ, Առանշահիկների իշխանական տոհմի հիմնադիր Առանի տիրույթը հարավում և արևելքում հասնում էր մինչև Արաք գետ, հյուսիսում այն Կուր գետով սահմանազատվում էր Աղվանքի տարածքից, հարավ–արևմտաքում Առանի տիրույթը սահմանափակվում էր Արցախյան, Սևանի ու Միափորի լեռներով, իսկ հյուսիսարևմուտքում՝ Հսարակերտ ամրոցով, կազմելով մի Եռանկյունի, որը ներառում էր հայոց Ուտիք և Արցախ աշխարհները: «Որ իսկապես Առանի տիրույթը հենց այդ հատվածն էր, ցոյց է տալիս և այն, որ նոյն պատմիչները նրանից սերված են համարում լոկ այնտեղ ապրող ցեղերին՝ ուժիացիներին, գարդմանացիներին, ծավիեցիներին ու գարգարացիներին: Ինչպես տեսնում ենք, հայ պատմիչների «Աղվանքը» իր աշխարհագրական սահմաններով բոլորովին չի համապատասխանում հունա–հոռմեական աղբյուների ճանաչած Ալբանիային: Մ. Խորենացու և Մ. Կաղանվատվացու հաղորդումները Առան նախնու տիրույթների սահմանների մասին ոչ թե հիմք են բուն Աղվանքի հարավային սահմանը Արաք հասցնելու համար, այլ միանգամայն անառարկելի ապացույցներ, որ նրա հարավային սահմանը միայն ու միայն Կուր գետն էր: Նոյն դատողություններով էլ Առանը չէր կարող լինել Կուրից հյուսիս բնակվող աղվանական ցեղերի նախահայրը», – Եղրակացնում է պատմաբանը (Սվագյան Հ. Ա., Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Եր., 2006, էջ 62):

Մեծ Հայքում և կենտրոնական նահանգներում հայկական պետականության բացակայության պայմաններում Վաչագան Բարեպաշտի թագավորությունը հայահավաք կենտրոնի դեր էր կատարում<sup>8</sup>, իսկ նրա օրոք ընդունված «Սահմանադրություն կանոնական»-ում Հայոց Արևելից կողմանց հասարակական, քաղաքական ու տնտեսական կյանքի վերաբերյալ սահմանված իրավական նորմերն այնքան առաջադիմական էին, որ Եվրոպական երկրներում նմանատիպ օրենքներ ընդունվեցին X-XII դարերուա<sup>9</sup>: Ըստ <Սվազյանի՝ պարսկական արքունիքի կողմից Վաչագան Բարեպաշտի ընտրությունը և նրան Աղվանից մարզպանության գլուխ կարգելը պատահական չէր: «Դա Նվարսակի պայմանագրից բխող պահանջի բավարարումն էր, որի համաձայն անդրկովկասյան երկրներում բարձրաստիճան պաշտոնյաներ ընտրելիս պարսիկները պետք է խստորեն հաշվի առնեին ընտրյահի տոհմիկության աստիճանը և ժառանգական իրավունքները: Նոր թեկնածուն, լինելով տոհմիկ ազնվական և ի լրումն դրա «ի թագավորական տոհմէ» լիովին հարմար էր այդ բարձր պաշտոնի համար», – նկատում է պատմաբանը<sup>10</sup>:

Լեռնային անառիկ դիրքի շնորհիվ Արցախը դարեր շարունակ եղավ ու շարունակում է մնալ հայոց պետականության կրողը: «Ուշմիջնադարյան Հայաստանում, - գրում է Բ. Ռլուբարյանը, - թաթար-մոնղոլական զավթիչների, ապա նրանց հետքերով եկած ակ-կոյունլու և կարա-կոյունլու թուրքերի կործանարար հարվածների տակ, ոչնչացել էին հայկական իշխանությունները, և Խաչենը համարյա միակ վայրն էր, ուր պահպանվում էին հայ պետականության բեկորները, և ուր դեռևս բորբոք էին մնում հայոց քաղա-

<sup>8</sup>Տե՛ս Բալյայան Վ. Ռ., նշվ. աշխ., էջ 82-85:

<sup>9</sup>Տե՛ս Նույն տեղում, էջ 85:

<sup>10</sup>Սվազյան <Ս. Ս., նշվ. աշխ., էջ 211:

քական ազատության կայծերը...»<sup>11</sup>: Արցախում, հարակից գավառներում և Հյուսիս-արևելյան Հայաստանի այլ շրջաններում պահպանված իշխանական տների՝ Հասան-Ջալայանների, Դոփյանների, Օրբեյանների, Մելիք-Շահնազարյանների շառավիղները չկորցրին իրենց ինքնավարության իրավունքները և ձևավորեցին հայ մելիքական դասը<sup>12</sup>:

Նոր ժամանակներում, մասնավորապես՝ XVII դ. կեսին և XVIII դ. սկզբին, հայոց պետականության առանցքը դրա տեղական դրասորումներն էին ի դեմս ինքնիշխան կազմավորումների՝ սղնախների՝ ապահովանական ամրոցների, մելիքությունների, իշխանապետությունների, ինքնավար համայնքների Արցախում, Սյունիքում, Գեղարքունիքում, Մոկսում, Շատախում, Սասունում, նաև Կիլիկիայի լեռնային հատվածներում: Պատահական չե, որ Արցախի դերը կարևորվեց, երբ 1736 թ. Նադիր շահը ճանաչեց Գանձակի նախկին բեկլարբեկությանը Ենթակա Վարանդայի, Դիզակի, Զրաբերդի, Խաչենի և Գյովհստանի գավառների մելիքների իրավունքները: Այսպես ծնունդ առավ հայկական նոր ինքնավարություն՝ Արցախի մելիքությունները, որոնք նաև հայտնի են որպես Խամսայի (արաբերեն խամսա՝ հինգ) մելիքություններ<sup>13</sup>: Այնուհետև Արցախի դերը կարևորվեց XVIII դարի երկրորդ կեսին և XIX դարի առաջին կեսին Հռվեհի Էմինի, Մովսես Սարաֆյանի, Արցախի մելիքների, Հռվեհի Արդությանի ու Հռվիաննես Լազարյանի, Շահամիր

<sup>11</sup>Ուլուբարյան Բ. Ա., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Եր., 1975, էջ 6:

<sup>12</sup>Տե՛ս Մելքոնյան Ա. Ա., Արցախը հայոց պետականության պատմության հոլովականությունը: «Պատմագիտական հետազոտություններ», էջ 357:

<sup>13</sup>Արցախի մելիքությունների մասին մանրամասն տե՛ս Րաֆֆի, Խամսայի մելիքությունները: «Երկերի ժողովածու», հ. 10, Եր., 1959, էջ 396-510, Ուլուբարյան Բ. Ա., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Մադայան Ա. Վ., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII-XIX դդ., Եր., 2007, 327 էջ:

Շահամիրյանի ու Մովսես Բաղրամյանի, ինչպես նաև Խաչատրուր Լազարյանի, Կոնստանտին Արդության-Երկայնաբազուկի և Ալեքսանդր Խուդաբաշյանի մշակած ազատագրական ծրագրերում<sup>14</sup>: Ցավոք, դրանց վիճակված չէր իրականություն դառնալ: Ավելին, Արևելյան Հայաստանում ցարիզմի հակահայկական ազգային քաղաքականությունը հանգեցրեց Արցախում պետականության վերջին շառավիղների մարման: Դրան, որպես հակազդեցություն, հաջորդելու եկավ պետականության վերականգնման ներքին նախադրյալների առաջացման փուլը, երբ XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայ ժողովուրդը կանգնեց իր գինված ինքնապաշտպանությունը կազմակերպելու և ազգային անվտանգ գարգացումն ապահովելու ուղու վրա:

Նորագոյն ժամանակներում ևս հայոց պետականությանը վիճակված էր դժվարին ընթացք երեք պատմափուլերով՝ 1918–1920, 1921–1991 և 1991–2021 թթ.:

Արտաքին քարդ ու աննպաստ ռազմաքաղաքական իրադրության պայմաններում չկարողանալով միանալ Հայաստանի նորանկախ հանրապետությանը՝ հետփետրվարյան ժամանակահատվածում ձևավորված Ազգային խորհուրդների հիմքի վրա Արցախը և Սյունիքը 1918 թ. ստեղծում են սեփական պետական կազմավորումները և պայքար սկսում Մայր հայրենիքին միանալու համար: 1918 թ. հունիսի 22-ին Շուշիում գումարված Արցախահայության առաջին համագումարում կազմվում է Արցախի գրեթե բոլոր քաղաքական հոսանքները ներկայացնող «Ղարաբաղի ժողովրդական կառավարություն» անվամբ կոալիցիոն գործադիր իշխանություն՝ դաշնակցական Եղիշե Իշխանյանի (նախագահ և ներքին ու արտաքին գործերի կառավարիչ) ղեկավարությամբ և երկրամասը հոչակվում է

<sup>14</sup>Այս մասին տե՛ս Մելքոնյան Ա. Ա., Արցախը հայոց պետականության պատմության հոլովովում, էջ 346–349:

անկախ վարչատարածքային միավոր<sup>15</sup>: Ահա այսպես սկսվում է Արցախ աշխարհի բազմադարյա պատմության ամենածանր ու դրամատիկ իրադարձություններով լի ժամանակաշրջաններից մեկը. 1918–1921 թթ. այն դառնում է «վիճելի տարածք» Հայաստանի և Աղրբեջանի միջև: Աղրբեջանի մուսավարական կառավարությունը հետևողական պայքար էր մղում Լեռնային Ղարաբաղին, ինչպես նաև Զանգեզուրին և Նախիջևանին տիրելու համար: Այս գործում Աղրբեջանին բացահայտ օգնում էին Թուրքիան, որոշ ժամանակ՝ նաև բրիտանացիները: Վերջիններիս և թուրքերի նպատակներն ակնհայտ էին՝ տարածաշրջանում ծագած «տարածքային վեճերը» ծառայեցնել իրենց սեփական շահերին: Մուսավարականների անընդմեջ հարձակումները և տեղական մահմեդականների զինված խոռվությունները ծանր վիճակ ստեղծեցին երկրամասում, իսկ մեծ տերությունների միջամտությունն ավելի էր բարդացնում դրությունը<sup>16</sup>: Այսպիսի պայմաններում արցախահայությունը տարիներ շարունակ անհավասար գոյապայքար մղեց իր բնօրրան երկրի վրա ուժնձգություն կատարող թշնամիների դեմ: Հետագա համագումարներում ընդունած որոշումներով Արցախի հայությունը վերահաստատեց Հայաստանի Հանրապետությանը միանալու իր վճռականությունը: Աղրբեջանի ուժնձգությունների դեմ մղած համառ ու արյունալի պայքարից հետո՝ 1920 թ. ապրիլի 25-ին Վարանդայի թաղավարդ գյուղում հրավիրված Արցախահայության 9-րդ

<sup>15</sup>Տե՛ս Հարությունյան Հ. Մ., Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թթ., Եր., 1996, էջ 24–25:

<sup>16</sup>Տե՛ս Գլուխյան Գ. Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Եր., 1999, էջ 65–84:

համագումարը երկրամասը հոչակեց << մաս<sup>17</sup>: Այդ երկու տարիներին Արցախը «հայոց նորագույն պետականության կերտման գլխավոր կենտրոններից» մեկն էր<sup>18</sup>:

1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումից անմիջապես հետո Արցախի գլխին կրկին կախվեց Ադրբեջանի իշխանությանը Ենթարկվելու վտանգը: Ըստ Հ. Հարությունյանի, մայիսի 3-ին Ղարաբաղի ժամանակավոր կառավարությունը քննարկեց Ղարաբաղի և Զանգեզուրի փոխհարաբերության հարցը, որը երկուստեր մեղադրանքի առարկա էր դարձել: Ղարաբաղցիները զանգեզուրցիներին անհիմ մեղադրում էին պասխվության մեջ, իսկ զանգեզուրցիները՝ դարաբաղցիներին՝ դավաճանության մեջ: Հարցի համակողմանի քննարկումից հետո որոշվեց Ղարաբաղը Ենթարկել Զանգեզուրի նահանգապետությանը՝ հեռանկարով, որ այդ երկու երկրամասերը միասին կազմեին << անբաժան մասը: Սակայն Խորհրդային Ադրբեջանը, բոլշևիկյան գենքի օգնությամբ, ճախողեց այդ ծրագրի իրագործումը<sup>19</sup>:

1920–1922 թվականներին, երբ Խորհրդային Հայաստանը դեռևս հարաբերականորեն անկախ էր, Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը, Ուտիքը, Ջավախքը, Կարսի մարզը, Սուրմալուի գավառը և այլ հայկական տարածքներ, ցավոք, դուրս էին նրա սահմաններից: Դրանցից գոնե Լեռնային Ղարաբաղին 1923 թ. հովհանի 7-ին Ադրբեջանի կազմում տրվեց ինքնավար մարզային կարգավիճակ, երբ կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը

<sup>17</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Հարությունյան Հ. Մ., նշվ. աշխ., 299 էջ, Աբրահամյան Հ. Բ., Մարտնչող Արցախը 1917–2000, գիրը Ա, 1917–1923, Եր., 2003, 338 էջ:

<sup>18</sup> Մելքոնյան Ա. Ա., Արցախը հայոց պետականության պատմության հոլովականությունը, էջ 357:

<sup>19</sup> Տե՛ս Հարությունյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 236–237:

(ԼՂԻՄ)<sup>20</sup>: Ա. Մելքոնյանի գնահատմամբ, վերջինս թեև խիստ սահմանափակ ինքնավարության ծև էր, այնուամենայնիվ, դրա շնորհիվ երկրամասի հայերը կարողացան պայքարել Աղրբեջանի ազգայնամոլ քաղաքականության դեմ և մինչև 1988 թ. պահպանել երկրամասի ընդիանուր հայկական դիմագիծը<sup>21</sup>: Այս առիթով պատմաբանը նաև ուշագրավ համեմատություն է անցկացնում Աղրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղին տրված ինքնավար մարզի և Նախիջևանին տրված ինքնավար հանրապետության իրավական կարգավիճակների միջև՝ իրավացիորեն հարց հնչեցնելով, թե «ո՞ւմ համար էր Ղարաբաղից ավելի բարձր, ինքնավար՝ հանրապետական կարգավիճակը, երբ հայերն այնտեղ 1905–1906, 1918 և 1920 թվականների կոտորածներից հետո դարձել էին փոքրամասնություն: Ստացվում էր, որ Աղրբեջանի կազմում կովկասյան թաթարները (Ներկայիս ադրբեջանցիները) ստանում էին ինքնավարություն «իրենց» իսկ հանրապետության մեջ»<sup>22</sup>:

Խորհրդային իշխանության հետագա տարիներին Աղրբեջանի կողմից արցախահայությունը ենթարկվեց անասելի ճնշման ու հալածանքների: Խորհրդային ամբողջատիրության պայմաններում նա չընկճվեց ու գլուխ չխոնարհեց: Ավելին, առիթը եղած դեպքերում բարձրացրեց Ղարաբաղի հիմնահարցը: Դրա լուծման համար 1940-ական թվականներից աշխուժացում ապրող շարժումը նոր ուժով բորբոքվեց 1960–70-ական թվականներին և ժայթքեց

<sup>20</sup>Տե՛ս Ղազախեցյան Վ. Ն., Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, «Հայոց պատմություն», հ. 4, գիրք 1: Նորագոյն ժամանակաշրջան (1918–1945 թթ.), պատ. խմբ. Վ. Ղազախեցյան, Եր., 2010, էջ 353–362:

<sup>21</sup>Տե՛ս Մելքոնյան Ա. Ա., Արցախը հայոց պետականության պատմության հեղուկություն, էջ 359, Ուղուաբյան Բ. Ա., Արցախյան գոյապայքարը, հ. Ա, Եր., 1993, էջ 196–276, իսկ շարժման ժամանակագրությունը տե՛ս Տօմասյան Ալեքսանդր. Խրոնիկա լիհուածք, 1988–1998. Եր., 2017, 520 ս.

<sup>22</sup>Նույն տեղում:

1980-ական թվականների վերջերին: Աղբեջանի հշխանությունները, Կենտրոնի աջակցությամբ, ձեռնամուխ եղանքոնի ուժով Լեռնային Ղարաբաղի վերջնական հայթափմանը: Արցախահայությունը զենք վերցրեց պաշտպանելու իր հայրենիքը: 1991 թ. գարնան և ամռան ամիսներին մարզում հայ-ադրբեջանական ազգամիջյան պատերազմ սկսվեց, որը շարունակաբար ծավալվեց ու խորացավ: Այդ կրիվներից 1991 թ. սեպտեմբերի 2-ին ծնվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ կազմելով նորագոյն ժամանակաշրջանում հայոց պետականության երրորդ՝ անկախության ենթափովի թերևս ամենակարևոր հաղթանակը<sup>23</sup>: Այն, որ հայ ժողովորդի արցախյան հատվածը զինված ազատագրական պայքարին զուգահեռ կարողացավ գործող միջազգային իրավունքի նորմերին համապատասխան ձևակերպել դրա նպատակը, վերահստատում է նախընթաց պատմափովերում Արցախում կուտակված պետականաշինության փորձի մասին: Ավելին, տեղի ունեցածն աննախադեպ է նորագոյն պատմության մեջ, քանի որ հայ ժողովորդի՝ հարկադրաբար միմյանցից անջատված երկու հատվածներն ազատագրական պայքարի արդյունքում, պաշտպանելով ինքնորոշման իրենց իրավունքը, հոչակեցին անկախություն՝ ազդարարելով երկու հայկական անկախ պետությունների առաջացումն արդի աշխարհի քաղաքական քարտեզի վրա: Եվ մինչ 1990-

<sup>23</sup> ԼՂՀ հոչակման և 1988 թ. նոր փով թևակոխած ու դեպի անկախություն տանող ազատագրական պայքարի մասին տե՛ս Ուլութաբյան Բ. Ա., Արցախի պատմությունը սկզբից մինչեւ մեր օրերը, 822 էջ, Արքահամյան Հ. Բ., Արցախյան գոյամարտ, Եր., 1991, 174 էջ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991 թ. օգոստոս – 1992 թ. հունվար): Փաստաթղթեր: Կազմող՝ Հ. Բ. Արքահամյան, Եր., 2011, 196 էջ, Աղաբարյան Ա. Ս., Ղարիբյան Ա. Ա., Արցախ, Եր., 2014, 160 էջ, Տունյան Վ. Գ. Կարաбахский конфликт: историко-геополитический аспект. Ер., 1999, 99 с.; Нагорно-Карабахская республика. Путь к вершинам. Степанакерт, 2001, 248 с.; Товмасян Александр, նշվ. աշխ.:

ական թվականների երկրորդ կեսին << դիվանագիտությունը՝ երկչու ու զգուշավոր, ճշգրտում էր Արցախի հարցում փոխգիշումների սկզբունքային մոտեցման շրջանակները, իայ պատմաբանները համարձակորեն պաշտպանեցին ու զարգացրին հիմնահարցի վերաբերյալ իրենց թեզերը՝ խարսխված աղբբեջանական տիրապետությունից Լեռնային Ղարաբաղի ազատագրման, անկախության և մոտ ապագայում հայկական երկու պետականությունների վերամիավորման գաղափարների վրա: Հրանտ Աբրահամյանի գնահատմամբ, ԼՂՀ ստեղծումով արցախահայության ազգային-ազատագրական պայքարը թևակոխեց պատմական նոր փուլ: Իրական անկախության ճանապարհին ԼՂՀ ստեղծումն ամենավճորորշ և գործնական քայլն էր: Դրան հաջորդեցին իրավական, քաղաքական, ռազմական և դիվանագիտական ինքնահաստատման գործողություններ: Անդրադառնալով այն փաստին, որ << Գերագույն խորհուրդը դեմ չէր ԼՂՀ ստեղծմանը և հայտարարեց, թե արցախցիները գտել են հարցի լուծման բանալին՝ <. Աբրահամյանը կարևորում է լրագրող Վահրամ Աղաջանյանի կողմից հնչեցված հետևյալ տեսակետը. «Ազատագրական շարժման չորրորդ տարում թույլ տրվեց կոպտագույն, ամենամեծ թերևս, ստրատեգիական սխալը. 1991-ին հոչակվեց ԼՂՀ անկախությունը: Ըստ Էռլեյան, տեղի ունեցավ գիտակցված, թե չգիտակցված շեղում սկզբնական նպատակներից՝ այստեղից բխող ողբերգական բոլոր հետևանքներով», և «դա, վնասից բացի, ոչինչ չտվեց մեր ժողովրդին, և նախատեսված էր միայն թերարժեքության բարդույթով տառապողների համար»: Ըստ <. Աբրահամյանի, մտածելու տեղիք է տալիս Վ. Աղաջանյանի նաև այն միտքը, «թե ԼՂՀ անվտանգության ամենավտանգավոր հետևանքը ներազգային պառակտվածության սերմանումն է՝ «հայաստանցի-դարաբաղցի», ըստ երևույթին, դրսից

ներմուծված կործանարար բանաձևով»<sup>24</sup>: Պատահական չէ, որ Արցախի անվտանգության շահից ելնելով՝ պատմաբանը կարևորում է նորանկախ ԼՂՀ տարածքում նախկին ԽՍՀՄ գինված ուժերի ներկայության պահպանումը, որպես Ադրբեյջանի ու Հայաստանի միջև հնարավոր պատերազմը կասեցնող գործոն: Այնուհետև անդրադառնալով 1994 թ. փետրվարի 8-ին ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի որոշմանը Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքերում Հայաստանի, Ադրբեյջանի և ԼՂ խորհրդարանների նախագահների հանդիպում կազմակերպելու, մայիսի 4-ին Բիշքեքում սկսված ԱՊՀ միջխորհրդարանային համաժողովին, որտեղ ԼՂՀ-ն ներկայացնում էր Գև Նախագահի պաշտոնակատար Կարեն Բաբուրյանը, վերջինիս կողմից մայիսի 5-ին «Բիշքեքի արձանագրության» ստորագրմանը, մայիսի 16-ին Մոսկվայում ՌԴ պաշտպանության նախարար Պավել Գրաչովի հետ Ադրբեյջանի ու Հայաստանի պաշտպանության նախարարների հանդիպմանը և դրա ընթացքում հայ-ադրբեյջանական հրադադարի պայմանների քննարկմանը ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի գլխավոր հրամանատար Սամվել Բաբյանի մասնակցությանը՝ Հ. Աբրահամյանը նշում է, որ այդ փաստերը վկայում էին ԼՂՀ անկախ իրավական կարգավիճակի նկատմամբ ՌԴ հարգանքի և ՌԴ ու Ադրբեյջանի կողմից հայկական այդ պետությունը բանակցությունների լիիրավ կողմ ճանաչելու մասին<sup>25</sup>: Մեզնից երեսուն տարի և անասելի կորուստներ պահանջվեցին հասկանալու, որ դա հիմք էր 1994 թ. Ադրբեյջանի հետ ոչ թե գինադադար կնքելու, այլ նրան հաշտության պայմանագիր պարտադրելու համար, ինչին, առանց ժամանակ կորցնելու, պետք է հետևեր Հայաստանի

<sup>24</sup> Աբրահամյան Հ. Բ., Մարտնչող Արցախը, 1917–2000, գիրք 4 (1985–2000), Եր., 2007, էջ 307:

<sup>25</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 527-528:

և Հեռնային Ղարաբաղի Հանրապետությունների միավոր-ման իրավաքաղաքական գործընթացը<sup>26</sup>:

ՀՂ անցյալ և նախորդ տարիների կենաց ու մահու մարտերն իրենց համազգային պողոթկումով վկայում են ոչ միայն հայ ժողովորդի աներեր կամքի, այլև հանուն հաղթանակի պայքարելու նրա վճռականության մասին: Բայց, ցավոք, այդ միասնությունը միշտ չէ, որ գիտակցվել է: Բացարձակ միաբանություն է հարկավոր Ղարաբաղի և պատմական Հայաստանի մյուս կորույալ տարածքների նկատմամբ հայ ժողովորդի օրինական իրավունքների պաշտպանության համար պայքարում: Իսկ որ այդ հիմնահարցի լուծումն Արցախից է սկսվում, տարակուսանք չի առաջացնում: Ուրեմն, ազգովի ականջալուր լինենք Արցախի հայրենասեր զավակներից Դավիթ Անանունի մարդարեական խոսքին. «Ղարաբաղն ամբողջական Հայաստանից դուրս՝ դա խոց է, որ նախ և առաջ գերեզման պիտի իջեցնի անկախ Աղբբեջանի գաղափարը: Բայց միաժամանակ նա պիտի թունավորե և Հայաստանի անդրբությունը: Եթե Աղբբեջանում խելքը գիշին քաղաքագետներ լինեն, նրանք ամենից առաջ պիտի հրաժարվեն Ղարաբաղից: Եթե Հայաստանում հայրենիքի հավաքման համոզիչ գործիչներ կան, նրանք օրն ի բուն պիտի մտածեն Ղարաբաղի մասին»<sup>27</sup>:

Այսպիսով, Արցախի պատմության վերաբերյալ պատմագիտական ուսումնասիրությունները վկայում են, որ երկրամասը մշտապես ունեցել է իր ծանրակշիռ տեղը հայոց պետականության պատմության մեջ՝ նպաստելով նրա

<sup>26</sup> Արցախում հայկական պետականության բացթողումների, սխալների, այն պահպանելու և ամրապնդելու սկզբունքների ու նախադրյաների մասին մանրամասն տես Արքահամյան Հ. Բ., Մարտ՝ կրակագիր մատուցներում (Էջեր «Արցախ» հայրենակցականի քսանամյա պատմությունից), Եր., 2008, 304 էջ:

<sup>27</sup> Քաղվածքն ըստ Հարությունյան Հ. Մ., նշվ. աշխ., էջ 298:

ընդհանուր շղթայի անընդհատությանը: Իսկ իհմնահարցի վերաբերյալ պատմաբանների գիտագործնական եզրահանգումը հետևյալն է. Եթե կամենում ենք անվտանգ ու զորեղ լինել, ապա պետք է պաշտպան ու տեր կանգնենք Արցախին: Բնավ չվիճարկելով հայկական անկախ պետականության՝ բարձրագույն արժեք լինելու հանգամանքը՝ հարկ է նաև նշել, որ անկախ իր դրսնորման ծևից, ազգային պետականությունն իրացվում է որոշակի տարածքի վրա, հետևաբար, համազգային նպատակների օրակարգը սահմանելիս հարկ է, որ առաջնայնությունը տրվի հայրենի տարածքների միասնությունն ապահովելու կարևորությանը:

## LILIT HOVHANNISYAN

Senior Researcher at the IH, NAS RA,  
Candidate of Historical Sciences, Associate Professor  
[lilithovannisian@yahoo.com](mailto:lilithovannisian@yahoo.com); [lilit.hovhannisyan@isec.am](mailto:lilit.hovhannisyan@isec.am)

### THE ELUCIDATION OF THE HISTORY OF ARTSAKH'S STATEHOOD IN HISTORICAL SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA, 1991-2021

#### SUMMARY

**Keywords:** Artsakh, Shushi, Armenian highlands, melikdoms of Artsakh, Nakhichevan, Zangezur, Azerbaijan, Nagorno-Karabakh Autonomous Region (NKAR), Nagorno-Karabakh Republic (NKR), Aranshaiks, statehood, independence, right to self-determination, Bishkek Agreement.

For the last thirty years the independent states of Armenia and Artsakh, also the Armenian statehood in general, with all its components: economy, public administration system, nationwide structures army, culture, national-state ideology, are going through a severe ordeal, the core of which is the national struggle for the preservation and strengthening of the Armenian independent statehood and national originality restored in 1991. The Azerbaijani-Turkish aggression against the Artsakh in September-November, 2020, was the last and destructive manifestation of that ordeal. As a result of it the 75 % of Artsakh Republic's territory is occupied by Azerbaijan, and the existence of the whole Armenia and Armenian people now is endangered. Due to these realities, all spheres of Armenian national-state life, including science and, in particular, historiography, are facing new and difficult problems. Many issues of Armenology still need serious research and revision, especially that some of them are of great scientific and political significance in the conditions of unprecedented Turkish-Azerbaijani distortions of Armenian history, touching on the sphere of national security. The multilayered issue of the history of Armenian statehood and Artsakh being an integral part of it, is among them. Historians A. Melkonyan, G. Galoyan, V. Ghazakhetsyan, H. Abrahamyan, H. Harutyunyan, B.

Ulubabyan, V. Tunyan, V. Balayan, A. Maghalyan, A. Tovmasyan, A. Aghababyan and A. Gharibyan reaffirm that since ancient times the Artsakh land has been involved in the economic, military-political and ethno-cultural processes taking place in the Armenian Highlands and has become a part of an all-Armenian independent state. Moreover, during the period of its weakening and interruption, the semi-independent and independent authorities of Artsakh continued to preserve the traditions of the Armenian statehood and the hope of its restoration.

**ЛИЛИТ ОГАНИСЯН**

Старший научный сотрудник ИИ НАН РА,  
кандидат исторических наук, доцент  
[lilithovannisian@yahoo.com](mailto:lilithovannisian@yahoo.com); [lilit.hovhannisyan@isec.am](mailto:lilit.hovhannisyan@isec.am)

## **ОСВЕЩЕНИЕ ИСТОРИИ ГОСУДАРСТВЕННОСТИ АРЦАХА В ИСТОРИЧЕСКОЙ НАУКЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В 1991-2021гг.**

### **РЕЗЮМЕ**

**Ключевые слова:** Арцах, Шуши, Армянское нагорье, меликства Арцаха, Нахичеван, Зангезур, Азербайджан, Нагорно-Карабахская автономная область (НКАО), Нагорно-Карабахская Республика (НКР), Араншаки, государственность, независимость, право на самоопределение, Бишкекское соглашение.

В течение последних тридцати лет независимые государства Армения и Арцах, также армянская государственность в целом, со всеми своими составляющими - экономика, система государственного управления, общенациональные структуры, армия, культура, национально-государственная идеология, проходят через тяжелое испытание, осью которого является общенациональная борьба во имя сохранения и укрепления восстановленных в 1991 г. армянской независимой государственности и национальной самобытности. Азербайджано-турецкая агрессия против Арцаха в сентябре-ноябре 2020 года стала последним и разрушительным проявлением этого испытания. В результате этого 75% территории Республики Арцах оккупировано Азербайджаном, а существование Армении и всего армянского народа под угрозой уничтожения. В силу этих реалий все сферы национально-государственной жизни Армении, в том числе наука и, в частности, историография сталкиваются с новыми сложными проблемами. Многие вопросы арменоведения все еще нуждаются в серьезном исследовании и пересмотре, тем более что некоторые из них имеют большое научное и политическое значение в условиях беспрецедентных турецко-

азербайджанских искажений истории Армении, затрагивающих сферу национальной безопасности. Среди них - многослойная проблема истории армянской государственности и Арцаха, как ее неотъемлемой части. Историки А. Мелконян, Г. Галоян, В. Казахециян, Г. Абрамян, Г. Арутюнян, Б. Улубабян, В. Тунян, В. Балаян, А. Магалян, А. Товмасян, А. Агабабян и А. Гарibян заново утверждают, что Арцахская земля издревле была вовлечена в экономические, военно-политические и этнокультурные процессы, происходящие на Армянском нагорье, и стала частью всеармянского независимого государства. Более того, в период его ослабления и прерывания полуавтономные и независимые княжества Арцаха продолжали сохранять традиции армянской государственности и надежду на ее восстановление.

## ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի

գիտաշխատող, պ.գ.թ.

amirjanyan.hasmik@rambler.ru

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԴԱՐԱԲԱՂԻ ԹԵՄԻ ԿՐԹԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄՆ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐՈՒՄ (1905-1917 թթ.)<sup>1</sup>

**Հիմնաբառեր՝** դպրոց, հոգևոր թեմ, եկեղեցի, ցարական կառավարություն, Ամենայն Հայոց կաթողիկոս, «Արարատ» ամսագիր, Ղարաբաղի թեմ, կրթություն:

Արցախն իր կրթամշակութային կյանքի բազմաբնույթ ու հարուստ դրսանորումներով դարեր ի վեր եղել է հայ մշակույթի անբաժանելի ու ազգապահպան մասը: Տարածքում ազգի գոյատևման, տեղում հայկական տարրի մշտական առկայության իրեղեն չափանիշներից ու գրավականներից մեկը դպրոցական կյանքի գոյությունն էր, դրա հետագա ընդլայնումն ու զարգացումը:

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի Կայսրությանը միանալուց հետո (1828 թ.) Երևանի գիտամշակութային կյանքի զարգացման համար ստեղծվեցին նոր պայմաններ: XIX դ. Երևորդ կեսին բացվեցին ծխական, թեմական, իգական, երկսեռ և այլ բնույթի դպրոցներ Հայաստանի տարրեր վայրերում, այդ թվում՝ Արցախում: Արցախի հոգևոր-մշակութային կյանքն առավել աշխուժացավ, երբ 1836 թ. «Կանոնադրությամբ» նախատեսվեց Ղարաբաղի թեմի Շուշի քաղա-

<sup>1</sup> Հոդվածը ժամանակագրորեն ընդգրկում է հայ կրթական կյանքի համար բախտորոշ մի ժամանակաշրջան՝ ցարական կառավարության կողմից հայկական դպրոցների վերաբացումից սկսած մինչև 1917 թ.: Ուսումնամիջության նյութը եղափակվում է 1917 թվականով, քանի որ «Արարատ» ամսագիրը հրատարակվել է 1868-1917 թթ. ընկած ժամանակահատվածում:

քում հիմնադրել թեմական դպրոց<sup>2</sup>: Դպրոցի բացումը տեղի ունեցավ 1838 թ. հունիսի 22-ին: 1860-1870-ական թթ. թեմում գործել է 30 ծխական դպրոց: Այդ տարիներին Շուշիում հիմնվել են միջնակարգ, ոռոսական յոթնամյա արական դպրոցներ, ոռոսական օրիորդաց յոթնամյա պրոգիմնազիա, Մարիամ Ղուկասյան հայոց օրիորդաց միջնակարգ դպրոցը (1864), Շուշիի ռեալական ուսումնարանը (1881):

Սակայն դպրոցական կյանքի զարգացման ճանապարհին հետագայում բազմաթիվ խոչընդոտներ ի հայտ եկան: Հայտնի է, որ 1903 թ. Նիկոլայ Երկրորդ ցարի (1894-1917) կողմից ընդունվել է հայկական Եկեղեցական գոյքի բռնագրավման օրենքը, փակվել են հայկական դպրոցները<sup>3</sup>: Որոշմանը համահունչ, 1903 թ. դեկտեմբերի 10-ին Շուշիի հոգևոր առաջնորդը ստանում է Էջմիածնի Սինոդի հրամանը<sup>4</sup>:

1905 թ. հունիսի 22-ին Թիֆլիս է ուղևորվում Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խորիմյանը (1893-1907)<sup>5</sup> այցե-

<sup>2</sup> 1836 թ. մարտի 11-ին ցարական կառավարության կողմից հրապարակված Եկեղեցական կանոնադրությամբ («Պոլոտենի») սահմանվում էին հայ Եկեղեցու վարչական իրավունքներն ու պարտականությունները, Եկեղեցու և կառավարության փոխհարաբերությունները:

<sup>3</sup> Մինչ այդ, 1884 թ. Քետրվարի 16-ին Ալեքսանդր Երրորդ ցարը (1881-1894) հաստատել էր «Հայ լուսավորչական Եկեղեցական ուսումնարանների մասին կանոնները», համաձայն որոնց բացառվում էր տարրականից բարձր հայկական դպրոցների գոյությունը: Երկու տարի անց՝ 1886 թ. հունվար 16-ին, ցարը հաստատեց Եղովակացություն, որի հիման վրա Սր. Էջմիածնի Սինոդը մշակեց նոր կանոնակարգ և վերստին բացվեցին հայկական դպրոցները: 1899 թ. օգոստոսին Շուշիի թեմական դպրոցի տեսուչ Տիրայր վարդապետն Էջմիածնի Սինոդին ներկայացրած զեկուցագրում նշում է, որ Արցախի թեմում փակել են հայկական դպրոցների մեծ մասը (25-ից ավելի), տեղական իշխանությունները բռնագրավել են դպրոցական գոյքը: Տե՛ս Բալայան Վ., Արցախը որպես առաջադեմ գաղափարների ծևավորման և տարածման կենտրոն (XIX դ. Երկրորդ կես - XX դ. սկիզբ), «Բանքեր Մատենադարանի», հ. 29, Եր., 2020, էջ 333:

<sup>4</sup> Տե՛ս Լեռ, Պատմութին Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի (1838-1913), Թիֆլիս, 1914, էջ 578:

լելու Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովին (1905-1915)<sup>5</sup> Եկեղեցական կալվածքների վերադարձի և դպրոցների վերաբացման հարցով խորհրդակցելու նպատակով<sup>6</sup>: Դրան հաջորդում է 1905 թ. հունիսի 28-ին Ղարաբաղի թեմի առաջնորդ Աշոտ Եպիսկոպոս Շախյանի պաշտոնական այցը Շուշիից Թիֆլիս՝ Կովկասի փոխարքային: Այն նպատակ էր հետապնդում Ղարաբաղի հայկական դպրոցների վերաբացման խնդրի մասին խորհրդակցելու փոխարքայի հետ: Վերջինս հարցի վերաբերյալ դրական պատասխան է տալիս<sup>6</sup>:

Ի վերջո, համաժողովրդական բուոն պայքարի և Ռուսաստանում սկսված հեղափոխության (1905-1907) ազդեցությամբ 1905 թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ Երկրորդը, ստիպված, ստորագրում է Հայ Եկեղեցու գույքի վերադարձի և հայկական դպրոցների վերաբացման մասին որոշումը: Որոշումը խթան է հանդիսանում XIX դ. սկզբին Ղարաբաղի թեմում փակված դպրոցների վերաբացման, ինչպես նաև նորերի ստեղծման համար:

Այս ժամանակաշրջանի Ղարաբաղի թեմի դպրոցական կյանքի վերաբերյալ, որը համեմատաբար քիչ է ուսումնասիրված, արժեքավոր են «Արարատ» ամսագրում տեղ գտած նյութերը: Դրանք տեղեկություններ են հաղորդում գործող դպրոցների քանակի, սոցիալ-տնտեսական դրույթյան, դրամական միջոցների հայթայթման, հանգամանքների բերումով փակված դպրոցների վերաբացման, անհրաժեշտ տարածքներում նորերի կառուցման և այլնի վերաբերյալ: Սույն նյութերը հիմնականում ընդգրկված են «Նորին Սրբութիւն Ազգիս Վեհափառ Հայրապետի տնօրինութիւններից» (ընդգրկում են կաթողիկոսի կոնդակներ), «Քաղվածքներ Սինոդի օրագրերից», «Հայրապետական օրինություն և

<sup>5</sup>Տե՛ս «Արարատ», Ար. Էջմիածին, 1905, հովիս-օգոստոս, Է-Ը, էջ 605:

<sup>6</sup>Տե՛ս նույն տեղում, էջ 605-606, Լեռ, նշվ. աշխ., էջ 584:

գոհունակություն», «Մանր լուրեր» և այլ բաժիններում: Կարևորություն են ներկայացնում դպրոցների վերաբերյալ վիճակագրական տեղեկությունները:

Հայրապետական կոնդակներով, ի թիվս մյուս թեմերի, պարբերաբար հաշվետվություն էր պահանջվում նաև Ղարաբաղի թեմի ծխական դպրոցների, հոգաբարձուների<sup>7</sup>, ուսուցիչների թվաքանակի մասին<sup>8</sup>: Այսպես, ներկայացված հաշվետվություններից տեղեկանում ենք, որ 1906 թ. բացվել է 23 ծխական դպրոց, որոնցից 8-ը՝ Երկդասյա: Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձուների տեղեկագրից երևում է, որ 1908 թ. հունվարի 1-ի դրությամբ Ղարաբաղի թեմում գործել է 57 դպրոց՝ 2714 աշակերտներով և 1086 աշակերտուիհներով (ընդ՝ 3800 աշակերտ): 1908 թ. մարտի 30-ին Թիֆլիսում կայացած հայոց Ազգագրական Ընկերության ժողովում որոշվում է գրադարաններ բացել նաև Շուշիում<sup>10</sup>:

Ըստ Մատթեոս Բ Իզմիրյան (1908-1910) կաթողիկոսի հիվանդառության օրոք Ղարաբաղի թեմի Եկեղեցական-ծխական դպրոցների հոգաբարձուների անունով տրված ապրիլի 1 թվակիր կոնդակի՝ 1910 թ. դրությամբ թեմն ուներ 74 դպրոց<sup>11</sup>:

Էջմիածնի Սինոդի ուշադրության կենտրոնում էր հատկապես թեմի տարբեր վայրերում նոր ծխական դպրոցների բացումը: Սինոդի Դիվանի հունիսի 19-ի թիվ 1912 գրությամբ հանձնարարվում է. «Ղարաբաղի թեմի ժամանակաւոր կառավարիչ Տ. Զաւէն վարդապետին այս ամառ այցելել թեմը և հոգ տանել բանալ փակուած ծխական

<sup>7</sup> 1861 թ. հաստատվել էր Շուշիի թեմական դպրոցի կանոնադրությունը, որով դպրոցն ունեցավ ընտրովի հոգաբարձություն:

<sup>8</sup> Տե՛ս «Արարատ», 1907, փետրվար, Բ, էջ 106:

<sup>9</sup> Նոյն տեղում, 1908, հոկտեմբեր, Ժ, էջ 947:

<sup>10</sup> Նոյն տեղում, ապրիլ, Ղ, էջ 434:

<sup>11</sup> Նոյն տեղում, 1910, ապրիլ, Ղ, էջ 299:

դպրոցները, այլ և նորերը բանալ այն գիւղերում, որոնց հասարակությինները զուրկ են դպրոցից և շրջագայութեան մասին մանրամասն զեկուցում ներկայացնել Նորին Սրբութեան»<sup>12</sup>:

Դարասկզբին բացված դպրոցներից նշանավոր էր «Մարիամ-Ղուկասյան» հգական դպրոցը: Դպրոցի բացման առիթով հայտնի է Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ Տ. Զավեն Վարդապետին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի (1911-1930) կողմից հունիսի 20-ին հղված թիվ 933 կոնդակը՝ տրված մեծահարուստ Պողոս, Արշակ, Հակոբ և Աբրահամ Ղուկասյանների անունով: Վերջիններիս թույլատրվում էր ըստ իրենց դիմումի՝ իրենց քրոջ հիշատակը հավերժացնելու համար Շուշիում հիմնել «Մարիամ-Ղուկասեան» օրիորդաց դպրոց<sup>13</sup>: Կաթողիկոսական հաջորդ՝ հունիսի 22 թվակիր թիվ 957 կոնդակը՝ դարձյալ Ղուկասյան Եղբայրների անունով, հաստատում է Շուշիում վերաբացվելիք «...Մարիամ-Ղուկասեան» դպրոցի կանոնները<sup>14</sup>:

1912 թ. ապրիլի 13-ին Սինոդի նիստում քննարկվում է Ղարաբաղի կոնսիստորիայի մարտի 30-ի թիվ 631 հայտարարությունը Վարդաշեն<sup>15</sup> գյուղի Եկեղեցու գավիթում ծխական դպրոց<sup>16</sup> կառուցելու մասին: Այն պետք է բացվեր

<sup>12</sup> Նոյն տեղում, 1914, հուլիս, Է, էջ 583:

<sup>13</sup> Նոյն տեղում, 1913, օգոստոս-սեպտեմբեր, Ը-Թ, էջ 685:

<sup>14</sup> Նոյն տեղում, 1913, օգոստոս-սեպտեմբեր, Ը-Թ, էջ 685-686:

<sup>15</sup> Վարդաշեն (Միքաղեկ, ներկայում՝ Շեհրիար)՝ նախկինում հայկական գյուղ ներկայիս Աղբեջանի Հանրապետությունում: 1988 թ. հայ բնակչությունը բռնագաղթի ենթարկվեց:

<sup>16</sup> Ըստ Ս. Կարապետյանի ուսումնասիրությունների՝ Վարդաշենում գյուղացին ունեցած հայկական դպրոցի հիմնադրման վերաբերյալ տեղեկություններ չկան: Փաստաթթերը տեղեկություն են հաղորդում 1906 թ. վերաբացված դպրոցի մասին, որը փակվել էր 1895 թ.: 1906-1907 թթ. այն գործել է որպես միհայս ծխական դպրոց՝ Ար. Գարբիել Եկեղեցուն կից: Երբեմն փակվելով՝ գյուղատեղի է մինչև 1909 թ.: Տե՛ս Կարապետյան Ս. Սևերին Արզաք. Մ., 2018, ս.

Թիֆլիսում բնակվող գեներալ-մայոր Ստեփան Սիլիկյանի ծախսով: Սինոդի եզրակացությունը Ս. Սիլիկյանին թույլատրում է գյուղի Եկեղեցու բակում կառուցել շինություն իր ներկայացրած հատակագծին համապատասխան, որը ծառայեր որպես ծխական-Եկեղեցական դպրոց կամ Եկեղեցու հարակից կառուց՝ ըստ տեղի հոգևոր իշխանության հայեցողության: Ըստ այդմ Ղարաբաղի հայոց կոնսիստորիային հրաման է հիվում հիշյալ շինությունը համարել Վարդաշեն գյուղի Եկեղեցու սեփականություն<sup>17</sup>:

Ղարաբաղի թեմի Նուխու փոխանորդության Սովթան-Նուխի<sup>18</sup> գյուղի ծխական հոգաբարձության անունով փետրվարի 15-ին տրված թիվ 235 կոնդակով արտոնվում է տեղի Եկեղեցու բակում բացել հայոց ծխական դպրոց<sup>19</sup>:

Նմանատիպ կոնդակ է հիվում (հոկտեմբերի 24-ին) թեմի կառավարիչ S. Վահան Եախսկոպոսի անունով, որով վերջինիս արտոնվում է Սպիտակաշեն<sup>20</sup> գյուղում բացել հոգևոր-ծխական դպրոց<sup>21</sup>:

«Կօնդակ Ղարաբաղի թեմի կառավարիչ S. Վահան Եախսկոպոսի անունով, որով արտոնեց բանալ Վարանդայի շրջանի Միրիշանլու<sup>22</sup> գիլում ծխական դպրոց» վերտառությամբ օգոստոսի 23-ի թիվ 1433 հրահանգը դարձյալ

478. Վերը նշված Սինոդի հայտարարությունը հավանաբար վերաբերում է դպրոցի վերաբացմանը, իսկ հիշատակված Եկեղեցին, որին կից պետք է գործեր, կառող էր լինել Սր. Գարիիկ Եկեղեցին:

<sup>17</sup> «Արարատ», 1912, մայիս-հունիս, Ե-Զ, էջ 393-394:

<sup>18</sup>Գյուղ պատմական Կապաղակ գավառում (գտնվում է ներկայիս Սլոբեչանի Կոտլաշեն քաղաքի մոտակայքում): Հետագայում գյուղում գործել է մեկ աղբեջանական դպրոց: Տե՛ս Ս. Կարապետյան, «Պատմական Հայաստանի Կապաղակ գավառի թթվախոս գյուղերը», Եր., 1988, էջ 52:

<sup>19</sup> «Արարատ», 1914, մարտ, Գ, էջ 201:

<sup>20</sup> Սպիտակաշեն՝ գյուղ Արցախի Հանրապետության Հադրութի շրջանում: Մտնում է Խծաբերդի համայնքի կազմի մեջ:

<sup>21</sup> «Արարատ», 1917, սեպտեմբեր-հեկտեմբեր, թ-ժԲ, էջ 685-686:

<sup>22</sup> Հետագայում Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղ:

նոր բացվելիք դպրոցի վերաբերյալ է<sup>23</sup>:

Ղարաբաղի թեմի կառավարչի անունով հունիսի 7-ին արտոնված թիւ 1016 կոնդակը թույլատրում է թեմի Աղբուլաղ<sup>24</sup>, Ախեցիք<sup>25</sup> և Նեմեթապատ<sup>26</sup> գիւղերում բացել հոգևոր-ծխական դպրոցներ: Կոնդակում շեշտադրվում է, որ դպրոցների բացումը տեղի է ունենում տեղի ժողովրդի ցանկությամբ և որոշմամբ<sup>27</sup>:

1914-1915 թթ. դրությամբ Ղարաբաղի թեմն ուներ 64 դպրոց<sup>28</sup>:

«Արարատի» էջերում տեղ գտած հոդվածները բազմիցս վկայում են դպրոցների ծանր սոցիալ-տնտեսական դրությունը: Սինոդը լսում է Ղարաբաղի թեմի հոգևոր դպրոցի հոգաբարձության 1907 թ. դիմումը, որով վերջինիս խնդրում էր վերաբարձնել 3571 ռ. 40 կոպ. դրամը, որը 1904 և 1905 թթ. ընթացքում թեմակալ առաջնորդներն ուղարկել էին Մ. Աթոռ. «...ի նկատ առեալ մեր տնտեսական անձուկ վիճակը թեմական դպրանցին Շուշոյ առաջադրեմք Սինոդի Ս. Էջմիածնի դարձուցանել դրամը ըստ խնդրոց լիազորաց հոգաբարձությանն»: Սինոդի որոշման արդյունքում խնդրանքը բավարարվում է<sup>29</sup>. Բացի այդ, Սինոդը փորձում է կողմնակի միջոցներով լրացնել թեմի դրամական կարիքները: Այսպես՝ «ի 29-ն օգոստ. Սինոդն հաստատելով եզրակացութիւն կոնսսիստորիային Ղարաբաղի, հրամայեց

<sup>23</sup> «Արարատ», 1917, սեպտեմբեր-հեկտեմբեր, թ-ժԲ, էջ 678:

<sup>24</sup>Գյուղ Թովուզի շրջանում, Ասրիկ գետի ծախս ափին, նշանավոր խորանաշատ վանքից 3 կմ հարավ-արևելք:

<sup>25</sup>Ախեցիկ՝ գյուղ պատմական Դիզակ գավառում:

<sup>26</sup>Նեմիթապատ, Նեմիթապատ կամ Հայի Նեմիթապատ՝ նախկինում հայաբնակ գյուղ Աղբեջանի Հանրապետության Աղբաշի շրջանում: 1988 թվականից սկսած հայաթափ է եղել:

<sup>27</sup>«Արարատ», 1917, հունիս-հուլիս, Զ-Է, էջ 423:

<sup>28</sup>Հայոց պատմություն, հ. III, գիրք Երկրորդ, Եր., 2015, էջ 156:

<sup>29</sup>Ըստ Լեռի, այդ գումարը ետ ստանալ չի հաջողվել: Տե՛ս Լեռ, նշվ. աշխ., էջ 586:

արկանել Հովհաննես քահանա Մարտիրոսյանի հինգ ռուբլի տուգանք հօգուտ թեմական դպրանոցի տեղի վասն կատարման նրա պսակ ...առանց թույլատրության»<sup>30</sup>:

Կաթողիկոսի տեղապահի 17 փետրվարի թիվ 2323 գրությունից տեղեկանում ենք, որ Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ S. Զավեն վարդապետին պատվիրվել է Ղարաբաղի թեմական դպրոցի 50-ամյա հոբեյանի առթիվ «ապահովել նրա գոյությունը» (հոգ տանել դպրոցի բարեկարգության համար - Հ. Ա.):

Հատկանշական է, որ 1913 թ. Ղարաբաղի հոգևոր թեմական դպրոցի 75-ամյակի կապակցությամբ ստեղծվել էր հոբեյանական հանձնաժողով, որի և հոգաբարձության անոնով հովիսի 22-ին կոնդակ է հղվում դպրոցի տարելիցի նշան առթիվ<sup>31</sup>:

«Նորին Սրբութիւն Ազգիս Վեհափառ Հայրապետի տնօրինութիւններից» հերթական բաժնում առկա է Դիվանի գրությունը Ղարաբաղի թեմական դպրոցի հոգաբարձության նախագահ S. Զավեն վարդապետի անոնով։ Գրությունը հոգաբարձության նախագահին հանձնարարում է հոգաբարձության անդամների հետ խորհրդակցել հայ երևելի Բաղդասար Արզումանյանի կողմից թեմական դպրանոցին նվիրաբերվելիք 200000 ռուբլին տնօրինելու հարցերի վերաբերյալ և արդյունքի մասին գեկուցել կաթողիկոսին<sup>32</sup>:

Նվիրաբերությունը նպատակին է ծառայել, ինչը վկայում է հաջորդ՝ 1913 թ. հովիսի 18-ի Հայրապետական օրինության և գոհունակության կոնդակը՝ գրված Ղարաբաղի թեմի հոգևոր դպրոցների հոգաբարձության և թեմի ժողո-

<sup>30</sup> «Արարատ», 1907, հոկտեմբեր, Ժ-ԺԱ, էջ 872:

<sup>31</sup> Նոյն տեղում, 1913, օգոստոս-սեպտեմբեր, Ը-Թ, էջ 688:

<sup>32</sup> Նոյն տեղում, 1912, սեպտեմբեր, Թ, էջ 771:

Վրդի անունից ու տրված բարեգործ Բ. Արզումանյանին<sup>33</sup>: Դրան հաջորդում է օրինության և գոհունակության կոնդակ՝ Բաղդասար Արզումանյանի անունով<sup>34</sup>: Կաթողիկոսի օրինության և գոհունակության կոնդակների շարքում է Միքայել Արամյանցի<sup>35</sup> անունով տրված գրությունը՝ Շուշիում գտնվող իր սեփական տունը Ղարաբաղի թեմական դպրոցի օգտին նվիրաբերելու վերաբերյալ<sup>36</sup>:

Կաթողիկոսի 1917 թ. նոյեմբերի 5-ի մակագրությամբ Սինոդին պատվիրվում է դպրոցական դրամագլխի տոկոսներից Ղարաբաղի թեմի 14 գյուղի աղքատ դպրոցներին տալ նպաստ՝ տարեկան 1900 ռուբլի<sup>37</sup>:

Սինոդի օրագրի 1913 թ. փետրվարի 12-ի քաղվածքից տեղեկանում ենք, որ Սինոդը քննարկել է Կովկասի փոխարքայի դիվանատան հոնվարի 28-ի թիվ 2828 գրությունը: Վերջինով հայտնի է դառնում, որ Ղարաբաղի թեմական դպրոցի հոգաբարձության նախագահ Զավեն Վարդապետի միջնորդությամբ փոխարքան թույլատրել է փոխարքայության սահմաններում հայ ազգաբնակչությունից ժողովել նվիրատվություններ: Սինոդը որոշում է մինչև սեպտեմբերի 1-ը, դպրոցի 75-ամյա հոբեյյանի առթիվ Ղարաբաղի թեմական դպրոցի օգտին կատարվելիք հանգանակության համար Ղարաբաղի թեմի կառավարչին տրամադրել հատուկ «ժապավենեալ մատեան»՝ փոխարքայի թիվ 2828 թույլատրության թղթի պատճենի հետ միասին: Նաև պատվիրվում է հանգանակությունից հետո մատյանն ուղարկել Սինոդին՝ «ի ստուգութիւն և ի տնօրինութիւն»<sup>38</sup>:

<sup>33</sup> Նոյն տեղում, 1913, օգոստոս-սեպտեմբեր, Ը-Թ, էջ 687:

<sup>34</sup> Նոյն տեղում, էջ 688:

<sup>35</sup> Միքայել Արամյանց (1843-1924), ծագումով արցախցի, թիֆլիսաբնակ հայ բարերար:

<sup>36</sup> «Արարատ», 1913, օգոստոս-սեպտեմբեր, Ը-Թ, էջ 688:

<sup>37</sup> Նոյն տեղում, 1917, հոնվար, 2-Է, էջ 6:

<sup>38</sup> Նոյն տեղում, 1913, ապրիլ, Դ, էջ 307:

1914 թ. «Մարիամ-Ղուկասեան» դպրոցին հատկացված Ղուկասյանների առանձնատանը կից կառուցվում է ևս 10 դասարան, որոնց շինարարության համար եղբայրները նվիրաբերում են 30000 ռուբլի, իսկ դպրոցի գործունեությունն ապահովելու տրամադրում են 200000 ռուբլի: Աշխատանքները սկսվում են նոյն թվականի փետրվարի 24-ին, իսկ մայիսի 20-ին Արցախի թեմի կառավարիչ Զավեն Վարդապետի գլխավորությամբ տեղի է ունենում հիմնօրինեքը:

Դպրոցների բարեկեցությունը մեծապես կախված էր դրանց կալվածքների եկամուտներից, որոնց վերաբերյալ թեմը պարբերաբար հաշվետվություններ է ներկայացրել կաթողիկոսին: Հայտնի է Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ S. Զավեն Վարդապետի կողմից 1912 թ. փետրվարի 17-ին Սինոդին ներկայացված թեմի կալվածքների դրության համառոտ տեղեկագիրը<sup>39</sup>:

Հետաքրքրություն են ներկայացնում «Պաշտօնական, նորին վեհափառութեան տնօրէնութիւններից» բաժնի դիվանի շրջաբերական գրությունները (27 հոկտեմբեր, 1916 թ.) Երևանի փոխթեմակալին, Վրաստանի, Շամախու և Աստրախանի թեմակալ առաջնորդներին, այդ թվում՝ Ղարաբաղի ժամանակավոր կառավարչին: Դրանցով կաթողիկոսի կարգադրությամբ հիշյալ տարածքների թեմակալ առաջնորդներին հրահանգվում է իրենց ենթակայությամբ գործող դպրոցական վարչություններին հրամանագրել՝ անշեղորեն առաջնորդվել ու դպրոցական կանոնակարգով, այդ թվում՝ աշակերտներին դասարանից դասարան փոխադրել քննությունների միջոցով: Նոյեմբերի 2-ին նմանօրինակ շրջաբերական գրությամբ Ղարաբաղի հայոց հոգևոր թեմական դպրանցների հոգաբարձուներին Լուսավորության նախարարի թիվ 8505 շրջաբերական գրության

<sup>39</sup> Նոյն տեղում, 1912, մարտ, Գ, էջ 196:

հիմքով Հայոց թեմական դպրոցն ավարտողներին թույլատրվում է հաճախել ոուսական համալսարաններ<sup>40</sup>:

Ետաքրքիր է, որ Կաթողիկոսական դիվանի շրջաբերական գրությամբ (ուղղված Երևանի, Վրաստանի, Շամախու և Ղարաբաղի հոգևոր առաջնորդներին) տրվել են նաև քաղաքական բնույթի հանձնարարականներ: Օրինակ՝ 1917 թ. հունիսի 7-ի թիվ 1014 շրջաբերականով Ղարաբաղի թեմի կառավարչին հանձնարարվել է հայթուրքական հարաբերությունները բարելավելու և երկու ազգությունների միջև խաղաղություն ու համերաշխություն հաստատելու նպատակով գիտակ և իրավիճակից տեղյակ անձանց հետ խորհրդակցություններ վարել: Պահանջվում է արդյունքների մասին գեկուցել կաթողիկոսին<sup>41</sup>:

Այսպիսով, «Արարատ» ամսագրում տեղ գտած նյութերը աղբյուրագիտական ու պատմագիտական արժեքավոր սկզբնաղբյուր են Ղարաբաղի թեմի դպրոցական կյանքի բազմաթիվ հարցերի ուսումնասիրման համար: Դրանք վկայում են, որ շնորհիվ դպրոցների վերաբացման վերաբերյալ ցարական հրահանգի, Արցախում ոչ միայն բացվեցին նախսկինում փակված դպրոցներն, այլև թեմի դեկավարությունը սկսեց մեծ աշխատանքներ տանել նոր դպրոցների բացման, դրանց բարեկարգման, ուսումնական գործընթացի բարելավման և այլ հարցերի ուղղությամբ: Հոդվածները փաստում են, որ թեմի դպրոցական կյանքը մշտապես գտնվել է տեղի հոգաբարձության և Էջմիածնի Սինոդի ուշադրության կենտրոնում:

Դպրոցական կյանքի աշխատմացումը մեծապես նպաստեց ամբողջ թեմի կրթամշակութային կյանքի առաջընթացին:

<sup>40</sup> Նոյն տեղում, 1917, սեպտեմբեր-դեկտեմբեր, թ-ժԲ, էջ 687:

<sup>41</sup> Նոյն տեղում, 1917, հունիս-հուլիս, Զ-Է, էջ 423:

**HASMIK AMIRJANYAN**

Researcher at the IH, NAS RA,

Candidate of Historical Sciences

amirjanyan.hasmik@rambler.ru

**REFLECTION OF THE EDUCATIONAL LIFE OF KARABAKH  
DIOCESE OF THE ARMENIAN CHURCH IN «ARARAT» MAGAZINE  
(1905-1917)**

**SUMMARY**

**Keywords:** school, spiritual diocese, church, tsarist government, Catholicos of All Armenians, the «Ararat» magazine, diocese of Karabakh, education.

In our scientific article, based on reliable materials published in the «Ararat» magazine, we presented the condition of the schools of the spiritual diocese of Karabakh (Artsakh) in 1905-1917 after the adoption of the law of June 12, 1903, on the seizure of the property of the Armenian church.

The article presents the activities of the Catholicoses of All Armenians, the Armenian Diocese of Karabakh, various sponsors, including the educational sphere and the construction of schools in Artsakh during 1905-1917, when the tsarist government reopened the Armenian national schools. In 1914-1915 their number reached several dozens. Due to the activation of school life, the cultural life of the Karabakh diocese has significantly expanded.

**АСМИК АМИРДЖАНЯН**  
Научный сотрудник ИИ НАН РА,  
к. и. н.  
[amirjanyan.hasmik@rambler.ru](mailto:amirjanyan.hasmik@rambler.ru)

**ОТОБРАЖЕНИЕ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ ЖИЗНИ КАРАБАХСКОЙ  
ЕПАРХИИ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ  
В ЖУРНАЛЕ «АРАРАТ» (1905-1917 ГГ.)**

**РЕЗЮМЕ**

**Ключевые слова:** школа, духовная епархия, церковь, царское правительство, Католикос Всех армян, журнал «Аарат», Карабахская епархия, образование.

В нашей научной статье на основе достоверных материалов, опубликованных в журнале «Аарат», мы представили состояние школ духовной епархии Карабаха (Арцах) в 1905-1917 гг. после принятия закона от 12-ого июня 1903 г. о захвате имущества армянской церкви.

В статье представлена деятельность Католикосов Всех армян, Карабахской армянской Епархии, разных спонсоров, охватывающая просветительно-образовательную сферу и строительство школ Арцаха в течение 1905-1917 гг., когда царское правительство вновь открыло армянские национальные школы. В 1914-1915 гг. их число достигло нескольких десятков. Благодаря активизации школьной жизни значительно расширилась культурная жизнь Карабахской епархии.

## ՍԼԱՎԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Պատմաբան, հուշարձանագետ  
Արցախ, Ստեփանակերտ  
slavasargsyan@mail.ru

### ԴՐՎԱԳՆԵՐ ՇՈՒՇԻԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

**Հիմնաբառեր՝** Շուշի, Արցախի մելիքություններ, ամրոց, գտածո, խաչքար, պեղումներ, սրբավայր, ձեռագրեր:

Սկսած խորհրդային ժամանակներից Ադրբեյջանի Հանրապետությունում շրջանառվում է այն հեքիաթախառն պատմությունը, ըստ որի՝ Շուշին ի սկզբանե եղել է ադրբեյջանական բնակավայր և որ այն հիմնադրել է Փանահ Խանը: Նա, իբր, կառուցել է ամրոց, դնելով դրա առաջին քարը, այնուհետև ստեղծել է քաղաք և իր անունով կոչել Փանահաբար: Այսօր էլ այդ գեղձարարությունները շրջանառվում են աշխարհի գիտական և քաղաքական հարթություններում: Այնինչ, Շուշին որպես բնակավայր կար, գոյություն ուներ, երբ ուն չէին ծնվել ոչ եկվոր Փանահ Խանը և ոչ էլ նրա պապերն ու ամբողջ քոչվոր ազգատոհմը: Շուշին ի սկզբանե ծևավորվել է որպես զուտ հայկական բնակավայր, ինչի մասին վկայում են ոչ միայն պատմական հավաստի վավերագրերը, այլև տեղում իրականացված պեղման-ուսումնասիրման աշխատանքների ժամանակ ի հայտ բերված բազմաթիվ գտածոները: Եվ որպեսզի մեր ասածները մերկապարանոց չթվան, խոսենք փաստերով:

Ամրոցակալ ժայռ-բարձրավանդակը, որտեղ տեղակայված է Շուշին, տարբեր ժամանակներում կրել է տարբեր անուններ: Առաջինը «Հան»-ն է (han), որի անունից ծագել է մերձակա «Հանոտ» (Hanot) բնակավայրի անվանումը<sup>1</sup>: Դա

<sup>1</sup> Սարգսյան Ս., Արցախի բնակավայրերը, Եր., 2018, էջ 20-22, 58-63:

Վերաբերում է նաև Ստեփանակերտ քաղաքի նախանվանը՝ «Հանիշեն»-ն (Hanishen), որ վերափոխվել-դարձել է «Խանքենդի» (Խանքենդի, Khankendi), իբրև Խանապատկան բնակավայր: Նկատի ունենալով վերջինիս շուրջ կատարվող շահարկումները՝ մանրամասն կանդրադառնանք նաև այդ գեղծարարությանը:

Վաղ ու զարգացած միջնադարում Շուշիի ժայռ-բարձրավանդակը կրել է նաև մեկ այլ անվանում՝ «Կարկառ», որի մասին առկա են պատմական ստույգ տվյալներ, մասնավորապես հայկական (Կիրակոս Գանձակեցի)<sup>2</sup> ու արաբական աղբյուրներում (Իբն Խորդադեհ, Իբն ալ Ֆակիհ, Յակուտ ալ Համավի)<sup>3</sup>: Կարկառ անվանումը հազվադեպ չէ տարածաշրջանում կամ Հայկական լեռնաշխարհում, այն նույնաես վերաբերում է գուտ լեռնային բարձունքների: Այդ լեռնային բարձունքից է անվանակոչվել նաև մերձակա համանուն քաղաքատեղին:

Նախկինում այստեղ եղած բնակավայրի առկայության մասին են վկայում նաև Շուշիում և մերձակա գերեզմանոցներում գտնվող խաչքարերը՝ բնորոշ XI-XIII դարերին, ինչպես նաև հնագետ Համլետ Պետրոսյանի գլխավորությամբ հենց բարձրավանդակի վրա՝ պարսպամերձ հատվածում ու Ավանա կարանի հարակից տարածքում իրականացված պեղումները, որոնց արդյունքում ի հայտ են բերվել մի շարք գտածոներ՝ բնորոշ XI-XVII դարերին (հաշվետվությունները գտնվում են լիազորված մարմնի արխիվում): Մինչ այդ, դեռևս 1970-1971 թթ. այստեղ՝ բարձրավանդակի նույն Ավանա կարան կոչված քարանձավում, որ կովկասյան թաթարներ կոչված

<sup>2</sup> Գանձակեցի Կ., Հայոց պատմություն, Եր., 1982, էջ 258:

<sup>3</sup> Ին Խօրդաճե, Կнига путей и царств. СМОМПК, XXXII. Тифлис, 1903, с. 15; Ին ալ-Փակիք, СМОМПК, XXXI. Тифлис, 1902, с. 15; Մակուտ ալ-Խամավի, Մուջկամ ալ բուլճան. Баку, 1983, էջ 30, հմմտ. Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Եր., 1965, էջ 103:

թուրքերի մոտ հայտնի էր «Շահնազարի քարայր» անունով, պեղումներ է կատարել Մամեդալի Հուսեյնովը՝ ի հայտ բերելով շատ ավելի վաղ ժամանակաշրջանի գտածոներ<sup>4</sup>:

Հարկ ենք համարում նաև նշել, որ Շուշիում և նրան մերձակա Շուշի գյուղում (Ներկայումս՝ Շոշ) XIX դ. տվյալներով գործում էին մի շարք պատմական հնամենի հայկական սրբավայրեր, որոնց թվում սուրբ «Նոյյան տապանի փետի կտոր»-ը<sup>5</sup>, որը որպես Նոյյան տապանը խորհրդանշող սուրբ մասունք՝ «Կենաց փայտ», հասել է Արցախ: Չուտ մահմեդական սրբավայրեր Շուշիում ու նրա մերձակայքում չեն եղել:

Ներկայացվածք բնականաբար, դեռևս վերջնական չէ: Պարզվում է, որ Շուշիի ստորին թաղամասը, գրեթե ամբողջությամբ, այսպես կոչված թաթարական կամ թուրքաց թաղը՝ բնակելի տներով ու առնվազն երկու գլխավոր մզկիթներով հանդերձ, տեղակայվել է հենց հայկական վաղ քրիստոնեական գերեզմանների վրա: Այդ մասին են վկայում, օրինակ՝ Ներկայացվող լուսանկարները, որտեղ դրանք հստակ երևում են շենքերի տակ, ինչպես նաև՝ Վերին մզկիթի հարակից մերեսեի, ավելի ճիշտ՝ մոլլայի տան պատերից մեկի հիմքում, որը հայտնաբերվել է վերջերս՝ մզկիթի նորոգման աշխատանքների ժամանակ (լուսանկարները ներկայացվել են, դրանք գտնվում են լիազորված մարմնի և տողերիս հեղինակի արխիվներում):

Հաջորդը. Նախքան Փանահ խանի հաստատվելը, Շուշին եղել է Արցախի ազատագրական պայքարի գլխավոր կենտրոնատեղիներից մեկը կամ սղնախը՝ տարածքային պաշտպանական միավորումը (որութեն՝ տերրitorialno-

<sup>4</sup> Գյուշին Մ. Շոշա գալասы-Շոշա магарасы, газета «Адабийят ва инджесенет». Баку, 1972, 17 июня, стр.12 (на азерб. языке); Гасанов А., Джагаров А. Археологические находки из Шушинской пещеры. Доклад АН. Азерб. ССР, 1976, т. 32, № 7, с. 89.

<sup>5</sup> «Նոր դար», Թիֆլիս, 1884, 27 հունիսի, № 123:

оборонительное обединение), ортодоксия Ехин Аվан, Оհան, Թարիսան և Միրզա հարյուրապետները: Ամրոցի կամ պաշտպանական շինությունների կառուցումը նոր ժամանակներում եղել է հենց նրանց ղեկավարությամբ՝ նախքան Փանահի Շուշիում հաստատվելը:

Այդ մասին հաղորդում է մասնավորապես Պյոտր 1-ինի ազգական, Կասպիական արշավանքի հրամանատարներից գեներալ Մատյուչինը (1676-1737 թթ.), ով 1725 թ. դեկտեմբերի 19-ին ոռուական արքունիքին հղած գեկուցագիր նամակում գրում է. «Ավան հարյուրապետը, հավաքելով 10.000 հոգի լավ զինված մարդիկ, Հայկական Սղնախներից ցանկացել է գնալ Գիլան ... բայց, անսալով Ղարաբաղի բնակչության խնդրանքին, մնացել է Սղնախում և բերդ է կառուցում»<sup>6</sup>: Նշենք նաև, որ ըստ վավերագրերի՝ Շուշիում եղել է երկու սղնախ: Դրանցից մեկը Մեծ սղնախն էր Շուշիում, մյուսը՝ նրան մերձակա Փոքր սղնախը ներկայիս Կարկառ քաղաքատեղիում, որը հայտնի էր Սանգյար, Սանգյար խան անուններով<sup>7</sup>: Ըստ ստույգ վավերագրի՝ օսմանցի թուրքերի 40 հազարանոց բանակը՝ Սարը Մուստաֆա փաշայի հրամանատարությամբ, ութօրյա դաժան մարտերում զգալի կորուստների գնով գրավել է Փոքր Սղնախը, սակայն Մեծ Սղնախի տակ թշնամական բանակը ծանր պարտություն է կրել և, տալով շուրջ 800 սպանված, նահանջել Գանձակ<sup>8</sup>: Այն, որ մինչև Փանահը Շուշին եղել է ամրոց, պաշտպանական կենտրոն, ուշագրավ

<sup>6</sup> ՀԱՓԿՅ, ֆ. ԾՊՌ, 1725 թ., № 5, լ. 365: Տե՛ս նաև Աբրահամյան Ա., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների և հայ-ոռուական հարաբերությունների պատմությունից, Եր., 1953, էջ 121:

<sup>7</sup> Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում, 1917-1920, Եր., 2008, էջ 168-170, Ներսեսով Յու. Մ., Ճշմարտացի պատմություն, թարգմ. բնագրից և ծանոթագր. Ք. Կոստիկյանի, Եր., 2000, էջ 92-93:

<sup>8</sup> ՀԱՓԿՅ, ֆ. ԾՊՌ, 1739 թ., № 2, լ. 41, 52, հմմտ. Աբրահամյան Ա., նշվ. աշխ., էջ 125-126:

տեղեկություններ են պահպանվել նաև «Յաղագս պատմութեանցն Պերսիու Երկրին» ձեռագիր աշխատությունում, որը հայտնաբերել ու առաջին անգամ շրջանառության մեջ է դրել պատմաբան Արտակ Մաղայանը<sup>9</sup>: Մատենադարանում պահպանվող այդ ձեռագրում (№ 9648, էջ 33ա) հիշատակվում է հետևյալը. «Կրկին օսմանցիները ցանկանում են, որ հայ յուզբաշիները հպատակվեն իրենց, բայց նրանք չեն կարող նվաճված լինել, քանի որ տիրում են Շուշիի բերդին և այն լավ պաշտպանված է: Քանի անգամ անթիվ օսմանցիներ դիմել են հարձակման, բայց Աստծո օգնությամբ նրանց դա չի հաջողվել, և շատ անգամներ նրանց դեմ է դուրս եկել հայազգի Ավան խանը իր մեծաքանակ հայկական զորքով ու միշտ հարթել նրանց դեմ պայքարում: Եվ այժմ էլ օսմանյան պետությունը վախենում է հայկական սղնախների քաջարի մարտիկներից ու այևս չեն փորձում հարձակվել նրանց վրա, քանի որ սղնախների հայերն անվախ են»\*:

Եվս մեկ ուշագրավ պատմական փաստ՝ արդեն վրացական հուշագրում. «Այստեղ՝ Շոշի սղնախում կար հնագույն բերդ, որը հետագայում նվաճեց ինքնակոչ

<sup>9</sup> Магалян А. Фальсификация истории меликств Арцаха в Азербайджанской историографии, «Բանրեր Մատենադարանի», հ. 20, Եր., 2014, էջ 92 (հմն.т. Электронная библиотека Арцаха):

\* Վավերագրի ուսւերեն տարրերակը. «Вновь османцы желают, чтобы армянские юзбashi покорились им, но не покорены они, так как владеют крепостью Шуша и крепость та хорошо укреплена. Сколько раз бесчисленные османы шли на приступ, чтобы захватить ее, но, с Божьей помощью, не смогли этого сделать. И много раз против них выходил армянский Аван хан с многочисленным войском армянским и всегда побеждал в войне с османами, так что и ныне боится государство османское воинов горных армянских сигнахов. Не пытаются более нападать на них, так как бесстрашны армяне Сигнаха».

Զևանշիր Փանահ-խանը»<sup>10</sup>:

XVII-XVIII դդ. հայերեն ձեռագիր հիշատակարաններում ևս պահպանվել են նախքան Փանահ խանը Շուշիի՝ բերդ լինելու իրողությունը փաստող ուշագրավ տեղեկություններ: Օրինակ՝ ըստ 1607 թ. Շահ Աբասի ժամանակներից մեզ հասած մի հիշատակարանի՝ գանձակցի պարոնտեր Օհանն ավետարան-շարակնոց է ի պահ հանձնել շուշվեցի Հովհաննես Երեցին<sup>11</sup>: Իսկ «Ավան յուզբաշին, որ Եկավ Շօշվա քարըն մտավ... ՌՃԿՁ (1717 թ.)» քաղվածքը վկայում է, որ Փանահ խանից շուրջ 40 տարի առաջ Շուշին արդեն բերդ էր, բնակավայր:

Այժմ անդրադանք Փանահ խանին: Փանահը թափառական կյանք վարող, Թուրքեստանից Եկած բահմանից ցեղի սարիջալլու ճյուղից էր, հովվի որոդի: Նադիր շահի մոտ կատարում էր մունետիկի պաշտոն և կոչվում էր «Զառչի» Փանահ<sup>12</sup>: Շահի պատժից՝ գլխատումից վախենալով՝ 1747 թ. փախչում է Ղարաբաղ, որտեղ զբաղվում է ավազակությամբ, թալանչիությամբ<sup>13</sup>: Այդ մասին հաղորդում է Միրզա Զամալը. «Պահա խան, օբъединив вокруг себя многих удалых юношей из своих родственников и илатов, занялся грабежом в Ширванском, Шекинском, Ганджинском и Карабагском вилайетах»<sup>14</sup>: Սկզբում նա դավաճանաբար

<sup>10</sup> Цагарели А. Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии, т. 1 (с 1768 по 1774 год). СПб, 1891, с. 434–435, հմմտ. Մկրտչյան Շ., Դավթյան Շ., Շուշի: Ողբերգական ճակատագրի քաղաքը (հայերեն, անգլերեն լեզուներով), Եր., 2008, էջ 17:

<sup>11</sup> Տե՛ս Հայերեն ձեռագրերի ժե դարի հիշատակարաններ, հ. Ա, Եր., 1974, էջ 282:

<sup>12</sup> Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Եր., 1964, էջ 192:

<sup>13</sup> Տե՛ս Ախունդով Ն., Գարաբաղնամալար (Qarabağnamələr), Բաքու, 1990, հմմտ. Հարությունյան Հ., Շուշի. քարերեն անխոս վկաներ, Ստեփանակերտ, 2013, էջ 266:

<sup>14</sup> Միրզա Ջամալ Ջևանշիր Կարաբաղը. Իстория Карабага. Баку, 1959, с. 67.

հաստատվում է Շուշիի ստորին հատվածում և աստիճանաբար այնտեղ տեղափոխում իր թուրքալեզու քոչվոր ցեղակիցներին: Նրանց տեղավորման վայրը նույնիսկ խորհրդային ժամանակներում պահպանել է իր անոնք՝ «Քյոչալիլար մահլասի» (քոչվորների թաղամաս): Փանահի ժամանակներից սկսած այստեղ հաստատվում են տարբեր քոչվորական ցեղեր տարբեր վայրերից, օրինակ, Իրաքից ու Պարսկաստանից, որոնց մասին որոշակիորեն հաղորդում են Շուշիի մահմեդական շիրմաքարերի արձանագրությունները: Դրանք վկայում են, որ Շուշի են հասել քերրալա, մաշաղի, ղաջար ու այլ ցեղեր: Հարկ է նշել, որ Շուշիի մահմեդական գերեզմանատան արաբատառ արձանագրությունները հաղորդում են նաև հանգույցյալների՝ այս կամ այն քոչվոր ցեղին պատկանելու, խորհրդային տարիներին ասիմիլյացիայի (ձուլման) ենթարկվելու մասին: Ըստ Ահմեդ-բեկ Զևանշիրի՝ թուրքական ու քրդական ցեղերի մեծաքանակ ներիու է եղել նաև Վրաստանից ու Չրջակա այլ խանություններից: Մասնավորապես՝ ներկայացվում են Կարաչարլի (Կարաչարլինսկոե), Ջինլի (Ջինլինսկոե), Դեմիրչի-Հասանլի (Դամիրչի-Գասանլինսկոե), Կըզլի-Խաչիլի (Կիզիլ-Խաջուլինսկոե), Սաֆի-Քյուրդ (Սաֆի-Կյործկոե), Բոյ-Ահմեդլի (Յոյ-Ահմեդլի), Սաաթլի (Սաաթլինսկոե), Քենգերլի (Կենգերլինսկոե) և այլ ցեղեր, որոնք հաստատվել են ոչ միայն Շուշիում, այլև մոտակա հարթավայրերում: Վերը նշված քոչվոր ցեղերը խորհրդային տարիներին, մասնավորապես՝ 1930-ական թթ., ենթարկվել են ասիմիլյացիայի և ստացել աղորեցանցի անվանումը: Նշված «Գարաբաղնամալար» գրքի 477-րդ էջում նաև գրված է. «1826-1828 թթ. ոռուս-պարսկական պատերազմից հետո՝ մինչև 1830 թվականը, եղել է բնակչության ներիու դեպի Ղարաբաղ: Անդրկովկաս են տեղափոխվել 40 հազարից

ավելի պարսիկներ, որոնք տեղափորվել են Երևանի և Ելիզավետպոլի նահանգներում»<sup>15</sup>: Նախալեռնային ու Լեռնային Ղարաբաղ՝ թուրքական քոչվոր ցեղերի ներհոսի մասին է հաղորդում նաև Միրզա Աղիզյոզալ-բեկը<sup>16</sup>:

Դառնալով Փանահ խանին, որ իբր հիմնադրել է Շուշի քաղաքը և որ այն իբր թե ի սկզբանե եղել է աղբբեջանական բնակավայր, հարց է ծառանում, թե ինչո՞ւ է նրա գերեզմանը կամ դամբարանը գտնվում է Բարդայում (Զումա մզկիթի տարածքում)<sup>17</sup> և ոչ թե Շուշիում, որտեղ այդ ժամանակ խանություն էր անում իր որդին: Նույնիսկ ոչ Աղբամում, որտեղ Փանահն իբր կառուցել է պալատ-ապարանք և որտեղ ի դեպ առկա են նաև այլ դամբարաններ: Պատասխանը պարզ է՝ նա թաղվել է իրեն հոգեհարազատ միջավայրում, իսկ Շուշին կամ Արցախի հատկապես լեռնային հատվածը միշտ էլ ընկալվել է որպես օտար, իրենց չպատկանող: Վերջում նշենք, որ Փանահ խանի՝ Շուշիում հաստատվելու հետ կապված ստոյգ տեղեկություններ, թե որ թվականին է նա հաստատվել այդ բերդ-ամրոցում, առայսօր առկա չեն: Հստակություն չկա նույնիսկ նրա գովքը թմբկահարող աղբբեջանցի հեղինակների շրջանում: Մի շարք գրվածքներում շրջանառվում են 1750, 1751, 1752 թթ., որոնք իրատեսական լինել չեն կարող, նկատի ունենալով, որ նա այդ տարիներին դեռևս գտնվում էր Շահրուզաղում: Ըստ Ահմետ-բեկ Զևանշիրի՝ Փանահը Շուշիում հաստատվել է 1754 թ., իսկ ըստ Միրզա Աղիզյոզալ-բեկի և Միրզա Զամալի՝ հիջրայի 1170 թ., այսինքն՝ 1756-1757 թթ.: Հաստատվելով Շուշիում նա, բնականաբար, իրականացրել է ամրոցապատերի վերակառուցման, ամրացման աշխատանքներ, որոնց

<sup>15</sup> Տե՛ս Հարությունյան Հ., նշվ. աշխ., էջ 268:

<sup>16</sup> Միրզա-Ադիգեզալ-Բեկ Կարաբաց-նամ. Բակու, 1950, ս. 53-60.

<sup>17</sup> Известия Азербайджанского археологического комитета. Баку, 1926, с.55.

մասնակցում էին Արցախի տարբեր մելիքություններից ու այլսայլ գավառներից հրավիրված ճարտարապետներ, շինարարներ, որմնադիրներ, բանվորներ, յուրաքանչյուր ընտանիքից մեկ տղամարդ՝ ըստ խանի հրամանի: Այդ մասին ձեռագրերում պահպանվում են ստոյգ տվյալներ: Բնականաբար, հիմնական աշխատանքները կատարում էին հայերը: Եվ այլ կերպ լինել չէր էլ կարող, քանզի երբեմնի քոչվոր վրանաբնակներն, ըստ հաղորդումների՝ դժվարությամբ էին համակերպվում քաղաքային նստակյաց կյանքին ու շարունակում էին զբաղվել իրենց ավանդական զբաղմունքներով (հիմնականում անասնապահությամբ ու թաղիքագործությամբ):

Փանահ խանից ու խանության վերացումից հետո Շուշիում հաստատվել են ռուսները և այնտեղ կատարել ամրոցապատերի վերակառուցման, նորացման և ընդլայնման մեծածավալ աշխատանքներ՝ ամրոցը հարմարեցնելով արդեն տվյալ ժամանակաշրջանի ռազմավարական պահանջներին: Վերակառուցման աշխատանքները շարունակվել են 1847 թ., ինչի վերաբերյալ պատերից մեկին առկա է համապատասխան թվագրություն: Այնպես որ՝ ասել, թե ներկայիս պարսպաշարը Փանահ խանի «ստեղծագործությունն» են, առնվազն անհեթեթություն է:

Այսպիսով, Շուշի բերդ-ամրոցն ի սկզբանե եղել է մինչև Փանահ խանը, հետագայում իրականացվել են վերակառուցման-ամրակայման աշխատանքներ: Եվս մեկ նկատառում՝ այս անգամ կապված ներկայումս հաճախակի շահարկվող Շուշի և Շուշա անվանումների հետ: Պարզ է, որ ի սկզբանե եղել է «Շուշի» հայացի տարբերակը, քանզի, ինչպես դիտարկեցինք, այդ բնակավայրը ծևավորվել է հայկական բնօրրանում: Այդուհանդերձ, հարկ ենք համարում նշել, որ ստուգաբանորեն դրանց միջև ոչ մի տարբերություն չկա: Բոլոր դեպքերում տեղանվան հիմքը «շուշ»-ն է՝ ուղիղ,

բարձրացած, ուղղաբերձ իմաստով<sup>18</sup> կապված լինելով բարձրյալի, սուրբ, աստվածային իմաստի հետ: Օրինակ, եթե մենք ասում ենք Բաքու կամ Բագու, ադրբեջանցիները՝ Բաքի, արդյո՞ք փոխվում է այդ տեղանվան իմաստը: Իհարկե՛ ոչ: Այդ տեղանվան հիմքում հնդեվրոպական-հայկական «Բագ»-ն է (ռուսերենում՝ բոգ), դարձյալ սուրբ, աստվածային իմաստով: Վերջինս ցույց է տալիս, որ այդ բնակավայրն ի սկզբանե անվանակոչվել է մերձակա նշանավոր սրբավայրից: Այսպիսով, տարբեր ժողովուրդների մոտ այս կամ այն տեղանունը որպես կանոն հարմարեցվում է իրենց լեզվի արտահայտչականությանը, որից սակայն տեղանվան բուն իմաստը չի կարող փոխվել: Այդուհանդերձ, ադրբեջանցիները մեծ համառությամբ փորձում են ի լուր աշխարհի ապացուցել, որ Շուշիի նախանվանումը եռել է ադրբեջանական «Շուշա»-ն, որն էլ իրենց պատմական բնօրրանն է: Որ իբր Փանահ խանը, առաջին անգամ բարձրանալով ժայռը, տեսել է գեղեցիկ, պարզ, ինչպես ապակի (թուրքերեն՝ շուշա) մի տեսարան, որտեղ էլ հիմնադրել է քաղաքն՝ անվանելով Շուշա: Սակայն ապակուց պատմականորեն տեղանուններ չեն կարող ծևավորվել և որ ինչպես նշվեց, դրանք բխում են սոսկ սուրբ-աստվածային իմաստներից: Հետևաբար, այդ լեզենդը կամ պատմությունը չի կարող իրականության հետ մի որևէ առնչություն ունենալ: Բարվեցի հեղինակները մեկ այլ տարբերակով, Շուշա անվան ծագումը բխեցնում են մերձակա «Շաշա-կեհծ» գյուղի անունից<sup>19</sup> հիմք ընդունելով մի շարք հեղինակների, այդ թվում 1846 թ. Կովկասյան օրացույցում տեղ գտած հաղորդումը, որում սակայն այդ անվանումը ներկայացված է ոչ թե որպես Շուշաքենդ, այլ Շուշի գյուղ («деревня

<sup>18</sup> Մալխասեանց Ստ., Հայերեն բացարական բառարան, հ.3, Եր., 1944, էջ 535, հմմտ. Սարգսյան Ս., Խաչենի ամրոցները, Եր., 2002, էջ 157:

<sup>19</sup> Տե՛ս Ավալով Է. Արхитектура города Шуши. Баку, 1977, с. 20.

Шуши»)<sup>20</sup>: Այսպիսով, տեղ է գտել գիտակցված աղավաղոմ: Իրականում, շատ ավելի ուշ ձևավորված Շուշի գյուղանունը բխում է Շուշի քաղաքից կամ բարձրավանդակից և ոչ թե հակառակը: Եվս մեկ նկատառում: Հայտնի է, որ տեղանուններն ու անձնանունները ծագումնաբանորեն (խոսքը ժամանակակից անձնանունների մասին չէ) ձևավորվում են նոյն սկզբունքներով: Հայերի մոտ առկա են «Շուշի» անվանումով, բայց Շուշի քաղաքի անվան հետ բոլորովին կապ չունեցող անձնանուններ, որոնք հատուկ են եղել հատկապես նախախորհրդային ժամանակներին և տեղ են գտել տապանագրերում: Օրինակ, Շուշի՝ Հաթերքի գերեզմանատանը, ավելի ուշ՝ Շուշիկ, Շուշան և այլն, երբ մահմեդականների մոտ նմանատիպ անձնանուններ չկան:

Եվ վերջին նկատառումը՝ կապված «Հանիշեն» (Hanishen), «Խանքենդի» անվանումների հետ: Վերջինիս ստուգաբանության հետ կապված կարող ենք ամենայն պատասխանատվությամբ իրազեկել, որ այն փաստորեն հայկական «Հանիշեն» (Ժողովրդական արտահայտչականությամբ՝ Հանաշեն, Հանաշին, ավելի ուշ, որուների՝ Արցախում հաստատվելուց հետո՝ Խանաշին) անվան օտարահունչ անվանումն է և որն անմիջականորեն առնչվում է մոտակա լեռնային այն բարձունքի անվան հետ, որի վրա տեղակայված է ներկայիս Շուշի քաղաքը: Հնում այդ լեռնային բարձունքն, ինչպես նշվեց, կրում էր «Հան» (Han) անվանումը, որի մասին վկայում է նաև ժայռից արևելք՝ ծորում տեղակայված «Հանոտ» բնակավայրի անվանումը՝ «Հան քարաժայոհ տակ» իմաստով: Հարկ ենք համարում նաև նշել, որ «Հան» անվանումները սովորաբար բնորոշ են եղել հատկապես սրբացված լեռնային բարձունքներին, որպես առկա են նաև սրբավայրեր: Նմանատիպ անվանումները եղակի չեն Արցախում և Հայ-

<sup>20</sup> Кавказский календарь на 1846 г. Тифлис, 1845, с. 55.

կական լեռնաշխարհում, տարածված են նաև աշխարհի տարբեր վայրերում (Հունգարիա, Հնդկաստան, Հունաստան, Հոնդուրաս և այլն): Իսկ ի՞նչ է իրականում կատարվել: Ինչպես է այդ անվանումը խեղաթյուրվել՝ Հանիշեն-Հանիգյուղը դարձել Խանքենդի: Շատ պարզ տարբերակով: Հատկապես որևաների՝ Արցախում հաստատվելուց հետո, որևական այբուբենում «Հ» (Հ) տառի բացակայության պայմաններում, կատարվել է «Հ-Խ» (Հ-Խ) անցում, որը մասամբ բնորոշ է եղել նաև հայերին, իսկ հայկական «Ձեն»-ը թարգմանվել-դարձել է «քենդ», մի երևոյթ, որը մեծ տարածում էր գտել Արցախում, հատկապես խանական տիրապետության ժամանակներում: Այսօր էլ Արցախում առկա են մի շարք տեղանվանումներ կամ գյուղանուններ, որոնք հայերնից թարգմանվել-մահմեդականացվել են և, շրջանառվելով թուրքերի կողմից, դիտարկվում են որպես թուրքական ծագմամբ անվանումներ: Օրինակ՝ Արցախում գտնվող հայկական բնակավայրերից Մյուրիշենը դարձվել է Մյուրիքենդ, Բերդաշենը՝ Կարաքենդ, Երիցուշենը՝ Քեշիշքենդ, Մխիթարաշենը՝ Մոլստարքենդ, Շուշի գյուղը՝ Շուշաքենդ, Մեհտիշենը՝ Մեհտիքենդ, Քարաշենը՝ Դաշենդ, Նորագյուղը՝ Քեշիշքենդ և այլն:

Այսպիսով, հայկական «Հանիշեն» (Հանաշեն, Խանաշեն, Խանաշին) գյուղանունն առանց գյուղի բնակչության կարծիքը հաշվի առնելու (պաշտոնական բոլոր ցուցակներում այդ բնակավայրում ապրում էին միայն հայեր), մահմեդական իշխանավորների կողմից թարգմանվել վերափոխվել-դարձել է «Խանքենդի» և այդ անվամբ ներառվել կամերալ ու այլ կարգի ցանկերում, քարտեզներում, այլայլ գրվածքներում, ներկայումս էլ դարձել շահարկման առարկա, որ իբր այդ բնակավայրը հիմնադրել է Խանը և որ այն եղել է խանապատկան բնակավայր ու այլ

հերիաթարանություններ: Որ «Խանքենդի» տեղանվան մեջ «Խան»-ը «Խան-տիրակալ» հասկացության հետ որևէ կապ չունի, նկատելի է նաև Արցախում գտնվող մի շարք լեռնային բարձունքների անվանումներից, որոնք նույնպես կրում են «Հան» անունը, բայց Խանքենդիի տարբերակով դարձյալ ներկայացվում են վերափոխված տարբերակով՝ «Խան»: Օրինակ, նոյն Շուշիի դեմ-դիմաց գտնվող «Բովուրիհան» (Bovurhan) նշանավոր լեռնանունը դարձել է «Բովուրիխան» (Բովուրիխան): Այն ունի «սուրբ լեռ» իմաստը, որը բնականաբար չի կարող առնչություն ունենալ «Խան-տիրակալ» հասկացության հետ: Եվս մի օրինակ. Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Գյունե ճարտար, Գիշի, Խնուշինակ և Մարտունի բնակավայրերի մոտակայքում մի լեռնային բարձունք կամ լեռնաշղթա կա, որը դարեր շարունակ նոյնպես կրում է «Հան» (Հանի) անվանումը: Դրանից անվանակոչվել են վերը նշված վերջին երկու բնակավայրերը՝ ներկայիս Խնուշինակը (Հնուշինակ, նախկինում Հանիշեն) և Մարտունի քաղաքը: Վերջինս, որ պատմական աղբյուրներում հանդես էր գալիս դարձյալ Հանիշեն, Հանաշեն, Հոնաշեն տարբերակներով, տարբեր հրապարակումներում (ներառյալ ռուսական այլևայլ գրվածքներում, այդ թվում՝ ռուս-պարսկական պատերազմների առիթով), ներկայանում է «Խանաշին» ձևով, որը դարձյալ չի կարող անձնավորվել և կապ ունենալ «Խան-տիրակալ» հասկացության հետ ու գուտ «Հան-Խան» անցման հետևանք է:

Այսպիսով, «Խանքենդի» ձևախեղված անվանումը երբևէ առնչություն չի ունեցել «Խան-տիրակալ» հասկացության հետ, այն մտացածին է և հիմնազուրկ: Պարզ է, որ այդ անունով բնակավայր ի սկզբանե չի էլ եղել: Այն, որ այդ շինծու անվանումը կապ չունի խանի հետ և չի եղել խանապատկան կամ մի որևէ խանի սեփականություն,

Վկայում է նաև պատմական մի հավաստի վավերագիր, որում Արցախի խանապատկան բոլոր 28 գյուղերի կամ բնակավայրերի շարքում Խանքենդին չկա: Ներկայացնում ենք այդ փաստաթուղթը՝ առանց մեկնաբանության. «Ибрахим Халил-хан обратился к 18-ти видным представителям Карабаха с настоятельной просьбой засвидетельствовать принадлежность указанных сел и владений ему, Ибрахим Халил-хану, **полученных им по наследству и купленных за наличные деньги.**

(Отмеченные звездочкой села проходят также в Пространном налоговом реестре вилайета Гянджа-Карабаг, составленном в 1727 г. османами («Defter-i mufass eyatet-i Gence-Karabag».- Istanbul, Basbakanlik Arsivi, № 903).

Во имя Аллаха (обладателя) наилучших имен!

Да продлит Аллах величие и правление милосердного Ибрахима Халил-хана сына пребывавшего в небесных райских кущах Панах Али-хана Джаваншира Сарыджаллы.

У вельмож, благородных, старост (кедхуда) и подданных (райя) Карабахской страны требуются свидетельства, сведения и известия о том, что в этой стране во время сражений и усобиц, учиненный (шахом) Каджаром, были разрушены и разгромлены находящиеся, согласно законам шариата в моем владении имения — сады, пашни, мельницы и села, а все документы об этом исчезли. Жители этой страны не должны скрывать свои свидетельства о том, что они знают о моем наследстве. Это они должны сделать ради (сказанного): «Аллах не губит награды добродеющих» (Коран, IX, 120).

На полях данной записи они должны это подтвердить своими именами и печатями, чтобы были восстановлены мои пропавшие кабалы.

Мир тем, кто идет праведным путем.

Раби ал-аввал 1213 (13. VIII — 11. IX 1798).

[Я] Мухаммад Тахир Нахчивани на основе этих свидетельств подтверждаю данный документ

(печать)

Нижеследующие владения и села являются наследием хана и его родственников.

Гочу-кенд\*, Баллыджа, Али-хан кенд, Гая-баш, Бадарат\*, Сары-кешиш, Дашибулаг, Халис\*, Хызырыстан, Бахтийар\*, Вака\*, Йенкиджа\*, Кешишкенд, Джолфур, Ханабад, Дфаджур, Вакван, Хора-сулу, Хаджи-теке, Хамрах\*, Демирчи-кенд\*, Довшанлы\*, Чорхан\*, Модагиз\*, Кызылгая\*, Дамгалы\*, Келавек\*, Баллыгая»<sup>21</sup>.

Եվ վերջինը. պարզվում է, որ Ներկայիս Ստեփանակերտի նախանվանն անդրադարձել է նաև անգիտի ճանապարհորդ կոմս Զորջ Շռումաս Կեպաելը (1799-1891): 1824 թ. ճանապարհորդելով Արցախում՝ իր նկարագրություններում նա երկրամասն անվանում է «Խանախին»՝ նշելով, թե «... որոշ տարածության վրա՝ ծախ կողմում մենք տեսանք Խանախին՝ լավ կառուցապատված մի քաղաք, որտեղ տեղակալված է որևէ ական բանակո»<sup>22</sup>:

Նկատի ունենալով վերը նշված պարզաբանումներն ու պատմական տեղանունների ձևավորման սկզբունքները, որոնք տեղ են գտել մեր կողմից լուս ընծայված «Արցախի բնակավայրերը» աշխատության մեջ, ակնհայտ է դառնում, որ տեղի է ունեցել «Խանաշին-Խանախին» անցում՝ հարմարեցված նշված ճանապարհորդի լեզվի արտահայտչականությանը: Համենայնդեպս, հեղինակը «Խանքեն-

<sup>21</sup> Ст'ю Известия АН Аз.ССР. Серия истории, философии и права, № 3, 1988 г.

<sup>22</sup> «... At some distance on the left hand we saw Khanakhi, a well-built town, in which is a Russian force» (int'u Personal Narrative of a journey from India to England in the year 1824 bu captain, the Hon. George Kappel in two volumes, volume 2. Philadelphia, 1827, p. 285).

դի» անունով բնակավայր չի հիշատակում, ինչը, կրկնում ենք, մեկ անգամ ևս վկայում է, որ այդ անվամբ բնակավայր ի սկզբանե՝ ծագումնաբանորեն չի եղել:

Այսպիսով, կարծում ենք, որ Շուշիի և այլ տեղանունների հետ կապված այս պարզաբանումներն ուսանելի կլինեն ոչ միայն խնդրո առարկա թեմայով հետաքրքրվողներին, այլև բոլոր նրանց համար, ովքեր այդպես էլ չգիտակցեցին այդ հինավորց քաղաքի տեղն ու դերը տարածաշրջանում, մի քաղաք, որի համար մեր նախնիները սերնդեսերունդ պայքար են մղել՝ պահպանելով ազգային դիմագիծն ու արժանապատվությունը...

**SLAVA SARGSYAN**

Historian, monument expert

Artsakh, Stepanakert

slavasargsyan@mail.ru

## **EPISODES FROM THE HISTORY OF SHUSHI**

### **SUMMARY**

**Keywords:** Shushi, melikdoms of Artsakh, castle, find, khachkar, excavations, sanctuary, manuscripts.

Since Soviet times, a fabulous story has been circulating in the Republic of Azerbaijan, according to which Shushi was originally an Azerbaijani settlement founded by Panakh Khan, who built a fortress and then created a city called Panakhabad. Even today, this lie is spreading throughout the world. Meanwhile, initially Shushi was formed as a purely Armenian settlement many centuries ago, as evidenced by reliable historical documents

1. The fortress rock-plateau on which Shushi is located, had different names at different times. The first is «han», from which the name of the settlement «hanot» in the nearby gorge originated. This refers to the old name of the city of Stepanakert "hanishen", which was transformed into «Khankendi» as a khan's settlement.

2. In the early and developed Middle Ages, the rocky plateau of Shushi was called «Karkar», a historical data about which is accurate, particularly, in Armenian (Kirakos Gandzaketsi) and Arabic sources (Ibn Khordadbeh, Ibn al-Fakih, Yakut al-Hamawi).

3. Khachkars in the nearby cemeteries in Shushi, characteristic of the XI-XIII centuries, as well as excavations, as a result of which a number of finds characteristic of the XI-XVII centuries were discovered, testify to the existence of a settlement here earlier.

4. According to reports, in the XIX century a number of ancient Armenian sanctuaries, including the «Fragment of Noah's Ark», which reached Artsakh as a sacred relic symbolizing Noah ark, were in the city of Shushi and in the neighboring village of Shushi (now Shosh).

There were no purely Muslim shrines in Shushi and its environs.

5. Almost the entire lower region of Shushi, the so-called Tatar or Turkish region, called «Kochalilar Makhlasi» (nomadic region), with its houses and at least two main mosques, is located in early Christian Armenian cemeteries.

6. According to the report of December 19, 1725, sent to the Tsar's court by the commander of the Caspian campaign, the centurion Avan built a fortress. This is also reported by Persian sources of that period (Matenadaran, manuscript № 9648, p. 33a).

7. The information that Shushi was a fortress before Panakh-khan was preserved in Armenian handwritten memoirs of the XVII-XVIII centuries, including 1607 Memories of the times of Shah Abbas.

## СЛАВА САРГСЯН

Историк, памятниковед

Арцах, Степанакерт

slavasargsyan@mail.ru

### ЭПИЗОДЫ ИЗ ИСТОРИИ ШУШИ

#### РЕЗЮМЕ

**Ключевые слова:** Шуши, меликства Арцаха, крепость, находка, хачкар, раскопки, святынище, рукописи.

С советских времен в Азербайджанской Республике циркулирует сказочная история, согласно которой Шуши изначально был азербайджанским поселением, основанным Панах-ханом, который построил крепость, а затем создал город под названием Панахабад. Даже сегодня эта ложь распространяется по всему миру. Между тем, изначально Шуши формировался как чисто армянское поселение много веков назад, о чем свидетельствуют достоверные исторические документы.

1. Крепостная скала-плато, на которой расположен Шуши, в разное время носила разные названия. Первый - «han», от которого и произошло название поселения «hanot» в близлежащем ущелье. Это относится к старому названию города Степанакерт «hanishen», который был преобразован в «Ханкенди», как ханское поселение.

2. В раннем и развитом средневековье скалистое плато Шуши называлось «Каркар», о чем есть точные исторические данные, в частности, в армянских (Киракос Гандзакеци) и арабских источниках (Ибн Хордадбех, Ибн аль-Факих, Якут аль-Хамави).

3. О существовании здесь ранее поселения свидетельствуют хачкары на близлежащих кладбищах в Шуши, характерные для XI-XIII веков, а также раскопки, в результате которых был обнаружен ряд находок, характерных для XI-XVII веков.

4. По имеющимся данным, в XIX в. в городе Шуши и в соседнем селе Шуши (ныне Шош), находился ряд древних

армянских святилищ, в том числе «Фрагмент Ноева ковчега», который дошел до Арцаха как священная реликвия, символизирующая Ноев ковчег. В Шуши и его окрестностях не было чисто мусульманских святынь.

5. Почти весь нижний район Шуши, так называемый татарский или турецкий район, называемый «Кочалилар Махласи» (кочевой район), с его домами и, по крайней мере, двумя главными мечетями, расположен на ранне-христианских армянских кладбищах.

6. До Панах-хана Шуши был одним из основных центров освободительной борьбы Арцаха или сигнахом, который являлся территориально-военной единицей. Согласно рапорту командующего Каспийского похода, генерала Матюшкина, отправленному в Царский двор 19 декабря 1725 г., сотник Аван построил крепость. Об этом также сообщают персидские источники того периода (Матенадаран, рукопись № 9648, с. 33а).

7. Сведения о том, что Шуши был крепостью до Панах-хана, сохранились в армянских рукописных воспоминаниях XVII-XVIII вв., в том числе в воспоминаниях времен шаха Аббаса 1607 г.

## ԻՍԿՈՒՀԻ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԱրԴՀ պատմության ամբիոնի դասախոս,

պ.գ.թ., դրցնող

iskuhi82@mail.ru

### ԻՆՔԱՄՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԿԱՄԱՎՈՐԱԳՐՈՒՄԸ ԶՈԿԱՏՆԵՐԻՆ 1988-1991 ԹԹ.

*Հիմնաբառեր՝* շարժում, պայքար, կամավորականներ, ջոկատներ, կանայք, ինքնապաշտպանություն, զոհեր, վիրավորներ, օգնություն, գործողություն:

Լեռնային Ղարաբաղն Աղրբեջանին բռնակցվելուց ի վեր՝ խորհրդային ամբողջատիրության պայմաններում արցախահայությունն անընդհատ պայքար էր մղում անկախ ապրելու իր իրավունքի համար: Վերելքներով և վայրէջքներով ընթացող պայքարը հիմք հանդիսացավ 1988 թ. փետրվարին սկիզբ առած համաժողովրդական շարժման համար: Սակայն ի պատասխան Արցախի ժողովրդի արդար, իրավական պահանջի, Աղրբեջանի իշխանությունները որդեգրեցին ահաբեկման քաղաքականություն, որը 1991 թ. վերաճեց ռազմական առճակատման:

Այսպես, Արցախյան առաջին պատերազմին նախորդած իրավիճակը թելադրում էր անցնել ինքնապաշտպանական ուժերի կազմակերպմանը: Շարժման սկզբնափուլում Հայաստանում և Արցախում տարերայնորեն սկսեցին կազմակորվել առաջին կամավորական և աշխարհազորային ջոկատները: Արցախի հայաբնակ համարյա բոլոր բնակավայրերում 1988 թվականից առկա էին կամավորական ջոկատներ, որոնք գործում էին խիստ գաղտնի: Եթե գյուղական վայրերում յուրաքանչյուր ջոկատ ապահովում էր իր գյուղի պաշտպանությունը, ապա քաղաքներում կամավորական

խմբերը հսկում էին փողոցներն ու թաղամասերը, պաշտպանում դրանք աղբթջանցի ավազակային ջոկատների ներթափանցումից: Կամավորականները գինված էին որսորդական հրացաններով և ինքնաշեն գենքերով: Հարկ է նկատել, որ ջոկատների մեծամասնությունը գտնվում էր գյուղերում, որոնցում ընդգրկված էին 14-ից մինչև 60 տարեկան տղամարդիկ: Կամավորական խմբերը, բացի բնակավայրերի պաշտպանությունը կազմակերպելուց, իրականացնում էին գենքի փոխադրում Հայաստանից, համագործակցում էին այնտեղ ծևավորված ջոկատների հետ, ապահովում էին նրանց տեղափոխումն Արցախ, տարբեր վայրերում ստեղծում էին գենքի նորոգման կետեր, հատուկ ուշադրություն դարձնում ռազմական գործի ուսուցմանը:

Հատկանշական է, որ դեռևս 1988-1989 թթ. հանրահավաքների ժամանակ, կանայք արձագանքեցին կամավորական ջոկատներին գինվորագրվելու և ճակատ մեկնելու կոչերին՝ պարտավորվելով կատարել իրենց պարտքը հայրենիքի հանդեաց:

Կանանց մի մասը կամավոր միացան ազատամարտին, մնացածը, մնալով թիկունքում, նույնպես իրենց ներդրումն ունեցան պատերազմում՝ դիմակայելով գրկանքներին: Կամավորական ջոկատներին կանանց ներգրավվածության մասին է վկայում Երևանի Սովետական շրջանի կուսշրջկոմի երկրորդ քարտուղար Ռուտիկ Գևորգյանն, իր «Հավաքական ուժ» հուշագրում թողած հաղորդումներում. «Շրջանի պատվիրակությունը, մեկնելով Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջան, շրջագայեց սահմանամերձ գրեթե բոլոր գյուղերը: Տեսանք, որ շուրջօրյա հերթապահություն էր սահմանված այդ գյուղերում, որտեղ կանայք հերթապահում էին ցերեկային ժամերին: Սակայն նկատեցինք, որ բոլոր գյուղե-

<sup>1</sup> Աբրահամյան Հ., Կամավորական ջոկատներից մինչև պաշտպանության բանակի ստեղծումը. «ՀՀԳ», ՀՀ ԳԱԱ, № 2, 2006, էջ 117:

րում, գիշերվա բոլոր ժամերին տղամարդկանց հետ հավասար հերթապահում էին նաև կանայք: Բոլորը զինված էին մեծ մահակներով: Տեղեկացանք, որ կացիններն ու եղանները կազմ ու պատրաստ էին դիմադրության համար...»<sup>2</sup>:

Ստեղծված կամավորական ջոկատներին անհրաժեշտ էին միջոցներ՝ զենք, զինամթերք հայթայթելու համար: Մարտակերտի կամավորական ուժերը Վլադիմիր Բալայանի և Լեռնիդ Ազգալյանի գլխավորությամբ դիմեցին բոլոր մարտակերտցիներին՝ դրամահավաք կազմակերպելու նպատակով: Մարդիկ «սև օրվա» համար պահած իրենց վերջին գումարների մի մասը որոշեցին հանձնել ջոկատին, այն համոզմամբ, որ միայն զենքով կլինի Արցախի փրկությունը: Դրամահավաքին մասնակից կանանց թվում էր Արևիան Օհանջանյանը, ով բացի դրամական միջոցներից, մեծ քանակությամբ ուսկյա զարդեր տրամադրեց Մարտակերտի ինքնապաշտպանական ջոկատին<sup>3</sup>: ԼՂՀ զոհված ազատամարտիկների թանգարանում Արևիան Օհանջանյանի լուսանկարին կից տեղեկանքում կարդում ենք. «Տրվում է Մարտակերտ քաղաքի բնակչութի Արևիան Շամիրի Օհանջանյանին, որ նա իսկապես իր ոսկյա զարդերը և իրերը (շղթա, ականջօղեր, ժամացույց, մատանիներ, ոսկյա դրամներ) նվիրել է Արցախի ազատագրական բանակին (հրամանատար՝ Վլադիմիր Բալայան), և այդ միջոցներով ձեռք է բերվել մեկ «ԸՄՊ-1» զրահամեքենա: ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի Մարտակերտի շրջանի լիազոր ներկայացուցիչ՝ Ս. Աբրահամյան»:

Ընդգրկվելով ինքնապաշտպանական ջոկատներում կանայք այն համոզման էին, որ այդ ճակատագրական պահին պարտավոր են կատարել իրենց պարտքը հայրենի երկիրի, հարազատ գյուղի առջև: Նրանց մեջ բիշ չէին երիտա-

<sup>2</sup> Գևորգյան Ռ., Հավաքական ուժ, Եր., 2005, էջ 427:

<sup>3</sup> «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 2000, 12 ապրիլի, թիվ 7:

սարդ մայրերն, ովքեր մահվան վտանգի էին գնում՝ տանը թողնելով իրենց երեխաներին: Թերևս գործում էր նաև այն հոգեբանությունը, թե լավ է իրենց ամուսինների, եղբայրների կողքին լինեն, նրանց օգնեն, քան թիկունքում մնան մշտական սպասումի ու տագնապի մեջ:

Համալրելով «Գարեգին Նժդեհ» (Զարուիի Բադայյան), «Մայիս» (Գայա Գյուրջյան, Լորետա Գյուրջյան), «Աղանա» (Ավարդ Կոստանդյան), «Վահրամ Պահլավոնի» (Արմինե Սանթրոսյան), «Մեծն Տիգրան» (Կարինե Հովսեփյան), «Սիսակ» (Մարիետա Խաչատրյան), «Տոռոզյան» և «Նահրի» (Սուաննա Կոստանդյան), «Եղնիկներ» (Արմինե Նալբանդյան), «Խաչակիրներ» (Անժելա Զայյան), «Ջորավար Անդրանիկ» (Մարիետա Սարգսյան) կամավորական ուժերը, ինչպես նաև «Արծիվ 24» գումարտակի (Շունե Աբրահամյան, Անահիտ Լոպյոյան), ՀԱԲ-ի (Զեմֆիրա Միլիտոնյան, Արևիան Մարտիրոսյան, Զովհետա Գյունաշյան), Ղազանչի (Ավարդ Շելյան), Մանաշիդի (Զոյա Մարտիրոսյան), Խրամորթի (Լենա Շամիրյան), Մաղավուզի (Անժելա Նանայովյան), Արմավիրի (Լոյիտա Վարդանովա), Սևանի (Անժելա Հակոբյան), Քարին տակի (Խարինե Առաքելյան), Շոշի (Ավինա Խաչատրյան), Սառնաղբյուրի (Զինահիդա Գրիգորյան) ջոկատները, կանայք պատերազմի ողջ ընթացքում մասնակցեցին Արցախի տարբեր շրջաններում տեղի ունեցող ռազմագործողություններին, մարտադաշտից վիրավորների տարհանման և բուժսպասարկման աշխատանքներին<sup>4</sup>: Ռազմի դաշտում նրանցից ոմանք զոհվեցին և վիրավորվեցին՝ անձնական օրինակով ապացուելով, որ հայ կինը կարող է լինել նաև հայրենիքի զինվոր:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում ի հայտ ենք բերել մոտ 300 կանաց, ովքեր սկսած Շարժման ընդհա-

<sup>4</sup>ԱրՊՀ հայագիտական կենտրոնի արխիվ, ֆ. 2, գ. 1, գ. 1, պմ. 1, թ. 1-3, «Մարտիկ», Ստեփանակերտ, 1995, 26 հունվարի -1 փետրվարի, թիվ 7:

տակյա փովից՝ գաղտնի աշխատանքների, ցուցերի, հավաքների կազմակերպման, ինքնապաշտպանական ջոկատների շարքերում լայնածավալ աշխատանք են կատարել հանուն մեկ նպատակի: Ինքնապաշտպանական ուժերի շարքեր մտնող կանայք գիտակցում էին, որ շոշափելի հայթանակի հասնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է լինել հայրենիքի գինվոր: Այդ վեհ գաղափարն էր նրանց տանում ռազմի դաշտ:

«Մեծն Տիգրան» կամավորական ջոկատի շարքերը համալրած Մարիետա Սարգսյանը, Կարինե Հովսեփյանը և Մելիքյան Հարությունյանը գրեթե նոյն մարտական ուժին անցան: Մ. Սարգսյանը «Զորավոր Անդրանիկ» ջոկատի հետ 1991 թ. մարտ ամսից մասնակցում էր Շահումյանի շրջանի ինքնապաշտպանությանը, ապա՝ Արծվաշենի, Շամշադինի (Տավուշ) մարտական գործողություններին: 1992 թ. Մասիսի շրջանի կամավորական ջոկատի կազմում մեկնեց Լաշինի շրջան՝ հետագայում մասնակցելով մի շարք ռազմագործողությունների<sup>5</sup>:

Կ. Հովսեփյանը Շարժմանը կամավորագրվել էր դեռևս 1988 թ.: Առաջին իսկ օրերից ակտիվորեն մասնակցում էր ցուցերին, իսկ հետո միացավ կամավորական ուժերին: 1991 թ. գարնանը ջոկատի հետ մեկնելով Շահումյանի շրջան՝ այնտեղ մնաց մինչև մեծ նահանջը: Ձենքը ձեռքին, որպես մարտիկ, մասնակցում էր բոլոր կոհիվներին, իսկ ընդմիջումներին օգնում գյուղական աշխատանքներին: Մինչև 1994 թ. մայիսյան գինադադարը շարունակվեց նրա մարտական ուժին, որի ընթացքում էլ, ծանր վիրավորվելով, դարձավ երկրորդ կարգի հաշմանդամ<sup>6</sup>: Մ. Հարությունյանը, 1990 թ. ընդգրկվելով աշխարհազորային գնդի կազմ, ապա՝

<sup>5</sup>Զոհվել է 1992 թ. Մարտակերտի շրջանում հետակոծությունների ժամանակ՝ մարտական ծառայությունների կատարման ընթացքում:

<sup>6</sup>«Հայ գինվոր», Եր., 2010, 10 մայիսի, թիվ 9:

«Եղնիկներ» պարտիզանական ջոկատի կազմում, մասնակցեց Շահումյանի շրջանի ինքնապաշտպանական, իսկ մեծ նահանջից հետո՝ Մարտակերտի, Շուշիի շրջանների ազատագրական մարտերին: Նրա մարտական ուժին շարունակվեց մինչև գինադադար:

Կամավորական ջոկատների շարքերը համալրող կանայք կատարում էին ամենատարբեր առաջադրանքները: Նրանք ժամապահ էին, հետախոսոյզ և կովում էին առաջին գծում: Ազգային-ազատագրական պայքարի խոսուն կերպարներից է Սիրանուշ Առուշանյանը, ով շարժման առաջին իսկ օրվանից Հաթերքի կամավորական ջոկատի շարքերում հայտնվեց ռազմագործողությունների կիզակետում: Հաթերքի ջոկատի հիմքի վրա կազմավորված ստորաբաժանման հետ մասնակից դարձավ Իմերեթ-Քերեվենդ, Աղրաբան, Ումություն գյուղերի թշնամական հենակետերի վերացմանը, ապա՝ Մարտակերտի վերին ձորակի՝ Դրմբոն, Վերին Հոռաթաղ, Հարությունագոմեր, Վաղուհաս, Չլդրան, Զարդախաչ, Հաթերք, Զագլիկ, Ումություն գյուղերի ազատագրմանը: Որպես մարտիկ նա ակտիվորեն մասնակցում էր բոլոր ռազմագործողություններին, իր համառությամբ, նվիրվածությամբ ոգեշնչում մարտական ընկերներին<sup>7</sup>: Պատերազմի ընթացքում երեք անգամ վիրավորվեց, սակայն երկամյա բուժումից հետո կրկին շարք վերադարձավ և ծառայությունը շարունակեց արդեն Մաղավուզում՝ 2-րդ գումարտակի կազմում, որի շարքերում էլ մասնակցեց Մաղավուզի, Լյուզասազի, Լսոնարիսի, Մատաղիսի, 3-րդ սովորողի

<sup>7</sup> «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 2000, 20 փետրվարի, թիվ 12: Գեներալ-մայոր Գեորգի Գասպարյանը հիշում է. «Հաթերքից Սիրանուշ անոնով մի ճերմակահեր կին միշտ մարտի դաշտում էր՝ ավտոմատն ուսած, պատահել է թեժ մարտերին հարցուել եմ՝ Հաթերքից քանի՞ հոգի կան, միայն այդ կինն է եղել ...»:

և Օմարի բարձունքների ազատագրմանը<sup>8</sup>:

Զինվորական գործում կանայք թեև թվով քիչ էին, սակայն նրանց ներկայությունը մեծ ներգործություն էր ունենում մարտիկների հոգեբանության և գործի վրա: Անշուշտ, ռազմական գործողություններին մասնակից կանանց առաջ էր մղում հայրենիքին օգտակար լինելու գաղափարը: Աղավնի Սահակյանը, մեկնելով Արցախ, «Զորավար Անդրանիկ» ընկերության, «Կանաչներ», «Մաշտոց» միավորումների շարքերում մինչև զինադադար մասնակցեց ազատագրական պայքարին: Շուշիի ազատագրումից հետո, տեղափոխվելով Մարտակերտ՝ Յ. Հովհաննիսյանի ջոկատը, նա մասնակից դարձավ Մարտակերտի շրջանի համարյա բոլոր գյուղերի ինքնապաշտպանական մարտերին, որոնց ընթացքում հունիսի 17-ին, Աղաղալիում (ներկայում՝ Հովտաշեն) վիրավորվեց, սակայն չլեց ռազմի դաշտը<sup>9</sup>:

Զինվորագրվելով «Աղբյուր Սերոբ» ջոկատին՝ Նաիրա Սահակյանը մեկնեց Արցախ և մասնակցեց Ասկերանի, Լաշինի շրջաններում ընթացող թեժ մարտերին: Այնուհետև, տեղափոխվելով Մարտակերտի շրջան, շարունակեց ծառայությունն այնտեղ: Մարտերում նա ոչ միայն գթության քոյր էր, այլև զինվոր, ով հեշտությամբ տիրապետելով զենքի տարրեր տեսակների, դարձավ անվիրեալ նշանառու: Բացի

<sup>8</sup> Աղաջանյան Մ., Հաթերք, Ստեփանակերտ, 2012, էջ 452: Ս. Առուշանյանը հրադադարից հետո շարունակեց ծառայությունը և միայն 1996 թ. գորացրվեց՝ ավագ լեյտենանտի կոչումով:

<sup>9</sup> Վարդումյան Հ., Կին ազատամարտիկները, Եր., 2002, էջ 121: 1993 թ. դեկտեմբերին Աղավնի Սահակյանը տեղափոխվեց Մարտակերտի շրջանի հրետանային դիվիզիոն, որտեղ ծառայեց մինչև 1996 թ. դեկտեմբերի վերջը: Նրա մարտական ուղին անցավ Շուշիի, Աղդամի, Մարտակերտի, Քարվաճառի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերում: Հրադադար հայտարարվելուց հետո իր ձեռքով կարած եռագույնը, որը պատերազմի ողջ ընթացքում հետև էր, ամրացրեց ազատագրված Շուշիի տներից մեկի տանիքին՝ որպես ազատության, անկախության և պետականության հավերժական խորհրդանշի:

հրաձիգ լինելուց, նա նաև հետախույզ էր: Զոկատի հետախույզների հետ միասին ներթափանցում էր թշնամու թիկունք, կատարում հրամանատարության առաջադրանքները, և պատահական չէ, որ իր ճարպկության, անվախության, թշնամուն հմտորեն մոլորեցնելու կարողության համար ստացել էր «Սպիտակ աղվես» մականունը<sup>10</sup>:

Կամավորական ուժերի ծևավորման պահից կանայք շարունակում էին անդամագրվել ջոկատներին՝ հետապնդելով մեկ նպատակ՝ պաշտպանել երկրի սահմանները, օգտակար լինել, ծառայել հայրենիքին:

«Աշոտ Երկաթ» ջոկատի կազմում (հրամանատար՝ Աշոտ Մինասյան) Անահիտ Վարդայանը մեկնեց Մարտակերտի ճակատ և մասնակցեց շրջանի մի շարք գյուղերի համար մովող մարտերին: Ապա՝ մարտական ուժին անցավ Երևանի թիվ 2 կամավորական գումարտակի շարքերում: 1993 թ. մայիսին գումարտակը ներառվեց Մ. Գրիգորյանի գնդի կազմ և մասնակցեց Ղուբաթլուի, Զարբայիլի, Ֆիզովու շրջանների գյուղերի ազատագրմանը: Անահիտ Վարդանյանը մասնակցում էր նաև հետախուզությանը, ինչպես նաև գինամթերք հասցնում մարտիկներին<sup>11</sup>:

Ռազմի դաշտում կանայք ոչ միայն գենք էին կրում, իրականացնում մարտական գործողություններ, ապահովում վիրավորների տարհանումն ու առաջին բուժօգնությունն,

<sup>10</sup> Հայուիիներ, հանրագիտարան, հատոր 1, Եր., 2011, էջ 206: 1993 թ. մայիսի 9-ին ահեղ մարտերի ընթացքում նահատակվում է Նաիրա Սահակյանը:

<sup>11</sup> Վարդայան Հ., Աստվածների կանչը, Եր., 2004, էջ 60-61: Ա. Վարդանյանը մասնակցում էր նաև հետախուզությանը, ինչպես նաև գինամթերք հասցնում մարտիկներին: 1994 թ. ապրիլի 24-ին հակառանեկային ականի պայթյունից վիրավորվում է, սակայն, չկորցնելով ինքնատիրապետումը, նախ վիրակապում է ոտքը, ապա՝ 17 վիրավորների տեղափոխում գինվորական հիվանդանց: Նոյնիսկ վիրավորվելուց հետո նա շարունակեց մնալ ուզմի դաշտում: 1994 թ. հոկտեմբերից մինչև 1995 թ. սեպտեմբերը ծառայեց Մատադիստում՝ կատարելով սահմանապահի պարտականություններ, ապա տեղափոխվեց Հռոդիք:

այլ նաև հանդես էին գալիս այսպես կոչված «խնամակալի» դերում: Որպես այդպիսին, կանայք սննդի, մաքրության և առօրյա այլ հոգսերի պատասխանատուներն էին: Սա իր հերթին նշանակում է, որ կնոջը վերագրված դերը՝ որպես խնամք ապահովողի, կարևորվում էր նույնիսկ այնպիսի արտակարգ իրավիճակներում, երբ, ըստ Էության, կնոջ և տղամարդու գործառույթները չեն տարբերվում:

«Կարս» ջոկատի շարքերում Նվարդ (Նոնա) Դուլդուրյանը 1989-1994 թթ. մասնակցեց <<Արարատի (Երասխ), Իջևանի, Եղեգնաձորի (Խաչիկ), Սիսիանի (Սոֆլու), Ճամբարակի (Վահան, Արծվաշեն), Գորիսի (Կոռնիձոր), Նոյեմբերյանի, ապա ԼՂՀ Մարտակերտի, Քարվաճառի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին<sup>12</sup>: Վահան գյուղի դիրքերում ցնցակաթված ստանալով, դեռ չապաքինված, նա միացավ «Պուշկեն յալ» բարձունքի համար մղվող մարտերին, որտեղ և նորից վիրավորվեց: Սակայն անկոտրում կամքի ու վճռականության շնորհիվ շարունակեց պայքարը՝ որպես ջոկատի ավագ մարտիկ:

Կամավորական և աշխարհագորային ինքնապաշտպանական ջոկատների շարքերը համալրած կանայք պատերազմի ողջ ընթացքում փայլուն կերպով կատարեցին իրենց առջև դրված խնդիրները: Նրանցից ոմանք իրենց կյանքը զոհաբերեցին, ոմանք էլ մարտերի ընթացքում վիրավորվեցին, սակայն ապաքինվելուց հետո վերադարձան մարտադաշտ և շարունակեցին պայքարը մինչև գինադադար:

1988 թ. Բերդաձորի ենթաշրջանը վերածվել էր պատերազմական թատերաբեմի: Բոլոր կողմերից շրջապատված լինելով ադրբեջանական գյուղերով՝ ենթաշրջանի բնակավայրերը մնացել էին առանց հաղորդակցության ուղիների, կապի միջոցների, չեին գործում վարչական

<sup>12</sup> «Արցախ», Ստեփանակերտ, 1994, 18 հոկտեմբերի, թիվ 5:

Ենթակառուցվածքները: Թշնամու ոտնձգությունները կանխելու համար Բերդաձորի ինքնապաշտպանությանը միացած ժաննա Գալստյանն իր առաջին խնդիրը համարեց կազմակերպել տեղի ինքնապաշտպանությունը և բարձրացնել ջոկատների մարտունակությունը<sup>13</sup>: Ժամանակը և հանգամանքները ցուց տվեցին, որ ջոկատների, թեկուզ համակարգված կոհիվներով, զգալի հաջողությունների հասնելն անհնարին է: Հարկավոր է ստեղծել կանոնավոր բանակ, և ժ. Գալստյանը դարձավ այս գործի առաջամարտիկներից մեկը: Համակարգող խմբի մի քանի անդամների հետ լինում էր շրջաններում, հանդիպումներ ունենում կամավորական ջոկատների հրամանատարների հետ, աշխատում էր ուժերը միավորել մեկ բանակային կառուցի մեջ և զորակությունը կազմակերպում: ԼՂՀ ՊԲ կազմակուրումից հետո ժ. Գալստյանը նշանակվեց ՊԲ Կենտրոնական պաշտպանական շրջանի հրամանատարի տեղակալ<sup>14</sup>:

Կորուստները, անկասկած, ավելի մեծ կլինեին, եթե իրենց բարձրության վրա չլինեին հայկական գյուղերի ինքնապաշտպանական ուժերը: Ասկերանի ինքնապաշտպանության շարքերը համալրած Շուշանիկ Աբրահամյանը, Թամարա Նազարյանը, Քանաքարա Ղարայանը<sup>15</sup>, Զինահիդա Գրիգորյանը, Տանյա Առստամյանը, Լյուդմիլա Մելքոնյանը, Կարինե Գրիգորյանը, Ոհսուա Հարությունյանը, Հասմիկ Հայրապետյանը, Զոյա Միրզոյանը, Գայանե Գաբրիելյանը, Ալլա Արզումանյանը, Սրբուհի Աղաջանյանը և շատ ուրիշներ իրեն ներդրումն ունեցան հայրենիքի պաշտպանության գործում<sup>16</sup>:

<sup>13</sup> «Մարտիկ», Ստեփանակերտ, 2009, 12 ապրիլի, թիվ 22:

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Համարվում է առաջին կին զոհը՝ 1992 թ.:

<sup>16</sup> ԱրՊՀ հայագիտական կենտրոնի արխիվ, №. 2, գ. 1, գ. 1, պմ. 1, թ. 1-3:

Ինքնադրսութումի, ինքնաբացահայտումի բազմաթիվ վառ օրինակներ կան, որ պատմվում են մարտնչած կանանց շրջանում, բացահայտում նրանց, հիրավի, բարոյական մեծ նկարագիրն ու հայեցի կերպը՝ հայ կնոջ տեսակը:

Շարժման հենց սկզբին Հադրութի շրջանի գյուղերը ենթարկվում էին Ֆիզուլու և Ղուբաթլուի կողմից պարբերաբար կրկնվող ավազակային հարձակումների, թալանի, անասնագողության: Շրջափակումը դարձել էր ոչ միայն սովորական երևոյթ, այլ նաև ծրագրված ու ամենօրյա: Աղբբեջանցիներն այս գործելառնը մշակում էին Բաքվում՝ Լեռնային Ղարաբաղի սահմանամերձ գյուղերում բնակչությանը հիասթափեցնելու, հուսալքելու և հայրենի օջախներից դուրս մղելու նպատակով: Յուրաքանչյուր հայկական գյուղում կամավորականների երևալն արդեն ինքնապաշտպանության կազմակերպման քայլ էր: Զոկատներին մտահոգում էր մարզի բնակչության ինքնապաշտպանության հարցը, իսկ բնակչությունն ըստ ամենայնի աջակցում էր դրա լուծմանը: Արցախի բոլոր հայկական բնակավայրերն ունեին ինքնապաշտպանական ջոկատներ, որոնք հիմնականում օգնում էին այն բնակավայրերին, որտեղ վտանգն ավելի մեծ էր:

Անդրադառնալով շրջանի մի շարք կամավորական ուժերին, այդ թվում՝ Ուխտաձորի, Շաղասեռի ջոկատներին, նշենք, որ նրանց կազմում ընդգրկված կանայք (Էլլա Խաչատրյանը՝ Ուխտաձորի, Նահրա Գալստյանը՝ Շաղասեռի ջոկատների կազմից) նույնպես մի շարք աշխատանքներ էին տանում տեղի բնակավայրերի ինքնապաշտպանությունը կազմակերպելու ուղղությամբ<sup>17</sup>:

Էջմիածնի կամավորականները Հադրութ մեկնեցին 1989 թ. օգոստոսին և, միանալով տեղի կամավորականներին, ազատագրական շարժման առաջին փուլում անցան ընդ-

<sup>17</sup> Նոյն տեղում:

հատակյա պարտիզանական ինքնապաշտպանության կազմակերպմանը՝ գիտակցելով, որ պայքարի ճիշտ կազմակերպման ճանապարհը դա է: Համալրելով Էջմիածնի կամավորական ջոկատները և զորամիավորումը, Նազիկ Ամիրյանը<sup>18</sup>, Ռուզաննա Եսայանը<sup>19</sup>, Հեղինե Բդյանը<sup>20</sup>, Մարիետա Քալաշյանը 1989-1994 թթ. մասնակցեցին ՀՀ Հաղորդի Մելիքաշեն, Հախովլու, Խրմնջուղ, Դուդուկչի, Էղիլու, Տող, Հողեր, այնուհետև՝ Շուշիի, Քելբաջարի, Մարտակերտի, Ֆիզովիի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին<sup>21</sup>: Ազատագրական պայքարի ընթացքում կանայք հայտնվում էին այնտեղ, որտեղ հարկավոր էր լարել ողջ ուժերը, գերմարդկային կարողություններ ծեռք բերել՝ հասցնել կատարելու ծանր ու պատասխանատու գործը:

1991 թվականից «Գարեգին Նժդեհ» կամավորական ջոկատի շարքերում Զարուիի Բադայանը մինչև 1992 թ. հունվար մասնակցեց Հաղորդի շրջանի Բլութան (Պլեթանոց),

<sup>18</sup> 5-րդ գումարտակ կամավորագրված Նազիկ Ամիրյանը, 1992թ. առաջադրվեց գումարտակի թիկոնըի պետի տեղակալ: Կամավորական բրիգադի կայացումից հետո՝ 1993թ., երբ Էջմիածնի գումարտակն ընդգրկվեց բրիգադի կազմ, նոյն պարտականություններն ստանձնեց բրիգադում և գրադարձ գորամիավորման նյութատեխնիկական բազայի կազմակերպման և ապահովման գործով, միաժամանակ մասնակցելով մի շարք ուսումնական գործությունների:

<sup>19</sup> 1992 թ. դեկտեմբերին ջոկատն արյունահեղ մարտեր էր մղում Հաղորդի շրջանի Ուլյանձոր գյուղի պաշտպանության համար: Վիրավորները շատ էին, օգնություն էր պետք: Ռ. Եսայանը որոշեց բեռնատարներով շրանց տեղափոխել շոշենտրոն: Սակայն այդպես էլ չկարողացավ հասնել այնտեղ: Եթուովին «Մահվան ճանապարհ» անունն էր ստացել, որտեղ էլ նա գոհվեց թշնամու արկի պայթյունից:

<sup>20</sup> Հ. Բդյանը սկզբում ծառայության անցավ Հաղորդի շրջանի ջոկատում, ապա՝ Էջմիածնի ջոկատում և որպես կապավոր տեղափոխվեց առաջին գիծ: Զոհվեց 1992 թ. աշնանը Հաղորդի շրջանի Ուխտաձոր (Էղիլու) գյուղի համար մղվող մարտերում:

<sup>21</sup>Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994 թթ., հանրագիտարան, Եր., 2004, էջ 286:

Էդիլու (Ովստածոր), Խրմանջուղ (Շաղկավանք) գյուղերի պաշտպանական ռազմագործողություններին: Ապա՝ «Նիկոլ Դուման», «Կոռնիճոր», «Սուրմալու» և այլ ջոկատների հետ թիկունքային աշխատանքներին՝ դեղորայք, հանդերձանք, զինամթերք հայթայթելով համար<sup>22</sup>:

Ստեղծված իրադարձությունները և իրավիճակները կանանց դրդում էին իրաժարվելու կանացիության դոգմաներից, կոտրելու խաղաղ կյանքի կարծրատիպերը և դեմ գնալու ընդունված նորմերին: Նրանցից շատերը դեռևս 1988 թ. շարժման ակտիվիստներ էին: Շարժման փոխակերպումից անմիջապես հետո կանայք ինքնըստինքյան մտան նաև մարտադաշտ՝ որպես զինակից ընկերների աջակից: Մտնելով Մարտունու շրջանի տարբեր կամավորական ջոկատների շարքերը, ապա 1992 թ. սեպտեմբերից՝ Մարտունու պաշտպանական շրջանի ստորաբաժանումները, Մելանյա Օհանյանը, Սիլվա Բալայանը, Անժելա Զամալյանը, Վերա Հարությունյանը, Մարգո Ազարյանը, Մելանյա Սարգսյանը, Հասմիկ Օհանջանյանը, Ռայա Ավագյանը մասնակցեցին շրջանի ճարտար, Մաճկալաշեն, Մյուրիշեն, Ավդուռ, Հացի, Նորշեն, Բերդաշեն գյուղերի ինքնապաշտպանական, ինպես նաև Շուշի, Մարտակերտի, Աղդամի, Ֆիզովու, Զաբրայիի, Զանգելանի և այլ շրջանների ու ռազմավարական բարձունքների ազատագրական մարտերին<sup>23</sup>: Հատկանշական է, որ կանանց ներկայությունը ռազմի դաշտում, հատկապես իրամանատարական կազմում, ստիպում էր տղամարդկանց ցանկացած պարագայում դիմակայել վտանգն ու դժվարությունները և մնալ տղամարդուն վերապահված դերի մեջ:

ՀԱԲ-ի<sup>24</sup> մի ջոկատի հետ Արցախ մեկնած Անահիտ Մար-

<sup>22</sup> «Մարտիկ», Ստեփանակերտ, 1999, 20 հունվարի, թիվ 7:

<sup>23</sup> «Ամարաս», Մարտունի, 2005, 9-15 մայիսի, թիվ 13:

<sup>24</sup> Հայոց ազգային բանակ, ողբ գործել է 1989-1990 թթ.:

տիրոսյանը, միանալով Մարտակերտի շրջանի ազատագրման ռազմագործողություններին, վիրավորվում է մի քանի անգամ: Սակայն 1992 թ. ապրիլին Չլդրանի թեժ մարտերից<sup>25</sup> հետո ստեղծվում է «Անահիտ» ջոկատը՝ 28 հոգուց կազմված՝ Անահիտ Մարտիրոսյանի հրամանատարությամբ: Նրա գլխավորած ջոկատը, որի կազմում արցախցիների կողմին կովում էին ոռւս կամավորականներ, փառավոր մարտական ուղի անցավ՝ ապրելով և՛ նահանջի սարսափին ու ամոթը, և՛ հարձակման ու գերված տարածքների ազատագրման երջանկությունը<sup>26</sup>:

Ազատամարտին մասնակցած կանանց մարտական ուղին անցնում էր Արցախի համարյա բոլոր շրջաններով: Առաջադրանքներն ու գործողությունները տարբեր էին, նվիրումը՝ նոյնը: Լիանա Մկրտումյանն, անդամագրվելով Վլադիմիր Բալայանի ջոկատին, սկզբնական շրջանում մասնակցեց մարտական պատրաստության պարապմունքներին, ապա անցավ առաջին մարտական առաջադրանքին՝ ջոկատի մշտական տեղակայման վայրից դուրս բերեց զենքն ու կապի միջոցները: Նա դարձավ մարտական մեքենայի հրամանատար և մասնակցեց Մարտակերտի, Աղաբեկալինջի, Մոխորաթաղի, Մեծ Շենի, Սրիսավենդի, Կիչանի, Դրմբոնի, Օմարի լեռնանցքի, Քարվաճառի ազա-

<sup>25</sup> Չլդրանի թեժ մարտերի ընթացքում գերի ընկած 14 թուրքերի մեջ էր Ա. Մարտիրոսյանի դպրոցական ընկերը, որի մասին տեղեկանալով, հրամանատարը նրան հանձնեց Անահիտի կամքին: Վերջինիս վրեժը մեծ էր՝ աչքի առաջ էր Սումգայիթում տանջամահ արված ընկերուիին: Առանց վարանելու, նա իր ձեռքով սպանեց «դավաճանին»:

<sup>26</sup> «Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 2007, 11 փետրվարի, թիվ 6: 1993 թ. Արշան գյուղի դիրքերում նա հերթական անգամ վիրավորվեց՝ ոտքից և ձեռքից: Այս անգամ արդեն առողջական վիճակի կտրուկ վատթարացման պատճառով ստիպված էր հեռանալ պատերազմի դաշտից: Նրա երկարատև ապարինման պատճառով ջոկատը լուծարվեց՝ ընդգրկվելով ՀՀ-ի կազմում:

տագրման մարտերին<sup>27</sup>:

Ուզմադաշտ մեկնող կանայք, իհարկե, ունեին իրենց հիմնական և կարևոր պատճառները՝ հայրենասիրական մղում, իրավիճակի թելադրանք և հարազատներին մոտ լինելու ցանկություն: Եվ հայտնվելով ռազմական իրավիճակում՝ նրանք, ինչպես նաև թիկունքում գործող հազարավոր կանայք, իրենց ուսերի վրա տարան պատերազմի ողջ ծանրությունը:

---

<sup>27</sup> «Արցախ», Ստեփանակերտ, 1992, 26 դեկտեմբերի, թիվ 3: Նրա կողքին մարտնչող տղամարդ ազատամարտիկների պատասխանատվությունը: 1993 թ. սկզբներին տեղափոխվելով Վարդենիս՝ նա անդամագրվեց տեղի ջոկատին (իրամանատար՝ Հովսեփ Հովսեփյան): Իսկ հունիսին նշանակվեց գումարտակի ոստամնական դասակի իրամանատար: Զինադադարից հետո, որոշ ժամանակ անց, նորից վերադարձավ և շարունակեց ծառայութունը ԼՂՀ ՊԲ-ում:

**ISKUHI AVANESYAN**

Lecturer of the Chair of History of ArSU,

Candidate of Historical Sciences,

Associate Professor

iskuhi82@mail.ru

**THE FORMATION OF SELF-DEFENSE FORCES AND THE  
VOLUNTEERING OF WOMEN TO THE DETACHMENTS IN  
1988-1991**

**SUMMARY**

**Keywords:** movement, struggle, volunteers, squads, women, self-defense, victims, wounded, help, action. wounded, help, action.

The idea of self-defense, born in 1988 in the whirlpool of events gradually became a material necessity under the pressure of evolving events. The constant threat to the NKR borders and peaceful settlements, the rocket fire, the tactical tasks of the self-defense forces imperatively required to neutralize the enemy's firing points, to create a security zone around the republic. The women who took part in the large-scale military operations planned and undertaken for this purpose, brilliantly fulfilled the tasks assigned to them. Joining the ranks of the first volunteer military-self-defense detachments spontaneously formed in Armenia and Artsakh throughout the war, they showed that a woman can be a good soldier and defender of the motherland on the battlefield.

**ИСКУИ АВАНЕСЯН**

Лектор кафедры истории АрГУ,

к.и.н., доцент

iskuhi82@mail.ru

**ФОРМИРОВАНИЕ САМООБОРОНИТЕЛЬНЫХ СИЛ И  
ДОБРОВОЛЬНОЕ ПРИСОЕДИНЕНИЕ ЖЕНЩИН К ОТРЯДАМ В  
1988-1991 ГГ.**

**РЕЗЮМЕ**

**Ключевые слова:** движение, борьба, добровольцы, отряды, женщины, самооборона, жертвы, раненые, помощь, действие.

Идея самообороны, рожденная в водовороте событий, происходящих в 1988 году, под давлением развивающихся событий, постепенно стала материальной необходимостью. Постоянная угроза границам и мирным поселениям НКР, ракетные обстрелы, тактические задачи сил самообороны требовалинейтрализации огневых точек противника и создания зоны безопасности вокруг республики. Женщины, которые участвовали в масштабных военных операциях, запланированных и предпринятых с этой целью, блестяще выполнили поставленные перед ними задачи. Вступив в ряды стихийно сформировавшихся первых добровольных и ополченческих отрядов самообороны в Армении и в Арцахе, на протяжении всей войны они показали, что женщина и на поле боя может быть хорошим солдатом, защитником родины.

## ՆԱՐԻՆԵ ՄՈՎՍԵՍՅԱՆ

«ԳԱԱ Դի ավագ լաբորանտ  
narinem2006@gmail.com

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ (ԱՐՑԱԽՈՒՄ) 1920 թ. ՓԵՏՐՎԱՐ - ՄԱՅԻՍԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ<sup>1</sup>

**Հիմնաբառեր՝** Լեռնային Ղարաբաղ, պատմագիտություն, թուրք-հայկական պատերազմ, բանակ, հարձակում, Հայաստանի Հանրապետություն, ականատեսներ, պետական գործիչներ:

1920 թ. թուրք-հայկական պատերազմին թուրքիայի նախապատրաստման փուլում առանցքայինն արևմուտքից Հայաստանի Հանրապետության դեմ իրագործվելիք թուրքական լայնամասշտաբ հարձակումն էր: Դրան նախորդած ռազմական իրադարձությունների, մասնավորապես՝ Արցախում Ադրբեջանի ծավալած ռազմական գործողությունների լուսաբանումն ունի և՛ պատմագիտական նշանակություն, և՛ քաղաքական արդիականություն: Ադրբեջանը ծգտում էր ամրապնդել իր ռազմական ազդեցությունն Արցախում, իսկ հայկական կողմի խնդիրն այդ ծրագրի իրագործումը խափանելն էր:

1920 թ. արցախյան պատերազմը համեմատաբար քիչ է լուսաբանվել ականատեսների հուշերում, քանի որ վերջիններս ավելի կարևորում էին ռազմական գործողությունների սկսման օրվա խնդիրը դրանց էությանն անդրադառնալու փոխարեն: Խորհրդահայ պատմագիտությունը, հայտնի պատճառներով, անտեսել է նշալ հարցը, իսկ հետխորհրդային հեղինակներն ապահովեցին նրա որոշակի վերլուծությունը:

<sup>1</sup> Հողմածի արխիվային նյութը հեղինակին տրամադրել է «ԳԱԱ Դի առաջատար գիտաշխատող, պ. գ. դ. Գայանե Մախմուրյանը»:

Ականատեսների շարքում Սիմոն Վրացյանն, օրինակ՝ համոզմունք է հայտնում, որ 1918 թ. Բրեստի պայմանագրից ի վեր բոլշևիկների ու թուրքերի միջև հաստատվել էին սերտ բարեկամություն ու գործակցություն: Դրանք Կովկասում ուղղվեցին Հայաստանի դեմ: Քեմալա-բոլշևիկյան գործակցության արդյունքում 1920 թ. օգոստոսի 10-ին Հայաստանին պարտադրվեց Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի «վիճելի տարածքներ» կարգավիճակը<sup>2</sup>: Մինչ այդ, թիրախ ունենալով Արցախը, թուրքերը երկրամասում նախապես ձեռնարկել էին ռազմական գործողություններ՝ օգտագործելով ադրբեջանական բանակն ու տեղի քուրդաթարական խաժամումը: Լրացնելով Սիմոն Վրացյանին, Ալեքսանդր Խատիսյանը գրում է. «... Մենք գտնվում ենք քրոնիկական պատերազմի վիճակում, որը դեռ չի հայտարարված, բայց տարվում է շարունակ և անընդհատ ... Ադրբեջանը ուղղակի թունավորում է մեր կյանքը»<sup>3</sup>: << կառավարությունը մշտապես շեշտում էր Ադրբեջանի ագրեսիայի փաստը և համոզմունք հայտնում, որ դրա դադարեցման դեպքում իրավիճակը կխաղաղվի<sup>4</sup>:

Այսպես, Ադրբեջանում << դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանի>> << արտգործնախարար Ալ. Խատիսյանին 1920 թ. հունվարի 30-ին հղած նամակից տեղեկանում ենք, որ հասուկ այցով Բաքու էր ժամանել Անդրկովկասում Մեծ Բրիտանիայի հանձնակատար Ջոն Օլիվեր Ուորդորպը: Վերջինիս հետ S. Բեկզադյանը, ի թիվս այլ հարցերի, քննարկեց նաև Ղարաբաղում և. բեկ Սուլթա-

<sup>2</sup> Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մոլորդի եւ թրքական սալի միջեւ, Պեյրութ, 1953, էջ 20-41:

<sup>3</sup> Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Պեյրութ, 1968, էջ 199, 202:

<sup>4</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, գ. 1, գ. 249, թ. 72, գ. 2, գ. 165, թթ. 1-8:

նովի<sup>5</sup> և հթթիհատի քաղաքականությունը: Զ. Ուորդրովը խոստացել էր համաձայնության գալ ադրբեջանական կողմի հետ՝ թույլ չտալու նրանց զորքերի տեղակայումը Ղարաբաղում<sup>6</sup>:

Նոյն այդ հարցին անդրադարձել է հայկական մամովը: 1920 թ. մայիսի 13-ին «Մշակը» հրապարակում է ՀՀ կառավարության հաղորդագրությունը, որում ներկայացված էր Ղարաբաղում և Գանձակում Ադրբեջանի զորքերի ու հրոսակախմբերի սանձազերծած արյունահեղությունը<sup>7</sup>:

Մամովի էջերում նաև լուաբանված են Ղարաբաղում և Զանգեզուրում տեղի քուրդ-թաթարական զինված խմբերի գործողությունները հայերի դեմ. «Հայաստանի կառավարությնը, հետեւելով իր մշտական խաղաղասիրական քաղաքականութեանը, արինահեղութիւնից խոսափելու համար վճռական միջոցների չէր դիմում քուրդ-թաթարական այդ յանդուգն գործողպետիւնների դէմ», - գրում էր «Մշակը»՝ ներկայացնելով բնակչության զինված պայքարը թաթարական բանդաների, երկիրը ջլատող ավարառությունների ու դաժանությունների դեմ<sup>8</sup>: «Յառաջն» էլ կենդանի վկայություն էր ներկայացնում Զանգեզուրում ու Ղարաբաղում թաթարների իրականացրած ավերի ու կոտորածի մասին<sup>9</sup>: Արցախից եկող ահազնացող լուրերին ընդառաջ՝ ՀՅ Դաշնակցության բյուրոն դեռևս 1919 թ. դեկտեմբերին Արցախ գործուղեց Արսեն Միքայելյանին՝ պաշտպանության աշխա-

<sup>5</sup> Անգլիական հրամանատարության գիտությամբ ու համաձայնությամբ 1919 թ. հունվարի կեսերին Արցախ-Զանգեզուրի նահանգապետ էր նշանակվել հայտայաց ջարդարար Խոսրով բեկ Սոլթանովը: Տե՛ս Գալյուս Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 65, Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., Եր., 2018, էջ 110:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 200, գ. 2, գ. 72, թթ. 4-6:

<sup>7</sup> «Մշակ», Թիֆլիս, մայիսի 13, 1920, էջ 3:

<sup>8</sup> Նոյն տեղում, սեպտեմբերի 15, 1920, էջ 2, հոկտեմբերի 22, 1920, էջ 1:

<sup>9</sup> «Յառաջն», Երևան, սեպտեմբերի 7, 1920, էջ 2:

տանքների համար: Վերջինս պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանի գնահատմամբ՝ եղել է հավատարիմ կուսակցական, բայց գաղտնի գործողություններում՝ անփորձ<sup>10</sup>: Գ. Մախմուրյանը ևս նշում է Ա. Միքայելյանի ռազմական գործունեության չհամակարգված լինելը, միևնույն ժամանակ նկատելով, որ Երևանում պետական ու կուսակցական գործիչները թերագնահատում էին թուրք սպաներով համալրված ու դեկավարվող թաթարական կանոնավոր զորքի ուժը<sup>11</sup>:

1920 թ. հունվարից ռազմաքաղաքական դրությունն Արցախում ծանրանում էր<sup>12</sup>: Արարատ Հակոբյանը դա առաջին հերթին կապում է տարածաշրջանում Կարմիր բանակի հայտնվելու հետ, մի հանգամանք, ինչն առաջացրեց Արրբեջանի մուսավաթական իշխանությունների ակտիվությունը<sup>13</sup>: Փետրվարից խիստ ծանրանում է Արցախի վրա հարձակման վտանգը:

Արրբեջանի կառավարությունը բացահայտորեն առաջ էր տանում Արցախ-Զանգեզուրը վերջնականացես գրավելու իր ծրագիրը: << արտգործնախարարության հեռագրում ուղղված Թիֆլիսում դիվանագիտական ներկայացուցիչ Մ. Թումանյանին, շեշտված էր Արրբեջանի ագրեսիան Զանգեզուրի և Ղարաբաղի նկատմամբ<sup>14</sup>: Արրբեջանի կառավարությունը բացահայտորեն առատ ռազմական և նյութական օգնություն էր ստանում Թուրքիայից: Ըստ 1920 թ.

<sup>10</sup> Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 3, Եր., 2015, էջ 165:

<sup>11</sup> Տե՛ս Մահմուրյան Գ. Трагедия Шуши 23-26 марта 1920 г. в отечественной и зарубежной историографии, «Историко-филологический журнал», НАН РА, 2021, № 2, с. 115.

<sup>12</sup> Արրահամյան Հ., Մարտնչող Արցախը, 1917-2000, գիրք Ա, Եր., 2003, էջ 171, Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 111:

<sup>13</sup> Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 111:

<sup>14</sup> Տե՛ս ՀԱԱ, §. 200, գ. 1, գ. 249, մաս 1, թ. 72, գ. 2, գ. 165, թթ. 1-8:

փետրվարի 7-ին << ռազմական նախարարության կազմած գաղտնի տեղեկագրի՝ Բաքվի կառավարությունն իր դրածո Խ. բեկ Սովորանովին, որպես քրդերի պարագլխի, հանձնարարել էր արցախահայության դեմ կազմակերպել քրդական հրաձգային դիվիզիա<sup>15</sup>:

Սկզբնաղբյուրներ վկայում են, որ 1920 թ. փետրվարի 18-ին Շուշի էին ժամանել իսլամական բանակի նախկին հրամանատար Նուրի Քաջան և «Արևելք» զորաջոկատի նախկին հրամանատար, Արևելքում քեմալականների պաշտոնական ներկայացուցիչ Խալիլ-բեյը<sup>16</sup>:

1920 թ. փետրվարի 19-ին Խ. բեկ Սովորանովը Ղարաբաղի հայերի Ազգային խորհրդից պահանջում էր անմիջապես լուծել Ղարաբաղն Ադրբեջանին միացնելու հարցը՝ պատճառաբանելով Փարիզի վեհաժողովի իր թե ավարտված լինելն ու Երկրամասի տնտեսական կապվածությունն Ադրբեջանին: Նա ուզում էր, որ Խորհրդության թույլ տար ադրբեջանական զորքեր մտցնել գավառներ: Հայ հեղինակները, սակայն, միակարծիք են. Արցախը հարկավոր էր Ադրբեջանին ոչ թե տնտեսական առումով, այլ ռազմավարական և քաղաքական. Բաքուն ծգտում էր զինաթափել տեղի հայությանը, կոտորել կամ բռնագաղթի Ենթարկել բնակչությանը, բնակեցնել Ղարաբաղը թուրքերով, իրագործել պանխալամիզմի ծրագիրը<sup>17</sup>: Մինչ այդ հաջողվել էր ադրբեջանական զորքեր մտցնել Շուշի և Խանքենդ

<sup>15</sup> Արքահամյան Հ., նշվ. աշխ., Էջ 172:

<sup>16</sup> Մահմուրյան Գ. Տրagediya Շուշի 23-26 марта 1920 г. в отечественной и зарубежной историографии, с. 113.

<sup>17</sup> Ովուրաբյան Բ., Արցախան գոյապայքարը. Եր., 1994, Էջ 74-75, նույնի՝ Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Եր., 1994, Էջ 223-224, Արքահամյան Հ., նշվ. աշխ., Էջ 178: Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920, Եր., 2008, Էջ 261, Տумանյան Մ. Дипломатическая история Республики Армения 1918-1920 гг. Ер., 2012, с. 222.

(Վարարակն)<sup>18</sup>:

Զարգացնելով Խ. բեկ Սովթանովի հայտարարությունը, պաշտոնական Բաքուն առավել հետևողականորեն էր շարունակում զորքեր կուտակել Արցախում<sup>19</sup>: Փետրվարի 20-ին Ալ. Խատիսյանը գրում է S. Բեկզադյանին. «ՀՀ կառավարության պաշտոնական հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ թուրք և ադրբեջանցի գեներալների հրամանատարությամբ բազմաթիվ ադրբեջանական զորքեր են տեղակայվել Շուշիում և Ղարաբաղում»<sup>20</sup>: Նույն օրը ՀՀ արտգործնախարարության հեռագրում հաղորդվում էր, որ ադրբեջանական զորքերը թուրքերի աջակցությամբ պատրաստվում էին ներխուժել Արցախ<sup>21</sup>: Այդ նպատակով Շուշի էր ժամանել Նորի փաշան՝ թուրք սպաների հետ: Նրանք պատրաստվում էին լայնամասշտաբ հարձակման՝ մի քանի ուղղություններով՝ գենքով նվաճելու Ղարաբաղը<sup>22</sup>:

Նույն է վկայում նաև 1920 թ. փետրվարի 20-ին ՀՀ արտգործնախարարի հեռագիրը Բաքվում իր պաշտոնակցին՝ ադրբեջանական զորքի՝ Արցախ ներխուժելու վերաբերյալ: Հեռագրում հաղորդվում էր, որ, ըստ ՀՀ կառավարության ձեռք բերած պաշտոնական տվյալների՝ Շուշիում և Ղարաբաղում կենտրոնացվում էին բազմաքանակ զորքեր՝ թուրք և ադրբեջանցի զորահրամանատարների ղեկավարությամբ:

ՀՀ կառավարությունը շեշտում էր, որ նմանօրինակ քայ-

<sup>18</sup>ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 563, թ. 48, Ուլուբարյան Բ., Արցախյան գոյապայքարը, էջ 74-75, նույնի՝ Արցախի պատմությունը Ակգրից մինչև մեր օրերը, էջ 223-224, Արրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 178, Թումայան Հ., նշվ. աշխ., էջ 261, Տյաման Մ., նշվ. աշխ., էջ 222:

<sup>19</sup>Հովհաննիսյան Գ., Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971, էջ 156:

<sup>20</sup>ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 249, մաս 1, թ. 129:

<sup>21</sup>Տեր-Սարկisան Ա. Արմենե Հայոց Կարաբախ. Մ., 2015, ս. 256.

<sup>22</sup>ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 249, մաս 1, թ. 139:

լերով խախտվում էին շահագրգիռ պետությունների միջև կնքված բոլոր համաձայնագրերը և նոր արյունահեղության վտանգ էր առաջանում: Բարվի կառավարությանը կոչ էր արվում անհապաղ անհրաժեշտ միջոցների դիմել՝ կանխելու հարձակումը և պահպանելու բարիդրացիական հարաբերությունները<sup>23</sup>:

Այն մասին, որ թուրքերը լայնամաշտաբ հարձակման էին պատրաստվում Ղարաբաղի և Զանգեզուրի դեմ, նոյն փետրվարի 20-ին << ԱԳՆ-ն պաշտոնապես տեղեկացրեց նաև Բաթումիում << գլխավոր հյուպատոսին<sup>24</sup>: Նոյնաբովանդակ հեռագիր ուղարկվեց Թեհրանում << արտգործնախարարության ներկայացուցչին՝ կոչ անելով միջոցներ ձեռք առնել ընդդեմ սպառնացող վտանգի<sup>25</sup>:

Ի պատասխան, Վրաստանում << դիվանագիտական ներկայացուցիչն իր պետության արտաքին գերատեսչությանն էր հղում պատերազմին առնչվող ֆրանսիական ռազմական առաքելության հաղորդումը: Դրանում ասվում էր, որ հարձակմանը մասնակցելու էին ավագակախմբերն, այլ ոչ թե բանակը: Վերջինս խստորեն հրահանգված էր սպասել առաջին քայլին հայկական կողմից, որպեսզի հարձակման պատասխանատվությունը վերագրվեր հայերին: Թաթարները գործում էին զգուշ և ճարպկորեն՝ ձգտելով իրենց կողմը թեքել օտարներին<sup>26</sup>: Ինչպես նշում է Գ. Մախմուրյանը, Խ. բեկ Սոլթանովը Շուշիի Հայ Ազգային խորհրդի անդամների հետ խոսել էր Երևանից ժամանած գործակալների ղեկավարությամբ իբրև թե նախապատ-

<sup>23</sup>Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарий, под ред. Ю. Барсегова, т. I. M., 2008, с. 384.

<sup>24</sup> Նոյն տեղում, էջ 384-385:

<sup>25</sup> Նոյն տեղում, էջ 385:

<sup>26</sup> Նոյն տեղում:

րաստվող ապստամբության մասին<sup>27</sup>: Իսկ նույն այդ պահին տարբեր վայրերում տեղի ունեցած հայկական մասնակի կոտորածները նպատակ ունեին ոչ միայն թուլացնել հայկական տարրը, այլև ահարեկել ամբողջ Ղարաբաղը: Այսպես, փետրվարի 22-ին մուսավաթականները հայերի ջարդ կազմակերպեցին Ասկերանի, Խանքենդի և Աղդամի ջրաղացներում: Միայն Խանքենդում սպանվեց մոտ 400 հայ<sup>28</sup>: «1920 թ. Փետրվարի 22-ին Խանքենդում, Ասկերանում եւ Շուշի-Ելախի տրակտի վրայ Կառավարութեան գօրքերի եւ ագենտների ձեռքով ակնայայտնի նպատակով կոտորել են մի քանի հարիւր հայերի, թալանել ու տարել Խանքենդու հայերու բնակարանները»<sup>29</sup>: «Աղդամ-Ասկերան-Շուշի ուղղությամբ և Քիրս-Տումի-Խծաբերդ գծի երկարությամբ առանձնապես կատարի էին գործում Սուլթանովի կազմակերպած քրդական «համիդիե» ջոկատները»<sup>30</sup>, - գրում է Վահրամ Բալայանը:

Այդ ընթացքում (փետրվարի 28-ից մինչև մարտի 5-ը) տեղի ունեցավ Ղարաբաղի հայության 8-րդ համագումարը<sup>31</sup>: Այն մերժեց երկրամասը Ադրբեջանին Ենթարկելու մուսավաթականների պահանջը<sup>32</sup>: Ժողովրդի բարձ-

<sup>27</sup>Տե՛ս Մահմուրան Գ. Տրագեдия Շուշի 23-26 մարտа 1920 թ. в отечественной и зарубежной историографии, с. 113.

<sup>28</sup>Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 174, Մահմուրան Գ. Տրագեդия Շուշի 23-26 մարտа 1920 թ. в отечественной и зарубежной историографии, с. 114.

<sup>29</sup>ՀԱԱ, ֆ. 200, գ. 1, գ. 263, թթ. 48-50Ը:

<sup>30</sup>Բալայան Վ., Արցախի պատմություն, Եր., 2002, էջ 278:

<sup>31</sup>Արցախում իշխանությունը 1918 թ. կեսերից գտնվում էր տեղի հայ Ազգային խորհրդի ձեռքում: Վերջինս 1918 թ. մայիսից մինչև 1920 թ. մայիսն իր հրավիրած տասը համագումարներում գործնականում չի ընդունել և չի ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: Տե՛ս Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 111:

<sup>32</sup>1919 թ. օգոստոսի 15-ին Ղարաբաղի հայերի 7-րդ համագումարում որոշվել էր, որ վիճելի տարածքների՝ այս կամ այն պետությանը միավորման հարցը վերջնական լուծում պետք է ստանա խաղաղ ճանապարհով: Տե՛ս Հայոց Կարաբախ և մեջնարодном праве и мировой политике, с. 387-388.

րագույն իշխանություն հանդիսացող այդ մարմնի նիստերի արդյունքում՝ մարտի 6-ին, ՀՀ ԱԳՆ-ն Ղարաբաղի հայության անունից դիմում է ԱՍՍ, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի ռազմական առաքելությունների դեկավարներին՝ ներկայացնելով իրավիճակը<sup>33</sup>: Համագումարի որոշումներն, ըստ Հրանտ Աբրահամյանի, սրեց Ադրբեջանի և Ղարաբաղի միջև հակամարտությունը: «Փաստորեն, արցախահայությունը կանգնեց ազատագրական պայքարի ավելի ծանր փուլի շեմին: Մուսավաթական Ադրբեջանն իր արյունոտ ձեռքերն արձակած համարելով, սկսեց տեսնդագին նախապատրաստվել արցախահայությանը նոր սպանդի ենթարկելու համար», - նշում է պատմաբանը<sup>34</sup>: Հիրավի, համագումարի ավարտից անմիջապես հետո Ադրբեջանի կառավարությունը շարունակեց իր ռազմական նախապատրաստությունները, իսկ որոշ տարածքներում հարձակվեց անզեն բնակչության վրա<sup>35</sup>:

Դաշնակիցներին դիմելուց հետո՝ մարտի 8-ին, ՀՀ դիվանագիտական գերատեսչությունը հուշագիր է հղում Ադրբեջանի ԱԳՆ, նշելով, որ ադրբեջանական գործի ներթափանացումը Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի խորքերը չի կարող անպատճան մնալ<sup>36</sup>:

Քիչ ավելի ուշ Հայաստանի արտգործնախարարության աշխատակից Ա. Մադաթյանը տեղեկացնում է Բաթումում գործող հյուպատոս Ա. Չմշկյանին, թե «Ադրբեջանը մարտի 20-ին փորձել է ուժով զինաթափել Արցախի հայ բնակչությանը և տարբեր ուղղություններով հարձակման է անցել. ծանր մարտեր են ընթանում»<sup>37</sup>: Այն, որ մարտի 20-ից

<sup>33</sup> Նոյն տեղում, էջ 388-389:

<sup>34</sup> Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 177:

<sup>35</sup> Туманяян М. նշվ. аշխ., էջ 281, Махмурян Г. Трагедия Шуши 23-26 марта 1920 г. в отечественной и зарубежной историографии, с. 114-115.

<sup>36</sup> Нагорный Карабах в международном праве и мировой политике, с. 391.

<sup>37</sup> ՀԱՍ, §. 200, գ. 1, գ. 249, մաս 1, թ. 249:

Աղրբեջանի բազմաքանակ գորքերը գեներալ Նովրուզովի գլխավորությամբ, ինչպես նաև աղրբեջանական գորքի գլխավոր հրամանատար Խալիլ Փաշայի ու Խ. բեկ Սուլթանովի ավագակախմբերը հզոր հրետանիով և գնդացիրներով ամբողջ սահմանի երկայնքով հարձակվել էին հայկական գյուղերի վրա, վկայում են նաև այլ արխիվային փաստաթղթեր<sup>38</sup>:

Դրանից երկու շաբաթ առաջ՝ մարտի 4-ին, Հայաստանի կառավարությունն արդեն տեղեկացել էր Խ. բեկ Սովորանովին Արցախ ու ազմական արշավանք կատարելու հանձնարարության մասին: Այդ նպատակով վերջինս վճռեց Լեռնային Ղարաբաղի գյուղերում տեղադրել իր գործը<sup>39</sup>: Դեպքերի ականատես, Արցախի Ազգային խորհրդի անդամ Ա. Կիսիբեկյանը հաղորդում է. «Սովորանովը Լեռնային Ղարաբաղի օղակումն ու ու ազմական ուժերով շրջապատելը վաղուց էր վերջացրել: ... Վերջացնելով Լեռնային Ղարաբաղի շրջապատումը, ձեռնարկեց Շուշվա ամրացմանը»<sup>40</sup>: Ինչպես փաստում են Հ. Աբրահամյանը և Ա. Հակոբյանը, մինչև Աղրբեջանի խորհրդայնացումը 1920 թ. ապրիլին, Ղարաբաղ էր ուղարկվել աղրբեջանական 10 հազարանոց կանոնավոր և նույնքան էլ անկանոն զորք՝ տեղի բնակչությանը կոտորելու նպատակով<sup>41</sup>: Ըստ ՀՀ արտգործնախարարության պաշտոնական հաղորդագրության՝ մարտի 11-ի և 12-ին աղրբեջանական գործով ու գենքով բեռնված իննսուն վագոն Բաքվից ուղարկվել էր

<sup>38</sup> Նոյն տեղում, ֆ. 200, գ. 1, գ. 563, թթ. 3-7, գ. 427, մաս 2, թթ. 234-239Ա:

<sup>39</sup> Դադայն Ս. Политическая история Арцаха-Карабаха от Хамсы до автономии: факты и вымыслы. Степанакерт, 2017, с. 246, 251.

<sup>40</sup> Կիսիբեկյան Ա., Հուշեր, Եր., 2011, էջ 453-454:

<sup>41</sup> Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 176, Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Եր., 2005, էջ 270, Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 176:

Ղարաբաղ՝ մասնավորապես Զեբրայիլ<sup>42</sup>: Աղրբեջանցիների շտապողականության պատճառն, ըստ 1920 թ. սկզբի տվյալների՝ այն էր, որ Աղրբեջանի մուսավաթական կառավարությանը համրած օրեր էին մնացել: Ուստի, Բարձրությունը էին՝ վերջնականապես տիրանալ Լեռնային Ղարաբաղին: Մուսավաթականները վստահ էին, որ իրենց իրավահաջորդողները՝ թեկուզ խորհրդային դրոշի ներքո, շարունակելու էին նոյն գործը: Ուստի մարտի սկզբներին ուժեղացվել էին նաև Շուշիի, Խանքենդի և Աղդամի կայագորները<sup>43</sup>:

Որպես արդյունք՝ մարտի 7-ին դեպի Խնածախ տանող ճանապարհի վրա սպանվեց 5-6 մարդ, իսկ մարտի 10-ին Եվլախ-Շուշի խճուղու վրա՝ 10 հայ: Աղրբեջանի զորքը Խ. թեկ Սովորականովի հրամանատարությամբ ավերել էր վեց հայկական գյուղ, սպանում էր շարունակել կոտորածը<sup>44</sup>: Հ. Թումյանն այս ընթացքում հայ անմեղ զոհերի թիվը նշում է 400-ից ավելի<sup>45</sup>:

Մարտի 22-ին Արցախի գինված ուժերն անցնում են կանխարգելիչ հարձակման: Դրա հիմնավորումն իրավացիորեն ներկայացրել է Հ. Աբրահամյանը. «... Աղրբեջանի մուսավաթական ուժերը պատրաստվում են մուսուլմանական ամանորի գիշերը (մարտի 23-ին) ընդիանուր հարձակում սկսել Ղարաբաղի դեմ»<sup>46</sup>: Նրանց կայացրած որոշումը խախտում էր 1919 թ. օգոստոսի 22-ին Աղրբեջանի կառավարության և Ղարաբաղի հայության Ազգային խորհրդի միջև կնքված համաձայնագիրը<sup>47</sup>: Բացի այդ, մարտի 10-ին և 12-ին հայերն արդեն տեղյակ էին աղրբեջանցիների՝

<sup>42</sup> Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 178:

<sup>43</sup> Հովհաննիսյան Գ., նշվ. աշխ., էջ 142:

<sup>44</sup> Ովորաբյան Բ., Արցախան գոյապայքարը, էջ 62 :

<sup>45</sup> Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 260:

<sup>46</sup> Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 181:

<sup>47</sup> Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 177:

Զանգեզուրի վրա հարձակվելու նախապատրաստական քայլերի մասին<sup>48</sup>: Դեպքերի ականատես և անմիջական մասնակից Հ. Թումյանը ևս գրում է. «Լուրջ տվյալներ կային, որ Ադրբեջանը մտադիր էր, եթե հանգամանքները բարենպաստ դասավորվեին, ընդարձակ ռազմական գործողությունների ձեռնարկել Ղարաբաղի դեմ նրան զինաթափելու եւ ապա կոտորածների եւ բռնի տեղահանումների միջոցով երկիրը պարպելու հայ տարրից ...»<sup>49</sup>:

Հավելենք. այն, որ Ադրբեջանը մշակել և իրականացնում էր հարձակման հստակ, շարունակական բնույթ ունեցող պլան, վկայում է Ադրբեջանի ներքին գործերի նախարարի 1920 թ. մարտի 25-ի հաղորդագրություն՝ ուղղված Ղարաբաղի ժամանակավոր գեներալնահանգապետին: Դրանում հստակ ասվում է, որ Ասկերանի մատուցներում, Աղդամի ուղղությամբ հավաքագրվել է բավականին թվով անկանոն ուժ, որն ամսի 27-28-ին կլինի Աղդամում: Նախատեսվում էր Աղդամից հետո այդ զորքն ուղղել Ասկերան. «Հարձակումը, հավաքանորեն տեղի կունենա մարտի 28-29-ը», - գրված է փաստաթղթում<sup>50</sup>: Ի տարբերություն դրան, հայկական կողմն այդ օրերին ձգտում էր հարցի խաղաղ լուծմանը: Այդ են վկայում 1920 թ. մարտի 28-ի և 30-ի <<կառավարության նամակները Մեծ Բրիտանիայի գլխավոր կոմիսարին: Դրանցում պաշտոնական երևանը խնդրում էր միջոցներ ձեռնարկել՝ բավարարելու արցախցիների արդարացի պահանջները և ապահովելու Ղարաբաղի, Զանգեզուրի, Բաքվի, Ելիզավետպոլի հայերի անվտանգությունը ֆիզիկական բնաջնջումից<sup>51</sup>:

Բայց դիվանագիտական քայլերն անպտուղ էին: Ուստի՝

<sup>48</sup> Նոյն տեղում, էջ 181:

<sup>49</sup> Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 273:

<sup>50</sup> Нагорный Карабах в международном праве и мировой политике, с. 393.

<sup>51</sup> Նոյն տեղում, էջ 395-397:

հայկական կողմը նախահարձակ եղավ: Ա. Կիսիբեկյանի հաղորդմամբ, կոիվը սկսվեց «1920 թ. մարտի 23-ին, գիշերը ժամը 4-ին»<sup>52</sup>: Այդ պահին պատերազմական գործողությունները ծավալվում էին ամբողջ Երկրամասով: Վերլուծելով ամբողջ համատեքստն ու հատկապես Շուշիում ծեռնարկված կանխարգելիչ գործողությունը՝ Ռ. Հովհաննիսյանն ընդգծում է կարևոր մի հանգամանք. Ա. Միքայելյանն՝ իր փոքրաթիվ ջոկատով, չէր սպասել Դ. Կանայանի (Դրո) գլխավորած << բանակի Արևելյան խմբի ժամանմանը, այլ վճռել ու մարտի 23-ին ինքնուրույն գրոհել էր տեղի թաթարական կայազորի վրա<sup>53</sup>: Բոլոր վայրերից խոցելի Շուշիում թաթարներն անմիջապես պատասխանեցին քաղաքի հայկական մասի հրկիզմամբ ու եռորյա կոտորածով: Արցախի կենտրոն Շուշիում տեղի ունեցած այդ ահավոր սպանդը Շ. Մկրտչյանն իրավացիորեն անվանում է ցեղասպանություն<sup>54</sup>:

Մարտի 23-ից 26-ը քաղաքի հայկական թաղամասն ամբողջովին այրվեց և գետնին հավասարեցվեց<sup>55</sup>: Կործանվեց 2000 շենք ու շինություն<sup>56</sup>: «Մահմեդական մոլեռանդ ամբոխն ասկյարների և թուրք սպաների գլխավորությամբ ներխուժում է քաղաքի հայկական թաղամասերը, հրդեհում, կողոպտում տները, խանութները, հասարակական շենքերը, անխնա կոտորում անպաշտպան բնակչությանը»<sup>57</sup>, - գրում է Վ. Բալյանը: < Աբրահամյանը նկարագրում է՝ ինչպես էին

<sup>52</sup> Կիսիբեկյան Ա., նշվ. աշխ., Էջ 460:

<sup>53</sup> Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 181:

<sup>54</sup> Ակրտցյան Շ., Լեռնային Ղարաբաղ. Ադրբեյջանի իրականացրած գեղասպանության անտոլոմիան, Ստեփանավակերտ, 2003, էջ 71:

<sup>55</sup>ՀԱՅ, ֆ. 200, գ. 1, գ. 427, մա 1, թ. 179, Հակոբյան Հ., Հայստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 111-112, Ուլուքարյան Բ., Արցախի պատմությունը Ազգի մինչև մեր օրերը, էջ 224-225, Հայոց Կարաբահ в международном праве и мировой политике, с. 404-406.

<sup>56</sup> Հովհաննիսլան Ռ., նշվ. աշխ., էջ 185:

<sup>57</sup> Բայալան Վ., նշվ. աշխ., էջ 278:

թուրք դահիճներին զոհ գնում հազարավոր արցախցիներ, իրո ճարակ էր դառնում Շուշին<sup>58</sup>: Չոհվեց մոտ 8 հազար հայ, հետո սկսվեց կոտորածը հայկական մյուս բնակավայրերում: Կողոպտվեցին ու ոչչացվեցին Շուշիի շրջակայքի բոլոր գյուղերը՝ քաղաքից մինչև Ասկերան, Խաչենի գավառում գնդակոծվեցին գրեթե բոլոր հայկական բնակավայրերն, իսկ անզեն բնակչությունը սրի քաշվեց<sup>59</sup>:

ՀՀ բանակի բացակայության պայմաններում՝ ապրիլի 3-ին, թաթարները լայնածավալ հարձակում սկսեցին<sup>60</sup> ու գրավեցին Ասկերանը՝ վերականգնելով իրենց կապը գրավված Շուշիի և Խանքենի հետ: Ամբողջությամբ վերցրած, մարտի 23-ից մինչև ապրիլի 3-ը նրանց ելուզակախմբերն ու ոստիկանական ջոկատները կողոպտվեցին ու այրեցին Կարաչինար մեծ գյուղը՝ շրջակա ավաններով: Ապրիլի 7-ին նրանք հասան Կարյագինո, 12-ին՝ Քեշիշքենդ և Սղնախ<sup>61</sup>: Այդ ընթացքում հայ մարտիկները դիմադրում էին հերոսաբար: Միայն մարտի 31-ին հակառակորդն ունեցավ 500 սպանված ու վիրավոր:

Միաժամանակ Ղարաբաղահայության հայրենակցական միության նախագահ Գերասիմ Բալյայանի՝ ՀՀ խորհրդարանի համար կազմած նամակը փաստում էր մուսավաթականների՝ դեպի Ղարաբաղ և Զանգեզուր արշավանքի շարունակական լինելու մասին<sup>62</sup>: Դրան հաջորդեց ՀՀ կառավարության վարչապետի գեկույցն ապրիլի 3-ին գումարված Խորհրդարանի արտակարգ նիստում, որում հաղորդվում էր Ադրբեյջանի կողմից Ղարաբաղի հետ 1919

<sup>58</sup> Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 181, Մահմուրյան Գ. Տրագեդիա Շուշի 23-26 մարտ 1920 թ. в отечественной и зарубежной историографии, с. 112-113.

<sup>59</sup> ՀԱԱ, §. 200, գ. 1, գ. 563, թ. 69:

<sup>60</sup> Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 191:

<sup>61</sup> ՀԱԱ, §. 200, գ. 1, գ. 516, թ. 5, Նագորնի Կարաբախ в международном праве и мировой политике, с. 418-419; Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 196:

<sup>62</sup> Նագորնի Կարաբախ в международном праве и мировой политике, с. 399.

թ. կայացած համաձայնության խախտման և զինված հարձակման մասին, որի նպատակը Ղարաբաղն ու Զանգեզուրը գրավելն էր, վերոհիշյալ ժամանակավոր համաձայնագիրը չեղոքացնելը<sup>63</sup>: Նաև շեշտվում էր Ղարաբաղի՝ մայր հայրենիքից կտրված լինելու իրողությունը, և այն փաստը, որ փետրվարից ի վեր Ադրբեջանի ճնշումները հայքնակազության նկատմամբ դարձել էին անտանելի<sup>64</sup>: Նմանօրինակ բնույթ են կրում <<ԱԳՆ ապրիլի 4–9-ի նամակներն՝ ուղղված <<դիվանագիտական ներկայացուցչին, Ադրբեջանի արտգործնախարարին: Դրանք փաստում են, որ ադրբեջանական կողմն անում էր ամեն ինչ՝ արգելելու եվրոպական երկրների դիվանագետներից կազմված հանձնաժողովների<sup>65</sup> մուտքը Ղարաբաղ՝ դեպքերը քննելու նպատակով<sup>66</sup>: Ապրիլի 14-ի նամակն, ուղղված Վրաստանում ընթացող Անդրկովկասյան երկրորդ կոնֆերանսում <<պատվիրակության նախագահին, փաստում է, որ ադրբեջանցիների կողմից շարունակվում էր Շուշիի և Ղարաբաղի մյուս բնակավայրերի հայքնակազության կոտորածը<sup>67</sup>:

Համոզվելով դիվանագիտական միջոցների ապարդյուն լինելու մեջ՝ <<կառավարությունն ապրիլի 11-ին զորք մտցրեց Ղարաբաղ: Առաջին մարտերը ծավալվեցին Գետաշենի տակ ու պսակվեցին հայերի հաղթանակով<sup>68</sup>: Ամսի 14-ին <<արշավային ջոկատն անցավ Արցախ և չորս օրերի

<sup>63</sup> Նոյն տեղում, էջ 400–403:

<sup>64</sup> Նոյն տեղում, էջ 403:

<sup>65</sup> 1920 թ. ապրիլի 1-ին Թիֆլիսում տեղակայված Դաշնակից երկրների կոմիսարները դիմեցին Անդրկովկասի 3 հանրապետություններին՝ խաղաղությունը պահպանելու կոչով: Ապրիլի 5-ին պատերազմի հարցը քննեց Թիֆլիսում գումարված երկրամասի պետությունների կոնֆերանսը: Փորձ արվեց հանձնաժողով ուղարկել Ղարաբաղ, սակայն պաշտոնական Բաքուն կանխեց դրա մուտքը երկրամաս:

<sup>66</sup> Նոյն տեղում, էջ 404–405:

<sup>67</sup> Նոյն տեղում, էջ 407:

<sup>68</sup> Աբրահամյան <.., նշվ. աշխ., էջ 183, 189:

ընթացքում ողջ երկրամասը, բացառությամբ Շուշիի և Խանքենդի, գտնվում էր հայկական հսկողության տակ, թեև կատաղի մարտերն ընթացան մինչև ամսի 26-ը<sup>69</sup>:

Պատմաբանները տարբեր ամսաթվեր են նշում Դ. Կանայանի ժամանման կապակցությամբ<sup>70</sup>: Նրա Արևելյան խմբի ետևից եկավ նաև Գ. Նժդեհն (Գարեգին Տեր-Հարությունյան) իր 300 զինվորներով: Ղարաբաղ-Զանգեզուրի ընդհանուր հրամանատար Դ. Կանայանի ուժերը Վարանդայում ու Դիզակում համայրել էին 3000 հետևակային և 500 հեծյալ, որոնց թիվն, ըստ մոտավոր գնահատումների՝ հաջորդ շաբաթների ընթացքում հասավ 5000-ի<sup>71</sup>: Հավելենք, որ ՀՀ ռազմական նախարարության տվյալներով, Ղարաբաղի բոլոր գյուղերում կար մոտավորապես 30000 զինված հայ, բավականին գենք և զինամթերք<sup>72</sup>: Զեբրայիլի ուղղությամբ գործում էին հակառակորդի Բարձի 5-րդ, Լենքորանի 7-րդ և Գանձակի 3-րդ հետևակային գնդերի առանձին մասերը և 600-ոց քրդական զորացուկատ, իսկ Աղդամի ուղղությամբ (Շուշիում և Խանքենդում)՝ առաջին Զևանշիրյան հետևակային գունդը, Գանձակի 3-րդ հետևակային գնդի առանձին մասերը՝ հավանաբար 1-ին

<sup>69</sup> Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 281, 300:

<sup>70</sup> Դրոյի՝ Երկրամաս հասնելու կապակցությամբ Բ. Ուլուբարյանը գրում է, որ նա «Արցախ մտավ միայն ապրիլի 13-ին, թե՛ 17-ին, երբ արդեն կործանված էր Շուշի հայկական մասը» (Ուլուբարյան Բ., Արցախյան գյուղայքարը, էջ 90): Իր մեկ այլ աշխատության մեջ հեղինակը նաև նշում է նոյն ամսի Երկրորդ տասնօրյակը (Ուլուբարյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 229): Գ. Հովհաննիսյանն առանձնացնում է ապրիլի 17-ը (Հովհաննիսյան Գ., նշվ. աշխ., էջ 152): Ո. Հովհաննիսյանը նկարագրում է Դրոյի Քիրսի անցնելին ու ապրիլի 11-ին Թումի ժամանելը՝ ստանձնելու դարաբաղյան գրձողության հրամանատարությունը (Հովհաննիսյան Ո., նշվ. աշխ., էջ 192): Ըստ Հ. Թումյանի՝ ՀՀ զորացուկատն ապրիլի 14-ին հասավ Գորիս, 18-ին անցավ Ագարա գետն ու Խճաքերդ գյուղի վրայով մտավ Ղարաբաղ (Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 303):

<sup>71</sup> Հովհաննիսյան Ո., նշվ. աշխ., էջ 194:

<sup>72</sup> Нагорный Карабах в международном праве и мировой политике, с. 419.

թաթարական և 2-րդ դարաբաղյան հեծյալ գնդերը՝ 8-10 հրանոթով։ Հայկական Գյուլիստան գյուղի ուղղությամբ գործում էին Բարձի 5-րդ գնդի, Գանձակի 3-րդ հետևակային գնդի, Շաքի 3-րդ հեծյալ գնդի առանձին մասերը՝ հրետանիով։ Ընդամենը՝ 4 հետևակային, 3 հեծյալ գունդ և քրդական հեծելազորը։ Սովորաբար, ընդհարումների ժամանակ այդ թիվը մեծանում էր, և, ըստ այդմ, կանոնավոր բանակի ընդհանուր բանակը կարելի է հաշվել ամենաքիչը 8000 սվին և 2000 սուլը<sup>73</sup>։ Ինչպես տեղեկանում ենք ՀՀ գործերի գիշավոր հրամանատարի շտաբի պետ, կապիտան S. Դևոյանի ապրիլի 20-ի գեկոցից, թաթարների միայն Զանգեզուրյան ջոկատն ուներ 5000 զինվոր, 6 դաշտային և 8 լեռնային հրանոթ՝ Ընդհանուր առմամբ, 300 կմ երկարությամբ ռազմաճակատում թշնամին ուներ 30 հազարանց բանակ ինչը համընկնում է Ասկերանի տակ ապրիլի 2-ին կովող ուժերի քանակի հետ<sup>74</sup>։ Հ. Թումյանի կարծիքով, Ղարաբաղի դեմ հանված աղբբեջանական ամբողջ անձնակազմը՝ կանոնավոր թե անկանոն, հասնում էր 80 հազարի։ Թերևս, սա չափազանցված տվյալ է<sup>75</sup>։

ՀՀ բանակի աջակցության պայմաններում՝ ապրիլի 18-ին, Դիզակի և Վարանդայի բնակչության ներկայացուցիչներն, այնուհետև ապրիլի 25-ին Թաղավարդ գյուղում տեղի ունեցած Արցախի հայության 9-րդ համագումարը որոշում կայացրին հրչակել Երկրամասի միացումը Հայաստանին։ Համագումարը մերժեց ու դատապարտեց աղբբեջանական ամեն մի հավակնություն հայկական Արցախի նկատմամբ, արտահայտեց իր կամքն ու վճիռը՝ լինել

<sup>73</sup> Նոյն տեղում, էջ 419-420։

<sup>74</sup> Նոյն տեղում, էջ 408-411։

<sup>76</sup> Նոյն տեղում, էջ 288, 293։

<sup>75</sup> Թումյան Հ., նշվ. աշխ., էջ 283։

Հայաստանի անբաժանելի մասը<sup>77</sup>: Ըստ Ռ. Հովհաննիսյանի՝ (նա համագումարի բացման օր համարում է ապրիլի 22-ը – Ն. Մ.), Դրոն առաջարկեց դիմել համագումարին՝ հարձակման համար պաշտոնական թույլտվություն ստանալու համար<sup>78</sup>: Սակայն հետագայում այդպես էլ առաջանալու հրաման չտվեց: Ըստ Ռ. Հովհաննիսյանի՝ «Անդրկովկասում դեպքերը զարգանում էին նոր ուղղությամբ, քանի որ Կարմիր բանակը կենտրոնացվել էր Ադրբեյջանի սահմանների վրա: Դրոն, զինված ու պատրաստ, այժմ տատանվում էր. Ղարաբաղում իր անցկացրած քառասունինգ օրերը հավասարվելու էին ոչնչի»<sup>79</sup>:

Ապրիլի 28-ին Ադրբեյջանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Բարվի նորաստեղծ խորհրդային ղեկավարությունն ամեն կերպ նպաստում էր 11-րդ Կարմիր բանակի առաջխաղացմանն Արցախ-Զանգեզուրի ուղղությամբ: Հետխորհրդային պատմաբանների պնդմամբ, Խորհրդային Ադրբեյջանը, շարունակելով մուսավաթական կառավարության ռազմատենչ քաղաքականությունը, ձգտում էր հայաթափել Արցախը, բնակեցնել այն մահմեդականներով և երկրամասը վերջնականապես բռնակցել Ադրբեյջանին<sup>80</sup>: Սակայն տեղի հայությունը դիմադրեց հակառակորդին, իսկ թուրք-ադրբեյջանական միացյալ ուժերը

<sup>77</sup> Ուլուբարյան Բ., Արցախյան գոյապայքարը, էջ 88, 95, նոյնի՝ Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 229-230, Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 194-195, համագումարի որոշման տեքստը՝ Մահմուրյան Գ. Շահուար 1919-1920 րր. և առաջնային պատմությունների համար պահպանվող առաջնային պատմությունների համար պահպանվող պահպանական գույներում՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, 2009, էջ 68-69:

<sup>78</sup> Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 194:

<sup>79</sup> Նոյն տեղում, էջ 195:

<sup>80</sup> Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Եր., 1996, էջ 234, Դաձան Հ., նշվ. աշխ., էջ 246: Հովհաննիսյան Ռ., նշվ. աշխ., էջ 193:

պատասխանեցին զանգվածային կոտորածներով<sup>81</sup>: Է. Զոհրաբյանը դրանք համարում է աշխարհին վաղուց հայտնի փաստ, պանթյուրքիզմի իրագործման հերթական քայլ, նշելով, որ ջարդերից հետո սպանդի կազմակերպիչները շտապում էին համաձայնագիր կապել Թուրքիայի հետ: Հետևաբար, թուրք-քեմալականները և ազերի-մուսավաթականները Հայաստանի հարցում ունեին միևնույն քաղաքական դիրքորոշումը<sup>83</sup>: Հ. Աբրահամյանը լրացնում է այդ միտքը՝ շեշտելով. «Դա նախօրոք պլանավորված հարձակում էր, սպանդ, 1915 թ. Ցեղասպանության շարունակություն»<sup>84</sup>: Ցավաի է, բայց ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացման հետևանքով Ղարաբաղի ճակատագրի ընթացքը փոխվեց, իսկ նրա նկատմամբ Ադրբեջանի զավթողական քաղաքականությունը մնաց նոյնը: Ավելին՝ ապրիլի 28-ից մայիսի 25-ը ընդգրկող ժամանակատվածը Հ. Աբրահամյանը համարում է ազատագրական պայքարի ավելի դժվարին, կնճռուտ և նոր ողբերգություններով լեցուն շրջան: Հեղինակը նկատի ունի, որ խորհրդային Ադրբեջանը հնարավոր բոլոր միջոցներով օգնում էր 11-րդ կարմիր բանակի հրամանատարությանը՝ ոչնչացնելու Արցախում առկա հայկական ուժերը<sup>85</sup>: Մինչ այդ՝ դեռ մայիսի 1-ին, Ադրբեջանի խորհրդային կառավարությունը պահանջեց Հայաստանի կառավարությունից դուրս բերել հայկական զորքը Զանգեզուր-Ղարաբաղից<sup>86</sup>:

<sup>81</sup> Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 111, Զոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997, էջ 26:

<sup>83</sup> Նոյն տեղում, էջ 26-27:

<sup>84</sup> Աբրահամյան Հ., նշվ. աշխ., էջ 188:

<sup>85</sup> Ապրիլի 28-ին Բաքվում ստեղծված Ադրբեջանի ժամանակավոր հեղափոխական կոմիտեն Ադրբեջանը հոչակեց խորհրդային: Աբրահամյան Հ., նշվ. աշխ., 202, 206:

<sup>86</sup> Իշխանեան Ե., Լեռնային Ղարաբաղը 1917-1920, Եր. 1999, էջ 279, 583:

1920 թ. մայիսի 12-ին 11-րդ կարմիր բանակի զորամասերից մեկը մտավ Շուշի: Տասը օր հետո տխրահոչակ Խ. թեկ Սովորանովն անհապաղ ողջունեց Խորհրդային Ադրբեջանի հոչակումն ու Կարմիր բանակի մուտքն Ադրբեջան արդեն Խորհրդային Ղարաբաղի հեղկոմի անունից: Նա գրեց, թե հեղափոխական Ղարաբաղը մշտապես հակված է Եղել պրոլետարիական Ադրբեջանի կողմը<sup>87</sup>: Զարգացումների նման համատեքստում Դ. Կանայանի գլխավորած Հայաստանի Հանրապետության զորքերը չգնացին դիմադրության ու մայիսի 25-ին Դրոյի արշավային զորացուկատը թողեց Լեռնային Ղարաբաղը: Նրա ստորաբաժանումները Քիրսի ստորոտով անցան Խծաբերդ, այնտեղից էլ՝ Զանգեզուր<sup>88</sup>: Զորախմբի գնալուց հետո Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր կառավարության կոլեգիան Թաղավարդ գյուղում հրավիրեց Երկրամասի հայության 10-րդ համագումարը: Այն անցավ բոլշևիկների ղեկավարությամբ, և Լեռնային Ղարաբաղը հայտարարվեց Խորհրդային<sup>89</sup>: Գ. Հովհաննիսյանն ու Է. Զոհրաբյանը, սակայն, գտնում են, որ Ադրբեջանի Խորհրդայնացումը հօդս ցնդեցրեց Արցախն ամբողջովին հայաթափելու ու ոչչացնելու մուսավաթականների ցանկությունը<sup>90</sup>:

Վերջարադրվածից կարող ենք եզրակացնել. հայ պատմաբանների գնահատականով Արցախում ծավալված ռազմական գործողությունները ոչ այլ ինչ էին, քան Թուրքիայի կողմից 1920 թ. թուրք-հայկական պատերազմին նախապատրաստական գործողությունների փուլ, որը

<sup>87</sup> Нагорный Карабах в международном праве и мировой политике, с. 440.

<sup>88</sup>Հովհաննիսյան Գ., նշվ. աշխ., էջ 166, Ովուբարյան Բ., Արցախյան գոյապայքարը, էջ 101, նոյնի՝ Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 234:

<sup>89</sup>Հովհաննիսյան Գ., նշվ. աշխ., էջ 167, Ովուբարյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, էջ 234:

<sup>90</sup>Զոհրաբյան Է., նշվ. աշխ., էջ 27:

հարկավոր էր Խորհրդային Ռուսաստանի հետ ավելի սերտ կապեր հաստատելու համար: Արևելյան ռազմաճակատում մղված նրանց կոհիվները նպատակ էին հետապնդում Արցախը բռնակցել Ադրբեջանին, ինչը հանդիսանում էր պանթուրքիզմի գաղափարախոսության իրագործման օղակներից մեկը:

Հարկ է ընդգծել, որ 1917-1920 թվականներին արցախահայությունը մղում էր ազատագրական պայքար, և 1920 թ. փետրվար-մայիս ամիսների իրադարձություններն այդ պայքարի հերոսական դրվագներն են:

**MOVSESYAN NARINE**

Laboratory Assistant at the IH, NAS RA

narinem2006@gmail.com

## **THE MILITARY OPERATIONS IN NAGORNO-KARABAKH (ARTSAKH) IN FEBRUARY - MAY, 1920, IN THE HISTORIOGRAPHY OF ARMENIA**

### **SUMMARY**

**Keywords:** Nagorno-Karabakh, historiography, Turkish-Armenian war, army, offensive, Republic of Armenia, eyewitnesses, statesmen.

The article reveals the position of state and party leaders - participants in the events, as well as historians and others, on the issue of military situation in Artsakh on the eve of the Turkish-Armenian war of 1920.

In February 1920, the Azerbaijani army, under the command of Turkish officers and with the help of local Muslims, embarked on an active phase of the policy of physical extermination of Armenians throughout the region. In February - March, the Turkish-Tatar army and Kurdish gangs concentrated in different parts of Artsakh, where they carried out systematic attacks on its strategic points in order to break through to Zangezur. During the general offensive - March 23-26, they managed to completely destroy the Armenian part of the city of Shushi and 23 nearby villages.

In April and May, the expeditionary forces of the Republic of Armenia arrived to protect Artsakh, where on April 25 the IX Congress of Artsakh Armenians announced the reunification of the region with their Motherland. Exactly one month later, the Eastern Group of Forces of the Republic of Armenia left Karabakh, avoiding a collision with the Red Army that had arrived in the region.

Armenian authors – both eyewitnesses and participants in the events, as well as modern historians, emphasize that the goal of the Turkish government was the extermination of the Armenian population of Nagorno-Karabakh, its forcible expulsion from the Motherland and the complete conquest of the Armenian region.

## МОВСЕСЯН НАРИНЭ

Старший лаборант Института истории НАН

narinem2006@gmail.com

# ВОЕННЫЕ ДЕЙСТВИЯ В НАГОРНОМ КАРАБАХЕ (АРЦАХ) В ФЕВРАЛЕ - МАЕ 1920 Г. В ИСТОРИОГРАФИИ АРМЕНИИ

## РЕЗЮМЕ

**Ключевые слова:** Нагорный Карабах, историография, турецко-армянская война, армия, наступление, Республика Армения, очевидцы, государственные деятели.

В статье раскрывается позиция государственных и партийных деятелей – участников событий, также историков и др., по вопросу военного положения в Арцахе накануне турецко-армянской войны 1920 г.

В феврале 1920 г. армия Азербайджана под командованием турецких офицеров и с помощью местных мусульман приступила к активной фазе политики физического уничтожения армян по всему краю. В феврале - марте турецко-татарская армия и курдские банды сосредоточились в разных частях Арцаха, где осуществляли планомерные нападения на его стратегические пункты, чтобы прорваться к Зангезуру. В ходе общего наступления - 23–26 марта, им удалось полностью разрушить армянскую часть г. Шуши и 23 близлежащих села.

В апреле и мае экспедиционные силы Республики Армения прибыли для защиты Арцаха, где 25 апреля IX съезд арцахских армян объявил о воссоединении края со своей Родиной. Ровно через месяц Восточная группа войск РА покинула Карабах, избегая столкновения с прибывшей в край Красной армией.

Армянские авторы – как свидетели и участники событий, так и современные историки, подчеркивают, что целью турецкого правительства являлось уничтожение армянского населения Нагорного Карабаха, его насильственное изгнание с Родины и полное завоевание армянского края.

## ՎԱՐԴԳԵՍ ՍԱՖԱՐՅԱՆ

ԱրՊՀ դասախոս,  
պ.գ.թ., դրցնող  
vardges\_safarian@mail.ru

### ՍՈՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

**Հիմնաբառեր՝** Սոս, կոթող, Արցախ, Լուսավորչի սար, խաչքար, խեցեղեն, ճրագ:

Մինչև Արցախյան շարժումը հայ հնագետները զրկված էին Արցախում ուսումնասիրություններ իրականացնելու հնարավորությունից:

Ազգային ազատագրական շարժումը և Արցախի Հանրապետության կազմավորումը նոր հեռանկարներ են բացել հայագիտության զարգացման, մասնավորապես՝ Արցախի մշակութային արժեքների ուսումնասիրման համար, առավել ևս, որ Արցախում հետազոտման կարիք ունեն պահպանված հազարավոր հուշարձաններ: Այս մշակութային ժառանգության մեջ յուրահատուկ տեղ են գրավում վաղ քրիստոնեական կոթողները: Սոս գյուղը միջնադարյան կոթողներով հարուստ Արցախի բնակավայրերից մեկն է:

Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Սոս գյուղը գտնվում է պատմականորեն ձևավորված վաղ քրիստոնեական հարուստ ժառանգություն ունեցող տարածքում<sup>1</sup>: Գրավոր աղբյուրներում Սոս գյուղը հիշատակվում է XIX դ. կեսերից, չնայած որ այս տարածքը բնակեցված է եղել առնվազն Ք. ա. II-I դդ., ինչի մասին վկայում են նրա տարածքում հայտնաբերված կարասային թաղումները:

---

<sup>1</sup>Վաղ քրիստոնեական ճարտարապետական ժառանգության հետքեր հայտնի են Ճարտար, Բերդաշեն, Մաճկալաշեն գյուղերի շրջակայքում, սր. Եղիշե վանքում և, իհարկե, Ամարատում:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում գյուղի արևելյան կողմում բարձրացող «Լուսավորչի սար»-ի հնությունները:

Հուշարձանը գտնվում է «Լուսավորչի սար» կոչվող կոնածկ, անտառապատ բլրի գագաթին, որի արևմտյան ստորոտում է Սոս գյուղը: Սարի բարձրությունը ծովի մակերեսից 993 մ է: Հուշարձանի տարածքը հավասար է մոտավորապես 1,1 հա:

Դեռևս XIX դարի կեսին Մակար Եպիսկոպոս Բարխունյանը գրում էր. «Լուսավորչի սար, բարձրացած է գիտիս գլխին վերև՝ արեւելեան հանդէա: Սարիս կատարին վերայ կան շատ թափուած քարեր, տնաբակեր և եկեղեցու աւերակ: Աւանդաբար պատմում են. «Սուլը Գրիգոր Լուսաւորիչ կողմներում քարոզելու եւ եկեղեցիներ հիմնարկելու ժամանակ գիշերն բարձրացած է սարիս գլուխն և աղոթքով լուսացրած գիշերները: Սուլը Գրիգորիս Աղուանից կաթողիկոսի մարմինը երբ փախցրած բերում են նորա աշակերտներն Դարբանտից այստեղ, նահատակել տուող թագաւորի զորականներն, փախցնողների ետեւից ընկած, գալիս են մինչեւ այստեղ: Սակայն աշակերտներն ապահնելով յԱստուած և դիմելով Սուլը Լուսաւորչի աղոթած տեղն, ազատ են մնում հալածողներից և ապա նահատակուած Սուլը Գրիգորիսի մարմինը տանում թաղում Ամարասի վանքում և իրանք փախչում դէափի Հայաստան»<sup>2</sup>:

2019 թ. հովիս ամսվա կեսերին հուշարձանի տարածքում, մասնավորապես՝ ուխտատեղում, մասնակի պեղումներ են ձեռնարկվել: Սրբավայրի պեղումների ժամանակ հայտնաբերվել են նյութեր, որոնք վկայում են սրբավայրի վաղ քրիստոնեական ծագման մասին: Դրանցից է պեղվող տեղանքի կենտրոնում գտնվող քարե տոռածկ խարիսխը,

<sup>2</sup>Բարխուտարեանց Մ. Եպս., Աղուանից երկիր և դրացիք: Արցախ, Եր., 1999, էջ 219-220:

որի վրա կատարվում էր մոմավառություն (նկ. 1):

Սրբավայրը պեղելուց հետո բացվեց արևմուտքից արևելք ուղղությամբ շինություն՝ արևելյան կողմում բարձրացված հատակով: Ծավալային նման լուծումն ու ուղղվածությունը վկայում են, որ գործ ունենք քրիստոնեական մատուի կամ Եկեղեցու հետ: Սրբարանը կառուցված է առանց շաղախի՝ կոպտատաշ քարե շարվածքով, ունի անկանոն՝ 9,7 x 6,0 մ հատակագիծ<sup>3</sup> (նկ. 2):

Մատուռ-սրբարանի ներսում գտնվել են մեծ քանակությամբ ճրագներ՝ հիմնականում բեկորային: Գտնված ճրագները հիմնականում պատկանում են բաց ճրագների տիպին (նկ. 3)<sup>4</sup>: Ճրագների մեջ ծևաբանական տարրերություն համարյա չկա. բոլորն ունեն հարթ հատակ: Հատակի տրամագիծը տատանվում է 5-7 սմ, իսկ բերանի տրամագիծը՝ 5-9 սմ: Նաև գտնվել են կավից պատրաստված մոմակալներ, որոնք, կարծես, ավելի ուշ շրջանում երևան եկած մետաղյա մոմակալների կրկնօրինակն են. ունեն խողովակածու և ուղիեժային իրան, կլորավուն նստուկ (նկ. 4): Հետաքրքիր է նաև երկկող շրջանածու իրան ունեցող ու մի քանի մոմերի համար նախատեսված բնիկներով մոմակալը (նկ. 5):

Ճրագների ու մոմակալների նման բազմությունը վկայում է ինչ-որ սովորույթի մասին: Համաձայն մի վարկածի՝ Հայաստանում տարածված է եղել Եկեղեցուն ճրագ նվիրելու ծեսը: Այսպես, << Արագածոտնի մարզի Միրաք գյուղի միանավ բազիլիկ Եկեղեցու պեղումների ընթացքում գտնվել են երկու տասնյակից ավելի ճրագներ: Հետազոտողների կարծիքով՝ «ճրագների նման քանակությունը բացարկվում է Եկեղեցում մոմի փոխարեն ճրագ վարելու հին սովորութ-

<sup>3</sup>Պարփակ տարածքի երեք անկյունները մոտ են 90°-ին, իսկ հյուսիս-արևելյանը՝ մոտ է 60°-ին:

<sup>4</sup> Սկզբում պատրաստվել է սովորական թաս, ապա քանի դեռ կավը թաց է եղել, շուրջի սեղմումով ծևավորվել է քթիկը:

յամբ», «Եկեղեցում վառված ճրագը թողնում էին հատկապես նրանք, ում տներում ճրագ շատ կար, այսինքն՝ «իրենց ճրագն էին տալիս Եկեղեցուն», ինչպես ներկայումս լուցկի են տանում սրբավայր և այնտեղ թողնում»<sup>5</sup>:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում վաղքրիստոնեական քարե կոթողների մասերը (Նկ. 6): Հայտնի է, որ վաղ միջնադարում տարածված էր կոթողների կանգնեցումը սրբավայրերում, նահատակների շրիմի վրա: Դրանք բաղկացած էին գետնախարիսխից, պատվանդանից, սյունից, խոյակից, խաչակալից և պսակվում էին ազատ թևերով խաչով<sup>6</sup>: Վաղ միջնադարում, մասնավորապես՝ IV-VII դդ. խաչերը «կանգնեցվում էին ի նշան նոր հավատի հայթության»<sup>7</sup>: Ինչպես նշում են հայ պատմիչները, դեռևս IV դ. ավերված ու քանդված հեթանոսական մեհյանների տեղում կանգնեցվում էին քարե խաչակիր կոթողներ, որպես քրիստոնեության հայթանակի նշան<sup>8</sup>: Այսպես կոչված ձողաբարձ խաչերը հայտնի են V-VII դդ. քանդակներից<sup>9</sup>:

Սոսի սրբարանի տարածքից հայտնաբերվել են երկու կոթողների մանրամասներ: Առաջինից ունենք երեք կողմից հավասարաթև խաչանախշով քանդակազարդված խարիսխ, սյունակոթող, որի խաչակալ խոյակը քանդակազարդված է բուսական հորինվածքով: Նշված խարիսխն արդեն իսկ երևում էր մուտքի հյուսիսային կողմում, մինչ մաքրման աշխատանքները սկսելը: Այս տիպի զարդով խոյակներ

<sup>5</sup> Սարգսյան Ռ., Միրաք գյուղի Եկեղեցու պեղումներից գտնված ձիթաճրագները, «Պատմություն և մշակույթ», ԵՊՀ, 2017, էջ 386:

<sup>6</sup> Պետրոսյան Հ., Վաղքրիստոնեական հայկական կոթողների և իոլանդական բարձր խաչերի ընդհանրությունները նոր գյուտերի լույսի տակ (Արագածի թիկունքում. հնագիտական հետազոտություններ նվիրված Տեղմակ Խաչատրյանի հիշատակին), Եր., 2018, էջ 254:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 255:

<sup>8</sup> Ազգագրակեղոս, Պատմությն Հայոց, Թիֆլիս, 1914, էջ 397:

<sup>9</sup> Պետրոսյան Հ., Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., 2004, էջ 52:

հայտնի են Արցախի Տիգրանակերտից, Ճարտարից, Բերդաշենից, Քասաղից (նկ. 7): Մեր դեպքում գործ ունենք խաչայուն կոթողի խարսխի հետ. բոլոր կողմերից շրջանի մեջ առնված խաչերի ներքևի մասում քանդակված է կարճ ձող: Կոթողի գտնված մասերի երկարությունը կազմում է մոտ 2 մ: Եթե դրան գումարենք պատվանդանը (45-50 սմ) ու թևավոր խաչը (45-50 սմ), ապա կունենանք 290-300 սմ բարձրությամբ խաչակիր կոթող (նկ. 8):

Հավանաբար, երկրորդ կոթողին է պատկանում մասմբ կոտրված երկրորդ խաչակալ խոյակը: Ուշագրավ է, որ խոյակի ներքանի հարթության վրա փորագրված է հավասարաթև խաչ և ՀՈՎԱՆԻԿ (հավանաբար՝ Հովհաննես - Վ. Ս.) անունը (նկ. 9): Մյուս ուշագրավ նյութերը խաչակալ քարի (կամ քարերի) երկու բեկորներն են, որոնց վրա պահպանվել են միայն ոտքի վերին և կամարի ստորին հատվածները: Ոտքերի հաստուցքները և կամարների շառավիղներն իրենց բնորոշ չափերով մոտ են, սակայն նույնը չեն, ինչը թույլ չի տալիս նրանց միանշանակ նույնացնել որպես նույն խաչակալի երկու բեկոր (նկ. 10):

Սրբավայրում պահպանվել է թևավոր խաչի աջ թևի հատվածը՝ երկու բեկորով, և խաչի ոտքի երկու բեկոր: Խաչաթևի ստորին հատվածում պահպանվել է վաղ միջնադարին բնորոշ շրջանը պարփակող պարանաձև հյուսքի մի հատվածը: Խաչի ոտքի վրա պահպանվել է երկրաչափական զարդանախսը:

Սրբարանի բեմի հարավային անկյունում գտնվել է նաև 51x48x21,5 սմ չափերով մի խոյակ, որը պատկանել է մեծ կառուցի: Թեև խոյակը քանդակազարդ է երեք կողմից, սակայն քառակողմ է և որմնախոյակ չէ: Կրկնակի օգտագործման ժամանակ խոյակի վերին հատվածը վերամշակվել է, փոխվել են նրա ուղղաձիգ չափերը, որանք հարմարեցվել են օգտագործման նոր նպատակին: Խոյակը երկու կողմե-

ոից զարդարանդակված է պարանաձև հյուսքով պարուրված երկու շրջաններով, իսկ երրորդ կողմից՝ ականթի տերևներով (նկ. 11):

2020 թ. հովիս-օգոստոս ամիսներին հնագիտական պեղումները Սոս գյուղի «Սուլը Լուսավորիչ» սրբավայրի տարածքում շարունակվել են: Պեղումներն իրականացվել են սրբավայրի հարավ-արևելյան, հարավային ու հարավ-արևմտյան հատվածներում: Բացվել է վաղ քրիստոնեական մի համալիր, որը բաղկացած է երկու մատուռ-եկեղեցիներից, սեղանատնից, ճգնավորների սենյակից և մյուս կառուցներից: 2020 թ. պեղումների ժամանակ բացված կառուցների ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 30 մ:

Բացահայտված կառուցները տեղադրված են տարբեր հորիզոնների վրա, լանդշաֆտին համապատասխան և, հավանաբար, պատկանում են տարբեր ժամանակների, թեկուզ միասնական կառուցապատման տպավորություն են թողնում: Նորաբաց կառուցների թափված քարերի մեջ գտնվել են խաչակալի մաս՝ խաղողի ողկույզի և շուշանի ռելիեֆային պատկերով, կրաքարե բեկոր՝ հետաքրքիր հորինվածքով՝ երեք խաչ՝ վերցված շրջանի մեջ, և նրանց բաժանող երկու շուշան (նկ.12), քարի փոքր բեկոր (8x4 սմ) թեք խաչի նախշով, թևավոր խաչի բեկորներ արմավենու և շուշանի զարդանախշով (նկ.13): Նշենք, որ արմավենու քանդակ կա նաև Ամարասի հարավային մուտքի արևելյան ճակատին: Արմավենին հնում համարվել է հաղթանակի խորհրդանշ,<sup>10</sup> իսկ քրիստոնեության ընդունումից հետո խորհրդանշում է հաղթանակն ընդդեմ մահվան<sup>10</sup>: Շուշանը, որի նշանը կա նաև խաչային հորինվածքում, խորհրդանշում է պարզությունը, անմեղությունը, բարեպաշտությունը և հաճախ կապվում Մարիամ Աստվածածնի հետ:

Համալիրի տարածքում հայտնաբերվել են մեծ քանակու-

<sup>10</sup> Энциклопедия символов, знаков, эмблем. М., 2001, с. 366.

թյամբ (մոտ հազար) կղմինդրների բեկորներ: Կղմինդրները կառուցվածքով և չափերով նման են Հայաստանի վաղ միջնադարյան եկեղեցիների կղմինդրներին, մասնավորապես՝ Աշտարակի Կարմրավոր եկեղեցու կղմինդրները: Դրանք համաչափ թրծված են: Ինչպես որ Հանդաբերդում կղմինդրները երեք տիպի են՝ հարթ (սոլեն), փորակավոր (կալիպտեր) և հարթ-փորակավոր<sup>11</sup>: Մի քանի բեկորների վրա պահպանվել են թաց վիճակում արված անցքեր, որոնք արվել են կղմինդրը ծածկի շաղախին գամելու համար (նկ. 14): Սոլենի լայնությունը՝ 25-28 սմ է, կողը՝ ներսից՝ 2,5-4,5 սմ, երկարությունը՝ 39,2-40 սմ, հաստությունը՝ 2-2,5 սմ: Փորակավոր կղմինդրները (կալիպտերները), կիսագլանաձև են, լայնությունը՝ 11-15 սմ:

Կղմինդրների մեջ յուրահատուկ նշանակություն ունեն, այսպես կոչված, անտեֆիքսերը, որոնք տեղադրվում էին տանիքի եզրերին: Նման անտեֆիքսեր հայտնի են Հայաստանի տարբեր վայրերում կառուցված ճարտարապետական կառույցներում: Սոսի համալիրում գտնվել են երեք տեսակի անտեֆիքսեր՝ շուշանի ռելիեֆային նշանով, խաչերով զարդարված և երեք Օ-աձև նշանով (նկ. 15):

Յուրահատուկ են կանեյուրաներով, ելուստներով, ակոսներով կղմինդրները: Կալիպտերները ներքևի հատվածում նեղանում են և ունեն կիսաշրջանաձև ելուստ: Կիսաշրջանի տրամագիծը ներսում մոտ 13 սմ է, դրսից՝ 15 սմ: Առանձնանում են կալիպտերներ լայնակի ելուստներով, որոնց տրամագիծը կազմում է 15 սմ, իսկ սոլենի պահպանված լայնությունը հավասար է 30 սմ: Հարկ է նշել, որ մեր կղմինդրներն ունեն արտահայտված ծևաբանական գուգահեռներ Դվինի կղմինդրների հետ, օրինակ՝ բարձր կողեր, լայնակի եզրային ելուստ-թմբիկ, ուղղանկյուն, տափակ,

<sup>11</sup> Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Հանդաբերդի վանքը և նրա պեղումները, Եր., 2009, էջ 91:

զանգվածեղ սալեր, կիսափողակավոր ու երկլանջ կալիպտերներ<sup>12</sup> և կարող են թվագրվել VI-VII դդ.:

Գտածոների մեջ առանձնանում են XIV-XV դդ. թվագրվող ջնարակված անոթների՝ թասի, քրեղանի, ափսեի բեկորները: Այսպիսով, կարելի է նշել, որ հուշարձանը գոյատևել է V-VII դդ. մինչև առնվազն XVI-XVII դդ. (նկ. 16):

Հետաքրքիր են գունազարդ անոթի իրանի բեկորները՝ մուգ դարչնագույն ֆոնին կարմիր գծերով և օյնախոյա տիպի շուրթով, որոնք նման են անտիկի օրինակներին: Դրանց բազմազան օրինակներ հայտնի են Արցախի հելլենիստական շրջանին պատկանող կարասային թաղումներից, ինչպես նաև Տիգրանակերտից: Գտնում ենք, որ մեր գունազարդ անոթի բեկորները կարելի է թվագրել վաղ միջնադարով, կամ անտիկից-միջնադար անցման շրջանով: Նման օրինակներ կան Տիգրանակերտում, որոնք թվագրվել են վաղ միջնադարով: Պեղումների միջոցին գտնվել են նաև ավելի քան 10 մետրոյա առարկաներ՝ արծաթյա հավասարաթիւ խաչի տեսքով կաշվե գոտու զարդերից մեկը, երկաթե դանակի եզր, երկաթե տաշառուագ, երկաթե գործիք (նկ. 17):

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում երկաթե խաչը՝ ձողով ներքի մասում: Նրա երկարությունը ձողի հետ միասին 16 սմ է, լայնությունը՝ 8 սմ, ձողի երկարությունը՝ 5,5 սմ:

Հարկ է նշել, որ եթե սրբարանը մաքրելիս մենք գտել ենք բազմազան և բազմաբնույթ կենցաղային և արարողությունների հետ կապ ունեցող խեցեղեն, ինչպես նաև բազմազան կղմինդրների բեկորներ, ապա 2020 թ. պեղվող կառուցների հատվածներում նման առարկաններ գտնվում

<sup>12</sup>Քյոյարյան Գ., Դվինի վաղ միջնադարյան կղմինդրը որպես թվագրման գործոն, «Բանքեր Երևանի համալսարանի» (այսուհետև՝ «ԲԵՀ»), ԵՊՀ, 2016, հ. 2, էջ 31:

Են հազվադեպ: Մյուս կողմից՝ մեծ բազմություն են կազմում տարատեսակ կղմինդրներ և անտեֆիքսներ:

Նշենք նաև, որ, ի տարբերություն 2019 թ. պեղումների, 2020 թ. անոթների բեկորների հիմնական մասը գտնվել է կառուցներից դուրս: Բացառություն է կազմում LS-4-ը, որտեղ գտնվել են ինչպես ամբողջական անոթներ՝ պուկիկը, մոմակալը, այնպես էլ՝ բեկորային:

Հայտնաբերված նյութի բանակը, հորինվածքը և բազմազանությունը, ինչպես նաև տեղանքի ռելիեֆը թույլ են տալիս մտածել, որ տեղում գոյություն է ունեցել վաղ քրիստոնեական մեծ սրբավայր՝ համայիր և աղոթատեղի, որի պարզաբանման համար հարկ կլինի իրականացնել պեղման աշխատանքներ:

**VARDGES SAFARYAN**

Lecturer of the ArSU,  
Candidate of Historical Sciences,  
Associate Professor  
[vardges\\_safarian@mail.ru](mailto:vardges_safarian@mail.ru)

## **EXCAVATIONS OF THE CHRISTIAN SANCTUARY ON THE "MOUNTAIN OF THE ILLUMINATOR" IN THE VILLAGE OF SOS**

### **SUMMARY**

**Keywords:** Sos, monument, Artsakh, Lusavorchi sar, khachkar, ceramics, lamp.

The article presents the first results of archaeological research of the Christian sanctuary in the village of Sos, carried out in 2019-2020. The excavations revealed an early Christian complex consisting of two small churches-chapels, a refectory and other buildings. Parts of early Christian stelae, a wide variety of ritual and household items, and thousands of fragments of tiles were found.

**ВАРДГЕС САФАРЯН**

Лектор АрГУ,  
к.и.н., доцент  
[vardges\\_safarian@mail.ru](mailto:vardges_safarian@mail.ru)

## РАСКОПКИ РАННЕХРИСТИАНСКОГО КОМПЛЕКСА В СЕЛЕ СОС

### РЕЗЮМЕ

**Ключевые слова:** Сос, монумент, Арцах, Лусаворчи сар, хачкар, керамика, светильник.

В статье представлены первые результаты археологических исследований христианского святилища в с. Сос, осуществленных в 2019-2020 гг. Раскопки выявили раннехристианский комплекс, состоящий из двух небольших церквей-часовен, трапезной и других построек. Были найдены части раннехристианских стел, множество разнообразных предметов ритуального и бытового назначения и тысячи обломков черепицы.



Նկ. 1



Նկ. 2



Նկ. 3



Նկ. 4




Նկ. 5



Նկ. 6



Նկ. 7 Սոս , Ճարտար, Տիգրանակերտ, Բերդաշեն



Ակ. 8



Ակ. 9



Նկ. 10



Նկ. 11



Նկ. 12



Նկ. 13



Նկ. 14



Նկ. 15



Նկ. 16



Ակ. 17



Համալիրը արևելքից (2020 թ.)



Համալիրը արևմտաքից (2020 թ.)

## ՄԵԼԱՆՅԱ ԲԱԼԱՅԱՆ

ԱՀ ԿԳՄՍ նախարարի խորհրդական,  
պ.գ.թ., դրցնան  
[melanyabalayan@mail.ru](mailto:melanyabalayan@mail.ru)

### ԱՂՎԱՆԻՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԷԹՆԻԿ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԵՎ ԱՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱՀԱՐԿՈՒՄՆԵՐԸ

**«Հիմնաբառեր»** Աղվանք, Եկեղեցի, ազգային, քաղաքական, հոգևոր, քրիստոնեական, առաքելական, տեսություն, հայկական, էթնիկ:

Կովկասագիտության մեջ առ ներկա ժամանակները ամենախճճված ու տակավին վիճահարուց տեսություններից մեկը, թերևս, Աղվանական տեսությունն է, որից բխում է Աղվանից Եկեղեցու ազգային պատկանելության հիմնահարցը: Հատկապես վերջին քաղաքական բուն իրադարձությունների արդյունքում այն վերստին միանգամայն նոր որակումների ու հակասական մեկնաբանությունների կիզակետում է հայտնվել:

Հիմնախնդրի բուն էռությունը հասկանալու համար, մեր կարծիքով, նախևառաջ պետք է հստակ ու հիմնավոր պատասխան տրվի, թե ինչպես, ինչ հանգամանքների ու իրադարձությունների արդյունքում է այն ծագել, ապա, գնալով, ավելի խճճվել, և որոնք են դրա բուն պատճառները:

Թուրքիայի և Աղրբեջանի կողմից ավանդաբար իրականացվող հայկական ծագման քրիստոնեական արժեքներն «աղվանական» հայտարարելու և «սեփականաշնորհելու» միջոցով յուրացնելու, ինչպես նաև դրանք ուղղակի ոչնչացնելու հստակ ձեռնարկները 2020 թ. հայտնի քաղաքական իրադարձություններից հետո մեծ մասշտաբներ են ստացել: Դրանք անվերապահորեն միտված են նշված պետությունների որդեգրած և արդեն իսկ միջազգային

հնչեղություն ստացած հանրահայտ քաղաքական ծրագրերի իրականացմանը: Այդ ամենի արդյունքում քաղաքակիրթ կոչվող XXI դարում համաշխարհային քաղաքակրթության արժեքների պահպանման ու պաշտպանության առաքելությամբ և այդ նպատակներին միտված հստակ ու, թվում է՝ կայացած ծրագրերով և պայմանագրերով կյանքի կոչված միջազգային կազմակերպությունների գիտությամբ ու թող-տվությամբ այս օրերին պարզապես իսպառ ոչնչացման վտանգի առաջ են կանգնած դարեր շարունակ տարաբնույթ արհավիրքներին դիմակայած, Հայ առաքելական Եկեղեցու անբաժան մաս կազմած Հայ Աղվանից Եկեղեցու հոգևոր կենտրոններն ու տարատեսակ կառույցները: Եետևողականորեն իրականացվող նման քաղաքականությունն ինքնին Աղվանից Եկեղեցու Էթնիկ պատկանելության լուրջ փաստարկ է և իրական ընկալման արդյունք, չնայած զուգահեռաբար տարվող ու գիտական հիմնավորումներից զուրկ քարոզության ակտիվացմանը:

Աղվանից Եկեղեցու Էթնիկ պատկանելության հիմնահարցը քննարկելու տեսանկյունից կարևոր է ինչպես նրա ծագման, կազմավորման, բազմադարյա գործունեության գիտական հիմնավոր ներկայացումը, այնպես և հոգևոր աշխարհագրական-տարածքային սահմանագծերի ճշգրտումը: Այս հիմնահարցերի շուրջ նույնպես իրարամերժ մեկնաբանությունների հետևանքով ունենք խճճված իրականություն:

Աղվանից Եկեղեցու հոգևոր սահմանների ճշգրտումն անուղղակիորեն առնչվում է Մեծ Հայքի և Բուն Աղվանքի վարչաքաղաքական սահմանների իրողություններին:

Բուն Աղվանքի և Մեծ Հայքի կամ Հայաստանի միջև վարչաքաղաքական սահմաններն աղբյուրագիտական հիմքի վրա ճշգրտելուն և պատմագիտության մեջ հիմնահարցը հիմնավորապես ներկայացնելուն միտված գիտական կարևոր ուսումնասիրություններ կատարվել և հընթացս կա-

տարվում են (Պ. Մոլաղյան, Հ. Անասյան, Աս. Մնացականյան, Բ. Հարությունյան, Բ. Ովուբարյան, Հ. Սվազյան, Ալ. Հակոբյան և ուրիշներ): Ընդ որում, առանձնակի ընդգծման է արժանի այն հստակ իրողությունը, որ հիմնախնդրին անդրադարձած հեղինակների համար, որպես սկզբնադրյուր, գրեթե մշտապես հիմք են հանդիսացել Ք. ա. V դ. ի վեր ստեղծված թե՛ հունահռոմեական, թե՛ հայկական աղբյուրները, որոնցում, առանց բացառության, Հայաստանի ու Աղվանքի սահմանագիծ է ճանաչված Կուր գետը<sup>1</sup>: Այս իմաստով հատուկ ուշադրության են արժանի Ալ. Հակոբյանի բազմաթիվ ուսումնասիրությունները, որոնց թվում հարկ է ընդգծել վերջերս հրատարակված «Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղվանքում և Հայոց արևելից կողմանքում անտիկից մինչև ԺԴ դար» առյուրագիտական հարուստ հենքով պատմագիտական ուսումնասիրությունը: Գիտական պատշաճ բժախնդրությամբ և առկա սկզբնաղբյուրային բազայի՝ այդ թվում և հնագիտական նյութերի, հիման վրա հեղինակն իրավացիորեն ներկայացրել է նաև այն փաստը, որ «Ք. ա. 7-6-րդ դարերից ի վեր Կուրը՝ որպես Հայաստանի եւ աղուանների բնակութեան տարածքի միջեւ

<sup>1</sup> Ովուբարյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Եր., 1981, Մորածյան Պ. Նաղորնի Կարախ ս древних времен до 1917 г., «К освещению проблем истории и культуры Кавказской Албании и восточных провинций Армении», т. 1. Ер., 1991, с. 37-49; Арутюняն Բ. Административно-политическое состояние северо-восточных областей царства Великой Армении в 387-451 гг., նույն տեղում, էջ 16-36; Акопян Ա. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ер., 1987, с. 1417; Յակոբեան Ալ. Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղուանքում և Հայոց արևելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԴ դար (պատմա-աղբիւրագիտական քննութիւն), Եր., 2020, Խոսըլցև Ա. Կ вопросу о политической границе Армении и Кавказской Албании в Античный период, «Кавказ и Византия», т. 1. Ер., 1979; Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, Եր., 2006, էջ 55, Bais M. Albania caucasica. Ethnos, storia, territorio attraverso le fonti greche, latine e armene. Milano, 2001, p. 68 և այլն:

սահման, գրեթե անփոփոխ, շարունակվել է մինչև 5-րդ դար՝ Պարսկաստանի կողմից վարչաքաղաքական նոր մարզերի ստեղծումը՝ կապված Արշակունյաց հայկական թագավորության անկման հետ»<sup>2</sup>: Ի դեպ, քննարկվող հիմնահարցի առնչությամբ կարևոր է ընդգծել նաև հեղինակի կողմից շատ կարևոր մի իրողության արձանագրման մասին ևս, համաձայն որի՝ «հայերի որոշ ներթափանցումը Կուրից հիւսիս» տեղի է ունեցել «արդէն Ք. ա. Վերջին դարերում»<sup>3</sup>: Հետևաբար, որպես անհերթելի իրողություն պետք է ընդունել, որ քրիստոնեության սկզբնական տարածման շրջանում Կուրի աջակնյակում հայ ազգաբնակչության առկայությունը ևս պատճառ պետք է հանդիսացած լիներ տեղում քրիստոնեության առավել նպատակային ու հիմնավոր տարածման համար՝ չսահմանափակվելով, իհարկե, միայն տեղի հայ ազգաբնակչության շրջանում քրիստոնեության տարածմամբ: Հայտնի փաստ է, որ Հայոց Արևելից կողմերի, այսինքն՝ Արցախ և Ուտիք աշխարհներում, նաև բուն Աղվանքում քրիստոնեական քարոզության շնորհիվ առաջացած հոգևոր առաջնորդությունն ինքնըստինքյան և ի սկզբանե կազմում էր Հայոց Եկեղեցու մաս, իսկ հոգևոր առաջնորդարանը սկզբում գտնվում էր Մեծ Հայքի Արցախ աշխարհի Ամարաս բնակավայրում:

Փավստոս Բուզանդը, նկարագրելով Ս. Գրիգորիսի մասունքների հուղարկավորությունը, գրում է, որ սարկավագները Գրիգորիսի մարմինը «բերին ի գաւառն իւրեանց ի կողմանս Աղուանից ի սահմանս Հայոց ի Հարանդ, ի գեօնս որ անուանեալ կոչի Ամարազ: Եւ Եղին զնա առ Եկեղեցեաւն, զոր շինեալ էր առաջնոյն մեծին Գրիգորի, հաւուն Գրիգորիսի՝ քահանայապետին մեծի աշխարհին Հայաստան Երկ-

<sup>2</sup> Յակոբեան Ալ, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղուանքում, էջ 14-65:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 20:

րին»<sup>4</sup>: Հարկ է նկատել, որ պատմիչը նկատի է առել Հայոց Աղվանքը, որովհետև անգամ հատուկ շեշտել է «ի կողմանս Աղուանից, ի սահմանս Հայոց»: Հովհաննես Դրասխանակերտցին նույն փաստը հետևյալ կերպ է ներկայացրել. «Եւ տարեալ հանգուցանեն զսուրբ մարմին նորա ի գեօղն Ամարաս, որ ի Փոքր Սիւնիս»<sup>5</sup>: Հանրահայտ է, որ «ի Փոքր Սիւնիս» անվան տակ կաթողիկոս պատմիչը նկատի ուներ Արցախ աշխարհը:

Միքայել Չամչյանը, նկարագրելով Ս. Գրիգորիսի առաքելությունը, գրել է. «Սոյն այս սուրբ Վրթանէս ձեռնադրեալ զերեց որդի իր գԳրիգորիս՝ արխեպահսկոպս՝ առաքեաց յԱղուանս Հայոց. որ եւ նահատակեցաւ անդ, ի նոցանէ: Եւ, ի սմանէ համարի սկզբնաւորութիւն կաթողիկոսութեան Աղուանից»<sup>6</sup>: Հարկ է ուշադրություն դարձնել հեղինակի մատնանշած «Եւ, ի սմանէ համարի սկզբնաւորութիւն կաթողիկոսութեան Աղուանից» ձևակերպման վրա:

Նշված սկզբնաղյուրների վկայակոչմամբ կարելի է վստահաբար եզրակացնել, որ հայ պատմիչները, սկսած Վդ., Աղվանքի մասին հիշատակելով՝ հիմնականում նկատի են ունեցել Արցախ և Ուտիք աշխարհները: Այդ փաստն էլ ընդգծելու նպատակով հաճախ շեշտել են՝ «ի կողմանս Աղուանից, ի սահմանս Հայոց», «յԱղուանս Հայոց», «յաշխարին Աղուանից, որ ասի խորին աշխարի Հայոց»<sup>7</sup> և այլն:

Թերևս Ալ. Հակոբյանի հիմնավորումները, կապված «Աղուանից կաթողիկոսարանը (նախապէս, 315-ից՝ Եպիսկոպոսարանը) սկզբնապես տեղակայված է եղել թագաւորական մայրաքաղաք Կապաղակում (շուրջ մէկուկէս դար): Նրա տեղափոխումը Չող տեղի է ունեցել Աղուանից մարզ-

<sup>4</sup> Բուզանդ Փ., Պատմութիւն Հայոց, Եր., 1987, էջ 26:

<sup>5</sup> Դրասխանակերտցի Հովհ., Պատմութիւն Հայոց, Եր., 1996, էջ 46:

<sup>6</sup> Չամչյան Մ., Խորախնան Պատմութեան Հայոց, Վենետիկ, 1811, էջ 84:

<sup>7</sup> Ուհիայեցի Մ., Ժամանակագրութիւն, Եր., 1991, էջ 230-231:

պանութեան կազմավորման արդիւնքում (428 թ.), որի կենտրոնը Սասանեանները տեղակայել էին Չողում (Դերբենդ)՝<sup>8</sup>, ճշգրտման կարիք ունեն այն պարզ հիմնավորմամբ, որ Աղվանից առաջին Եպիսկոպոս Գրիգորիսի նստավայրը Ամարասն էր, և պատահական չէ, որ նրա աշակերտները Գրիգորիսի մասունքները տեղափոխել ու հուղարկավորել են հենց այնտեղ և վերը նշված 315 թ. հետո՝ 348 թ.: Ինչ Վերաբերում է մարզպանության կազմավորումից՝ այսինքն 428 թ. հետո, Եպիսկոպոսական աթոռի տեղափոխությանը Չող-Դերբենդ, ապա ընդունելի և տրամաբանական է հոգևոր աթոռի տեղակայումը վարչական կենտրոնում:

Արշակունյաց թագավորության անկմամբ և Պարսկաստանի կողմից իրականացված վարչական վերաբաժանումների հետևանքով Հայաստանից անջատվեցին Հայոց արևելից Արցախ և Ուտիք աշխարհներն ու մտցվեցին նոր կազմավորվող Աղվանից մարզպանության կազմի մեջ<sup>9</sup>: Հ. Սվայանի կարծիքով՝ մարզպանությունը ստեղծվել է 461 թ.<sup>10</sup> Վաչե Բ-ի գահից հեռացվելուց հետո՝<sup>11</sup>, ըստ Ալ. Հակոբյանի՝ 428-450 թթ. միջակայքում:<sup>12</sup> Հիշյալ ժամանակներում եկեղեցու հոգևոր սահմանները որոշվում էին այն վարչաքաղաքական սահմաններով, որոնցում գործում էր եկեղեցին: Աղվանից մարզպանության կազմավորմամբ անհրաժեշտություն էր առաջացել Հայոց արևելից կողմանց և բուն Աղվանից Եպիսկոպոսական աթոռների միավորման, ինչն էլ տեղի

<sup>8</sup> Յակոբեան Ալ., Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղուանքում, էջ 95:

<sup>9</sup> Տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի հյուսիս-արևելյան մարզերի վարչաքաղաքական կացությունը 387-451 թթ., «ԲԵՀ», ԵՊՀ, 1976, հ. 2, էջ 92:

<sup>10</sup> Տե՛ս Սվայան Հ. Ս., Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը, «ՊԲՀ», ՀՍՍՀ ԳԱ, 1979, հ. 4, էջ 212:

<sup>11</sup> Ակոպյան Ալ. Ալբանի-Ալյանք в греко-латинских и древнеармянских источниках, стр. 120.

ունեցավ 552 թ.: Այդ է վկայում նորաստեղծ առաջնորդության առաջին գահակալ Մեծառանից Աբաս Եպիսկոպոսի տիտղոսը՝ «Կաթողիկոս Աղուանից, Լինաց և Չողայ»: Պարտավում նորահաստատ առաջնորդության պաշտոնական լեզուն դարձավ հայերենը:

Այսպիսով, Աղվանից կաթողիկոսությունը իհմնադրվել է ոչ միայն որպես Հայոց Եկեղեցու բաղկացուցիչ մաս, այլև իր ծագմամբ, էությամբ ու գոյությամբ այն մշտապես հայ լուսավորչական թեմ է եղել: Ինչ վերաբերում է բուն Աղվանքի աղվանական ցեղերին, ապա, ինչպես իրավացիորեն ներկայացրել է Հ. Անասյանն, «... աղվանները քրիստոնեության մուտքից հետո ... հետզիետե ընկել են հայերի ինչպես քաղաքական, այնպես էլ կրոնական ու մշակութային ազդեցության տակ: Ի վերջո աղվանների ճնշող մասը էթնիկապես համաձուվվել է հայերի հետ: Այդ բանում կարևոր դեր է կատարել Աղվանական Եկեղեցին ..., որը Հայ Եկեղեցու արքեպիսկոպոսություններից մեկն էր, որի պետը նախկինի պես շարունակում էր կրել Աղվանից կաթողիկոսի տիտղոսը, այնպես, ինչպես Հայկական Եկեղեցու կազմում Աղթամարի և Կիլիկիայի կաթողիկոսները»<sup>12</sup>:

«Այսպիսով, VI դարի երկրորդ կեսին Աղվանից Եկեղեցին ազգային տեսանկյունից դարձավ առավել հայկական, քան աղվանական, չնայած որ այն ընդգրկում էր աղվանական տարացեղ բնակչություն ունեցող ծախափնյա լայնարձակ տարածքներ ...»<sup>13</sup>: Պարսկահպատակ Աղվանից մարզպանության ստեղծման արդյունքում քաղաքական մեկ միավորի մեջ էին հայտնվել ծախակողմյան աղվանական ցեղերը և հայ ժողովորի Հայոց արևելից կողմանց հատվածը: Վերջինս աղվանական ցեղերի համեմատ գտնվում էր տնտեսական, քաղաքական ու մշակութային

<sup>12</sup> Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հ. Ա, Եր., 1959, էջ 614:

<sup>13</sup> Նոյն տեղում, էջ 139-140:

ավելի բարձր մակարդակի վրա, ուստի և որոշում էր աղվանական եկեղեցու դավանաբանական դիմագիծը: Զախափնյա Աղվանքի Եպիսկոպոսները Արցախի և Ուտիքի հայոց հոգևոր առաջնորդներին էին ճանաչում իրենց եկեղեցու գլուխ, իսկ Վերջիններս՝ իրենց հերթին, նոյն կերպ ընդունում էին Ամենայն Հայոց կաթողիկոսին: Սույն փաստի առնչությամբ Մ. Օրմանյանը գրել է. «Քուր գետից ծախ եւ Կովկասեան լեռնաշղթայից հարաւ ընկած՝ բուն Աղուանքում քրիստոնէական քարոզութեան հետեւանքով առաջացած առաջնորդութիւնը Ենթարկում էր Հայոց եկեղեցուն, իսկ առաջնորդարանը գտնում էր Մեծ Հայքի Արցախ նահանգի տարածքում՝ Ամարասում: Պարսից Սասանեանները, 387 թ. Հայաստանը Բիզանդիայի հետ կիսելուց յետոյ, Մեծ Հայքի Արցախ եւ Ուտիք նահանգները միացուն բուն Աղուանքին և կազմեցին Աղուանից մարզպանութիւնը: Վարչական այս ինքնուրույնութեան հիման վրայ, 551 թ. Դուինի եկեղեցական ժողովից յետոյ Աղուանից մարզպանության առաջնորդութիւնը Վերածուեց կաթողիկոսութեան, որ Ենթակայ էր Ամենայն Հայոց հայրապետին եւ եղել է Հայ եկեղեցու նույրապետական կառույցներից մէկը... Մի խօսքով միշտ եղել է հայկական երևոյթ եւ հասկացութիւն, աղուան ցեղի կամ ցեղախմբի հետ կապ է ունեցել անուղղակիօրեն»<sup>14</sup>:

Այսպիսով, դավանանքային ու քաղաքական պայմանների թելադրմամբ 552 թ. Պարտավում Վերահաստատված Եպիսկոպոսական աթոռը սկզբնավորում է Հայոց արևելից կողմանց կամ Աղվանից կաթողիկոսությունը, որն էլ մշտապես ի հոգևորս Ենթակա էր Հայոց կաթողիկոսությանը: Աղվանից կաթողիկոսության հոգևոր քաղաքական սահմանների, ինչպես նաև նրանում միավորված Եպիսկոպոսությունների հիմնահարցի կարևորությունն ու արդիականությունը, հատկապես Վերջին քաղաքական

<sup>14</sup> Օրմանյան Մ., Հայոց եկեղեցին, Եր., 1993, էջ 275:

իրադարձություններից հետո, ձեռք է բերել առավել հրատապություն և, նորահայտ ու հիմնավոր աղբյուրների հիման վրա պատմագիտական լուրջ քննության կարիք ունի: Ըստ Էւլիթյան, Աղվանից Եկեղեցու հոգևոր սահմանների մեջ սկզբնական շրջանում, անշուշտ, ներառված են Եղել նաև բուն Աղվանիք քրիստոնյա բազմաթիվ ցեղեր, ընդ որում, երբեմն սկզբնաղբյուրներում դրանց քանակը հասցվում է 11-ի՝ ներառելով լեզգիներին, մազքութներին, լինաց և այլ ցեղերի: Նրանց մի մասն արաբական տիրապետության արդյունքում ընդունեց մահմեդականություն, իսկ մյուս մասը մնաց քրիստոնեական հավատքի հետևորդ: Պատմական այս իրողությունը շատ հիմնավոր ու հստակ ներկայացրել է Ալ. Հակոբյանը. «Արաբական խալիֆայութեան տիրապետութեան տակ յայտնուած Արեւելեան Այրկովկասում մահմեդականութեան տարածման դարաշրջանում աղուանական մետահեթիկ ընդհանրութեան քրիստոնեայ մնացած հատուածը վերջապէս համախմբուեց իբրեւ «ուղիներ» (նաեւ՝ ուտիներ) ինքնանուամբ միասնական էթնոս, իսկ մահմեդականացած հատուածի գերակշիռ մասն՝ իբրեւ «լեզգիներ» ինքնանուամբ էթնոս-ժողովուրդ (պահպանուեցին նաեւ մի քանի փոքր մահմեդական եւ լեզգիալեզգու ժողովուրդներ՝ թարասարանցիներ, ծախուրներ, ոռութովներ, ագուլներ, բուլուղներ, կոհզներ, խինալուղցիներ եւն):<sup>15</sup> Ինչ վերաբերում է Աղվանից Եկեղեցուն, ապա այն աստիճանաբար դարձավ միայն Արցախի, Ուտիքի, ինչպես նաև բուն Աղվանքում բնակություն հաստատած հայ ժողովրդի հոգևոր կառուց: Այս տեսակետը նոր հիմնավորումներով և գիտական պատշաճ մակարդակով հանրությանը ներկայացնելու անհրաժեշտությունը և՝ արդիական է, և՝ հրատապ, մանավանդ, որ հարևան Աղբեջան կոչված

<sup>15</sup> Յակոբեան Ալ., Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղուանքում, էջ 3:

պետության կողմից տարվող քաղաքական էքսպանսիան հիմնավորելուն միտված նպատակային ու քավականին լայնամասշտաբ ձեռնարկումների արդյունքում, հատկապես վերջին քաղաքական իրադարձություններից հետո, առավել ակտիվացել են Հայ Աղվանից Եկեղեցին ոչ հայկական հայտարարելու և հայ ժողովրդի հետ էթնիկապես առնչություն չունենալու ուղղությամբ տարաբնույթ ձեռնարկումները: Այդ ամենի արդյունքում ներկա ժամանակներում երբեմն կասկածի տակ է առնվում Աղվանից կոչված Հայոց արևելից Արցախ և Ուտիք նահանգների, ինչպես նաև բուն Աղվանքի քրիստոնյա հատվածը ներկայացնող Եկեղեցու ազգային բնույթը, նրա՝ հայոց Եկեղեցական հաստատության կարևորագույն թեմերից մեկը լինելու փաստը: Աղվանից Եկեղեցու էթնիկ պատկանելության հիմնախնդրի պարզաբանման տեսանկյունից կարևոր փաստարկներ են Աղվանից կաթողիկոսաշարքի հիմնավոր ուսումնասիրությունը և համապատասխան ճշգրտումները: Այս առումով կարևոր սկզբնաղբյուրը, բնականաբար, վերստին Մովսես Դասիուրանցու երկն է, որում ներկայացված է Աղվանից կաթողիկոսների շարքը՝ գահակալության ժամանակաշրջանների հնարավոր ճշգրտումներով<sup>16</sup>, «Հայերեն ձեռագիր հիշատակարանները», վիմագիր արձանագրությունները: Հիմնահարցի աղբյուրագիտական հիմքը պարզաբանելու իմաստով գնահատանքի է արժանի Սամվել Կարապետյանի «Բուն Աղվանքի վիմագրերը» սկզբնաղբյուրային նշանակության աշխատությունը<sup>17</sup>:

Հայոց Եկեղեցու պատմությունը վկայում է, որ Հայաստանի քաղաքական մասնատվածությունը երբեմն անդրադարձներ է ունեցել Հայոց Եկեղեցու առանձին թեմե-

<sup>16</sup> Դասիուրանցի Մ., Պատմութիւն Աղվանից աշխարհի, Եր., 1983, էջ 341-347:

<sup>17</sup> Կարապետյան Ս., Բուն Աղվանքի վիմագրերը, Եր., 1997:

ոի միջև կապերի թուլացման վրա, սակայն խնդիրը երբեք չի հասել ակնհայտ մասնատման այն պարզ պատճառով, որ Հայոց Եկեղեցին համազգային հոգևոր հաստատություն էր<sup>18</sup>: Այս առումով կարևոր է հիշատակել Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի հետևյալ տեսակետը. «Հայոց ազգային Եկեղեցին եղած է այն միակ յօդակապը, որ Հայկայ սերունդին ցրուած մնացորդները կրցած է իրարմէ անքակտելի պահել, և իբրեւ մէկ ազգ պահպանել»<sup>19</sup>:

Իր հանրահայտ քաղաքական նպատակներին հասնելու համար Ադրբեջանի նախագահի հանձնարարությամբ և անմիջական հովանավորությամբ այսօր «ստեղծվում է պատմություն», որը մի կողմից հարված է իրական պատմագիտությանը համաշխարհային իմաստով. այն պարզունակ տպավորությունն է ստեղծվում ամենալայն հանրության շրջանում, որ պատմություն կարելի «ստեղծել» պատվերով, նաև կարելի է ծառայեցնել այն սեփական շահերին ու նպատակներին: Իրականում՝ նման «պատմությունը» գիտական հետազոտության նյութ չէ: Իսկ մյուս տեսանկյունից՝ ուղղակիորեն խեղաթյուրվում է համաշխարհային քաղաքակրթության պատմության մի ողջ հատված, որն է «Աղվանից Եկեղեցու պատմությունը»: Հատկապես 2020-2021 թթ. քաղաքական իրադարձությունների համատեքստում այս ուղղությամբ Ադրբեջանի կողմից իրականացվող նպատակային ձեռնարկներն ավելի մեծ մասշտաբներ ու բնույթ են ստացել և հետապնդում են մեկ հանրահայտ նպատակ՝ խեղաթյուրելով իրական պատմությունն՝ այն ծառայեցնել իրենց զավթողական ծրագրերին:

<sup>18</sup> Բալբյան Մ., Հայ Աղվանից Եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը), Ստեփանակերտ, 2009, էջ 36:

<sup>19</sup> Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 245:

**MELANYA BALAYAN**

Advisor to the Minister of Education, Science,  
culture and sports of AR,  
Candidate of Historical Sciences,  
Associate Professor  
[melanyabalyan@mail.ru](mailto:melanyabalyan@mail.ru)

**ETHNICITY OF THE AGHVAN CHURCH AND POLITICAL  
SPECULATION**

**SUMMARY**

**Keywords:** Aghvank, church, national, political, religious, Christian, apostolic, theory, Armenian, ethnic.

At present, the Aghvanian or Albanian theory, in particular, the question of the nationality of the Aghvanian church, is one of the most complex and still controversial theories in Caucasian studies. Especially because of the recent turbulent political events, the problem has again come into the spotlight: completely new, very different and contradictory interpretations have arisen. As a result of the current purposeful and rather large-scale initiatives that did not have an ethnic connection with the Armenian people, but aimed at justifying the political expansion of Azerbaijan, various attempts by this state to declare the Aghvan church non-Armenian became more active. However, various sources, including foreign ones, unequivocally point to one factual, scientifically based theory: the Aghvan Church has always been a part of the Armenian Apostolic Church from its foundation, formation, part of its existence and missions. All initiatives aimed at upholding political positions based on political interests are groundless and unscientific.

**МЕЛАНЯ БАЛАЯН**

Советник министра образования, науки,  
культуры и спорта АР,  
к.и.н., доцент  
[melanyabalayan@mail.ru](mailto:melanyabalayan@mail.ru)

## **ВОПРОС ЭТНИЧЕСКОЙ ПРИНАДЛЕЖНОСТИ АГВАНСКОЙ ЦЕРКВИ И СОВРЕМЕННЫЕ ПОЛИТИЧЕСКИЕ СПЕКУЛЯЦИИ**

### **РЕЗЮМЕ**

**Ключевые слова:** Агванк, церковь, национальный, политический, религиозный, христианский, апостольский, теория, армянский, этнический.

В настоящее время агванская или албанская теория, в частности, вопрос о национальной принадлежности Агванской церкви является одной из самых сложных и до сих пор спорных теорий в кавказоведении. Особенно из-за недавних бурных политических событий проблема снова оказалась в центре внимания: возникли совершенно новые, самые разные и противоречивые интерпретации. В результате нынешних целенаправленных и достаточно масштабных инициатив, не имевших этнической связи с армянским народом, но направленных на обоснование политической экспансии Азербайджана, более активизировались различные попытки этого государства объявить Агванскую церковь неармянской. Однако различные источники, в том числе иностранные, недвусмысленно указывают на одну фактическую, научно обоснованную теорию: Агванская церковь всегда была частью Армянской Апостольской церкви с ее обоснования, формирования, частью ее существования и миссий. Все инициативы, направленные на отстаивание политических позиций, основанных на политических интересах, безосновательны и ненаучны.

## ԿԱՐԵՆ ԽԱՆՅԱՆ

Խ. Աբովյանի անվան <ՊՄՀ,>  
բանասիր. գ.թ., դոցենտ  
kkhanyan@mail.ru

### ԱՐՁԱԽԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

*Հիմնաբառեր՝* Սիլվա Կապուտիկյան, Արցախ, ազատագրական շարժում, գեղարվեստական պատկեր:

Հայ ժողովրդի անցած հազարամյակների պատմությունը եղել է ազգային-ազատագրական անզիջում պայքար: Վարդանանց և Վահանանց, Եսայի Արու Մուսեի մղած ճակատագրական պատերազմների, Սարդարապատի փրկարար ճակատամարտի շարունակությունը հայ ժողովրդի ազգային-ազատագրական գոյամարտն է, որը սկիզբ առավ 1988 թ. փետրվարին ու շարունակվում է առայսօր: Ինչպես միշտ, այս անգամ ևս հայ գրականությունը զինվորագրվեց ժողովրդի ըմբռստ գոյամարտին: Չկա մի հայ բանաստեղծ, որը չարձագանքեր ԽХ դ. այդ անզիջում և պատվաբեր պատերազմին: Աշխարհասփյուռ հայ ժողովրդի հարյուրավոր քաջորդիներ իրենց գլուխը դրին Արցախյան ազատագրական պատերազմի զոհասեղանին՝ գիտակցելով, որ այսօր հայության հայրենի սահմանները սկսվում են Արցախից, ընդգրկում Հայոց աշխարհը: Այդ ճակատագրական տարիներին իրենց քնարական շարքերով, պոեմներով, բալլադներով հանդես եկան գրեթե բոլոր հայ բանաստեղծները, որոնց առաջին շարքում քայլում էր նաև Սիլվա Կապուտիկյանը:

Նշենք, որ տաղանդավոր բանաստեղծութին տարբեր առիթներով եղել է Արցախում և ստեղծել նրա գեղարվեստական պատկերը: Հայտնի է նրա այցելությունը Արցախ

նաև 1960-ական թվականներին: Նա մեկ ամսից ավելի հյուրընկալվել է հանրահայտ Ճարտար գյուղում, որի ղեկավարը եղել է Սոցիալիստական աշխատանքի հերոս Սուրեն Աղամյանը: Ականավոր բանաստեղծությունների մամուլում հանդես է եկել գեղարվեստական ակնարկների շարքով: Սակայն, տեսնելով Ադրբեյջանի կառավարող շրջանների ճնշումները Հայոց պատմական Արցախի հանդեպ, նա բարձրացրել է ցաման իր խոսքը «Հայոց բարդին» բանաստեղծությամբ, որը բերում ենք ամբողջությամբ.

Ինչքան մենակ բուսնում է նա լեռան ետև, մեն մի ծորում,  
Ինչքան հեռու իր մոր աչքից, այնքան բռ’ տն է ուժը լարում,  
Այնքան ավել ճյուղը փռում, արմատները խո՛րն է խրում,  
Կյանքի հյութով ու սաղարթով այնքան թա՞նձը է հայոց  
բարդին:

Ինչքան նրա դեմք փակում, խորն է ծածկում լեռը նրան,  
Ինչքան կոծում, կողն են ծեծում, շանթ ու անձրև, ամպ ու  
մոայ,

Այնքան շանթին ճակատ տայիս, կանաչում է շատ ու շոայլ,  
Այնքան համառ ծգվում է վեր, այնքան բա՛րձը է հայոց  
բարդին:

Ծգվում է վեր, որ բարձրանա, որ գլուխը մի կերպ հանի  
Քար ու ժայռից ու երևա՛, ու երևա՛ երևանին,  
Ասի՛ նայի՛ր, եղե՛լ եմ, կա՛մ ու կլինեմ, ինչ էլ լինի,  
Դու հավատա, լեռներից վե՛ր, քարից կա՛րձը է հայոց բարդին<sup>1</sup>:

Արցախի գեղարվեստական պատկերի ստեղծումն անընդմեջ հուզել է ականավոր բանաստեղծություն: 1960 թ. սկսած, արցախցի համարյա բոլոր աշակերտներն անգիր արտասանում էին Կապուտիկյանի աննախադեպ հյուսվածքը՝ «Ղարաբաղի բարբառը» խորագրով:

---

<sup>1</sup> «Արցախ» հանդես, Ստեփանակերտ, 1989, թիվ 1, էջ 17:

Ժայռի նմա՞ն է այս հին բարբառը,  
ժայռի պես կո՞շտ է, չըհըղկվա՛ծ,  
Ու ժայռի պես էլ կածր է, համառ է,  
Չի՛ պոկի նրան ոչ մի հարված,  
Շուրթերի վրա այնպե՞ս է բառը,  
Ինչպես որ ժայռն է հողում խրված<sup>2</sup>:

Սիլվա Կապուտիկյանն ըմբոստ բանաստեղծութի է: Նա չէր կարող թաքցնել ցասումը Հայոց Արցախի նկատմամբ սովետական պետական ապարատի անարդարացի վերաբերմունքի առնչությամբ: Բանաստեղծական իր կրակոտ տողերում նա խարազանել է անմարդկային ու անարդար այն լուծումը, որով 1920-ական թթ. սկզբին Արցախը նվիրեցին ազերի-թուրքերին: Դիմելով ուկրաինական գրող իր ընկերներին՝ առանձնապես իվան Դրաչին, Կապուտիկյանը կոչ է արել բարձրացնել արդարության ձայնը բոլոր անարդարացի որոշումների դեմ: Դեռ ավելին, նա իր մայր ժողովրդի իմաստությամբ դիմել է Սովորմոն իմաստունին հետևյալ կրակոտ տողերով.

Մի՞թե դու չես տեսնում, մի՞թե դու չես լսում  
Գանձասարի զանգերն ահեղաձայն,  
Ինչպես ամեն քայլի հայերեն են խոսում  
Խաչքար, շեներ, վանքեր կիսակործան<sup>3</sup>:

Ինչպես Պ. Սևակի, Հ. Սահյանի, Գ. Էմինի, Վ. Դավթյանի, այնպես էլ Ս. Կապուտիկյանի մտածողությունն ունի իր կոնկրետ առանձնահատկությունները: Այդ ականավոր բանաստեղծների և՝ տեսադաշտում, և՝ մտապատկերներում «Հայաստան» հասկացությունը լայն ընդգրկումներ ունի, որի սահմաններն սկսվում են Արևմտյան Հայաստանից,

<sup>2</sup> Կապուտիկյան Ա., «Երկեր» երեք հատորով, Եր., 1984, էջ 89:

<sup>3</sup> Նոյն տեղում, էջ 89:

հասնում Արցախ, Մոռվի լեռնալանջերին և փարվում մայր Հայաստանին: Այս առումով ևս Ս. Կապուտիկյանը առանձնանում է ստեղծագործական իր խոհականությամբ ու կարութայից զգացումներով:

Անդրադառնալով Հայրենական մեծ պատերազմում մարտնչող հայ զինվորներին՝ նա հաղթանակներ շահող մի գնդի մեջ տեսնում է հայ ժողովրդի բոլոր հատվածների զավակներին, պատմական Հայաստանը համարում բոլոր հայողիների հայրենիքը:

Ս. Կապուտիկյանի պոեզիան բազմերանգ է այնպես, ինչպես աշխարհասփյուռ հայության կարոտը մայր Հայաստանի հանդեպ: Այստեղ կարևորվում է կարոտի զգացումը: Ընթերցողը երևանցի է, թե գյումրեցի, ջավախքեցի է, թե արցախցի, երկրորդական հարց է, քանզի Կապուտիկյանի նուրբ սրտի թթիհոները մեր ժողովրդի նվիրյալ դստեր սրտի զարկերն են: Աշխարհասփյուռ հայության յուրաքանչյուր զավակ կարոտով ու զերմությամբ է արտաքերում բանաստեղծութու երգը՝ ուղղված մայր Հայաստանին.

Հայաստան աշխարհ,  
Դու այսպես եղար, և դու համար մենք քեզ սիրեցինք  
Ո՞չ ազգականի հանդարտիկ սիրով,  
Այլ՝ սիրածի պես, սիրահարի պես,  
Ցավո՛տ, ցավախա՛ռն,  
Երազով, լոյսով, երգող տիրությամբ,  
Մերթ խոռվելով,  
Մերթ հաշտվելով-  
Քո գրկո՛ւմ անգամ՝ քեզ կարոտելո՛վ,  
Քեզ կորցնելու ահից տագանապա՛ծ,  
Քեզ ունենալու խինդից՝ երջանիկ,  
Եվ բախտիդ համար անվերջ, ամեն պահ մեռնել, ապրելո՛վ...  
Հայաստան աշխարհ...<sup>4</sup>

<sup>4</sup> Կապուտիկյան Ս., Գիրս հիշատակող, Եր., 1988, էջ 219:

Արցախյան պատերազմի հենց առաջին օրերից Ս. Կապուտիկյանը ոչ միայն իրեն դրսևորեց որպես ազատագրական պայքարը փառաբանող երգիչ, այլև գտնվեց ազգային արժանապատվության համար մարտնչող զինվորյալների շարքում՝ մերթ Արցախում, մերթ Երասխավանում, ուղղակի այն դիրքերում, որտեղ հայ ժողովրդի առյուծասիրտ զավակներն էին մարտնչում ազերի-թուրքերի բազմաքանակ ճիվաղների դեմ: Պարզապես Ս. Կապուտիկյան-երևույթը դարձել էր պայքարի երգը շուրջին զինվոր ու զենքը ձեռքին մարտիկ բանաստեղծ:

Նա ոչ միայն մարտնչում էր ազերի-թուրքերի նենգ դահիճների դեմ, այլև պատասխանում էր անմիջապես իր սուր գրչի ուժգնությամբ:

Դեռևս 1992 թ., երբ բորբոքված էր ազատագրական պայքարը, նա այցելեց պատմական Խաչեն գավառի Գանձասար վանք ու գրեց «Գանձասար վանքի մորմոքը» բանաստեղծությունը: Հայ ժողովրդի տաղանդավոր դուատրոն իրեն համարեց Արցախ աշխարհի զինվորյալ ու քաջալերեց մարտնչող զինվորյալներին հետևյալ կրակուտ տողերով.

Ժամն է, հայե՛ր, կանգնենք սատար

Մեր Արցախին՝ գերյալ մեր զավակին...<sup>5</sup>

Աղրբեջանի կողմից Արցախում տեղի ունեցող պատերազմը Ս. Կապուտիկյանը համարեց աշխարհասփյուռ հայության դեմ ուղղված ահարեկչություն: Նա բարձրածայնեց, որ այդ պատերազմը դեռևս սկիզբն է գալիք ազատագրական կոիվների: Նա կոչ արեց հայությանը բռունցքվել՝ վերիիշելով Մեծն Չարենցի մարգարեական կոչը. «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

Ժամանակի թերթերը հպարտության զգացումով են գրել Արցախում Ս. Կապուտիկյանի ելույթների մասին: 1992 թ.

<sup>5</sup> Կապուտիկյան Ս. «Երկերի ժողովածու», 2 հատորով, Եր., 1974, էջ 60:

Արցախի Մարտակերտի շրջանում ազատագրական պատերազմի ժամանակ զոհվեց Երիտասարդ բանաստեղծ Սամվել Շահմուրադյանը, որը մեկնել էր Արցախ՝ շուրթերին ազատագրության երգը, ձեռքին՝ զենքը: Ս. Կապուտիկյանը մոր արցունքներով շահախնեց իր բանաստեղծական տողեր՝ նվիրված նահատակ բանաստեղծին:

Լավերն են գնում, լավագույնները,  
իսկ դու լավերից լավագույնն էիր,  
Ու քո գնալով պակասեց սերը,  
Պակասեց լավը, պակասեց բարին:  
Եվ քո ի՞նչ տեղն էր մահերն ու մարտը,  
Քոնք գրիչն էր, լույս ու արարում:  
Տեսնես գիտե՞՞ր քեզ սպանող մարդը,  
Որ դու, դու մարդուն շա՞տ էիր սիրում:

Սիլվա Կապուտիկյանի կյանքն ու ստեղծագործական հարուստ ժառանգությունը հայ Ժողովրդի անցած հերոսական ճանապարհի գեղարվեստական պատկերն է, որին անդրադառնալու են հայոց գալիք սերունդները:

**KAREN KHANYAN**

Armenian State Pedagogical University

After Khachatur Aboyan

Candidate of Philological Sciences

kkhanyan@mail.ru

## **ARTISTIC IMAGE OF ARTSAKH IN S. KAPUTIKYAN'S POETRY**

### **SUMMARY**

**Keywords:** Silva Kaputikyan, Artsakh, liberation movement, artistic image.

During the years of the Artsakh liberation war, almost all Armenian poets, including Silva Kaputikyan, created their lyrical lines, poems and ballads. The talented poetess repeatedly visited Artsakh, creating an artistic image of Artsakh in her works. The life and rich creative legacy of Silva Kaputikyan is a reflection of the heroic path of the Armenian people, their artistic image, which the future generation of Armenians will turn to.

**КАРЕН ХАНЯН**

Армянский государственный педагогический университет  
имени Хачатура Абовяна  
Кандидат филологических наук  
[kkhanyan@mail.ru](mailto:kkhanyan@mail.ru)

## **ХУДОЖЕСТВЕННЫЙ ОБРАЗ АРЦАХА В ПОЭЗИИ С. КАПУТИКЯН**

### **РЕЗЮМЕ**

**Ключевые слова:** Сильва Капутикян, Арцах, освободительное движение, художественный образ.

В годы освободительной войны Арцаха своими лирическими строками, стихами и балладами выступили практически все армянские поэты, в том числе Сильва Капутикян. Талантливая поэтесса неоднократно бывала в Арцахе, создавая в своих произведениях художественный образ Арцаха. Жизнь и богатое творческое наследие Сильвы Капутикян – отражение героического пути армянского народа, его художественный образ, к которому обратится будущее поколение армян.

## **ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

## ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող,

պ. գ. թ.

k86mkrtchyan@gmail.com

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒԽ

**Հիմնաբառեր՝** Լեռնային Ղարաբադի հակամարտություն, հայ-իրանական հարաբերություններ, պատերազմ, դիվանագիտություն, միջնորդական առաքելություն:

1980-ական թթ. վերջին՝ մոտ 70-ամյա ընդմիջումից հետո, Լեռնային Ղարաբադի հիմնախնդիրը կրկին վեր հանեց՝ իր վրա սևեռելով սկզբում Մոսկվայի, այնուհետև (ԽՍՀՄ-ի փլուզումից հետո) տարածաշրջանային և արտատարածաշրջանային տերությունների ուշադրությունը: Փաստորեն, վերացավ Մոսկվայի և Թեհրանի սահմանակից լինելու (ԽՍՀՄ-ին սահմանի երկարությունը 2250 կմ էր) հանգամանքը<sup>1</sup>:

1990 թ. սեպտեմբերի 3-ին ՀՀ ԳԽ նիստում վերջինիս նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, քննարկելով Լեռնային Ղարաբադի հարցը, կարևորում է իհւհի հետ բանակցությունների նստելը՝ ՀՀ-ին հարաբերությունները ճշտելու և դիրքորոշումները պարզելու նպատակով<sup>2</sup>:

Հակամարտության կարգավորման հարցում միջնորդական առաքելությամբ հանդես գալու համար իհւն հաշվի էր առնում իր սահմանների երկայնքով ռազմական գործո-

<sup>1</sup> Բայբուրյան Վ., ՀՀ տեղը և դերը իհւ տարածաշրջանային քաղաքականության ոլորտում, «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հետանկարները», գեկուցումների ժողովածու, Եր., 2004, էջ 34:

<sup>2</sup> Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի: Ելոյթներ, հոդվածներ, հարցազրոյցներ: Կազմ., խմբ., առաջար. և վերջար. հեղ.' Ա. Բ. Սարգսյան, Եր., 2006, էջ 117:

դուրս գալու համար՝ նկատի ունենալով այդ պետության ոչ միատարր էթնիկ կազմը: Իհշ-ն Թուրքիան համարում էր տարածաշրջանում ԱՄՆ-ի շահերի պաշտպան և փորձում էր նրան ՀՀ խնդրից հեռու պահել: Այս առումով Իհշ-ն ուներ բնական դաշնակիցների ի դեմս ՀՀ-ի և ՀՀ-ի, որոնք չէին ընդունի Թուրքիայի միջնորդությունը: Նշելի է նաև Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցը, որն առափնյա երկրների միջև սուր հակասությունների պատճառ դարձավ<sup>4</sup>: Իհշ-ն անհանգստացած էր ՌԴ դիրքորոշումից և, բնականաբար, չէր ցանկանում տեսնել Այրենվկասը նրա ազրեցության ներքո: Սակայն շատ զգուշավոր էր և հարգանքով ՌԴ-ի նկատմամբ<sup>5</sup>:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ Իհշ- Ազգային անվտանգության բարձրագույն խորհուրդը 1991 թ. նոյեմբերին որոշում է ընդունում՝ անմիջական մասնակցություն ունենալ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում<sup>6</sup>: Նոյեմբերի 24-ին Իհշ-ի ԱԳ նախարար Ա. Վելայաթին Մոսկվայում Մ. Գորբաչովին է հանձնում Իհշ-ի նախագահ Հ. Ռաֆսանջանիի ուղերձը՝ հայտարարելով, որ Իհշ-ն պատրաստ է ՀՀ հակամարտության կարգավորման գործում միջնորդի դեր ստանձնել<sup>7</sup>:

ԽՍՀՄ-ի փլուզմամբ նպաստավոր պայմաններ ընձեռվեցին Թեհրանին՝ միջնորդական առաքելությամբ ազատ գործելու համար: 1992 թ. փետրվարի 8-10-ը Թեհրանում ՀՀ և Իհշ- ԱԳ նախարարներ Ր. Հովհաննիսյանը և Ա. Վելայա-

<sup>4</sup>Բալյան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994 թթ., Եր., 2004, էջ 34-36:

<sup>5</sup> Hovhannisyan N. The Karabakh problem (The Thorny road to freedom and independence). Yerevan, 2004, p. 80, նույնի՝ The Foreign policy of Armenia. Yerevan, 1998, p. 7.

<sup>6</sup> Բաղայան Գ., Հայաստան-Իրան. հարաբերությունները 20 տարեկան են, Թեհրան, 2012, էջ 43:

<sup>7</sup> «Ազգ», Երեւան, 27.11.1991:

թին<sup>8</sup>, իսկ փետրվարի 27-28-ը Երևանում Ա. Վելայաթին և նրա տեղակալ Մ. Վայեգին ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ քննարկում են ԻԻՀ-ի՝ միջնորդի դեր ստանձնելու հարցը: Վելայաթի առաջարկած բանաձևը բաղկացած էր երեք կետից՝ զինադադարի հայտարարում ՀՀ-ի և ԱՀ-ի միջև՝ ԻԻՀ-ի ու ՌԴ-ի մասնակցությամբ, պատանդների և դիակների փոխանակում, կողմերի իրավունքների քննարկում<sup>9</sup>: Փաստորեն, բանաձևում որևէ խոսք չկար ՀՀ կարգավիճակի մասին, որը պետք է քննարկվեր միայն վերջին փուլում:

1992 թ. մարտի 15-17-ը Թեհրանում ԻԻՀ-ի ԱԳ նախարարի միջնորդությամբ ՀՀ և ԱՀ ԱԳ փոխնախարարների մակարդակով տեղի ունեցան բանակցություններ: Ա. Նավասարդյանը, Ա. Սալամովը և ԻԻՀ-ի ԱԳ նախարար Ա. Վելայաթին ստորագրեցին առաջին եռակողմ համատեղ հայտարարությունը, ըստ որի՝ մեկ շաբաթով հայտարարվեց զինադադար: Բանակցությունների վերջնական փուլին դիտորդի կարգավիճակով մասնակցում էր նաև ԻԻՀ-ում ՌԴ դեսպան Վլ. Գուլիսը<sup>10</sup>: Երկօրյա աշխատանքի արդյունքում ստորագրված փաստաթուղթը կոչվեց «Թեհրան-92»<sup>11</sup>: Հաջորդ օրը հակամարտության գոտում տեղի ունեցավ ուզմագերիների և զրիվածների դիակների փոխանակում, որը կարևոր նշանակություն ուներ: Փաստաթղթում ՀՀ-ն հատուկ նշված էր որպես «ղարաբաղյան կողմ»՝ առանց որի անհնար էր հասնել խնդրի կարգավորմանը:

Բանակցությունները շարունակելու համար իրանական միջնորդական առաքելության ղեկավար նշանակվեց Մ.

<sup>8</sup>Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), §. 326, գ. 9, գ. 32, թթ. 22-32:

<sup>9</sup>Նոյն տեղում, գ. 103, թթ. 55-58:

<sup>10</sup>Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, «Հայկական հանրագիտարան», Եր., 2004, էջ 220:

<sup>11</sup>Նավասարդյան Ա., Դիվանագիտություն, Եր., 2010, էջ 206:

Վայեզին<sup>15</sup>: Սակայն իրանական միջնորդությանը լուրջ մրցակից դարձավ Արևմուտքը, երբ ստեղծվեց ԵԱՀԿ Մինսկի խումբը<sup>16</sup>:

1992 թ. մարտի 20-ին Երևանում Մ. Վայեզին ներկայացրեց Բաքվի հավանությանն արժանացած իրանական առաջարկները: Նախատեսվում էր կրակի դադարեցումից հետո հակամարտության գոտում տեղաբաշխել դիտորդներ, այդ թվում՝ ԻԻՀ-ի ներկայացուցիչների<sup>17</sup>: ԼՂՀ-ի իշխանություններն ընդունեցին Վայեզիի ներկայացրած առաջարկությունները, սակայն անհամաձայնություն հայտնեցին ԼՂ կարգավիճակի վերաբերյալ: ԻԻՀ-ը գտնում էր, որ ԼՂՀ իշխանությունները բանակցություններին պետք է մասնակցեն որպես դիտորդ՝ «Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական համայնքի» ներկայացուցիչների հետ հավասար իրավունքներով, ինչը ԼՂՀ-ի, ինչպես նաև ՀՀ-ի համար անընդունելի էր<sup>18</sup>: Ենթավ ստեղծված իրավիճակից՝ ԼՂՀ-ի իշխանություններն ընդունեցին մեկշաբաթյա հրադադար հաստատելու մասին առաջարկը: Ի պատասխան, Մ. Վայեզին խոստացավ Լեռնային Ղարաբաղը ներկայացնել որպես կարգավիրման գործընթացի լիիրավ կողմ:

Ապրիլի 2-ին հջևանում ՀՀ-ի, ԻԻՀ-ի, ՌԴ-ի և ԱՀ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցավ քառակողմ հանդիպում, որին պետք է մասնակցեին նաև ԼՂՀ ներկայացուցիչները, որոնք, սակայն վերջին պահին հրաժարվեցին: Վայեզիի առաքելությունը շարունակվեց մինչև ապրիլի 20-ը, երբ նա հակամարտող ուժերին համաձայնության հրավիրեց իրանական պլանի շուրջը: Սակայն իրավիճակի սրման պատճառով ԻԻՀ-ի միջնորդական

<sup>15</sup> Բաղայան Գ., նշվ. աշխ., էջ 47:

<sup>16</sup> Hovhannisyan N. The Karabakh problem, p. 81.

<sup>17</sup> Բաղայան Գ., նշվ. աշխ., էջ 37:

<sup>18</sup> Բաղայան Տ., նշվ. աշխ., էջ 38:

փորձը արդյունք չարձանագրեց<sup>19</sup>: Ըստ Վայեզիի՝ միջնորդական առաքելությամբ փորձ էր արվում կանխել ԻԻՀ-ի համար վտանգ ներկայացնող պատերազմը<sup>20</sup>:

Ապրիլի 8-ին Վայեզին Ստեփանակերտում բանակցում էր ԼՂ ղեկավարության հետ, երբ 70 արկ նետվեց Շուշիում տեղաբաշխված «Գրադ» կայաններից<sup>21</sup>: Վայեզիի՝ Լեռնային Ղարաբաղում գտնվելը զայիչ գործոն չդարձավ Ադրբեյջանի համար: Նման արդյունքներով նա մեկնեց Մոսկվա՝ համաձայնեցնելու հակամարտության կարգավորման սկզբունքները ուսև գործընկերների հետ, քանզի ՈԴ-ի մասնակցությունը կարգավորման գործընթացին ավելի ծանրակշիռ կլիներ<sup>22</sup>:

Ապրիլի 10-ին ԼՂ-ն և Ադրբեյջանն իրանական առաքելությանը ներկայացրին իրենց նկատառումները խնդրի շուրջ: Տարածաշրջանում Վայեզիի մեկամսյա (ապրիլ) գործունեության արդյունքում կողմերը համաձայնեցին Թեհրանում գումարել ՀՀ-ի, ԱՀ-ի և ԻԻՀ-ի ղեկավարների գագաթնաժողովը: Ապրիլի 26-28-ը ԻԻՀ այցելած ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բ. Ղալին բարձր է գնահատել ԻԻՀ-ի քայլերը ԼՂ հարցում<sup>23</sup>:

1992 թ. մայիսի 8-ին Թեհրանում եռակողմ բանակցությունների արդյունքում ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը, ԱՀ նախագահի պաշտոնակատար Յ. Մամեդովը և ԻԻՀ-ի նախագահ Հ. Ռաֆսանջանին ստորագրեցին համատեղ հայտարարություն<sup>24</sup>: Կողմերը հայտնեցին ԼՂ ճգնաժամը

<sup>19</sup> Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, էջ 221:

<sup>20</sup> Բարձրագույն դատարան, Խոան. հանրագիտարան, Եր., 2011, էջ 345:

<sup>21</sup> «Հայաստանի Հանրապետություն», Եր., 09.04.1992:

<sup>22</sup> Բարձրագույն դատարան, էջ 39:

<sup>23</sup> ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 170, թ. 3:

<sup>24</sup> Նոյն տեղում, գ. 103, թթ. 96-97, գ. 45, թթ. 55-56, Աբասօվ Ա., Խաչատրյան Ա. Վարианты решения Карабахского конфликта: идеи и реальность. М., 2004, с. 121-122.

խաղաղ լուծելու և տարածաշրջանում խաղաղություն, կայունություն հաստատելու ցանկություն: Վայեզին կրկին պետք է ժամաներ Բաքու, Երևան և Ստեփանակերտ, որից հետո ՀՀ-ի և ԱՀ-ի ղեկավարների հովանավորությամբ հայտարարվելու էր գինադադար, բացվելու էին կապուղիները:

Այսպիսով՝ ԻԻՀ-ը կարծես թե փորձում էր լուծել Հեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը բանակցությունների ճանապարհով: Ընդունվեց Եռակողմ հայտարարություն: Բայց փաստն այն է, որ հայկական կողմի նախապես արած բազմաթիվ գգուշացումները չազդեցին ԻԻՀ-ի վրա, և փաստաթղթում տեղ չգտավ ԼՂՀ-ի ներկայացուցչի ստորագրությունը, ավելին, նրա ներկայությունն անգամ չապահովվեց: Կարծում ենք, որ սիսալ է իրանական առաքելության ձախողումը կապել միայն Շուշիի ազատագրման հետ: Բանակցային գործընթացից ԻԻՀ-ին դուրս մղելու հարցում ակտիվ դեր ունեցավ Մոսկվան, որն անհանգստացած էր ԻԻՀ-ի՝ թույլատրելի սահմանների գերազանցումից:

Շուշիի ազատագրումը, Բերձորի (Լաշինի) կրակակետերի վնասազերծումը և ցամաքային կապի հաստատումը ԼՂ և ՀՀ միջև առաջացրեց ԻԻՀ կառավարության դժգոհությունը: Քաղաքական վերնախավն իրանական միջնորդության ձախողման մեջ մեղքի բաժին էր վերագրում ՀՀ-ին<sup>25</sup>: Մայիսի 19-ին ԻԻՀ-ի ԱԳՆ-ն դատապարտեց հայկական ուժերի կողմից շարունակվող ռազմական գործողությունները<sup>26</sup>: Փորձելով համեմատության եզրեր գտնել Բերձորի միջանցքի բացումից հետո ԻԻՀ-ի դժգոհությունների և մինչ այդ Աղրբեջանի կողմից ՀՀ-ի ու ԼՂՀ-ի

<sup>25</sup> Բադայյան Գ., Իրան. հանրագիտարան, էջ 466:

<sup>26</sup> Բադայյան Գ., Հայաստան-Իրան. հարաբերությունները 20 տարեկան են, էջ 53:

Նկատմամբ այնպիսի ոտնձգությունների միջև, ինչպիսին էին՝ <<-ի սահմանամերձ շրջանների վրա հարձակումները, ՀՂ հայության զանգվածային տեղահանումները, երկրամասի հայկական գյուղերի ոչնչացումը, Շահումյանի շրջանում քիմիական գենքի օգտագործումը, Մարաղայի եղեռնագործությունը, գալիս ենք այն եզրահանգման, որ նշված դեպքերն արձագանք չգտան հիշում: Իրանական ԶԼՄ-ները հենվում էին աղբեցանական աղբյուրների վրա:

1992 թ. հունիսին Աղբեցանում ժողճակատի իշխանության գալուց հետո նոր նախագահ Ա. Էլիբեյը բացառեց Թեհրանի միջնորդական որևէ առաքելություն Լեռնային Ղարաբաղի հարցում: Ի հակակշիռ Էլիբեյի դիրքորոշման՝ հիշ-ի ԱԳՆ-ն կազմակերպեց Նախիջևանի հնքնավար Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Հ. Ալիևի այցը Թեհրան՝ ընդունելով նրան նախագահական արարողակարգով: Այդ այցից հետո 1992 թ. հունիս-հուլիս ամիսներին Աղբեցանի բանակը գրավեց ԼՂՀ Մարտակերտի շրջանի մեծ մասը, Մարտունու, Ասկերանի և Հաղորդի շրջանների մի մասը և Շահումյանի ամբողջ շրջանը<sup>27</sup>: Մ. Վայեզիի խոսքով՝ «Աղբեցանի ժողովուրդը մեր եղբայրն է և, նրա պատիվը մեր պատիվն է, պարտությունը՝ մեր պարտությունը»<sup>28</sup>: Սակայն Բաքվի որդեգրած արևմտամետ դիրքորոշման պատճառով որոշ մեղադրանքներ հնչեցին նաև Աղբեցանի հասցեին<sup>29</sup>: 1992 թ. օգոստոսի 28-ին Թեհրանում և Մեջհեղում տեղի է ունենում հիշ-ի արտաքին գերատեսչության խորհրդակցություն, որի ընթացքում հնչում են ԱՀ-ի քաղաքականությունը քննադա-

<sup>27</sup> Նոյն տեղում, էջ 54:

<sup>28</sup> «Ազգ», Երեւան, 18.08.1992:

<sup>29</sup> ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, զ. 172, թ. 4, «Էթրելաաթ» օրաթերթ, Թեհրան, 06.06.1992, «تهران «اطلاعات»، روزنامه (تهران «کیهان»، روزنامه).

տող և ՀՀ-ն դրվատող բազմաթիվ խոսքեր<sup>30</sup>: Փաստորեն, իրանական կողմը դիվանագիտական շրջանակներում խոստովանում էր Բաքվի հակաիրանական կեցվածքը:

Լեռնային Ղարաբաղի ճակատում տեղի ունեցած ռազմական գործողություններն ազդում էին ՀՀ-ի հարաբերությունների վրա: Քարվաճառի ազատագրումից հետո կտրուկ բողոք հայտնվեց ԻԻՀ-ում ՀՀ դեսպանին: ԻԻՀ-ն 200 հազար զորք էր կուտակել Աղրբեջանի սահմանին<sup>31</sup>: Ապրիլի 13-ին Թեհրանի համալսարանի ազերի ուսանողությունը կազմակերպեց խոշոր հանրահավաք ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության շենքի առջև, թուրքերենով հնչեցին հակահայկական ճառեր ու կարգախոսներ<sup>32</sup>: Վելայաթին ուղերձով դիմեց ՀՀ կառավարությանը՝ կոչ անելով հայկական ուժերը դուրս բերել «Աղրբեջանի գրավյալ տարածքներից», իսկ Ռաֆսանջանին նամակ հղեց ՀՀ կառավարությանը, որում ոչ միայն քննադատում էր վերջինիս դարաբաղյան քաղաքականությունը, այևս սիրաշահում Բաքվին: Ռաֆսանջանին այդ քայլով նպատակ ուներ իսլամական աշխարհին ցույց տալ, որ չնայած Էլիբեյի համաթուրքական և հակաիրանական քաղաքականությանը՝ Թեհրանն Աղրբեջանը դիտում է իրու մահմեդական երկիր և պաշտպանում է նրա շահերը: Եվ որպես բողոք այդ բոլորի դեմ, ԻԻՀ-ում ՀՀ գործերի հավատարմատար Վ. Բայրուրդյանը հեռացավ Թեհրանից և մեկնեց հայրենիք: Երկու շաբաթ անց, երբ ԻԻՀ ԱԳՆ-ն հավաստիացումներ տվեց ՀՀ կառավարությանը, որ նման միջադեպեր այլս չեն կրկնվի, Վ. Բայրուրդյանը վերադարձավ Թեհրան և

<sup>30</sup>ՀԱԱ, §. 326, ց. 9, գ. 84, թթ. 50-52:

<sup>31</sup>Բալյայան Տ., նշվ. աշխ., էջ 73:

<sup>32</sup>«Ազգ», Երեւան, 15.04.1993:

դեսպանության դրոշը կրկին բարձրացվեց<sup>33</sup>:

1993 թ. հուլիսի 23-ին հայկական գինումը վերահսկողության տակ վերցրեց Ակնա (Աղդամ) քաղաքը, որով վերացվեց Ստեփանակերտի վրա հրետակոծությունների վտանգը: Հուլիսի 27-ին հայամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլահ Խամենեին թավրիզում բազմահազար հավաքի ընթացքում դատապարտեց «Ղարաբաղի հայերի գործողությունները, որոնք կատարվել են ՀՀ կառավարության հովանավորությամբ»<sup>34</sup>:

1993 թ. օգոստոսի 25-ին հայկական ուժերի կողմից Զրականի ազատագրմանը<sup>35</sup> հետևեցին Թեհրանում ՀՀ գործերի հավատարմատար Գ. Բաղայանին ԻԻՀ-ի պաշտոնական բողոքի փոխանցումը<sup>36</sup>, Թեհրանում ՌԴ-ի դեսպան Տրետյակովի և ԻԻՀ-ի ԱԳՆ տեղակալ Վայեզիի դատապարտումը<sup>37</sup>, Ադրբեյչանին օգնելու խնդրանքով Պակիստանի ԱԳ նախարար Աբդուլսաթարին ու ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բ. Ղալիխին Վելայաթիի կողմից նամակների հղումը<sup>38</sup>, ինչպես նաև ԻԻՀ-ի կողմից ռազմական գործողությունների շրջանի հարևանությամբ «Մոխանդ» արտապահանային զորավարժության սկսումը<sup>39</sup> և ՀՀ-ի իշխանությունների կողմից ԻԻՀ-ին հավաստիացումներ տալը՝ մեղմելու բարձրացված աղմուկը<sup>40</sup>: Այդ ամենից հետո սեպտեմբերի 10-ին ՌԴ ԱԳՆ խոսնակ Գ. Կարասինը

<sup>33</sup> Բայրության Վ., Իրան-Ադրբեյչան հարևաններ, թե՛ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախտյաններ, «Մերձավոր և Միջին Արևելիք երկներ և ժողովուրդներ», հու. XXIII, Եր., 2003, էջ 11-12:

<sup>34</sup> «Ալիք», Թեհրան, 28.07.1993, ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, գ. 1, գ. 283, թթ. 82-83:

<sup>35</sup> Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, էջ 699:

<sup>36</sup> «Ալիք», Թեհրան, 30.08.1993:

<sup>37</sup> Նոյն տեղում, 28.08.1993:

<sup>38</sup> Նոյն տեղում, 30.08.1993, 31.08.1993:

<sup>39</sup> Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, էջ 699:

<sup>40</sup> «Ալիք», Թեհրան, 07.09.1993, 09.09.1993:

զգուշացրեց ԻԻՀ-ին, որ խուսափի ուժի ցուցադրումից ԻԻՀ-Աղբեջան սահմանում<sup>41</sup>: Մուսկվայում սեպտեմբերի 1-ից սկսված բանակցություններին մասնակցելու էր հրավիրվում ԻԻՀ-ն: Մինչդեռ ԻԻՀ-ն զորավարժություններով հասկացնել էր տալիս ռուսական կողմին, որ պետք է հաշվի առնել նաև իր կարծիքը: Այդ մասին է վկայում նաև 1993 թ. սեպտեմբերի 15-ին Ռաֆսանջանի հեռախոսազրույցը Բ. Ելցինի և Հ. Ալիսի հետ<sup>42</sup>:

1993 թ. հոկտեմբերին ԼՂՀ ՊԲ ստորաբաժանումներն ազատագրեցին Կովսականի, Զրականի և Սանասարի մինչ այդ չգրավված տարածքները<sup>43</sup> հարավային սահմանի երկայնքով անմիջական շիման հնարավորություն ստանալով ԻԻՀ-ի հետ: Եվ ահա ԻԻՀ-ի միջնորդությամբ զինադարար հաստատելուց հետո՝ հոկտեմբերի 26-ին Աղբեջան այցելած < Ռաֆսանջանին Բարվի մզկիթներից մեկում ելույթ է ունենում բազմության առջև և կարևորում Աղբեջանի տարածքային ամբողջականության պահպանումը<sup>44</sup>: Ըստ Էռության, Բաքվում իսլամական համերաշխությամբ Թեհրանն ամրապնդում էր իր դիրքերը:

Հոկտեմբերի 29-ին ՄԱԿ-ում ԻԻՀ-ի դեսպան Ղ. Խոջրուն Անվտանգության խորհրդի նախագահ է. Լինգից պահանջում է հրավիրել արտակարգ նիստ ԼՂ-ի հարցով<sup>45</sup>: Սակայն Է. Լինգը գնահատելով ԻԻՀ-ի խաղաղարար ջանքերը՝ անհրաժեշտ է համարում Մինսկի խմբի աշխատանքների հաջող ավարտը: Փաստորեն, միջնորդական առաքելությամբ հանդես գալու ԻԻՀ-ի ջանքերը կրկին աջակցություն չեն ստանում:

<sup>41</sup> Նոյն տեղում, 11.09.1993:

<sup>42</sup> Նոյն տեղում, 16.09.1993:

<sup>43</sup> Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, էջ 699:

<sup>44</sup> «Ալիք», Թեհրան, 27.10.1993, 28.10.1993:

<sup>45</sup> Նոյն տեղում, 31.10.1993:

Հիրավի, Լեռնային Ղարաբաղի հակամարտության ծավալման ընթացքում ուժեղացան ՌԴ-ի դիրքերը: 1994 թ. մայիսի 12-ին կնքված համաձայնագրով Լեռնային Ղարաբաղում հաստատվեց հրադադար: Այդ հարցում ՌԴ-ի առավելություններից մեկը ՀՀ ներկայացուցչի ստորագրությունն էր փաստաթղթում, որը բացակայում էր Թեհրանի արձանագրության մեջ:

Հիշարժան է, որ 1997 թ. դեկտեմբերի 6-11-ը Թեհրանում տեղի ունեցավ Իսլամական համաժողով կազմակերպության 8-րդ գագաթնաժողովը: Հրապարակված փաստաթղթերում հավանություն տրվեց 1996 թ. ԵԱՀԿ լիսաբոնյան որոշումներին և Մինսկի խմբի դիրքորոշմանը՝ պահանջելով դուրս բերել գորքերը գրավյալ տարածքներից<sup>46</sup>: Նշելի է, որ Մ. Խաթամին, անդրադառնալով իսլամական երկրներում առկա թեժ կետերին, չիհշատակեց ՀՀ-ի խնդիրը: Իրանի հեղկուր առաջնորդ Խամենեին նշեց, որ ԻՀԿ-ը կարող է հիմնել հատուկ հանձնախմբեր՝ լուծելու Բոսնիայի, Քաշմիրի, Սոմալիի, Ղարաբաղի և այլ շրջաններում մահմեդականների առաջ ծառացած խնդիրները<sup>47</sup>: Փաստորեն, ԻԻՀ-ի դեկավարությունը Լեռնային Ղարաբաղի հարցում բավարարվեց միայն փաստաթղթերում ընդունված որոշումներով: ՀՀ-ի փաստացի հարևան լինելու իրողությունն իհՀ-ին հնարավորություն էր տալիս ԱՀ-ի վրա որոշակի ազդեցություն գործադրելու:

Իրանը սկսեց կրկին ակնարկել միջնորդական առաքելություն իրականացնելու պատրաստակամության մասին արդեն 2010-ական թթ.: 2016 թ. քառորյա պատերազմի

<sup>46</sup> «Ազգ», Երեւան, 13.12.1997, նոյնը տես նաև՝ Tehran declaration: The eight Islamic Summit conference, «The Iranian Journal of International Affairs», vol. IX, № 4, winter 1997/98, p. 612-619.

<sup>47</sup> Փաշայան Ա., Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, Եր., 2003, էջ 201:

ընթացքում հՀՊԿ-ի ստորաբաժանումները կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու նպատակով ապրիլի 2-ի գիշերը տեղակայվում են Արաքսի ափին<sup>48</sup>: Իրանի խորհրդարանի ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության հարցերով հանձնաժողովում ԼՂ հարցով արտահերթ նիստ իրավիրվեց և որոշվեց, որ Իրանն այդ հարցում որդեգրում է անկողմնակալ դիրքորոշում<sup>49</sup>: Իսկ 2020 թ. 44-օրյա պատերազմի սկզբում Իրանը կոչ արեց անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և նստել բանակցությունների սեղանի շորջ: ԱԳ նախարար Մ. Զարիֆը հայտարարեց, որ ուսեն բանակցությունների համար մշակած մի տարբերակ:

Իրանին անհանգստացնում էին իր սահմանների մոտ տեղակայված Սիրիայից, Լիբիայից բերված վարձկանները: Ահա թե ինչու իիՀ-ում տեղի էր ունեցել ազգային անվտանգության խորհրդի նիստ, որի որոշմամբ էլ հսլամական Հեղափոխության Պահապանների Կորպուսի ցամաքային ուժերը տեղակայվել էին Իրանի հյուսիսային նահանգներում: Հարկ է նշել, որ ցամաքային ճանապարհով բեռների տեղափոխումը դժգոհություն առաջացրեց Իրանի հյուսիսում բնակվող թյուրքախոս իրանցիների շրջանում, որոնք պահանջում էին փակել Իրան-Հայաստան սահմանը: Այս խնդրին լուծում տալու համար հոկտեմբերի 4-ին Թավրիզ ժամանեց հՀՊԿ ցամաքային ուժերի Իրամանատար գեներալ Մոհամմադ Փաքիուրը: Ցույցերը ցրվեցին տեղական ոստիկանության միջոցով<sup>50</sup>:

ԻիՀ փոխարտգործնախարար Աբրաս Արաղյին, ըստ էության, իրադարձություններից դուրս չմնալու համար առաջարկով մեկնեց Մոսկվա, Բաքու, այնուհետև Երևան ու

<sup>48</sup> <http://www.anaj.ir/trtNews/43587/AF/theme/trt/?id=43587> 09.09.2021:

<sup>49</sup> <http://mehrnews.com/news/3590512/> 09.09.2021:

<sup>50</sup> <https://www.azatutyun.am/a/30870460.html> 09.09.2021:

առաջին անգամ այս հարցով Անկարա: Թեև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը միջազգային մանդատ ունեցող միակ ծևաչափն է, իրանը միջնորդական իր նախաձեռնության մասին հայտարարել էր հոկտեմբերի սկզբին՝ Արցախում վերսկսված պատերազմից մոտ մեկ շաբաթ անց:

2020 թ. հոկտեմբերի 28-ին Ադրբեջանի արտգործնախարար Զեյհուն Բայրամովի հետ հանդիպումից առաջ Արարտին խոսել է «ադրբեջանական հողերի օկուպացիային վերջ տալու մասին և ասել, թե դա իրանական նախաձեռնության կարևոր մաս է կազմում»<sup>51</sup>: Ըստ նրա՝ ծրագրի հիմքում նաև փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունն է:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել.

Իրանական պաշտոնական դիրքորոշումն Արցախի կարգավիճակի հարցում հանգում էր հայերի իրավունքները մարդու իրավունքների և ազգային փոքրամասնությունների պաշտպանության համատեքստում ներկայացնելուն, ինչը նշանակում էր զգալիորեն փոքրացնել հակամարտության ծավալը և բռվանդակությունը: Միևնույն ժամանակ, 2020 թ. նոյեմբերի 10-ին կնքված գինադադարի մասին հայտարարության իրապարակումը նշանակում էր տարածաշրջանում իրանի դիրքերի նվազեցում: Այդ մասին է վկայում նոյեմբերի 17-ին մեջլիսի պատգամավոր Ահմադի Բիղաչի քննադատությունն այն մասին, որ Թուրքիան միջամտել է Կովկասի երկրների ներքին գործերին<sup>52</sup>:

44-օրյա պատերազմի ընթացքում Թեհրանի բարձրածայնած կարմիր գծերի պահպանումը սահմանակակից երկրի հյուախում երկու զորավարժությունների իրականացմամբ: 1993 թ. սեպտեմբերի սկզբին «Մոխանդ» արտապլա-

<sup>51</sup> <https://www.azatutyun.-am/a/30917238.html> դիտումը 09.09.2021:

<sup>52</sup> <https://armenpress.am/arm/news/1037758/> դիտումը 09.09.2021:

նային զորավարժության իրականացմամբ իրանը, թեև կարծ ժամանակով, մուտք գործեց Աղրբեջանի սահմանից ներս՝ վերջիններիս հայկական գինութից պաշտպանելու նպատակով, մինչդեռ 2020 թ. Շուրջիայի ռազմական ներկայության պայմաններում իրանական կողմը բավարարվեց միայն իր տարածքում վարժանքներով:

Եթե 1992 թ. իրանական բանաձևը նախատեսում էր կողմերի իրավունքների քննարկում, այդպիսով ակամայից կարծես հավասարության նշան դնելով կողմերի միջև, ապա 2020 թ. ներկայացված իրանական ծրագրում հայության մասին նշվում է մարդու իրավունքների և փոքրամասնությունների պաշտպանության համատեքստում: 44-օրյա պատերազմի ընթացքում չեզոքության ընդունումը բերեց նրան, որ պատերազմից 1 տարի անց վտանգվեց <<-ի հիշատական ճանապարհի Գորիս-Կապան 21 կմ հատվածը: Այդ պայմաններում իրանական կողմը հայտնում է իր պատրաստակամությունը ներդրումներ կատարելու միջոցով մասնակցելու այլնտրանքային ճանապարհի կառուցմանը:

Թեիրանի կողմից Բարվին տարածքային ամբողջականության համատեքստում աջակցելը և՝ 1990-ական թթ., և՝ դրանից հետո՝ 2016 թ. քառորյա ու 2020 թ. 44-օրյա պատերազմների դեպքում, նաև վկայում է իրանի համախամականության դրոշի ներքո գործելը: Մինչդեռ աղրբեջանա-իրանական երկկողմ հարաբերություններում նկատելի են աշխարհաքաղաքական լուրջ անհամաձայնություններ, ինչպիսին հսրայելի հետ Աղրբեջանի ծավալած խորը գործակցությունն է առաջնահերթ ռազմական և անվտանգային բնագավառներում:

**KAREN MKRTCHYAN**

Researcher of the IH, NAS RA,

Candidate of Historical Sciences

k86mkrtchyan@gmail.com

## **THE SETTLEMENT OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT IN THE CONTEXT OF IRAN'S FOREIGN POLICY**

### **SUMMARY**

**Keywords:** Nagorno-Karabakh conflict, Armenian-Iranian relations, war, diplomacy, mediation mission.

The article presents the Iranian version of the settlement of the Nagorno-Karabakh conflict, its peculiarities, the formation, expansion and failure of the Iranian mediation mission in March-May 1992, as well as the essence of the visits of Iranian diplomats to Yerevan, Baku, Stepanakert or shuttle diplomacy. Comparative parallels are drawn both in 1992 and in 2020 on the recommendations of the official Tehran mediation mission in the conditions of hostilities.

Based on the archival documents the negotiation process, the provisions of the Iranian side on the status of Nagorno-Karabakh and the plan presented, as well as the failure of the Iranian mediation mission in parallel with the formation of the OSCE Minsk Group are analyzed. It is proved that the Iranian side presented the thesis on the territorial integrity of Azerbaijan in the proposed resolutions, without formulating the settlement of the issue of the status of Nagorno-Karabakh.

**КАРЕН МКРТЧЯН**

Научный сотрудник ИИ НАН РА,

Кандидат исторических наук

k86mkrchyan@gmail.com

## УРЕГУЛИРОВАНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА В КОНТЕКСТЕ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ ИРАНА

### РЕЗЮМЕ

**Ключевые слова:** Нагорно-Карабахский конфликт, армяно-иранские отношения, война, дипломатия, посредническая миссия.

В статье представлена иранская версия урегулирования карабахского конфликта, его особенности, формирование, расширение и провал иранской посреднической миссии в марта-май 1992 году, а также сущность визитов иранских дипломатов в Ереван, Баку, Степанакерт или челночная дипломатия. Сравнительные параллели проводятся как в 1992 году, так и в 2020 году по рекомендациям официальной Тегеранской посреднической миссии в условиях боевых действий.

На основе архивных документов анализируются переговорный процесс, положения иранской стороны о статусе Нагорного Карабаха и представленный план, а также провал иранской посреднической миссии параллельно с формированием Минской группы ОБСЕ. Утверждается, что иранская сторона представила тезис о территориальной целостности Азербайджана в предложенных резолюциях, не формулируя урегулирование вопроса о статусе Нагорного Карабаха.

## TALINE TER MINASSIAN

Professeure des universités à l'Institut national

des langues et civilisations orientales

(France)

talintermi@gmail.com

## «RÉPUBLIQUE D'ARMÉNIE» (MÉMOIRES DU RÉVOLUTIONNAIRE ARMÉNIEN, VOL. 7) DE RUBEN TER MINASSIAN DANS LE CONTEXTE DE LA GUERRE DE 2020\*

**Mots clés:** Première république d'Arménie 1918-1920, Etat, Fédération Révolutionnaire Arménienne (FRA Dachnakatsoutiun), Rouben, Mémoires d'un révolutionnaire arménien (hay herapoghaganime hushere hador 7), Caucase, Frontières, relations inter-ethniques, gouvernement-bureau.

Ce livre paraît pour la première fois en langue française un an exactement après la cuisante défaite arménienne à l'issue de ce qu'il est désormais convenu d'appeler la « seconde guerre » du Haut-Karabagh. Déclenchée le 27 septembre 2020, l'opération *Poing d'Acier* (*Dəmir Yumruq əməliyyati*) a conduit au déclenchement de la « guerre des 44 jours », conflit asymétrique de « 5<sup>e</sup> génération »<sup>1</sup> conclu le 10 novembre par un cessez-le-feu stipulant la restitution des « territoires occupés » par l'Arménie, la rétractation du Haut-Karabagh « réel » et la réalisation et/ou la sécurisation de liaisons, entre les deux Etats arméniens (l'Arménie et le Haut-Karabagh) d'une

---

\* «2021թ. դեկտեմբերի 30-ին սույն աշխատանքը «Հայաստան. իրատապ արդիական պատության դաս» վերնագրի ներք հանրամատչելի տարբերակով հրապարակվել է «The Conversation» անկախ լրատվական կազմակերպության ինտերնետային ցանցում»:

<sup>1</sup> Voir Pierre Grassier, «RETEX. 44 jours sur le Haut-Karabagh», dans *Vortex, Studies on Air and Space Power*, № 1, June 2021, pp.123-141.

part et entre les deux Etats turcs (la Turquie et l'Azerbaïdjan) d'autre part. L'interprétation de cet accord, notamment la question de savoir s'il comportait ou non un protocole secret, n'est toujours pas clairement établie. A Sotchi, le 26 novembre 2021, une réunion tripartite à l'initiative de Vladimir Poutine a permis de percevoir la persistance des tensions entre le président de l'Azerbaïdjan, Ilham Aliev et le Premier ministre de l'Arménie, Nikol Pachinian. Poursuivant sa mission de médiation, Vladimir Poutine a cependant déclaré à l'issue de la rencontre: *"Nous avons parlé en détail des questions économiques et surtout, dans un premier temps, nous avons parlé du déblocage des couloirs de transport. Cela s'applique également au chemin de fer, cela s'applique également aux communications routières »*<sup>2</sup>.

Sur le terrain pourtant, la pression sur les frontières de l'Arménie est constante : au cours de l'année, les incursions de l'Azerbaïdjan en territoire arménien ont déclenché de nombreux « incidents » dont le dernier en date, celui du 16 novembre, particulièrement violent, a fait craindre une reprise du conflit. L'enjeu n'étant plus seulement le Haut-Karabagh « gardé » par les forces russes du maintien de la paix mais aussi le Siounik – région du sud de l'Arménie comportant la fameuse région montagneuse du Zanguezour- dont certains maires, opposés au gouvernement de Erevan à la suite de la guerre de 2020, ont été arrêtés sur des chefs d'inculpation divers et le gouverneur « démissionné ». Cette région qui paie au prix fort la défaite arménienne est dans le viseur de l'Azerbaïdjan puisqu'elle s'intercale entre son territoire et l'exclave azerbaïdjanaise du Nakhitchevan. Ainsi, un après la défaite, jamais l'intégrité du territoire de l'Arménie n'aura semblé plus en danger. Et jamais la lecture en français du livre

---

<sup>2</sup> <https://ria.ru/20211126/putin-1760971326.html>

de Rouben, n'aura semblé à ce point indispensable.

Qui est Rouben ? Ce personnage n'est connu du public français que par les *Mémoires d'un partisan arménien*<sup>3</sup> et par quelques articles de référence qui lui sont consacrés<sup>4</sup>. C'est contre l'avis général et divers conseils de prudence que j'ai pris la décision d'exhumier cette traduction de la troisième partie du volume final des *Mémoires* de Rouben, mon grand-père paternel. En fait, cette traduction est prête depuis 1989 : à l'époque, l'URSS existait encore et l'Arménie, sous la houlette du Comité Karabagh, était déjà engagée contre l'Azerbaïdjan dans la « première » guerre du Karabagh. Ce contexte explique que le traducteur de Rouben, son fils, Waïk Ter-Minassian, ait alors jugé le moment inopportun à la publication de ces pages consacrées à la Première République indépendante (1918-1920). Rouben n'y apparaît plus, comme dans les *Mémoires*, tel un jeune révolutionnaire dachnak, passé dans l'Empire ottoman pour se consacrer à l'auto-défense des populations arméniennes. Une quinzaine d'années plus tard, le révolutionnaire a cédé la place à l'homme d'Etat d'une république arménienne indépendante confrontée aux mêmes enjeux vitaux qu'aujourd'hui. Rouben qui sera la figure clé du « gouvernement-bureau » de la république d'Arménie, quelques mois avant la soviétisation y exprime un point de vue lucide mais aussi une doctrine d'action qu'il va réaliser, au poste de ministre de la défense.

Quel est donc ce vieux « Parti » -la Fédération Révolutionnaire Arménienne- en abrégé le « Parti dachnak »- dont il est question des premières jusqu'aux dernières pages

---

<sup>3</sup> Rouben, *Mémoires d'un partisan arménien*, Editions de l'Aube 1990 (épuisé). Les éditions Thaddée préparent une réédition.

<sup>4</sup> Voir Taline Ter Minassian, *Souvenir d'un révolutionnaire arménien de Rouben : entre épopee et Mémoires dans Encyclopédie des Historiographies*.

<https://books.openedition.org/pressesinalco/31708?lang=en>

de ce livre ? Un parti socialiste non-marxiste né dans le laboratoire révolutionnaire de l'Empire russe mais dont l'objectif spécifique au tournant du XXe siècle a été l'auto-défense des Arméniens de l'Empire ottoman. Ce parti s'est transformé sous la pression des circonstances racontées dans ce livre en un parti de gouvernement lors de « l'épreuve de l'indépendance » de 1918-1920. Il fut ensuite banni en Arménie à l'époque soviétique, mais devint l'un des partis dominants de la diaspora arménienne à travers le monde. Un parti dont l'histoire complexe se déroule aux frontières de l'Empire russe et de l'Empire ottoman, mais aussi à la lisière des historiographies russe/soviétique et turque/ottomane<sup>5</sup>. Quelques faits saillants permettent d'y voir plus clair. Le XXe siècle, celui de la catastrophe de 1915 et de l'éradication des Arméniens en Asie mineure, a été le siècle de la résurrection de l'Etat arménien en Transcaucasie. La République d'Arménie est née, en mai 1918, dans le chambardement de la Première Guerre mondiale et de la révolution russe qui provoquèrent l'effondrement puis la disparition des Empires russe et ottoman. De la révolution de Février à la révolution d'Octobre 1917, de l'*Ozakom* au *Seïm* puis à la République fédérative indépendante de Transcaucasie, du Traité de Brest-Litovsk (3 mars 1918) au traité de Batoum (4 juin 1918), les Arméniens – comme les Géorgiens et les Azéris – ont été entraînés par l'enchaînement des événements sur les chemins de l'indépendance. Une indépendance imposée par les circonstances et exigée par les Ottomans comme préalable à toute négociation de paix. En effet, en février 1914, au moment où, sous la pression de la diplomatie russe soutenue par la France et la Grande-Bretagne, la Question arménienne – celle des réformes à accomplir dans les six vilayets orientaux de

---

<sup>5</sup> Voir Anahide Ter Minassian, *La République d'Arménie*. Bruxelles, 1989.

l'Empire ottoman- semble enfin trouver une solution, aucun parti politique arménien n'a programmé la création d'une Arménie indépendante<sup>6</sup>.

Le présent livre, qui est une source historique de premier plan, est un récit inachevé. Il s'arrête en avril 1920, peu avant la création du « Gouvernement-Bureau » de la première république d'Arménie, qui a suspendu la vie parlementaire et instauré un véritable gouvernement révolutionnaire, duquel Rouben fut le ministre de la Défense. Le lecteur prendra connaissance du point de vue assumé d'un acteur de premier plan sur les enjeux de l'époque, un point de vue qui dépasse les approches conventionnelles de la question arménienne, y compris, et peut-être surtout, partisanes arméniennes. Extraites des sept volumes des *Mémoires* de Rouben, il s'agit d'un récit justifiant l'œuvre de l'Arménie indépendante dirigée par le parti dachnak, une œuvre qui n'est passée à la postérité qu'en diaspora et encore, dans le seul segment acquis au parti dachnak, au rythme des commémorations du 28 mai dédiées à la bataille de Sardarabad (28 mai 1918), acte de naissance de la République indépendante. Après la soviétisation de l'Arménie en 1920-1921, la Première république a été diabolisée par l'historiographie soviétique, tandis qu'en diaspora, les adversaires du Parti dachnak se sont acharnés à en dénoncer les « errements ».

Sur le temps long, ce livre raconte l'expérience que fut pour les Arméniens en 1918, la résurrection inespérée d'un Etat après presque dix siècles d'éclipse. Le récit de Rouben permet de comprendre le défi colossal posé alors aux dirigeants de la République indépendante : construire un Etat dans une terre

---

<sup>6</sup> Voir Anahide Ter Minassian, «La République d'Arménie, (1918-1920)», in *Histoire du Peuple Arménien*, G. Dedeyan (dir.). Toulouse, 2007, p. 563.

assignée par l'ennemi turc qui réalise opportunément le transfert de la question arménienne - avant le génocide, un problème de l'Empire ottoman- vers les marges de l'Empire russe alors en pleine décomposition. Pour les dirigeants de la République, il s'agit donc après la catastrophe de 1915, de transformer cette « Arménie araratiennes » évoquée dès la première phrase du livre, programmée pour périr en ce réduit enclavé et peuplé de réfugiés misérables et affamés, en une solution viable. Rappelons que la Transcaucanie de cette époque était encore une mosaïque ethnique: au XIXe siècle, des Tatares (on ne les appelait pas encore Azéris ou Azerbaïdjanais) vivaient en effet sur le territoire de l'actuelle Arménie, tandis que des Arméniens vivaient nombreux à Tiflis (Tbilissi) ou à Bakou. L'apport essentiel de ce livre est qu'il permet de comprendre comment s'est imposée la nécessité d'ethniciser le territoire de l'Arménie et le rôle assumé par Rouben dans cette entreprise: « *la situation en Arménie était le résultat des projets politiques bien pensés de nos voisins azéris et turcs. Nous ne les infléchirions pas en pratiquant la bienveillance envers les minorités de notre pays* ». Les Empires cèdent la place aux nations... La concentration des pouvoirs entre ses mains, de mai à novembre 1920, va donner à Rouben les moyens de sa politique: imposer l'autorité du gouvernement arménien sur le territoire de la République en réduisant de force les foyers de soulèvement turco-tatars. Rompant avec le légalisme d'un Khatissian, il lança ses détachements de fedaïs sur les districts musulmans de la plaine de l'Ararat qu'il appelait le « Tataristan » et « encouragea » brutalement au départ les musulmans de Zanguibazar (entre Erevan et Etchmiadzine), les Kurdes d'Olti, et les Tatares de Védibazar de la basse vallée de l'Araxe, obligeant du même coup les khans du Nakhitchevan à se soumettre. Son objectif

était de donner une terre aux réfugiés et d'assurer « une patrie aux Arméniens » au moment où les nuées s'accumulaient sur l'Arménie. Ainsi, l'Arménie soviétique en 1921, puis à partir de 1991, la IIIe république d'Arménie, a reçu en héritage un territoire mono-ethnique doté d'une faible proportion de minorités loyales (molokanes ou kurdes yézidis). C'était un trait distinctif de la RSS d'Arménie à l'époque soviétique et ceci la distingue jusqu'à aujourd'hui, de ses voisins immédiats, la Géorgie et de l'Azerbaïdjan.

Dans la situation actuelle de l'Arménie défaite, où chaque mètre de frontière avec l'Azerbaïdjan est disputée sur le terrain, n'est-il pas justement le moment de rappeler les circonstances extraordinairement complexes qui ont conduit voici un siècle, à la résurrection d'un Etat arménien contemporain ? Peut-on chercher, et trouver, dans cette histoire, des leçons pour le présent et peut-être, pour l'avenir ? Rouben a su percevoir en ces deux années terribles, une « situation historique » et a su en dégager, une doctrine d'action politique pour réaliser un projet : construire dans « l'Arménie araratienne », c'est-à-dire l'Arménie d'aujourd'hui, un véritable territoire national. Il peut sembler paradoxal que l'Arménie soviétique ait poursuivi, sous d'autres auspices, ce même projet. Erevan proclamée capitale en 1918, autrefois simple chef-lieu d'une province reculée de l'Empire russe, s'est construite en tant que capitale durant tout le XXe siècle<sup>7</sup>. Ainsi, Rouben a médité son projet ethnographique pour « *que l'Arménie ne devienne pas notre cimetière, pour que nous puissions vivre rassasiés et en sécurité* ». Ces phrases expliquent et assument. Ces phrases devraient inciter l'Arménie humiliée d'aujourd'hui à rester digne, en dépit des

---

<sup>7</sup> Taline Ter Minassian, Erevan, *La construction d'une capitale à l'époque soviétique*, Presses Universitaires de Rennes, 2007.

fanfares triomphantes de la Parade militaire de Bakou (10 décembre 2020) durant laquelle, devant le défilé du butin de guerre-artilleries et camions arméniens marqués d'une croix chrétienne- des *Bayraktar-TB2*, drones de fabrication turque, vainqueurs du ciel à Idlib (Syrie) ou bien des *Orbiter* israéliens, Ilham Aliev a évoqué les rives du lac Sevan, la plaine de l'Ararat et même Erevan comme étant des terres tatares ancestrales. Les Turcs de Turquie ou d'Azerbaïdjan doivent pourtant savoir que l'action de Rouben et des ses compagnons en 1919-1920 a rendu irreversible l'ethnicisation du territoire arménien actuel. Elle a permis aux Arméniens de quitter le statut de victimes et d'employer la force, seul langage reconnu par ses imposants voisins. Et c'est paradoxalement en pleine connaissance de cette histoire qu'un voisinage moins tumultueux pourrait être, un jour, envisagé.

**TALINE TER MINASSIAN**

University Professor at the National institute of  
oriental languages and civilizations  
(France)  
[talintermi@gmail.com](mailto:talintermi@gmail.com)

**RUBEN TER MINASSIAN'S "REPUBLIC OF ARMENIA" (MEMORIES  
OF THE ARMENIAN REVOLUTIONARY,  
VOL. 7) IN THE CONTEXT OF THE 2020 WAR**

**SUMMARY**

**Keywords:** The First Republic of Armenia, 1918-1920, state, ARF Dashnaktsutyun, Ruben, "Memories of the Armenian revolutionary" (volume 7), Caucasus, borders, interethnic relations, Bureau-Government.

In this article, Taline Ter Minassian - the granddaughter of the Minister of Defense of the Bureau-Government of the First Republic, Ruben Pasha, presents the French edition of the 7th volume of the memoirs of the Armenian revolutionary. The reasons of presenting of the 1990 V. Ter Minassian's French translation in an unfavorable context of the 44-day war against Azerbaijan (September 27-November 10, 2020) are analyzed. This book is not only a source for studying the history of the First Republic, but also claims to explain the process of building a modern Armenian state. The Second Republic of Armenia (Soviet) and The Third Republic of Armenia (post-Soviet) inherited the principle of a state based on a mono-ethnic territory from the First Republic.

## **ԹԱԼԻՆԵ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ**

Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային  
ինստիտուտի համալսարանի պրոֆեսոր  
(Ֆրանսիա)  
talintermi@gmail.com

### **ՈՌԻՔԵՆ ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ» (ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԸ, ՀԱՏ. 7) 2020-Ի ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

#### **ԱՄՓՈՓՈՒՄ**

**Հիմնաբառեր՝** 1918-1920 թթ. Հայաստանի առաջին Հանրապետություն, պետություն, ՀՅ Դաշնակցություն, Ռուբեն, «Հայ յեղափոխականի մը յիշատակները» (Խատոր 7), Կովկաս, սահմաններ, ազգամիջյան հարաբերություններ, բյուրո-կառավարություն:

Այս հորվածում Թալինե Տեր-Մինասյանը՝ Առաջին Հանրապետության բյուրո-կառավարության պաշտպանության նախարար Ռուբեն Վաչագանի թոռնութիւն, ներկայացնում է Հայ հեղափոխականի հուշերի 7-րդ հատորի ֆրանսերեն հրատարակությունը։ Վերլուծված են 1990 թ. Վ. Տեր-Մինասյանի պատրաստած ֆրանսերեն թարգմանությունը Աղբեժանի դեմ 44-օրյա պատերազմի (2020 թ. սեպտեմբերի 27-նոյեմբերի 10) անքարենպաստ համատեքսում ներկայացնելու պատճառները։ Այս գիրքը ոչ միայն Առաջին Հանրապետության պատմությունն ուսումնասիրելու սկզբնաբյուր է, այլև հավակնում է բացատրելու ժամանակակից հայկական պետության կառուցման ընթացքը։ Հայաստանի երկրորդ Հանրապետությունը (խորհրդային) և Հայաստանի երրորդ Հանրապետությունը (հետխորհրդային) Առաջին Հանրապետությունից ժառանգել են մոնութնիկ տարածքի վրա նախագծված պետության սկզբունքը։

## ՀՐԱՅՐ ՓԱՇԱՅԱՆ

ԱրՊՀ և «Մեսրոպ Մաշտոց»  
համալսարանի դասախոս,  
քաղաքագիտության թեկնածու, դոցենտ  
[hrayr.pashayan@mail.ru](mailto:hrayr.pashayan@mail.ru)

### ԴԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ. ՊՐԱՀՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԵԿՆԱՐԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՃԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԸՆՏ 2004 թ. ԵԱՀԿ ՄԽ ԶԵԿՈՒՅՑՑԻ

**Հիմնաբառեր՝**՝Ղարաբաղյան հակամարտություն, «Պրահյան գործընթաց», կարգավիճակ, հետաձգված հանրաքվե, ԵԱՀԿ գեկույց, կարգավորման սկզբունքներ:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ հակառակորդի ձեռնարկած լայնամասշտար ռազմական գործողությունների ու նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ Ղարաբաղյան հիմնախնդիրը նոր իրողությունների ներքո հայտնվեց: Այս և դրան հաջորդած քաղաքական զարգացումներն ու հակամարտության կարգավորման կարևորագույն խնդիրների շուրջ իշխանության ու ընդդիմության, և ընդհանրապես, հասարակության մեջ ծավալված քննարկումները, միմյանց ուղղված փախադարձ մեղադրանքները, վերստին արդիական են դարձնում ինչպես հիմնախնդիրի առնչությամբ ընդունված առանցքային փաստաթղթերի վերլուծությունը, այնպես էլ բանակցային գործընթացի առավել կարևոր դրվագների ներկայացումը՝ իրականությունը պարզելու, նոր սխալներից խուսափելու և առհասարակ հայրենիքի այս հատվածի հայկականությունն ապահովելու համար:

Իշխանությունների, արևմտյան և ոռուական որոշ շրջա-

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ԼՂՀ ԿԳՄՍ նախարարության կողմից տրամադրվող՝ ֆինանսական աջակցության՝ № scs20-003 գիտական թեմայի շրջանակներում:

նակների՝ միմյանց հակասող հայտարարությունները (Ն. Փաշինյանը մեղադրում էր նախկին իշխանություններին, հասարակության մի հատվածը՝ գործող վարչապետին, ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահը հակադարձում էր Փաշինյանին)<sup>2</sup> խնդրի ուսումնասիրությունը հրատապ են դարձնում նաև արտաքին քաղաքական իրողությունների, այդ թվում՝ դիվանագիտական ասպարեզում մեր շահերը ներկայացնելու համատեքստում:

Բացի դրանից, յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ օբյեկտիվ եզրահանգման համար անհրաժեշտ պայման է այն ժամանակահատվածի խորքային ուսումնասիրությունը, որը հանգեցրել է այս կամ այն հետևանքին: Վերջապես, Ղարաբաղյան հակամարտությունը դեռևս կարգավորված չէ, իսկ անվտանգության, կարգավիճակի, տարածքների և հիմնախնդրին առնչվող մյուս հարցերը նոր իրողությունների պայմաններում նոր իմաստ ու բովանդակություն են ձեռք բերել<sup>3</sup>: Հետևաբար, դրանց վերահմաստավորման և կարգավորման տարբերակների ձևավորման գործընթացում որոշակի տեղ ու դեր կարող են ունենալ բանակցությունների տարրեր փուլերում ի հայտ եկած տարբերակները, գաղափարներն ու դիրքորոշումները, մանավանդ, որ այդպես էլ գոյություն չունի կողմերի համար ընդունելի կարգավորման որևէ տարբերակ, այդ թվում նաև 2020 թ. պատերազմից հետո:

<sup>2</sup> Ответ российского сопредседателя в Минской группе ОБСЕ, посла по особым поручениям МИД России И. В. Попова на вопрос СМИ относительно статьи премьер-министра Армении Н. В. Пашиняна «Истоки 44-дневной войны», [https://www.mid.ru/ru/foreign\\_policy/news/-/asset\\_publisher/cKNonkJ-E02Bw/content/id/4519475](https://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJ-E02Bw/content/id/4519475)

<sup>3</sup>Տե՛ս Փաշայան Հ., Ղարաբաղյան հակամարտություն. անվտանգության, տարածքների և կարգավիճակի խնդիրները հետպատերազմական շրջանում, «Նորակազմ (չճանաչված) պետությունները պատերազմից հետո. խնդիրներն ու դրանց լուծման ուղիները», միջազգային գիտաժողով, Մեսրոպ Մաշտոց Համալսարան, Ստեփանակերտ 2021, էջ 105-110:

Սույն հոդվածի ուսումնասիրության նյութը «Պրահյան գործընթացի» այսպես ասած, առաջին փուլի շրջանակներում տեղի ունեցած իրադարձություններն են<sup>4</sup>, որոնք ամփոփված են Մինսկի խմբի համանախագահների 2004 թ. դեկտեմբերի 30-ին ԵԱՀԿ նախարարական խորհրդին ներկայացված գեկուցում<sup>5</sup>:

Հարկ է նշել, որ փորձագիտական, հանրային ու տարբեր մակարդակներում, որպես Ղարաբաղյան կարգավորման բանակցային գործընթացի առավել հայտնի և հիմնական հանգրվան, սովորաբար հիշատակվում են Մադրիդյան սկզբունքները: Դրանք, իրոք խնդրի կարգավորման ուղղությամբ տարիներ շարունակ իրականացված աշխատանքի արդյունք են և ներառում են այն հիմնական սկզբունքները, որոնք անհրաժեշտ հիմքեր կարող էին ապահովել հիմնախնդրի փոխգիծումային կարգավորման համար:

Մադրիդյան սկզբունքները քննարկման առանձին նյութ դիտարկելով՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ դրանք, ինչպես ասում են, իրենք իրենց՝ դատարկ տեղում չեն առաջացել: Դրանց նախորդել են երկարատև հանդիպումներ ու բանակցություններ, որոնք հայտնի են «Պրահյան գործընթաց» անվամբ: Դրանց ընթացում էլ մշակվել են նշյալ սկզբունքները: Հետևաբար, ինչպես բանակցությունների շարժընթացն ու տրամաբանությունը, այնպես էլ Մադրիդյան սկզբունքները հասկանալու համար նախնական անհրաժեշտ է ուսումնասիրել դրան նախորդած ժամանակաշր-

<sup>4</sup> Նախորդ ուսումնասիրություններում վերլուծել ենք մինչև 2003 թ. ընդունված փաստաթղթերն ու անդադարձել տեղի ունեցած բանակցային գործընթացի կարևորագույն դրվագներին: Տե՛ս Փաշայան Հ., Ղարաբաղյան հակամարտություն. կարգավորման գործընթացը (1995-2003 թթ.) ազգային անվտանգության օրակարգում: Մաս երկրորդ (հոդվածների ժողովածու), Ստեփանակերտ, 2020, 264 էջ:

<sup>5</sup> REPORT OF THE CO-CHAIRS OF THE OSCE MINSK GROUP TO THE OSCE MINISTERIAL COUNCIL <https://www.osce.org/files/f/documents/1/7/39856.pdf>

շանի իրադարձությունները, որպեսզի կարողանանք ամբողջական պատկերացում ունենալ դրանց ծևավորման, բովանդակության, կողմերի մտադրությունների և այլնի վերաբերյալ:

Դետք է ասել, որ Պրահայում Ղարաբաղյան հակամարտությունը քննարկման նյութ էր դաճել 1990-ական թթ.: Երբ դեռևս 1995 թ. մարտի 3-ին գործող նախագահի կողմից Չեխիայի մայրաքաղաքում բացվեց Համանախագահության Ղեկավարող խորհրդի առաջին հանդիպումը, Լասլի Կովաչը հաստատեց նախկինում ԵԱՀԿ-ի ընդունած որոշումները կողմերի կարգավիճակի մասին, այսինքն՝ հակամարտության մեջ ներգրավված երկու պետությունների, ինչպես նաև կոնֆլիկտի երրորդ կողմի (Լեռնային Ղարաբաղի) մասնակցությունը բանակցությունների բոլոր գործընթացներին, ներառյալ Մինսկի խորհրդաժողովը: Բացի այդ, ըստ ընդունված հայտարարության՝ շահագրգիռ կողմերը կարող են իրավիրվել Մինսկի խորհրդաժողովին և դրա նախապատրաստական աշխատանքներին՝ խորհրդատվությունների համար<sup>6</sup>:

Պրահայում հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցություններ հետագայում նույնական տեղի են ունեցել, որոնցից կարելի է հիշատակել օրինակ 2002 թ. նոյեմբերի 21-22-ը ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի և Եվրատլանտյան գործընկերության խորհրդի շրջանակներում Ռ. Քոչարյանի ու Հ. Ալիկի հերթական հանդիպումը, որտեղ կարգավորման նոր տարբերակներ չեն քննարկվել<sup>7</sup>:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում խոսելով «Պրահյան գործընթացի» մասին՝ նկա-

<sup>6</sup> ОБСЕ, руководящий совет, Прага. 1-SC/Journal № 2, 31 марта 1995 года, Приложение. <http://vn.kazimirov.ru/doc13.htm>

<sup>7</sup> «Лучше встречаться, чем сидеть сложа руки», <https://mediamax-/ru/news/5-10-15/26296>

տի է առնվում 2002-2006 թթ. Հայաստանի և Ադրբեյջանի ներկայացուցիչների միջև տեղի ունեցած բանակցությունների շարքը, որոնց արդյունքում ի հայտ են եկել կարգավորման նոր տարրեր: Մասնավորապես, բանակցությունները սկսվել են 2002 թ. մայիսին՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի նախագահությամբ Պրահայի մերձակայքում գտնվող Ստիրին քաղաքում Հայաստանի և Ադրբեյջանի նախագահների անձնական ներկայացուցիչների՝ փոխարտգործնախարարներ Թաթուլ Մարկարյանի և Արազ Ազիմովի հանդիպմամբ<sup>8</sup>: Բանակցությունների երկրորդ նստաշրջանը տեղի ունեցավ հունիսի վերջին: Քանի որ 2003 թ. Հայաստանում և Ադրբեյջանում անցկացվում էին նախագահական ընտրություններ, հայտարարվեց, որ Պրահայի բանակցությունները ծառայելու են որպես կողմերի միջև շփման շարունակական միջոց<sup>9</sup>: Ավելի ուշ գործընթացը շարունակվեց Հայաստանի և Ադրբեյջանի արտգործնախարարների կողմից: Արդեն 2004 թ. փետրվարին, Ադրբեյջանական «525» թերթի հաղորդմամբ, ոռոսաստանցի համանախագահը լրագրողներին ասել էր, որ համանախագահները պատրաստում են նոր առաջարկներ, որոնք վերաբերում են ոչ թե հիմնախնդրի իրական կարգավորմանն, այլ բանակցային գործընթացի կազմա-

---

<sup>8</sup> Պրահայի գործընթացի առաջին հանդիպումը կազմակերպել էր 2001 թվականից ՀՀ և Եվրասիական հակամարտությունների ԱԱՆ հատուկ բանակցող Ռումոնի Փերինան: Հանրաբէի մասին նրա գաղափարի էռությունն էր, որ ՀՀ բնակիչները կարողանան ըվեարկել՝ օգտագործելով նախքան ռազմական գործողությունների սկսում՝ խորհրդային ժամանակաշրջանում եղած ցուցակները: Տե՛ս [https://en.wikipedia.org/wiki/-Rudolf\\_V.\\_Perina#Nagorno-Karabakh\\_and\\_three\\_otherformer\\_Soviet\\_-territories\\_with\\_conflicts](https://en.wikipedia.org/wiki/-Rudolf_V._Perina#Nagorno-Karabakh_and_three_otherformer_Soviet_-territories_with_conflicts)

<sup>9</sup> Пражский процесс (армяно-азербайджанские переговоры) - Prague Process (Armenian–Azerbaijani negotiations)-[https://ru.abcdef.wiki/wiki/-Prague\\_Process\\_%E2%80%93Azerbaijani-negotiations%29](https://ru.abcdef.wiki/wiki/-Prague_Process_%E2%80%93Azerbaijani-negotiations%29)

կերպմանը<sup>10</sup>:

Ըստ որոշ տեղեկությունների՝ «Պրահայի գործընթացի» գաղափարի նախաձեռնությունը պատկանում է ամերիկացի համանախազահ Ռուդոլֆ Փերինային, ում Մոնտենեգրոյի օրինակն է ոգևորել առաջարկելու, որ հանրաքվեի գաղափարը, թեև միանգամայն այլ պայմաններով, ՀՀ շուրջ վարվող բանակցություններում դրվի նոր շրջանակային համաձայնության առանցքում<sup>11</sup>: Բանակցությունների հայեցակարգում հանրաքվեի մանրամասները պետք է քողարկված լինեին «կառուցողական անորոշությամբ» կամ «մի ասա, մի հարցորու» սկզբունքով: Պիտի լիներ ՀՀ հարցով հանրաքվե անցկացնելու մասին հայտարարություն, բայց մանրամասները, թե ով և ինչպես է քվեարկելու, ճշտվելու էին հետագայում: Սա թույլ կտար հայկական կողմին արձանագրել, որ Ադրբեյջանի կազմից Ղարաբաղի դուրս գալն առկա է, թեև իրենք նաև համաձայն էին հետաձգել հանրաքվեի անցկացման ժամկետը՝ արագացնելու առաջընթացը համաձայնագրի մյուս հարցերում: Ադրբեյջանական կողմն, իր հերթին, կարող էր պնդել, թե քվեարկության պայմանները բացառում էին լիակատար անջատումը: Փախստականները կվերադառնային, Ղարաբաղի հայերը կստանային անվտանգության երաշխիքներ, մինչդեռ վերջնական կարգավիճակի հարցի լուծումը կհետաձգվեր: Որոշ մարդիկ նման հանրաքվեն (referendum) անվանեցին neverendum<sup>12</sup>:

Խոսելով նշված գործընթացի մասին՝ << նախկին ԱԳ նախարար Վարդան Օսկանյանն այս շրջանը բնութագրել է

<sup>10</sup> По словам Юрия Мерзлякова сопредседатели Минской группы ОБСЕ готовят новые предложения, которые касаются не собственно урегулирования карабахского вопроса, а организации переговорного процесса. <http://armenpress.am/rus/news/537921.html>

<sup>11</sup> Կաալ Ռ., Սև այգի. Հայաստան ու Ադրբեյջանը պատերազմի ու խաղաղության միջև, Եր., 2014, էջ 396:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 396-397:

որպես կարգավորմանն ուղղված չորրորդ շրջան, որը զուգակցվեց Ադրբեյջանի նոր ղեկավարության իշխանության գալուն, միևնույն ժամանակ նկատվեց պատմության անհիվը ետ շրջելու հստակ մտադրություն<sup>13</sup>: Մինչ այդ՝ 2001 թ., կողմերին էր ներկայացվել Քի Վեսթյան փաստաթուղթը, որն ադրբեյջանական կողմի մերժումից հետո գրեթե երեք տարի պահանջվեց բանակցային գործընթացը վերսկսելու համար: Ի. Ալիսի իշխանության գալուց հետո, ըստ <<նախկին արտգործնախարարի՝ «Լեռնային Ղարաբաղի ուղիղ զիջումը հայերին արդեն բանակցային տարբերակ չէր կարող լինել: Անհրաժեշտ էր նոր գործոն, որը կարող էր դառնալ բանակցային փաստաթղթի առանցքը՝ մեզ համար ապահովելով ինքնորոշման իրավունքի ամրագրումը, իսկ Ալիսի համար լրոգեր և անուղղակի դարձներ Լեռնային Ղարաբաղի զիջումը»<sup>14</sup>:

Այս հանգամանքը հիմք է տվել Ենթադրելու, որ եթե առաջին տարիներին կողմերի միջև բանակցությունները հիմնականում ընթանում էին կոնկրետ տարբերակների շուրջ, որքան էլ այդ տարբերակներն անընդունելի լինեին կողմերի կամ նրանցից յուրաքանչյուրի համար առանձին, ապա «Պրահայի գործընթացից» սկսած՝ քննարկման հիմնական թեման դարձել է սկզբունքների մշակման հարցը, որոնք պետք է դառնան հետագա խաղաղ կարգավորման անկյունաքարերը<sup>15</sup>:

Պրահայն գործընթացի շրջանակներում տեղի ունեցած

<sup>13</sup>Վ. Օսկանյանի «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր. կարգավորման ուղիներ» ելույթից: Խորհրդարանական լսումներ, 29-30 մարտի, 2005 թ., Եր., 2006, էջ 12:

<sup>14</sup> Օսկանյան Վ., Անկախության ճանապարհով: Փոքր երկրի մեծ մարտահրավերները (Նախարարի օրագրից), Եր., 2013, էջ 199:

<sup>15</sup>Կարապետյան Ռ., Ղարաբաղյան հիմնախնդիր. ստատուս քվոյի ամրապնդում, թե՛ պատերազմի նախապատրաստություն, «21-րդ ԴԱՐ», թիվ 3 (79), 2018, էջ 67-68:

բանակցությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի՝ մինչև 2004 թ., որի արդյունքներով ընդունվել է դեկտեմբերի 30-ի գեկուցը և դրանից հետո, որին կանդրադառնանք առանձին:

Այսպես՝ 2004 թ. մարտի 19-ին համանախազահների մասնակցությամբ Հեխիայի մայրաքաղաքում տեղի ունեցավ Վարդան Օսկանյանի և Վիլայաթ Գովիսի հանդիպումը, որի ընթացքում միջնորդները նոր տարր մտցրին գործընթաց՝ բանակցություններ արտգործնախարարների միջև։ Ըստ ԵԱՀԿ նախարարների խորհրդին միջնորդների ներկայացրած տարեվերջյան գեկուցի՝ «Պրահայի գործընթացի» շրջանակներում համաձայնություն ձեռք բերվեց նոր մեթոդի վերաբերյալ, այն է՝ առանց օրակարգի, առանց պարտավորությունների, առանց բանակցությունների ազատ երկխոսություն՝ Հայաստանի, Ադրբեջանի կամ համանախազահների կողմից առաջարկված որևէ հարցի շուրջ»<sup>16</sup>:

Չնայած երկու շաբաթ անց Գովիսին փոխարինեց Էմար Մամեդյարովը, պրահայան գործընթացը կանգ չառավ։ Վ. Օսկանյանն ու Է. Մամեդյարովն առաջին անգամ հանդիպել են Պրահայում 2004 թվականի ապրիլին։ Նախարարական հանդիպումների այս շարքն էլ բնորոշվել է որպես «Պրահայան գործընթաց»։ «Նախազահների սովորաբար 2 ժամ տևող հանդիպումների ընթացքում հնարավոր չէ խնդիրները քննության առնել անհրաժեշտ մանրամասնությամբ», - բացատրում էին միջնորդները, պնդելով, թե նախարարները կարող են մինչ այդ նախապատրաստել գործընթացը<sup>17</sup>։

Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարները 2004 թ. մայիսին երրորդ հանդիպումն են անցկացնում։ Ստրամուրգում կայացած հանդիպումից հետո լրագրողնե-

<sup>16</sup> <https://www.osce.org/files/f/documents/1/7/39856.pdf>

<sup>17</sup> <http://www.azatutyun.am/a/29935114.html>

րի հետ զրոյցում Վ. Օսկանյանը նույնպես հաստատել է, որ կողմերը ցանկացած հարց կարող են դնել, բայց դա չի նշանակում, որ օրակարգային խնդիր է: Ինչ վերաբերում է հայկական կողմի դիրքորոշմանը, ապա ըստ նրա՝ մեր մոտեցումը մնում է նոյնը, այն՝ որ հարցի էլույթունը ՀՀ կարգավիճակն է: Մնացած բոլոր խնդիրներն առողջունք են, հետևանք են այդ խնդրին լուծում չտալուն: Այնպես որ, եթե մենք ուզում ենք հարցին լուծում տալ, պետք է կենտրոնանանք ՀՀ կարգավիճակի վրա և ոչ թե փորձել կողմնակի հարցերին լուծում տալ՝ հիմնականը մի կողմ թողնելով<sup>18</sup>: Ավելի ուշ խոսելով այս մասին, Աղրբեջանի արտգործնախարար է. Մամեդյարովը, շեշտելով, որ Պրահայի բանակցային գործընթացը մարմնավորում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ուղիները, ճիշտ հակառակն է պնդել: Ըստ նրա՝ «նախ պետք է ազատագրվեն Լեռնային Ղարաբաղի հարակից գրավյալ տարածքները, ապա քննարկվեն մի շարք այլ բաղադրիչներ, ներառյալ փախստականների և ներքին տեղահանվածների վերադարձը իրենց տները, բոլոր տրանսպորտային և կապի գծերի վերականգնումը տարածաշրջանում: Վերոհիշյալ բոլորը, ըստ Աղրբեջանի ԱԳՆ ղեկավարի, բարենպաստ միջավայր կստեղծն ՀՀ կարգավիճակի իրավական որոշման համար<sup>19</sup>: Այսինքն՝ Պրահյան գործընթացի շրջանակներում քննարկվող հիմնական հարցերը կապված էին տարածքներ Աղրբեջանին փոխանցելու և որոշակի սահմաններում ՀՀ կարգավիճակի հստակեցման հետ, որոնց վերաբերյալ

<sup>18</sup> «Հարգողնախարար Վ. Օսկանյանի հանդիպումը լրատվամիջոցների հետ՝ Ստրաֆուրող կատարած այցից հետո», 17 մայիսի, 2004,  
<https://www.mfa.am/hy/press-conference/2004-05/17/vo/1695>

կողմերը լիովին հակառակ դիրքորոշումներ ունեին:

2004 թ. սեպտեմբերին տեղի է ունենում Ռ. Քոչարյանի, Ի. Ալիևի երրորդ հանդիպումն Աստանայում՝ ԱՊՀ գագաթնաժողովում<sup>20</sup>: Աստանայի հանդիպման նախօրեին ուսուական մամուլում եղան հրապարակումներ, որ դարաբաղյան կարգավորման գործընթացում քննարկվում է հետաձգված հանրաքվեի տարբերակը<sup>21</sup>: Ըստ պաշտոնական հաղորդագրությունների, կողմերը որոշում են դադար վերցնել՝ նախարարների քննարկած հարցերն ուսումնասիրելու համար: Սակայն բանակցային սեղանին առկա առաջարկներին արձագանքելու փոխարեն, Ադրբեյչանը փորձում է հակամարտության կարգավորման հարցը քննարկել ՄԱԿ-ում, ինչն, ըստ միջնորդների, մի քանի ամսով ետ է շարտում գործընթացը<sup>22</sup>:

Նախագահների հանդիպումից հետո լրագրողների հետ հարցազրույցում << արտգործնախարարը նշել է, որ Պրահայի չորս հանդիպումների հիմնական նպատակը բանակցությունները շարունակելու հիմք ստեղծելն էր: «Եվ վերջին հանդիպումը, այո՛, ինչպես մենք եւ Ադրբեյչանի կողմն ու համանախագահները գնահատեցին, ու նաեւ նախագահներն իրենց հանդիպումից հետո՝ մամուլի ասուլիսի ժամանակ, դրական էր: Եվ ինչ-որ մի հիմք, արտգործնախարարների պատկերացմամբ, ստեղծվել էր, եւ դա փոխանցվել էր նախագահներին ու որոշ ակնկալություն

<sup>20</sup> Մինչ այդ՝ 2004 թ. ապրիլի 28-ին Հայաստանի ու Ադրբեյչանի նախագահները հանդիպել են Վարչավայում՝ Եվրոպական տնտեսական գագաթնաժողովի շրջանակներում, որի ընթացքում կոնկրետ արձանագրումներ չեն եղել: Սա Ի. Ալիևի և Ռ. Քոչարյանի երկրորդ հանդիպումն էր (առաջին անգամ նրանք հանդիպել են 2003 թ. դեկտեմբերին), որին Հայաստանի նախագահը մեկնել էր Ֆրանսիայի առաջնորդ Ժ. Շիրակի հետ բանակցություններից հետո:

<sup>21</sup> Հակոբյան Թ., Կանաչ ու սև. արցախյան օրագիր, Եր., 2011, էջ 389:

<sup>22</sup> <https://www.azatutyun.am/a/29935114.html>

կար, որ նախագահները համաձայնություն կտան, կամ որոշ ուղղումներ կմտցնեն ու հստակ ցուցումներ կտան նախարարներին՝ այդ ուղղությամբ շարունակելու: Այդպիսի ակնկալիք կար, բայց դա նախագահների հանդիպման արդյունքում չիրականացավ»<sup>23</sup>:

Հակասական էին նաև կողմերի դիրքորոշումները կարգավորման գործընթացի տրամաբանության վերաբերյալ: Մասնավորապես, չնայած 2004 թ. հունիսին ԵԱՀԿ Մինսկի խմբի ոռուսաստանցի համանախագահ Յուրի Մերզյակովը, խոսելով Պրահյան գործընթացից, նշել էր, որ ԼՂ հակամարտության կարգավորման փուլային և փաթեթային տարբերակները կարելի է համատեղել երրորդ՝ կողմերի համար ընդունելի տարբերակում<sup>24</sup>: Ավելին, աղբբեջանական «525» թերթի հաղորդմամբ, դեռևս 2004 թ. փետրվարին նալուագրողներին ասել էր, որ կողմերը պետք է հրաժարվեն խնդրի լուծման «փաթեթային» և «փուլային» տարբերակներից<sup>25</sup>: Սակայն դա չխնանգարեց աղբբեջանական կողմին «Պրահյան գործընթացը» ներկայացնել որպես կարգա-

<sup>23</sup> «Հարտգործնախարար Վ. Օսկանյանի հանդիպումը լրատվամիջոցների հետ Պրահա, Բրյուսել և Աստանա կատարած այցերից հետո, 22 սեպտեմբերի, 2004, <https://www.-mfa.am/hy/press-conference/2004-09/22/vo-arm/1697>

<sup>24</sup> «Ես այդ մասին ասել եմ դեռևս անցած տարի սեպտեմբերին, երբ տարածաշրջանում էի ճանաչողական այցով: Այսօր համանախագահները փորձում են այնպիսի առաջարկ նախապատրաստել, որը թույլ կտա համատեղել անհամատեղելին՝ «փաթեթային» և «փուլային» տարբերակները: Իմ կարծիքով, նման հնարավորություն կա», - ասել է նա: Որու դիվանագետը հայտարարել է, որ մինչ այսօր այդ հարցն անհայտահարելի խոչընդոտ էր, քանի որ աղբբեջանական կողմը պահանջում է, որպեսզի նախևառաջ վերադարձվեն «օկուպացված» տարածքները, իսկ հայկական կողմը պահանջում է, որպեսզի նախ լուծվի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը: «Ենք թվում է, որ կողմերի բարի կամքի դրսնորման դեպքում հնարավոր է գտնել հակամարտության կարգավորման դիրքորոշումների հակասության կամ անհամատեղելիության հանգուցալուծումը», - ասել է Յու. Մերզյակովը: <https://www.-panarmenian.net/arm/politic-s/news/10831>

<sup>25</sup> <http://armenpress.am/rus/news/537921.html>

Վորման փուլային տարբերակ<sup>26</sup>: Ավելին, ըստ Ալիսի՝ «Պրահյան» կոչվող գործընթացը շրջանակային ձևերից մեկն է և ընդհանուր առմամբ, դրական հիմք է ստեղծում խաղաղության համաձայնության հասնելու համար, քանի որ ապահովում է խնդրի լուծումը փուլային ճանապարհով<sup>27</sup>: «Ադրբեջանի դիրքորոշումը մնում է անփոփոխ - Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի տարածք է, և Ադրբեջանի տարածքին ամբողջականությունը ճանաչված է ամբողջ աշխարհի ու ՄԱԿ-ի կողմից», - ասել էր ԱՀ նախագահը Թուրքական NTV հեռուստաալիքին տված իր հարցազրույցում, շեշտելով, որ Ադրբեջանի տարածքային ամբողջականության հարցը չի կարող բանակցությունների առարկա լինել<sup>28</sup>: << ԱԳՆ խոսնակը՝ Համլետ Գասպարյանն, ընդհակառակը, հերթեց ի. Ալիսի հայտարարությունները ԼՂ հակամարտության փուլային կարգավորման որոշման մասին, Վերահաստատելով, որ «Պրահյի գործընթացն» ընթանում է փաթեթային ուղղությամբ<sup>29</sup>:

Թե կոնկրետ ի՞նչ հարցեր են քննարկվել 2004 թ. նախագահների երեք և արտգործնախարարների կրկնակի անգամ ավելի հանդիպումների ու բանակցությունների ընթացքում, հստակ չեն, քանի որ, պայմանավորվածության համաձայն, կողմերը գաղտնի էին պահում դրանք: Իսկ մամուլում հայտնված տեղեկույթը հակասական էր ու ոչ ամբողջական: Դատելով հակամարտող կողմերի տարբեր

<sup>26</sup> Алиев И.: “Пражский процесс” обеспечивает поэтапное решение карабахской проблемы, <https://regnum.ru/news/polit/596626.html>

<sup>27</sup> Ադրբեջանի նախագահն այս մասին ասել է նաև լրագրողների հետ հանդիպման ժամանակ <https://regnum.ru/news/382688.html>

<sup>28</sup> Алиев И.: “Пражский процесс” обеспечивает поэтапное решение карабахской проблемы, <https://regnum.ru/news/polit/596626.html>

<sup>29</sup> Глава Парламентской ассамблеи НАТО: Армения должна получить контроль над Нагорным Карабахом: Нагорный Карабах за неделю: <https://regnum.ru/news/382688.html>

առիթներով հնչեցրած հայտարարություններից՝ կարելի է ասել, որ այդպես էլ նրանց չի հաջողվել համաձայնության եզրեր գտնել: Այդ մասին ուղղակիորեն փաստել են նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները հուլիսի 14-ին Երևանում իրավիրած ասովիսում, շեշտելով, որ համաձայնությունների կայացման և կարգավորման պատասխանատուն հակամարտող կողմերն են<sup>30</sup>: Տարածաշրջան կատարած հերթական այցի ընթացքում եռանախագահները իրապարակավ քննադատել էին Հայաստանին և Ադրբեյջանին՝ բանակցություններում առաջընթաց չարձանագրելու համար, հայտարարելով, որ նոր առաջարկներ չեն ներկայացնելու, փոխարենը հորդորելու են, որ հակամարտության կողմերը պատասխանատվություն ստանձնեն համաձայնությունների և լուծումների համար: «Ո՞վ է իրեն սպառել՝ ԵԱՀԿ-ն թե՝ Հայաստանն ու Ադրբեյջանը, որոնք չեն կամենում օգտվել Մինսկի խմբի աջակցությունից», - Երևանյան ասովիսում հայտարարել էր ֆրանսիացի համանախագահը<sup>31</sup>: Բանակցային գործընթացի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ եթե հայկական կողմի համար առաջնային էին հիմնախնդրի էությանը վերաբերող Արցախի կարգավիճակի ու նրա բնակչության անվտանգային խնդիրները, ապա ադրբեյջանական կողմի համար հակամարտության հետևանքների՝ տարածքների, փախստականների վերադարձի, ներքին տեղահանվածների և այլ՝ հիմնախնդրի բուն էության հետ անմիջական առնչություն չունեցող խնդիրներ: Արդյունքում՝ 2004 թ. վերջերին «Պրահյան գործընթացը» փակուլի էր մտել: Այդ մասին է վկայում ինչպես համանախագահների վերոնշյալ գեկուցք, որի վերջին պարբերության համաձայն՝

<sup>30</sup>«Համաձայնությունների կայացման եւ կարգավորման պատասխանատուն հակամարտող կողմերն են», <https://www.azatutyun-.am/a/1574129.html>

<sup>31</sup> Նոյն տեղում:

նախագահներն այդպես էլ չեն պատասխանել Պրահայի հանդիպումների հիման վրա մշակված համապարփակ բանակցություններ սկսելու համանախագահների առաջարկին<sup>32</sup>, այնպես էլ << արտգործնախարարը, տեղեկացնելով, որ «Ադրբեջանի հետ մեր բանակցությունների արդյունքում, նաեւ Մինսկի խմբի դրական ներդրման շնորհիվ այդ խոչնորությ, որ վերջերս ստեղծվել էր Պրահյան երկրորդ փուլի բանակցությունների վերսկսման համար, արդեն վերացել է»<sup>33</sup>: «Պրահայի գործընթացի»՝ 2004 թ. տեղի ունեցած բանակցությունների բովանդակության վերաբերյալ ընդհանրական, բայց կարևոր տեղեկություններ են ներկայացված նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների դեկտեմբերի 30-ի՝ ԵԱՀԿ նախարարական խորհրդին ներկայացված գեկույցում<sup>34</sup>: Ըստ այդմ՝ բանակցությունների ընթացքում հնարավոր է եղել հասնել երկու հիմնական արդյունքների:

1. Ապագա կարգավորման բոլոր պարամետրերը մեթոդաբար ուսումնասիրվել են, որպեսզի (միջնորդները - Հ. Փ.) հստակ պատկերացում ունենան յուրաքանչյուր կողմի դիրքորոշումների մասին.

2. <<Ետզիետե պարզվել է խնդրի միջուկը, այսինքն՝ սահմանվել է այն հիմքը, որի վրա կարող են սկսվել իրական բանակցությունները, որոնք պարտադիր կերպով ներառում են յուրաքանչյուր կողմի փոխազդումները»<sup>35</sup>:

<sup>32</sup> REPORT OF THE CO-CHAIRS OF THE OSCE MINSK GROUP TO THE OSCE MINISTERIAL COUNCIL <https://www.osce.org/files/f/documents/1/7/39856.pdf>

<sup>33</sup> <<ԱԳ նախարար Վ. Օվկանյանի ասովիսը Միֆիա եւ Բյուստել կատարած այցերի վերաբերյալ 15 դեկտեմբերի, 2004 <https://www.mfa.am/hy/press-conference/2004/12/15/vo/1699>

<sup>34</sup>REPORT OF THE CO-CHAIRS OF THE OSCE MINSK GROUP TO THE OSCE MINISTERIAL COUNCIL <https://www.osce.org/files/f/documents/1/7/39856.pdf>

<sup>35</sup>REPORT OF THE CO-CHAIRS OF THE OSCE MINSK GROUP TO THE OSCE MINISTERIAL COUNCIL <https://www.osce.org/files/f/documents/1/7/39856.pdf>

Զեկույցում հաջորդ կարևոր արձանագրումը կապված է ՀՀ կարգավիճակի հետ, որը, փաստորեն, ընկած է եղել համանախագահների կողմից առաջարկվող հնարավոր բոլոր սցենարների հիմքում: Մանավորապես՝ առաջարկվում էր՝

1. Որևէ համաձայնագիր չկնքել, ինչը նշանակում է պահպանել գոյություն ունեցող փխրուն «ստատուս-քվոն»,

2. «Երկու կողմերի համաձայնությամբ պաշտոնապես «դե-ֆակտո» սառեցնել ներկա իրավիճակը, ինչը նշանակում է հետաձգել ՀՀ կարգավիճակի որոշման հարցը մինչեւ երկու կողմերի միջև հարաբերությունների կարգավորումը:

3. Համաձայնության հանգել այն բանի շուրջ, թե ինչպես է ապագայում որոշվելու Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը, ներառելով նման որոշման պայմանները եւ այլ պայմանավորվածությունների տարրերը»<sup>36</sup>:

4. Զեկույցի տեքստի վերջին պարբերությունից պարզ է դառնում նաև, որ Պրահայի հանդիպումների հիման վրա մշակված համապարփակ բանակցություններ սկսելու՝ համանախագահների առաջարկին պատասխան տալու իրենց հանձնառությունը մինչև տարբեր նախագահներն այդպես էլ չեն կատարել, ինչն, իր հերթին, վկայում է կողմերի միջև հիմնախնդրի տարբեր ասպեկտների վերաբերյալ ունեցած հակադիր մոտեցումների մասին:

Այսպիսով, վերլուծելով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների դեկտեմբերի 30-ի՝ ԵԱՀԿ նախարարական խորհրդին ներկայացված զեկույցը և «Պրահյան գործընթացի» շրանակներում 2004 թ. տեղի ունեցած բանակցությունները կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Եթե նախկինում հակամարտության կարգավորման

---

<sup>36</sup>REPORT OF THE CO-CHAIRS OF THE OSCE MINSK GROUP TO THE OSCE MINISTERIAL COUNCIL <https://www.osce.org/files/f/documents/1/7/39856.pdf>

շրջանակներում քննարկվել են կոնկրետ տարբերակներ, ապա «Պրահյան» անվանումը ստացած գործընթացի շրջանակներում առավելապես քննարկվել են կարգավորման սկզբունքների և կողմերի դիրքորոշումների հետ կապված հարցերը: Դա նշանակում է, որ միջնորդները տվյալ փուլում առավելապես հնարավոր են համարել ոչ թե բուն հիմնախնդրի կարգավորումն, այլ բանակցային գործընթացի կազմակերպումն ու շարունակականությունը, ինչն, իհարկե, պատճառներով հանդերձ կարելի է համարել հետընթաց քայլ հակամարտության կարգավորման համատեքստում:

2. Ի. Ալիևի իշխանության գալով կարգավորման գործընթացում հավելյալ խնդիրներ են ստեղծվել կապված նրա որոշեգործ ու ազմատենչ, անզիջում և հիմնախնդրին այլ միջազգային կառույցներ տեղափոխելու քաղաքականության հետ: Դրա հետևանքով միջնորդները բանակցում էին ոչ այնքան հիմնախնդրի իրական կարգավորման, որքան ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում բանակցությունների շարունակականության ապահովման համար: Իսկ ՀՀ ուղղակի գիշումը հայերին, ի տարբերություն նախկինի, արդեն որպես բանակցային տարբերակ չէր դիտվում՝ ո՞չ Հայաստանի, ո՞չ միջնորդների, ո՞չ էլ առավել ևս Ադրբեջանի կողմից:

3. Այդուհանդերձ՝ բանակցություններում տարածայնությունների առանցքային խնդիրը համարվել է Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Ադրբեջանի՝ պատմության անիվը հետ շրջելու և անզիջում դիրքորոշման պատճառով այն այդպես էլ չի հաջողվել համաձայնեցնել: Դրա համար բանակցային օրակարգ է բերվել հետաձգված հանրաքվեի գաղափարը, որը քողարկված էր «կառույցողական անորոշությամբ» և առավելապես միտված էր կողմերի երեսը փրկելուն:

4. Նշված շրջանից սկսած՝ բանակցային գործընթացում նկատվում էր հետևյալ միտումը. որքան հայկական կողմը կառուցողական դիրքորոշում էր որդեգրում, այնքան ադրբեջանական կողմը կոշտացնում էր իր դիրքորոշումը, իսկ հիմնախնդրի կարգավորման հեռանկարներն ավելի մշուշուտ էին դառնում, ինչի վկայությունը 2004 թ. վերջերին «Պրահյան գործընթացի» փակուղում հայտնվելն էր: ԵԱՀԿ Մինսկի խմբում ՌԴ նախկին համանախազահ Վլադիմիր Կազիմիրովի կարծիքով՝ եթե հայր Ալիսը բանակցություններում պահանջում էր միայն Լեռնային Ղարաբաղից դուրս տարածքների ազատագրում, ապա ի. Ալիսը Ղարաբաղը ներառում էր գրավյալ տարածքների մեջ<sup>37</sup>:

5. «Պրահյան գործընթացի» շրջանակներում ամրագրված հաջողություններն ի. Ալիսին թույլ են տվել համապատասխան եզրահանգումներ կատարել՝ ավելի խեղաթյուրել Ղարաբայյան հիմնախնդրի էռությունը, ինչպես միշնորդներին ու միջազգային տարբեր կառույցների, այնպես էլ հայկական կողմին դարձնել ավելի զիջող ու անհետևողական սեփական դիրքորոշումներում:

---

<sup>37</sup> Глава Парламентской ассамблеи НАТО: Армения должна получить контроль над Нагорным Карабахом: Нагорный Карабах за неделю: <https://regnum.ru/news/economy/382688.html>

**HRAYR PASHAYAN**

Lecturer of the ArSU and  
“Mesrop Mashtots” University,  
Candidate of Political Science, Associate Professor  
[hrayr.pashayan@mail.ru](mailto:hrayr.pashayan@mail.ru)

## **NAGORNO-KARABAKH CONFLICT. BEGINNING OF THE PRAGUE PROCESS AND THE MAIN FOCUS OF THE 2004 OSCE MINSK GROUP REPORT**

### **SUMMARY**

*Keywords:* Karabakh conflict, "Prague process", status, postponed referendum, OSCE report, principles of settlement.

The article presents the first stage of the Karabakh conflict settlement process, called the “Prague Process”. It is shown that due to the consistent activity of the Azerbaijani authorities, the essence of the Karabakh issue was gradually distorted. As a result, the mediators, various international organizations, and the Armenian side have become more inferior and inconsistent in their positions. If earlier specific options were discussed, then within the framework of the Prague Process, issues related to the principles of settlement and the positions of the parties were brought up on the agenda.

**ГРАЙР ПАШАЯН**

Лектор АрГУ и Университета “Месроп Маштоц”

Кандидат политических наук, доцент

hrayr.pashayan@mail.ru

**НАГОРНО-КАРАБАХСКИЙ КОНФЛИКТ. НАЧАЛО ПРАЖСКОГО  
ПРОЦЕССА И ОСНОВНОЙ АКЦЕНТ В ОТЧЕТЕ МИНСКОЙ  
ГРУППЫ ОБСЕ 2004 Г.**

**РЕЗЮМЕ**

**Ключевые слова:** карабахский конфликт, «Пражский процесс», статус, отложенный референдум, отчет ОБСЕ, принципы урегулирования.

В статье представлен первый этап процесса урегулирования карабахского конфликта, получивший название «Пражский процесс». Показано, что благодаря последовательной деятельности властей Азербайджана суть карабахского вопроса постепенно искажалась. В результате и посредники, и различные международные организации, и армянская сторона стали более уступчивыми и непоследовательными в своих позициях. Если раньше обсуждались конкретные варианты, то в рамках «Пражского процесса» на повестку дня выносились вопросы, касающиеся принципов урегулирования и позиций сторон.

## ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

## ԺԻՐԱՅՐ ՔՈՂԱՐԵԱՆ

Ցեղասպանութեան ճանաչման

աշխատանքային խումբ, Բեռլին (Գերմանիա)

դրկտոր

[g.koutcharian@googlemail.com](mailto:g.koutcharian@googlemail.com)

### ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ 30 ՏԱՐԵԿԱՆ Ե. ՀԱՇՈՒԵԿՃԻՌ

**«Քմնաբառեր»** Արցախի Հանրապետութիւն, Հայաստանի Հանրապետութիւն, գինադադարի պայմանագիր, սպառնալիքներ, բանակցութիւններ, Մինսկի խումբ, Աղբբէջան, Թուրքիա:

Ես պատմաբան, քաղաքական գիտութիւնների մասնագէտ և կամ սոցիոլոգ չեմ: Իմ կողմից ներկայացուած դրոյթների հիմքն է իմ հետաքրքրութիւնները Արցախի անցեալի և ներկայիս պատմութիւնն ու իրավիճակը, շուրջ 60 ուղևորութիւններիս տպաւորութիւնները, մեծ մասամբ Զորի Բալեանի, Լեյլի Քորսի և Գուրգէն Մելիքեանի գիսաւորութեամբ, յատկապէս ազատագրական պատերազմի ժամանակաշրջանում: Արցախի քաղաքական և գինաւրական դեկավարների հետ հանդիպումները, հայկական, նաև Միջազգային մամուլի կողմից հրատարակուած լուրերը և վերլուծութիւնները, թրքական, աղբբէջանական մամուլը, որքան, որ թարգմանաբար հրատարակուել են և վերջապէս պարսկալեզու մամուլը: Ինչպէս յայտնի է ԻԻՀ-եան հիւսիս-արևմտեան Աստրապատական նահանգում ապրում են 15-25 միլիոն թրքալեզու աղբբէջանցիներ, որոնք մասամբ սահմանակից են ՀՀ-եան հարաւում, և գնալով աւելի ակնառու է դառնում նրանց օրնիբուն թրքականութիւնը:

1994-ի մայիս 12-ին Բիշքեքում, ՌԴ-ի միջնորդութեամբ կնքուեց գինադադարի պայմանագիր, որը պարտադրել էր հայկական գինութը երկար, համառ և մեծ զոհաբերութիւնների գնով:

Աւաղ, այդ տարիներին չունեինք քաղաքական փորձ, պարտադրել Ադրբէջանին ճանաչել Արցախի կարգավիճակը (ստատուսը), քանի որ, պահը առաւել նպաստաւոր էր: Բարյում տիրում էր անհամաձայնութիւն և պառակտում, ինչպէս հիմա Երևանում:

1994-ի զինադադարը օգտագործեց Ադրբէջանը, համախմբուեց, վերականգնուեց, զինուեց և ամրապնդուեց:

Բարուն խոստումներով պահեց ՌԴ-ին իր կողքին, փնտրելով միաժամանակ նոր դաշնակիցներ, բացի իսլամական պետութիւններից (տես ՄԱԿ-ի բանաձևերը) ամուր կապեր հաստատեց Թուրքիայի, Իսրայէլի Փակիստանի և այլոց հետ: Իսրայէլի պարագայում օգտուեց նաև Իրան-Իսրայէլ հակամարտութիւնից, ինչպէս նաև Թուրքիայից ստացաւ ՆԱՇՕ-ի զինուրական դաստիարակութիւնը և վարժանքները: Օգտուեց նաֆթադոլլարներից ստեղծեց տարբեր տեսակի կաշառաբաժանման ցանցեր ստեղծեց իր Լորբինգ-քարոզչութեան համար Մոսկայում, ԱՄՆ-ում և Եվրոպայի տարբեր երկրներում, յատկապէս Գերմանիայում և Երոմիութիւնում: Օրինակ Բեռլինի Հումբոլդթ համալսարանում մեծ գումարներով հիմնեց Ադրբէջանի պատմութեան, լեզուի և գրականութեան ամբիոն, որը լորրի-քարոզչական կապերից բացի հաւաքագրում էր իրականացնում քաղաքական և գիտական անձերի, ի շահ Ադրբէջանի (ի տարբերութիւն Բեռլինի պետ. Ազատ Համալսարանի հնդեվրոպական և համեմատական լեզուարանութեան հայկական բաժնին, որը հիմնադրել էր ժողով Մարքուարդթը շուրջ 100 տարի առաջ, ԳԿ և սփիլրի նախարարների ապաշնորհութեան պատճառով ընդմիշտ փակուեց):

Սկզբից ևեթ լուրջ չնդունեցինք Ադրբէջանի ռազմական և քաղաքական սպառնալիքները: Արդէն ինչպէս շեշտուեց, Ադրբէջանը 1994-ի զինադադարը օգտագործեց, նաև Բարյում Խաղաղութիւն և միասնականութիւն ստեղծելով, զար-

գացնել տնտեսութիւնը, գնել նորագոյն գէնքեր, բանակը Թուրքիայի օժանդակութեամբ վերակառուցել և սպաներին Թուրքիա ուղարկելով ՆԱՏՕ-ական դաստիրակութեամբ կրթել, դիւանագիտական լայն կապեր ստեղծել, որտեղ պէտք էր «խալիար դիվանագիտութիւն» բանեցնել:

Իսկ մենք մնացինք անտարբեր, ունեցանք մինչև անգամ զաւշտական մօտեցում, կոչելով Ալիսին «փլէյրոյ», «մենք թէյ կիսմենք Բաքուում», Ալիսի կնոջը հրաւիրեցինք Շուշի մուղամ լսելու, իսկ պաշտպանութեան նախարարը յայտարարեց «նոր պատերազմ, նոր տարածքներ», և այսպէս շարունակ: Աղրբէջանի սպառնաիքները լուրջ չնդունեցինք, թէպէտև տեսնում էինք, որ ԱԴ-ը բնաւ պատրաստ չէ խաղաղութեան և մինչև անգամ Քազանի առաջարկն է չնդունեց: Մենք քայլ չարեցինք նախապատրաստուելու, թէպէտև ԱԴ-ի, Խրայէլից, Թուրքիայից, Ռուսաստանից, Ուկրաինայից.... գէնք գնելը, բանակի վերակառուցումը, քաղաքական կապերն և խաղաղութեան բոլոր առաջարկներից հրաժարուելը լուրջ սպառնաից նախանշաններ էին մեր հասցէին: Գուցէ՝ յոյսներս դրել էինք Մինսկի խմբի համանախագահների աշխատանքներին միայն, ՀԱՊԿ-ի կամ դաշնակից ՌԴ-ի վրայ, որը Մինսկի խմբի համանախագահ լինելով հանդերձ գէնք էր վաճառում Աղրբէյջանին:

Պատմութիւնն ապացուցում է, թէ ամէն մի ազգ առաջին հերթին, ինքն է կերտում իր ճակատագիրը, պաղեստինցիները լաւ օրինակ են:

ՀՀ-ը չփորձեց Արցախը դարձնել բանակցութիւնների մասնակից, որը պայքարում էր իր անկախութեան համար, համաձայն հելսինգեան Եզրափակիչ ակտերին, որին համաձայն էր միջազգային համայնքը:

Աղրբէջանին յաջողութեց Արցախին մէկուսացնել և «բանակցել» միայն ՀՀ-ի հետ և աշխարհին համոզել, որ ՀՀ-ն է բռնազավտել ԱԴ-ի պետական տարածքները: ՀՀ-ը անցեա-

լում չճանաչեց Արցախի Հանրապետութիւնը և այսօր էլ չի ճանաչում: Ուրիշ խօսքով արտայայտուած՝ ռուսական խաղաղապահ զօրքը Ադրբէջանում են ապահովում ԼՂԻՄ-ի մի մասում, արցախիցների անվտանգութիւնը: Եւ հարց է առաջանում, եթէ ՀՀ-ը չի ճանաչում Արցախի Հանրապետութիւնը, ո՞ր իրաւական իհմքով է յանձնում Շուշին և Հաղորդը կամ պայմանագիր կնքում:

Մի պահ թողնենք «Արցախը Հայաստանն է ու վերջ» կարգախոսը, եթէ ՀՀ-ը չի ճանաչում ԱՀ-ը, ի՞նչ ենք սպասում միւս պետութիւններից:

44-օրեայ պատրազմը, և ծանր հետևանքները ծանօթ են բոլորիս, անսահման ողբերկական կորստով և հոգեկան ընկճուածութեան ելքով, նաև սփիտքում: Արցախահայութեան և ԱԴ-ին սահմանակից հայերի անվտանգութեան վիճակն ու ապագան անորոշ է (Սիսեան, Տաւոշ և այլն), որքա՞ն է դիմանալու մեր ժողովուրդը այս պայմաններում: Սկիհլքահայերը, (Ներառեալ ՌԴ- եան և Վրացահայերը) դեռ որքա՞ն պատրաստ կինեն օժանդակելու, երբ վստահ չեն, թէ իրեց տնտեսական աւանդը չի դառնալու Ալիկին աւար: Հիմա ժամանակը չէ միայն կենտրոնանալ կոռուպցիայի դէմ պայքարի և դեմոկրատիայի, ՀՀ-ի և ԱՀ-ի գոյութիւնն է վտանգուած:

Այլ ելք չկայ, յանուն գոյութեան պիտի մղել համառ և խելացի պայքար: Առաջին հերթին պիտի միասնականութիւն և համաձայնութիւն ստեղծել, բոլոր կարելի եղանակներով, մինչև անգամ նոր ընտրութեամբ և նոր դաշնակիցներ փնտրելով, բայց ոչ վասսալական կարգավիճակով:

Աշխատել որպէսզի Մինսկի խումբը գործունեայ դառնա:

Ճանաչել Արցախի Հանրապետութիւնը և ներքաշել նրան բանակցութիւնների գործընթացներին:

Արցախը ներդաշնակ ՀՀ-ին, սակայն պիտի ինքնուրիին քաղաքականութիւն վարի, բարեկամ երկրներում պահել

Ներկայացուցիչներ, զարգացնել քաղաքական, տնտեսական, մշակոթային և այլն յարաբերութիւնները: Փորձի բոլոր կարելի պայմաննեռամ մտնել միջազգային ասպարէզ: Իսկ սփիտքահայութիւնը, որին յաջողուել է 30 պետութիւններին և կազմակերպութիւններին ստիպել, հորդորել ճանաչել և դտապարտել ցեղասպանութիւնը, հակառակ Թուրքիայի ՆԱՏՕ-ի անդամ լինելուն և սպառնալիքներին, պիտի նոյն եռանդով լծուի Արցախի միջազգային ճանաչման գործընթացներին: Կորցրինք Արցախը, հերթը գալու է Սիւնիքին և Հայաստանի միա շրջաններին:

Ռուսի, Թուրքի, Ադրբէջանի, Պարսկաստանի, քրիստոնեայ հումանիստ, սակայն շահամոլ երոպացուն և ԱՄՆ-ի ինչ լինելը, քանի հարիւր տարի է ինչ գիտենք: Վերջապէս սրափուենք և դառնանք նախաձեռնող, իրատես, յոյսներս մեր իսկ վրայ: Ամփոփում.

- Հայ հասարակութիւնը, ՀՀ, ԱՀ և սփիտքում մինչ օրս այս աստիճանի պառակտուած և բնեռացած չի եղել:

- ՀՀ-ը քաղաքական մէկուսացած վիճակում է:

- Բազմաթիւ պետութիւններ հետապնդում են ՀՀ-ում իրենց տարբեր շահերը՝ ՌԴ, Ադրբէջան-Թուրքիա, Իսրայէլ, Հնդկաստան, Պարսկաստան, Չինաստան... ՀՀ սակայն սուրբեկտ չէ այլ օրիեկտ:

- Սիւնիքը դարձել է տարածաշրջանի հակամարտութեան գլխաւոր առարկան, ոչ Արցախը: Որոշումներն ընդունում են օտար պետութիւններ:

- ՀՀ և ԱՀ-ի սահմանները ծեռնամխելի են դարձել թշնամինների համար:

- Քաղաքական քառորդ Երևանում աննախընթաց է:

- Սփիտքում էլ տիրում է քառու, ընկճուածութիւն:

- Սփիտքահայերը պիտի ընտրեն նոր քաղաքական կողմնորոշում, պայքարելով առաջին հերթին Ադրբէջանի ագրեսիայի և հակահայ քարոզչութեան դէմ:

## **GERAYER KOUTCHARIAN**

Genocide recognition  
working group Berlin (Germany)  
Doctor  
[g.koutcharian@googlemail.com](mailto:g.koutcharian@googlemail.com)

### **THE REPUBLIC OF ARTSAKH IS 30 YEARS OLD: GRAND TOTAL**

#### **SUMMARY**

**Keywords:** Artsakh Republic, Republic of Armenia, ceasefire agreement, threats, negotiations, Minsk Group, Azerbaijan, Turkey.

Through Russian mediation, a first ceasefire agreement between Armenia, Azerbaijan and the Artsakh Republic was signed in Bishkek in 1994. Artsakh as thus became an equal partner alongside the states of Armenia and Azerbaijan. Although the Armenians were successful at the time with many sacrifices and great effort in war that Azerbaijan had imposed on them, they lacked the political experience to transform the military victory into a political success and to force or convince Azerbaijan to recognize the independence of Artsakh.

Azerbaijan seized the moment and since 2004 purposefully, comprehensively rearmed. It reorganized its army, purchased weapons and equipment from Turkey, Russia, Israel, Ukraine, and other countries. It also sought and found new allies while maintaining its old ties with Russia.

Armenian governments failed to actively engage Artsakh in negotiations. Levon Ter-Petrosyan, as president, ensured that Artsakh was excluded from the OSCE Minsk Group as an equal partner.

Azerbaijan took good advantage of this constellation, pushing Artsakh aside and pretending that the issue was not its status, but the aggressive Republic of Armenia, which allegedly occupies Azerbaijani territory. In this way Armenia became a direct participant in the conflict. Artsakh disappeared from the international stage as an equal partner.

Wrong policy, indifference to political upheaval in the region, non observance of threats by Azerbaijan and Turkey led to war in the autumn of 2020 and the death of 5000 young soldiers, tens of thousands of seriously injured, territorial losses and still unresolved and thus precarious status of Artsakh.

## **ЖИРАЙР КОЧАРЯН**

Рабочая группа по признанию  
геноцида, Берлин (Германия)

Доктор  
[g.koutcharian@googlemail.com](mailto:g.koutcharian@googlemail.com)

### **РЕСПУБЛИКЕ АРЦАХ - 30 ЛЕТ: ОБЩИЙ ИТОГ**

#### **РЕЗЮМЕ**

**Ключевые слова:** Республика Арцах, Республика Армения, соглашение о прекращении огня, угрозы, переговоры, Минская группа, Азербайджан, Турция.

В 1994 году при посредничестве России в Бишкеке было подписано первое соглашение о прекращении огня между Арменией, Азербайджаном и Республикой Арцах. Таким образом, Арцах стал равноправным партнером наряду с государствами Армения и Азербайджан. Хотя армяне в свое время добились успеха ценой многих жертв и больших усилий, в войне, навязанной им Азербайджаном, им не хватило политического опыта, чтобы превратить военную победу в успех политический и заставить или убедить Азербайджан признать независимость Арцаха.

Азербайджан воспользовался моментом и с 2004 г. целенаправленно, комплексно перевооружается. Он реорганизовал свою армию, закупил вооружение и технику в Турции, России, Израиле, Украине и других странах. Он также искал и находил новых союзников, сохраняя старые связи с Россией.

Правительствам Армении не удалось активно вовлечь Арцах в переговоры. Президент Левон Тер-Петросян добился исключения Арцаха из Минской группы ОБСЕ как равноправного партнера.

Неправильная политика, равнодушие к политическим потрясениям в регионе, игнорирование угроз со стороны Азербайджана и Турции привели к войне осенью 2020 года и гибели 5000 молодых солдат, тяжелым ранениям десятков тысяч, территориальным потерям и, как следствие, до сих пор нерешенному и тем самым неопределенному статусу Арцаха.

**ОЛЕГ ГАБРИЕЛЯН**

Декан философского факультета  
Крымского федерального университета имени В. М. Вернадского  
(РФ)

Доктор философских наук, профессор  
[gabroleg@mail.ru](mailto:gabroleg@mail.ru)

## **АРМЕНИЯ И АРЦАХ: ПЕРСПЕКТИВЫ НОВОЙ СТРАТЕГИИ (ВЗГЛЯД ИЗ РОССИЙСКОЙ ДИАСПОРЫ)**

**Ключевые слова:** Армения, Арцах, Россия, Закавказье, стратегия, диаспора, образ будущего, геополитика.

**Аннотация.** В статье представлены базовые элементы стратегии развития армянских общин России, перспективы их взаимодействия с Арменией и Арцахом. Развитие диаспоры и ее сохранение именно в этом взаимодействии, а также в сетевом сотрудничестве, в котором доминантой должна быть задача сохранения национальной идентичности. Такое взаимодействие и сотрудничество наполняют феномен армянства новым смыслом.

Карабахская война 2020 года поставила армянский народ перед угрозой очередного геноцида. Достигнутое соглашение о прекращении боевых действий на время обуздало Азербайджан, но он и Турция жаждут окончательного реванша – уничтожения государства Армения. Арцах преграда, форпост на пути этим замыслам. Даже в нынешнем ослабленном состоянии Арцах играет важную geopolитическую роль. Может кто-то в Армении этого не понимает и предполагает, что надо отказаться и счастливо, и беспроблемно жить, тогда им надо глубже посмотреть на политику России в регионе. Она не сдает Арцах. Поля для маневра у нее мало, тем более что сама Армения своей

внешней и внутренней политикой ограничивает его.

***В настоящее время отношения между Арменией и Россией не простые. Но армяне не предавали Россию.***

За дружбу с ней они заплатили полутора миллионами жизнями во время геноцида со стороны Османской империи, которая уничтожала армян именно за их ориентацию на Россию. Анализ армяно-российских отношений сложнее простых эмоционально окрашенных схем. Во временной перспективе проявят себя фундаментальные отношения, а главное противоречия между Россией и Турцией и расклад сил между закавказскими республиками может приобрести иной рисунок, чем в настоящее время. Очевидно, что он должен будет обеспечить стабильность, а, следовательно, опрометчиво допускать нарушения баланса – территориального, демографического, ресурсного.

Կենտրոնը մասնակցել է տարաբնույթ մշակութային միջոցառումների ինչպես հայրենիքում, այնպես էլ արտասահմանում: Մասնավորապես, ինքը՝ բանաստեղծական քսան գրքի հեղինակ Հրանտ Ալեքսանյանը, գրական-մշակութային միջազգային միջոցառումների է մասնակցել Ստեփանակերտում, Երևանում, Մոսկվայում, Լեհաստանում, Կոլումբիայում, Զինաստանում: Նորի որոնումներն ավելի ցայտուն են արտահայտվել նրա «Ոգու մատրիցա» (Ստեփանակերտ, 2014), «Ոսկրե երկնքի տակ» (Ստեփանակերտ, 2017) ժողովածուներում: Նրա գործերը թարգմանաբար լույս են տեսել ռուսերեն (1919, Մոսկվա) և սերբերեն (Սարաևո, 1920), շարքերը՝ շուրջ 15 լեզուներով: Միաժամանակ նշենք, որ այլ լեզուներով թարգմանվել են նաև արցախի շատ հեղինակներ և ճանաչելի դարձել իրենց վաստակը:

**Մինչև 2021 թ. օգոստոսի ընդգրկումով հավելվածի կարգով ներկայացնում եմ «Գեղարմ» հանդեսի մատենաշարով «Ոգի-ՆԱԻՐԻ»-ի հրատարակած գրքերի ժամանակագրական ամբողջական մատենագիտությունը (հավելված 1):**

Արցախի յուրաքանչյուր բանաստեղծ գրական սահմանապահ է: Եվ ամենսին պատահական չէ, որ նրանց ստեղծագործությունը խորապես տոգորված է ազատագրական պայքարի պատմությամբ, Արցախի բնաշխարհի գեղեցկությամբ, արցախցու բնատուր հայրենահիացումով: Գրողներից, մշակույթի գործիչներից շատերը ոչ միայն գրչով ու վրձինով, այլև գենքը ձեռքին նետվեցին մարտի: Որպես հրետանավոր խիզախած Ռոբերտ Եսայանը հարցազրոյցներից մեկում ասես բոլորի անոնից ասում է. «Արցախյան շարժումն ազդարարեց Նոր մտածողության սկիզբը: <...>: Արցախում ստեղծվող գրականության հիմքում բարձախում է դիմադրության ոգին, ինքնության հաստատման և հայ ցեղի պահպանման խնդիրը: Ամբողջ XX դարը Դիմադրության ու Պայքարի ժամանակաշրջան է: Եվ, բնականաբար, այդ ժամանակաշրջանում ստեղծված գրականությունն էլ կարելի է անվանել «Դիմադրության ու Պայքարի գրականություն» («Քառու և լուս», Ստեփանակերտ, 2015, էջ 229-231): Այս մտանության արտահայտությունն են Նվարդ Սողոմոնյանի ««Կոլցո» օպերացիա» (Ստեփանակերտ, 2009), Նվարդ Ավագյանի «Սահմանային գոտի» (Ստեփանակերտ, 2009), Վարդգես Բաղրյանի «Տեսադաշտ. 1988-1994» (Ստեփանակերտ, 2013), Կոմիտաս Դանիելյանի «Արցախն իմ տունն է» (Ստեփանակերտ, 1994), «Արցախը՝ չսանձած նժոյգ» (Ստեփանակերտ, 2001) «Պորտալար» (Եր., 2007) գրքերը, որոնց հիմքն իրական Արցախն է՝ իր մաքառումների պատմությամբ ու մարդկանցով: Կոմիտաս Դանիելյանը կազմել է նաև «Վերջին գնդակը» պատմվածքների ժողովածուն (Ստեփանակերտ, 2005):

Ոչ միայն նյութն է այլև արդիականության պահանջը, որ այս կամ այն կերպ զգալի է հիշյալ հեղինակների գրքերում: Այս տեսակետից առավել ցայտուն տպավորություն է թողնում Սլավի - Ավիկ Հարությունյանի բանաստեղծությունների

«Երկինք և երկիր» (Եր., 2014) ժողովածուն, որն առիթ ունեցել եմ գրախոսելու և գնահատելու (տես՝ «Գրական թերթ», Եր., 2015, թիվ 19, 5 հունիս), ուստի խոսքս չեմ մանրամասնի:

Նշվածներից բացի Արցախում ապրած-ապրող գրողներից հիշատակենք անոններ՝ Վազգեն Օվյան, Արմեն Հովհաննիսյան, Մարտիրոս Ոբն, Նորեկ Գասպարյան, Մարտել Պետրոսյան, Դավիթ Միքայելյան... Արցախում ապրող և ստեղծագործող գրողների վաստակն ամփոփված է ոչ միայն առանձին գրքերում, այլև բազմահատորյակների մեջ: Ավագների կողմին նաև երիտասարդներն են և նրանց մեջ շնորհալի բանաստեղծ Վիտալի Պետրոսյանը...

Գրողների կողմին նաև գրականագետներն են, առավելապես՝ գիտության երիտասարդ թեկնածուներ, որոնցից հատկապես ցանկանում եմ առանձնացնել Նարինե Հովհաննիսյանին, որի «Հայրենիքի գաղափարաբանությունը և ցեղասպանությունը խորհրդահայ գրականության մեջ» աշխատությունը 2018 թվականին Երևանում և Ստեփանակերտում միաժամանակ ունեցավ երկու հրատարակություն:

Այս տարիներին լուս տեսած գրքերից ցանկանում եմ առանձնացնել Արցախի անկախության 25-ամյակին նվիրված «Բառը սահմանի վրա» (Ստեփանակերտ, 2016) ժողովածուն, որի մեջ ընդգրկված է 46 բանաստեղծ ու արձակագիր: Նշանակալի հրատարակություններ են Արցախի գրական-մշակութային պատկերը լրացնող «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1966-1994» հանրագիտարանը (Եր., 2004), Արմեն Սարգսյանի «Ղարաբաղի բարբառի բառարան» (Եր., 2013), Ալավա Սարգսյանի «Արցախի բնակավայրերը» (Եր., 2018) աշխատությունները: Ավելացնեմ նաև «Արդի հայ քնարերգություն» (2 հատորով, Եր., 2008-2010) ժողովածուն, որի մեջ ժամանակակից հայոց բանաստեղծությունն է՝ Հայաստան, Արցախ, Սփյուռք պայմանա-

կան բաժանումով: 2018-ին վերահրատարակվել է 1895-ին լուս տեսած Մակար Բարխուդարյանի «Արցախ» ուսումնասիրությունը:

Հիացմունքով ուզում եմ անդրադառնալ «Արցախի ժողովրդագիտությունը» 20 հատորանոց մատենաշարին, որի «Ազգագրություն» ենթաշարքի 6 մեծադիր ու շքեղ հատորները լուս են տեսել 2019-2021 թվականներին: Պետք է հաջորդեն Արցախի բանահյուսությանը, բարբառային գրառումներին ու բարբառին նվիրված ուսումնասիրությունների մատենաշարերը: Սա այլ բան չէ, քան Արցախի հանրագիտարան՝ ստեղծված իին ու նոր սերունդների կողմից: Հրատարակիչը Արցախի պետական համալսարանն է՝ ուեկտոր Արմեն Սարգսյանի նախագահությամբ:

Անկախության տարիներին պետական պատվերի շրջանակներում գրողներն Արցախում, իենց Ստեփանակերտի հրատարակչություններում լուս ընծայեցին ոչ միայն իրենց երկերի հերթական ժողովածուները, այլև բազմահատորյակներ: Այսինքն՝ պետական աջակցությունը եղել է անխափան ու անընդմեջ, ինչն էլ նպաստել է ստեղծագործական-հրատարակչական վերելքին: Պետական այսպիսի աջակցությանը բարի հայացքով կարող են նայել Երևանում և սփյուռքում ապրող և ստեղծագործող նրանց գրչընկերները:

Ինչպես Ստեփանակերտում, այնպես և Երևանում կազմակերպվել են նրանց գործերի շնորհանդեսները, տպագրվել են գրախոսություններ ու հոդվածներ, նրանցից շատերն արժանացել են պետական և գրական բարձր պարզեցների: Արցախի գրողների վաստակը դիտվել ու գնահատվել է համահայկական չափանիշերով. այդպես էլ լինելու է ընդմիշտ:

## **Հավելված 1.**

Թատերախաղեր Արևմտյան գրականությունից, 2010:

Իսոհիֆ Բրոդսկի, Տեղատարափի շայունը, բանաստեղծություններ, 2011:

Միհայիլ Բախտին, Դոստուակու պոետիկայի խնդիրները, 2012:

Սիրիոսի սրնգահարները (Վ. Խլեբնիկով, Ն. Գումիլյով, Վ. Խոդասեիչ), բանաստեղծություններ, 2012:

Սերգեյ Դովլաթով, Միայնակների երթը, պատմվածքներ, 2012:

Յուրի Լոտման, Միֆ. Անուն. Մշակույթ, գրականագիտություն, 2012:

Վառամ Շալամով, Կոլիմյան պատմվածքներ, 2012:

Ժարկո Միլենիչ, Լեռնը՝ հրաշագործի աշակերտը, հեքիաթ-վիպակ, 2013:

Պավել Ֆլորենսկի, Իկոնոստաս, 2014:

Ռուս կոնցեպտուալ պոեզիա (Դ. Պրիգով, Վ. Նեկրասով, Լ. Ռուբինշտեյն), 2014:

Հենրիխ Սապգիր, Զուգահեռ մարդը, բանաստեղծություններ, 2014:

Վասիլի Գրոսման, Կյանք եւ ճակատագիր, վեպ, 2 գրքով, 2014:

Կամուրջների խոռվությունը. Մետամետաֆորիստներ, բանաստեղծություններ, 2015:

Ալեքսանդր Սոլժենիչին, Մատրյոնայի կալվածքը, պատմվածքներ, 2015:

Անդրեյ Պլատոնով, Չևենգուր. Գուրը, պատմվածքներ, 2015:

Արդի ռուսական վերլիբր, բանաստեղծություններ, 2015:

Զինատանի մշակույթի քրեստոմատիա, 2015:

Զիդի Մաջիա, Հրեղեն խոսքեր, բանաստեղծություններ, 2015:

Մա Քայ, Արտի արձագանքներ, բանաստեղծություններ, 2015:

Եվգենի Վոդոլազկին, Հավո, վեպ, 2015:

Քայ Տյանսին, Խաղաղ կյանքի երգը, բանաստեղծություններ, 2015:

Ռուս այլախոհական պոեզիա, բանաստեղծություններ, 2015:

Զինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ, հ. 1-9, 2016-2021:

Յու Զիան, Անձրեւից պատսպարվող թոշունը, բանաստեղծություններ, 2016:

Պավել Բասինսկի, Լև Տոլստոյ. Փախուստ դրախտից, վավերագրական վեպ, 2016:

Չժան Ցզի-յան, Երազ ծովի մասին, բանաստեղծություններ, 2016:

Վան Շենչկի, Երիտասարդ վանականի սիրո պատմությունը, 2016:

Լյուդմիլա Պետրովակայա, Սեր. Երջանկություն. Ռեքվիեմ, պատմվածքներ, 2016:

Անդրեյ Բելի, Պետերբուրգ, վեպ, 2016:

Դիկոնոսոսներ. Անհայտ պոետների ապաստան, բանաստեղծություններ, 2016:

Ուու Մինհիմալիստներ, բանաստեղծություններ, 2016:

Իձյե Շան, Կոնֆուցիականությունը, բուդյայականությունը, դառսիզմը, քրիստոնեությունը և չինական մշակույթը, 2016:

Սյուն Շի-ի, Երկնային կամուրջը, վեպ, 2016:

Դոնգ Քիանգ, Ամուսնություն, ազգագրություն, 2017:

Դոնգ Քիանգ, Կացարաններ, ազգագրություն, 2017:

Ինգերորդ Բախման, 30-րդ տարին, պատմվածքներ, բանաստեղծություններ, 2017:

Զիդի Մաջիա, Ընձառյուծից մինչև Մայակովսկի, բանաստեղծություններ, 2017:

Անդրեյ Վոլոս, Վերադարձ Փանջիուտ, վեպ, 2017:

Դոնգ Քիանգ, Շաղում, ազգագրություն, 2017:

Դոնգ Քիանգ, Փառատոններ, ազգագրություն, 2017:

Դոնգ Քիանգ, Ուտեստներ, ազգագրություն, 2017:

Սյան Ցյան, Վիշապի մորուքներն ընդդեմ նախագծերի, գրականագիտություն, 2017:

Ուան Ցուոլիան, Մերձակցության աստիճաններ, գրականագիտություն, 2017:

Ֆյոդոր Սոլոգուր, Չնչաղնը, վեպ, 2018:

Ու Չուն, Չինական մշակույթ. Փիլիսոփայություն, 2018:

Ս. Ուեյսին, Ճ. Սյուն, Չինաստանի յուրահատկությունները: Չինաստանի համաշխարհային ժառանգությունը, 2018:

Ալի ձայնը. 20-րդ դարի ետուկասունական թվականների սերունդի չին գրողների պատմվածքներ, 2019:

20-րդ դարի ռուսական պատմվածք, 2019:

Գվինեթ Լյուիս, Քառսի հրեշտակները, բանաստեղծություններ,  
2020:

Պավել Բասինսկի, Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը, Վավերագրական  
վեպ, 2020:

Տերինսգ Նորբու, Փրկված գառը, տիբեթյան պատմվածքներ,  
2020:

Չժան Յավեն, Դարերի կանչը. Մտորումներ Հոնկոնգի մասին,  
2020:

Կոնֆուցիոս, Զրույցներ, 2020:

Մարիա Գրեչ Գանադր, Երիզվածք, բանաստեղծություններ, 2021:

Էլիզարեթ Քրիստին Յուկուսդուտիր, Սեր, Նյարդերի քայլայում. Ոչ  
մի պար Ձուկ-քարի վրա, բանաստեղծություններ, 2021:

**DAVID GASPARYAN**

Researcher of the IH, NAS RA,  
Doctor of Philological Sciences, Professor  
[grakanagetgasparyan@gmail.com](mailto:grakanagetgasparyan@gmail.com)

## LITERARY LIFE IN ARTSAKH IN THE YEARS OF INDEPENDENCE (1991-2021)

### SUMMARY

**Keywords:** Artsakh, literature, freedom, independence, patriotism, Movses Kagankatvatsi, Davtak Kertogh, Writers' Union, Stepanakert, writer, Suren Yerznkyan, Grigor Nersisyan, Bagrat Ulubabayan, Maxim Hovhannisyani.

Artsakh has created high art since ancient times and has had an irreplaceable place in the history of Armenian literature. The calculation of time begins directly with the invention of letters, the enlightenment mission of Mashtots - enlightening mission to Artsakh.

In the literary documents we should first mention Movses Kagankatvatsi's "History from Aghvan", then we should mention the names of Hovhannes Sarkavag Imastaser, Mkhitar Gosh, Kirakos Gandzaketsi, Frick. Along with the exceptionally valuable information about Aghvank, Gandzaketsi's book is also memorable with Davtak Kertogh's poem "Lament = Cry on the Death of the Great Prince".

In 1920-1930s there was an association of Armenian writers in Baku, headed by the talented critic Suren Yerznkyan. On his initiative, the Armenian Department of Proletarian Writers was founded in 1925, the literary magazine "Vishka" was published, and the Armenian newspaper "Communist", published by him, paid great attention to literary issues.

In 1925 the Association of Proletarian Writers of Karabakh was founded in Stepanakert under the leadership of the poet Grigor Nersisyan in August 1929 and it was a danger for Azerbaijan. In 1934, Mkrtich Berberyan again published the literary-artistic, social-political magazine "Groh" in Stepanakert, which was closed after the first issue for the same infamous security reasons.

Prior to the declaration of independence, the Artsakh Literary Organization was headed by many people, including Tatul Huryan, Bogdan Janyan, and Bagrat Ulubabyan. Poet Vardan Hakobyan assumed that responsible position during the years of independence.

The Karabakh Writers' Union was the first organization in the region to leave Azerbaijan and become a separate organization of union significance. Gradually, the Karabakh literary center received a new life: they founded "Artsakh", "Pell-Pughi" magazines, "Let there be light" literary newspaper and "Artsakh" publishing house. Literary awards bearing the names of Aghayan, Muratsan and Shiraz were created.

Thus, the Artsakh literary organization has always been a stronghold of patriotism, which informed Moscow in letters in 1968 and 1988, ideologically prepared it with demonstrations and rallies since 1988, legalized it by decisions of the national assemblies of the region and contributed to the liberation of Artsakh through armed struggle.

Today, more than 60 writers of different generations live and work in Artsakh, publish their books in Stepanakert. Poet Hrant Aleksanyan carries out serious activities in the field of translated literature of pan-Armenian significance.

**ДАВИД ГАСПАРЯН**

Научный сотрудник ИИ НАН РА,  
Доктор филологических наук, профессор  
[grakanagetgasparyan@gmail.com](mailto:grakanagetgasparyan@gmail.com)

## **ЛИТЕРАТУРНАЯ ЖИЗНЬ В АРЦАХЕ В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ (1991-2021 ГГ.)**

### **РЕЗЮМЕ**

**Ключевые слова:** Арцах, литература, свобода, независимость, патриотизм, Мовсес Каганкатваци, Давтак Кертоғ, Союз писателей, Степанакерт, писатель, Сурен Ерznкян, Григор Нерсисян, Баграт Улубаян, Максим Оганесян.

Арцах издревле создавал высокое искусство и занял незаменимое место в истории армянской литературы. Отсчет времени начинается непосредственно с изобретения букв, просветительской миссии Маштоца в Арцахе.

В литературных документах сначала следует упомянуть имя Мовсеса Каганкатваци и его книги «История кавказских албан», затем следует упомянуть имена Ованеса Саркавага Имастасера, Мхитара Гоша, Киракоса Гандзакеци, Фрика. Наряду с исключительно ценной информацией об Агване книга Гандзакеци примечательна еще и стихотворением Давтака Кертоға «Плач по поводу смерти великого князя».

В 1920-1930-е годы в Баку действовала ассоциация армянских писателей, которую возглавлял талантливый критик Сурен Ерznкян. По его инициативе и под руководством поэта Григора Нерсисяна в 1925 г. в Степанакерте была создана Армянская организация пролетарских писателей, также издавался литературный журнал «Вышка», а издаваемая им армянская газета «Коммунист» уделяла большое внимание литературным вопросам.

Основанный Г. Нерсисяном журнал «Кайц» представлял опасность для Азербайджана и был закрыт в августе 1929 г. В 1934 г. Мкртич Берберян снова издал в Степанакерте

литературно-художественный, общественно-политический журнал «Грох», который был закрыт после выхода первого номера по тем же печально известным соображениям безопасности.

До провозглашения независимости Арцахскую литературную организацию возглавляли многие, в том числе Татул Гурян, Богдан Джанян и Баграт Улубабян. Эту ответственную должность за годы независимости занял поэт Вардан Акопян.

Союз писателей Карабаха был первой организацией в регионе, которая покинула Азербайджан и стала отдельной организацией союзного значения. Постепенно литературный центр Карабаха получил новую жизнь: были созданы журналы «Арцах», «Пылы-Пуги», литературная газета «Да будет свет» и издательство «Арцах». Созданы литературные премии с именами Агаяна, Мурацана и Шираза.

Таким образом, Арцахская литературная организация всегда была оплотом патриотизма, которая информировала Москву в письмах в 1968 и 1988 гг., идеологически готовила ее демонстрациями и митингами с 1988 г., легализовала решениями национальных собраний региона и способствовала освобождению Арцаха путем вооруженной борьбы.

Сегодня в Арцахе живут и работают более 60 писателей разных поколений, которые издают свои книги в Степанакерте. Поэт Грант Алексанян ведет серьезную деятельность в области переводческой литературы всеармянского значения.

## ՆԱԽՐԻ ՀՈԽԻԿՅԱՆ

Լրագրող (Հայաստան)  
nhokhikyan@gmail.com

### ՊԵՏԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԿԵՐՆԵՐՆ ԱՐՅԱԽՈՒՄ. ԱՊԱԳԱՅԻ ՏԵՍԼԱԿԱՆ

**Հիմնարարեք՝** 1994 թ. մայիսի 12-ի գինադարար, ազգային փորբա-  
մասնություններ, նավթահանքեր, պատերազմ Արցախի դեմ, ոուս խաղա-  
ղապահ առաքելություն, ազատագրում, հայկական պետականություն:

Հայկական փորձագիտական դաշտում հաճախ են քննարկվում հարցեր՝ կապված 1994 թ. մայիսի 12-ին ադր-  
բեջանական և հայկական կողմերի միջև կնքված անժամ-  
կետ գինադարարի և դրան անմիջապես հաջորդած «Դարի  
գործարքի» ներքին թելերի հետ: Հշում ենք, որ 1994 թ.  
սեպտեմբերի 20-ին 8 պետությունների 13 խոշոր ընկերութ-  
յունների մասնակցությամբ Բաքվում ստորագրվեց նավթի  
արդյունահանման խոշոր գործարք: Ադրբեջան, ԱՄՆ, Մեծ  
Բրիտանիա, Շոտլանդիա, Նորվեգիա, ՌԴ, Ճապոնիա, Սաուտ-  
յան Արարիա: Ահա այս երկրները, որոնք սկսեցին խոշոր  
ներդրումներ անել Ադրբեջանում՝ նավթի արդյունահանման  
և վաճառքի համար: Եվ որպեսզի դա արդյունավետ ու շա-  
հավետ լիներ, պետք է խաղաղություն տիրեր տարածաշր-  
ջանում:

1994-ի մայիսին ստորագրվեց գինադարարի համաձայ-  
նագիրը, 4 ամիս անց՝ սեպտեմբերի 20-ին եղավ գործարքը:

Հետագա տարիներին համաշխարհային խոշոր ընկե-  
րությունները սկսեցին ներդրումներ անել Ադրբեջանում:  
Նավթը դարձավ այդ երկրի գլխավոր և թերևս միակ հարս-  
տությունը: Ադրբեջանը սկսեց փող կուտակել:

Միայն «Ազերի», «Չիրագ» և «Գյունեշ» նավթահանքերում

հայտնաբերվել էր 731 մլն տոննա նավթ, որի արդյունահանման համար ամենասկզբում ներդրվեց 11,5 մլրդ դոլար:

Շինարարական ու նախապատրաստական աշխատանքները տևեցին 5 տարի, և 1999 թ. դեկտեմբերին ադրբեջանական նավթային տանկերները առաջին անգամ սկսեցին նավարկել դեպի համաշխարհային շուկաներ: Սկսվեց հետհաշվարկը: Ադրբեջանը այդ օրվանից սկսեց փող կուտակել պատերազմի պատրաստվելու համար:

Հետագա տարիներին Ադրբեջանում ավելի մեծ ծավալների հասավ նավթարդյունահանումը՝ գերազանցելով օրական 2 մլն բարելը: Դա ռեկորդային ցուցանիշ էր: Համաշխարհային հսկաները բառացիորեն դատարկում էին Ադրբեջանի նավթամբարները՝ միլիարդներ փոխանցելով այդ երկրին: Ադրբեջանում զրոյական մակարդակի իջավ մարդու իրավունքների պաշտպանությունը, իշխանությունը կենտրոնացվեց Ալինների և Փաշանների կլանների ձեռքում, բռնապետությունը այդ երկրի բոլոր ոլորտներում էր: Միջազգային կազմակերպություններն ու գերտերություններն աչք էին փակում Ադրբեջանի ազգային փոքրամասնությունների նկատմամբ բռնաճնշումների, խոսքի ազատության սահմանափակումների, պատվիրված սպանությունների և հայկական կողմի նկատմամբ ազրեսիայի վրա:

Ադրբեջանը գենք էր գնում ամենատարբեր շուկաներից և աստիճանաբար մեծացնում ազրեսիվ հոեսորաբանությունն ու շիման գծի սադրանքները: Եթե մինչև 2006-2007 թվականները Ադրբեջանի կողմից կրակում էին ավտոմատներով, ապա հետագա տարիներին դրանց ավելացան ավելի խոշոր տրամաչափի գենքեր, ականանետեր, երբեմն հրետանի, իսկ 2015-ից նաև կրակեցին տանկերը:

Հաճախ ես ասում եմ, որ Ադրբեջանի նման թշնամին մեզ համար նվեր է, քանի որ երբեք չի թաքցրել իր նպատակները, երբեք կեղծ խաղաղասիրություն չի արել: Դա լավագույն

ցուցիչն է՝ թշնամու գործողությունները հաշվարկելու և պատասխան քայլեր անելու համար: Հայկական կողմը, սակայն, համարժեք կերպով չէր պատրաստվում պատերազմին, ինչը ուներ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ:

Նախ՝ պատերազմից հետո Արցախը մեծածավալ թալանի ենթարկվեց հենց հայերի կողմից: Թշնամու թողած տներն ու գործարանները փոխանակ հատկացվեին փախստականներին և վերաբնակեցվեին, հիմնահատակ կործանվեցին և մեծ մասամբ ջարդոնի անվան տակ տեղափոխվեցին այլ երկրներ: Արցախի ռեսուրսները հիմնականում մսխավեցին ՀՀ-ի բարձրաստիճան պաշտոնյաների և ասֆալտի ֆիդայինների կողմից, իսկ իրական կովողն ու երկիր ազատագրողը մնաց նոյն կարգավիճակում:

Հայաստանում սկսվեց կապիտալի նախնական կուտակման մրցավագք, ինչը տեղափոխվեց նաև Արցախ: Ստեղծվեցին ծայրահեղ հարուստների և ծայրահեղ աղքատների դասակարգեր, որոնցից որևէ մեկը չէր ապրում պետականության հոգսերով: Մինչդեռ թշնամին զբաղված էր պատերազմի պատրաստությամբ, հայկական կողմում մեծահարուստներն ու օլիգարխները շարունակում էին կուտակել, իսկ աղքատների համար հայրենիքից ավելի թանկ էր դառնում օրվա հացը:

Չնայած դրան, հայկական բանակը համարվում էր տարածաշրջանի ամենամարտունակ բանակը, ամուր պահելով պետականության սահմանները: Այն հաջողությունները, որոնք հայ գինվորն ու սպան հասան 28 տարվա ընթացքում՝ շրջափակման, սահմանափակ քանակությամբ գենքի և մշտական արտաքին ազթեսիայի պայմաններում, անհավատալի մեծ ջանք ու ներդրում էր պահանջում: Հայկական բանակը հասավ արդյունքի:

2012 թվականը Ադրբեյջանի համար նավթի արդյունահանման բույսն էր: Այդ և հետագա 5 տարիներին Ադրբե-

շանն ստացավ նավթի վաճառքի ռեկորդային շահույթ, ինչը հնարավորություն տվեց մեծ քանակության գենք և զինամթերք գնել՝ Արցախի դեմ պատերազմելու համար: Աղբբեջանում լավ էին հասկանում, նավթը սկսելու է նվազել, ու եթե 2015-ին դեռևս օրական արդյունահանվում էր 2-2,5 մլն բարել նավթ, ապա 2017-ին այն հասնելու էր 1 մլն բարելի, հետևաբար 2016-ին Աղբբեջանը դիմեց առաջին արկածախնդրությանը՝ ապրիլյան պատերազմին, որն անհաջող ավարտ ունեցավ:

Հաջորդող տարիներին Աղբբեջանը նոր զարկ տվեց գենքի առևտորին, բայց հաշվարկները ցոյց էին տալիս, որ նավթը դառնալու է պակաս կարևոր գործոն՝ հաշվի առնելով սպառվող պաշարները: 2019-ին Աղբբեջանում արդեն օրական արդյունահանվում էր մոտ 800,000 բարել նավթ, իսկ 2020-ի գարնանը՝ 500,000 բարել: Նորվեգական «Ստատոիլ»-ը որոշեց հեռանալ Աղբբեջանից, բրիտանական BP-ն ևս քննարկում էր իր մասնաբաժինների մի մասը վաճառելու մասին:

Այդ համատեքստում Աղբբեջանը և Թուրքիան հաշվարկել էին, որ նավթի պակասին զուգահեռ պակասում է նաև աշխարհի հետաքրքրությունը Աղբբեջանի նկատմամբ, իսկ այդ պարագայում աշխարհի աչքի առաջ, ավելի շուտ՝ աշխարհի անտարերության ուղեկցությամբ գրավել Արցախն իրենց չի հաջողվի:

2020-ի սեպտեմբերի պատերազմը նախ Աղբբեջանի նավթի դարաշրջանի ավարտի մասին էր խոսում: Ահա թե ինչու Թուրքիան շտապեց Բայրաքթար տեսակի հարվածային ԱԹՍ-ներ և Սիրիայից վարձկան ահարեկիչների տեղափոխել Աղբբեջան՝ հայկական զորքի դեմ կռվելու համար: Թշնամական երկու պետությունները պատերազմի մեջ մտցրին ամեն ինչ, դրան գումարվեցին նաև այլ գործոններ:

Թուրքիային, ԱՄՆ-ին, Իսրայելին ու Մեծ Բրիտանիային

պետք էին Արցախի հարավային շրջանները՝ Արաքսի հովիտը՝ Իրանի սահմանային հատվածը։ Դա նրանց հնարավորություն էր տալու վերահսկելի դարձնել Իրանի նաև այդ շրջանները, իսկ հետագա ամիսներին Վարանդայում կառուցված օդանավակայանը վկայում է Իրանի նկատմամբ նախապատրաստվող ագրեսիայի մասին։

Աղրբեջանին ավելի շատ անհրաժեշտ էին Արցախի Շահումյանի (Քարվաճառ) և Վարանդայի շրջանները, որոնց ջրային պաշարները կարևոր դեր են խաղալու Աղրբեջանի արևմտյան և կենտրոնական շրջանների համար։ Գաղտնիք չէ, որ վերջին տարիներին Աղրբեջանը կանգնած է երաշտի խնդրի առաջ, և այս պարագայում Արցախի ջրհավաք ավագաններին տիրանալը այդ երկրի համար մեծ ձեռքբերում էր։ Այդ առումով հատկապես Քարվաճառի հանձնումը Աղրբեջանին անհեռատես ու աններելի քայլ էր հայկական իշխանությունների համար։

2020 թ. նոյեմբերի 9-ի հայտարարությունը, սակայն, Աղրբեջանի և Թուրքիայի համար իրական զինադադար չի։ Արցախի այսօրվա մնացած տարածքը՝ 3 100 կմ<sup>2</sup>-ին ևս մեր թշնամու թիրախում է, և նրանք չեն էլ թաքցնում, որ պատրաստվում են գրավել ամեն ինչ։

Դեռևս 1648 թ. ստորագրված Վեստֆալյան հաշտության պայմանագրով սկիզբ դրված նոր աշխարհակարգում թեն աշխարհը վերաբաժնվեց, հաստատվեց ուժի քաղաքականությունը՝ Power Politics։ Այլ կերպ ասած՝ ուժն է ծնում իրավունք։ Թուրքիան և Աղրբեջանը միշտ այդ սկզբունքով են շարժվել, իսկ ահա 1918-ին Սուածին համաշխարհային պատերազմից հետո գերտերությունները քննարկում էին ուժի իրավունքից իրաժարվելու հարցը։

1919-1920 թթ. Փարիզի խաղաղության վեհաժողովի ժամանակ ԱՄՆ նախագահ Վուլլոն Վիլսոնը առաջ քաշեց «Միայն խաղաղություն» (Just Peace) սկզբունքը, որով երաշ-

խավորվում էր պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքը՝ առանց միմյանց տարածքների նկատմամբ նկրտումների, սակայն դա երկար չտևեց: Մոտ 20 տարի անց աշխարհը կրկին վերաբաժանվեց՝ անցնելով ուժի քաղաքականության՝ Power Politics, մինչդեռ հայկական դիվանագիտությունը շարունակում է հույսեր կապել վիլսոնյան «Միայն խաղաղություն» (Just Peace) սկզբունքի հետ:

Ցավով պետք է արձանագրենք, որ դա մեռելածին սկզբունք է, և համագործակցող մարդկությունը միշտ էլ խորքում եղել է և կա որպես մրցակցող: Դաժան մրցակցության պայմաններում խոսել խաղաղության ծգտումների կամ բանաձևերի մասին, առնվազն միամտություն է:

Տարիներ շարունակ Ադրբեջանը մեր մասին խոսելիս մշտապես կիրառում է «թշնամի» տերմինը, իսկ հայկական կողմը հետևողականորեն օգտագործում է «հակառակորդ» արտահայտությունը, ինչը հանրային գիտակցության մեջ թույացնում է թշնամու կերպարի ճիշտ ընկալումը և կոտրում դիմադրողականությունը:

2020 թ. պատերազմի ժամանակ Ադրբեջանը թեև հասավ նկատելի հաջողությունների և << քաղաքական իշխանությանը ստիպեց ստորագրել անցանկալի փաստաթղթի տակ, սակայն ռազմական գործողություններից դուրս եկավ մեծագույն կորուստներով: Արդեն նոյեմբերի վերջին Ադրբեջանի Գլխավոր շտաբը հայտարարություն էր տարածել, թե ամենայն հավանականությամբ, իրենք ունեն 9-12 հազար մարդկային կորուստ, սակայն ժամեր անց այդ հայտարարությունը հեռացվեց ադրբեջանական լրատվական դաշտից: Ադրբեջանը պաշտոնապես ներկայացնում է մոտ 3000 զոհվածի մասին տվյալներ, սակայն դա արժանահավատ չի նոյնիսկ ադրբեջանական հանրության համար, որը սոցիալական ցանցերում տարածում է բազմաթիվ փաստեր շատ ավելի մեծ թվով զոհվածների մասին:

Ըստ հայկական կողմի հրապարակած տվյալների՝ Ադրբեյջանի կորցրած զրահատեխնիկան ու հրետանին կազմում են այդ երկրի ունեցած արսենալի ավելի քան 73 տոկոսը:

Այս փաստերը խոսում են այն մասին, որ գենքի 73 և զինվորների 10-15 տոկոսը կորցրած, ավելի քան 15,000 վիրավոր տված պետությունը ի զորու չէ հիմա նոր պատերազմ սկսել Արցախի ամբողջական գրավման համար: Սակայն դա չի նշանակում, թե թշնամին չի փորձի նոր ագրեսիա սանձազերծել:

Արցախի հայաբնակ տարածքում ոռւս խաղաղապահների ներկայությունը սանձում է Ադրբեյջանի և Թուրքիայի քայլերը, սակայն թշնամին արագ տեմպերով լրացնում է պատերազմի հետևանքով կորցրած գենքի պակասը: Ինչպես 2007-2015 թվականներին, այսպես էլ հիմա Ադրբեյջանը օրեցօր ավելի է խորացնում ուազմական հոեստորաբանությունը և սադրանքները: Մեկ կրակում են Շուշի քաղաքից, մեկ փորձում մեքենա կանգնեցնել Քաշաթաղի միջանցքում և այդ կերպ փակել ճանապարհը:

Զգտելով փոխել Քաշաթաղի միջանցքի ճանապարհը և շրջանցել Բերձոր քաղաքն ու Աղավնո, Ներքին Սուս գյուղերը՝ Ադրբեյջանը փորձում է այնպիսի ճանապարհ տրամադրել մեզ, որի անվտանգությունը կլինի Օ տոկոս: Մինչդեռ բնակավայրերի միջով անցնող ճանապարհը ինքնին անվտանգության երաշխիք է:

Այս առումով պետք է անել հնարավորն ու անհնարը՝ Քաշաթաղի այսօրվա գործող ճանապարհը պահպանելու համար:

Միաժամանակ չզարմանանք և պատրաստ լինենք, որ Ադրբեյջանը ամեն օր նոր ագրեսիվ մեթոդներ կօգտագործի Արցախի բնակչության ու զինված ուժերի դեմ՝ պատրաստվելով 2025-ի աշնանը:

Ինչո՞ւ հենց 2025-ի աշուն:

Նախ՝ այդ ժամանակ լրանում է ոռւս խաղաղապահ առաքելության ժամկետը: Ես կասկած չունեմ, որ արդեն 2024-ի ավարտին կամ 2025-ի գարնանը Ադրբեջանը կհայտարարի խաղաղապահների մնալու անցանկալիության մասին: Դրա հնարավորության մասին նշված է նաև նոյեմբերի 9-ի փաստաթթում:

Ոռւս խաղաղապահների մնալ-չմնալու քննարկումներին ու բանակցություններին զուգահեռ Ադրբեջանը ավելի է խորացնելու սադրանքները Արցախի նկատմամբ: Այս մասին պետք է բաց և հստակ խոսել Արցախի բնակչության հետ: Կարծում եմ, որ Արցախի իշխանությունը պետք է ներկայացնի մեր հայրենակիցներին թշնամու նպատակները, որ պեսզի հանրությունը դուրս գա անորոշության միջից: Ամեն տեսակի խնդիրներից ամենամեծը անորոշությունն է: Մարդիկ պետք է իմանան, որ պատերազմը դեռ չի ավարտվել, ավելին՝ ամեն ինչ դեռ նոր է սկսվում, քանի որ հիմա արդեն գերտերություններն ու խոշոր խաղաղողներն անձամբ են այստեղ:

Առաջիկա պատերազմը, որքան էլ մենք ջայլամի դիրք ընդունենք և չցանկանանք տեսնել իրականությունը, տեղի կունենա, այն սարերի հետևում չէ: Ադրբեջանը և Թուրքիան անթաքույց պատրաստվում են պատերազմի՝ պարերաբար զորավարժություններ անելով Վարանդայում, Զրականում, Քաշաթաղում և Արցախին հարակից այլ տարածքներում: Սրանք պայմաններ են՝ զորքին այդ տեղանքին ավելի լավ ծանոթացնելու համար:

Ադրբեջանը և Թուրքիան, սակայն, մեծ վախեր ունեն հատկապես Քարվաճարի, Քաշաթաղի հյուսահային մասի և Շուշիի առումով: Սրանք մեր թշնամու աքիլլեսյան գարշապարն են, քանի որ երեք դեպքում էլ նրանք կարող են շատ արագ հայտնվել ամբողջական շրջափակման մեջ և տանուլ տալ պայքարը: Ահա թե ինչու հատկապես Թուրքիան փոր-

ծում է տաք եղանակին Օմարի բարձունքով ծանր զրահատեխնիկա կուտակել Քարվաճառում, որպեսզի երբ ծմբանը գործը զրկվի գենքի մատակարարումից, ունենա անհրաժեշտ քանակության զինտեխնիկա:

Դրանք, սակայն, հաղթահարելի են առաջիկա պատերազմի դեպքում: Ճիշտ մարտավարության պարագայում նշան տարածքների ազատագրումը իրատեսական ու հնարավոր է, նոյնիսկ պարտադիր՝ հայկական պետականության ամրապնդման համար: Իսկ Շուշիի ազատագրումը շղթայական ռեակցիայով իր հետ բերելու է Հաղորդի ազատագրման՝ նոյն ճանապարհով, ինչով եկել էին ադրբեջանցիները և որ ճանապարհը հիմա կառուցել են՝ այն անվանելով «Հաղթանակի ճանապարհ»:

Քարվաճառը, Քաշաթաղը, Շուշին ու Հաղորդավայր Արցախի անվտանգության կարևորագույն բաղադրիչներ են՝ իրենց բնական պաշարներով ու աշխարհագրական դիրքով, իսկ Քարվաճառը, Քաշաթաղը կարևոր անվտանգային համակարգեր են նաև ՀՀ-ի համար՝ լինելով ամուր թիկունք հայկական պետականության համար:

Քանի դեռ պատերազմը ամբողջապես չի ավարտվել, և թշնամին պատրաստվում է նոր ագրեսիայի, մենք պարտավոր ենք ինչպես ռազմական, այնպես էլ քարոզչական ակտիվ աշխատանք տանել, հանրության մեջ տարածել ազգային գաղափարախոսություն՝ ներարկված մարտական ոգով, նոյնիսկ ագրեսիայով՝ հնարավոր բոլոր պատերազմներին ոչ թե վախի, այլ կռվողի ու ազատագրողի զգացումով պատրաստվելու:

Ուժի քաղաքականությունը՝ Power Politics-ը պահանջում է ագրեսիայի հռետորաբանություն: Թշնամու հետ պետք է խոսել թշնամաբար: Խսրայելի երբեմնի վարչապետ Գոլդա Մեիրն ասել է. «Չի կարելի խաղաղության մասին խոսել նրանց հետ, ովքեր եկել են քեզ սպանելու»: Պատերազմի

սպառնալիքով խոսող և դրան անթաքոյց պատրաստվող թշնամուն պետք է պատասխանել նոյնպիսի գործողություններով: Չմոռանանք, որ մինչև 1992 թվականը Արցախը եղել է շատ ավելի վատ վիճակում, քան իհմա է: Այն ժամանակ ամբողջական շրջափակում էր, սակայն կարողացավ ոչ միայն ցամաքային ճանապարհ բացել, այլև ազատագրել հսկայական տարածքներ: Այն ժամանակ էլ գերտերությունները խոսում էին միջազգային իրավունքի մասին, սակայն տարածք ազատագրող հայ զինվորին ու կամավորին դրանք չխանգարեցին: Այսօր ևս չեն խանգարի:

Ավելին՝ կան գերտերություններ, այդ թվում նաև Ռուսաստանի Դաշնությունը, որոնց ծեռնորու է ավելի մեծ և ավելի ուժեղ Արցախը: Հետևաբար առաջիկա չորս տարիների ընթացքում մենք պարտավոր ենք հնարավորինս ուժեղ ու կայուն դարձնել Արցախի պետական կառավարման համակարգը, ձևավորել հանրային մեծ վստահություն ինչպես իշխանության մարմինների, այնպես էլ ապագայի նկատմամբ, պայքարի ոգի և ոգեշնչում:

Մենք չունենք շատ ժամանակ՝ առավելագույնը 3,5 տարի՝ Արցախի հայ բնակչության թիվը մեծացնելու, արագ սպառագինության, մարտական պատրաստականության բարձրացման համար:

Խնդրում եմ այս վերլուծությունն ընկալել ոչ թե որպես մտահոգություն, այլ որպես հնարավորություն՝ մոտ 7500 կմ<sup>2</sup> տարածքով ու անվտանգային ուժեղ համակարգով Արցախի հայկական պետականության համար:

**NAIRI HOKHIKYAN**

Journalist (Armenia)

nhokhikyan@gmail.com

## **THE CHALLENGES OF PRESERVING STATEHOOD IN ARTSAKH: THE IDEAL OF THE FUTURE**

### **SUMMARY**

**Keywords:** ceasefire of May 12, 1994, national minorities, oil fields, war against Artsakh, Russian peacekeeping mission, liberation, Armenian statehood.

In this article the situation in Azerbaijan after the signing of the ceasefire of May 12, 1994 is analyzed as compared with situation in Armenia. The goals and results of the policy of these states on the Artsakh problem before the start of a new Artsakh war on September 27, 2020, as well as the author's ideas about what the Armenian side will do to eliminate the consequences of the war by the end of the Russian peacekeeping mission, are also revealed.

**НАИРИ ОХИКЯН**

Журналист (Армения)

nhokhikyan@gmail.com

## **ВЫЗОВЫ СОХРАНЕНИЯ ГОСУДАРСТВЕННОСТИ В АРЦАХЕ: ИДЕАЛ БУДУЩЕГО**

### **РЕЗЮМЕ**

**Ключевые слова:** перемирие от 12 мая 1994 года, национальные меньшинства, нефтяные месторождения, война против Арцаха, российская миротворческая миссия, освобождение, армянская государственность.

В данной статье анализируется ситуация в Азербайджане после подписания перемирия от 12 мая 1994 года в сравнении с ситуацией в Армении. Выявлены также цели и результаты политики этих государств по арцахской проблеме до начала новой Арцахской войны 27 сентября 2020 года, а также представления автора о том, что будет делать армянская сторона для ликвидации последствий войны к концу российской миротворческой миссии.







**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ (ԵՐՐՈՐԴ)  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌԶԱԿՄԱՆ  
30-ԱՄՅԱԿ**

**Միջազգային գիտաժողովի նյութեր  
(Ստեփանակերտ-Երևան, 19-23 սեպտեմբեր, 2021)**

**Տպաքանակը՝ 100օրինակ**

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՍՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ  
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА  
INSTITUTE OF HISTORY OF NAS RA**

---

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բագրամյան պող. 24/4

PA, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4

24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan

<http://www.academhistory.am>